

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական
իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման համար**

Երևան 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ	15
1.1.Անչափահասների հանցավորության վիճակը ՀՀ-ում	15
1.2. Անչափահասների շեղվող վարքագծի բնութագիրը ՀՀ-ում	42
ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾ ԴՐՍԵՎՈՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	61
2.1.Հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները	61
2.2.Հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի սոցիալ-հոգեբանական և մոտիվացիոն առանձնահատկությունները	77
ԳԼՈՒԽ 3. ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱԶԴԴՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ	99
3.1. Ընտանիքի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում	99
3.2. Դպրոցի, ուսումնական հաստատության դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում	138
3.3. Ընկերական միջավայրի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում	160
3.4. Հասարակական միկրոմիջավայրի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում	184
ԳԼՈՒԽ 4.ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ	193
4.1.Անչափահասների հանցավորությանն արձագանքելու արդի վիճակը ՀՀ-ում	193
4.2.Անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ	226
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	241
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	250
ՀԱՎԵԼՎԱԾ	268
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	281

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղ գտած սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացները, հասարակության նախկինում եղած արժեքային համակարգի փլուզումը և դրա արդյունքում ձևավորված սոցիալական անոմիան, օրենքի, իրավապահ մարմինների և արդարադատության հանդեպ վստահության պակասը, հասարակության անդամների մեծամասնության մոտ անվստահությունը ներկայի ու ապագայի հանդեպ իրենց անմիջական ազդեցությունն ունեցան հասարակության անդամների և հատկապես՝ երեխաների վարքագծի ձևավորման վրա:

Հասարակական կյանքի պետական միջամտություն ենթադրող ոլորտներում, մասնավորապես՝ կրթության ոլորտում, անընդհատ տեղի ունեցող, սակայն ավելի շատ փորձարկման բնույթ կրող բարեփոխումները, անչափահասների դաստիարակման գործընթացում սոցիալական ինստիտուտների ներգործության թուլացումը, երեխաների ազատ ժամանցի կազմակերպմանը պետության գրեթե անմասն մնալը, անչափահասների և երիտասարդների մոտ առաջացած հոգևոր վակուումը և իրավական նիհիլիզմը նպաստավոր պայմաններ ստեղծեցին երեխաների շեղվող (դեվիանտ) և հանցավոր վարքագծի դրսևորման համար:

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 1993 թ.-ի համեմատ 2016 թ.-ին 100 000 բնակչի հարաբերակցությամբ հանցավորության գործակիցը աճել է գրեթե 2 անգամ՝ 349,2-ից դառնալով 628,3, մինչդեռ ՀՀ անչափահասների հանցավորության գործակիցը նման ինտենսիվ աճ չի գրանցել և 11.7-ից դարձել է 12.6: Այնուհանդերձ, թե՛ փորձագիտական գնահատականները, թե՛ երեխաների կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու վերաբերյալ ՁԼՄ հրապարակումները, թե՛ աղքատության, գործազրկության, բնակչության կազմի փոփոխության վերաբերյալ պաշտոնական վիճակագրական տվյալները տեղիք են տալիս կասկածի տակ առնելու ներկայացված տվյալների արժանահավատությունը և հիմք են տալիս մտածելու, որ անչափահասների հանցավորությունը պարզապես դառնում է առավել լատենտային:

Միաժամանակ, հասարակական կյանքում տեղ գտնող ճգնաժամային

փոփոխությունները, ինչպես նաև գլոբալիզացման գործընթացում ՀՀ առավել ու առավել ներգրավվածությունը հանգեցնում են անչափահասների հանցավորության որակական փոփոխությունների. նկատվում է իզական սեռի անչափահասների հանցավոր վարքագծի ակտիվացում, ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների կողմից դեվիանտ վարքագծի դրսևորում, երեխաների կողմից բռնության առավել հաճախ գործադրում:

Անչափահասների կողմից հանցավոր կամ դեվիանտ վարքագծի դրսևորման վիճակը պետությունում և հասարակությունում առկա սոցիալական, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական, կառավարչական խնդիրների բացահայտման յուրօրինակ լակմու է, հետևաբար դրա ուսումնասիրությունը առանձին կարևորություն ունի հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ ՀՀ պաշտոնական վիճակագրությամբ ներկայացվում են ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարումը վկայող ցուցանիշներ, սակայն իրավական վիճակագրությունը և հանցավորության վիճակի վերաբերյալ այլընտրանքային աղբյուրները լիովին այլ պատկեր են բացահայտում:

Միաժամանակ, անչափահասների հանցավորության վիճակի, հանցավոր կամ դեվիանտ վարքագիծ դրսևորած անչափահասի կրիմինալոգիական բնութագրի, նշված վարքագծի պատճառ կամ պայման հանդիսացող գործոնների ուսումնասիրությունը թույլ է տալիս մշակել արդյունավետ միջոցառումներ ոչ միայն անչափահասների հանցավորության և դեվիանտ վարքագծի կանխարգելման առումով, այլև արդեն իսկ կարճաժամկետ՝ 4-5 տարվա կտրվածքով կանխատեսումներ անել չափահասների հանցավորության սպասվելիք քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ և մշակել նաև դրանց արձագանքման արդյունավետ միջոցառումներ:

Վերոգրյալը վկայում է ընտրված թեմայի արդիականության մասին:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Անչափահասների հանցավորությունը, նրանց կողմից շեղվող վարքագծի դրսևորումները և դրանց պատճառ հանդիսացող գործոնները, անչափահաս հանցավորի անձի, նրանց վարքագծի մոտիվացիոն առանձնահատկությունները մշտապես գտնվել են և շարունակում են գտնվել հոգեբանության, մանկավարժության, իրավունքի,

կրիմինալոգիայի, սոցիոլոգիայի ոլորտում հետազոտություններ իրականացնող գիտնականների ուշադրության կենտրոնում: ՌԴ-ում, ԱՄՆ-ում, Եվրոպական երկրներում բազմաթիվ աշխատանքներ են իրականացվել քննարկվող հիմնախնդրի ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես՝ Ա.Ի. Դոլգովայի, Ս. Պ. Մինինայի, Յու. Մ. Անտոնյանի, Վ.Վ. Լունեևի, Ս. Վ. Օվչիննիկովայի, Ե.Գ. Զինչուկի, Դ.Ա. Շեստակովի, Յ. Յունգեր-Տասի, Մ. Սթեքեթի, Մ. Կիլիասի, Ու. Գատիի, Ի. Մարշալի և այլոց կողմից: Այնուհանդերձ, կատարված ուսումնասիրությունները, թեև բացահայտում են անչափահասների շեղվող վարքագծի առանձնահատկությունները, սակայն դրանք ոչ միշտ են վերաբերելի ՀՀ իրականությանը:

ՀՀ-ում քննարկվող հիմնախնդիրը, հատկապես վերջին տարիներին, համալիր հետազոտության չի ենթարկվել. առանձին ուսումնասիրություններ իրականացվել են Ա. Հ. Գաբուլյանի, Տ.Վ.Սիմոնյանի, Ս.Վ.Առաքելյանի, Ս.Զ.Արզումանյանի կողմից, այնուհանդերձ դրանցով ատենախոսության թեման չի սպառվել և բազմաթիվ հարցերի անդրադարձ չի կատարվել: Միաժամանակ, անչափահասների հանցավորությունը, հասարակությունում տեղ գտնող գործընթացներին զուգընթաց, անընդհատ դինամիկ վիճակում է, ենթարկվում է քանակական և որակական փոփոխությունների, ուստի դրա վիճակի, հանցավոր վարքագիծ դրսևորող անչափահասի սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-հոգեբանական, մոտիվացիոն ոլորտի առանձնահատկությունների, անչափահասների հանցավորությունը կամ շեղվող վարքագիծը դետերմինացնող գործոնների ուսումնասիրությունը կարևոր է՝ դրանում տեղ գտած փոփոխությունները վեր հանելու և դրանց արդյունավետ արձագանքելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության կրիմինալոգիական բնութագրի ուսումնասիրությունն է՝ դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների մշակման համար:

Ուսումնասիրության խնդիրներն են՝

1. վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա գնահատել Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի արդի վիճակը,

2. բացահայտել ՀՀ-ում հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի կրիմինալոգիական բնութագիրը,

3. գնահատել անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում վճռորոշ նշանակություն ունեցող դերակատարների՝ ընտանիքի, դպրոցի, ընկերական միջավայրի և սոցիալական միկրոմիջավայրի ազդեցությունը երեխաների շեղվող վարքագծի ձևավորման վրա,

4. քննարկել ՀՀ-ում անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու հիմնական մոտեցումները,

5. ուսումնասիրելով անչափահասների հանցավորության պատճառ կամ պայման հանդիսացող գործոնները՝ առաջարկություններ մշակել՝ ուղղված ՀՀ-ում անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողության կատարելագործմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ: Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում անչափահասների հանցավորությունն ու շեղվող վարքագծի դրսևորումներն են, որպես ինքնուրույն սոցիալ-իրավական երևույթ, ինչպես նաև դրանց պատճառ հանդիսացող գործոնները, դրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելուն ուղղված միջոցառումները:

Հետազոտության առարկան են կազմել իրավախախտ կամ շեղվող վարքագիծ դրսևորած երեխաների իրավունքները և պարտականությունները կանոնակարգող միջազգային իրավական փաստաթղթերը, ՀՀ քրեական, քրեակատարողական օրենսդրության դրույթները, դրանց կիրառման պրակտիկան, ՀՀ պաշտոնական վիճակագրությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմել գիտականորեն հիմնավորված և գործնականում կիրառվող ընդհանուր (սոցիալական երևույթների և գործընթացների ճանաչման դիալեկտիկական, համակարգային) և մասնավոր (տրամաբանական, համեմական, համակարգակառուցվածքային, սոցիոլոգիական) մեթոդները:

Փորձառնական նյութի հավաքման և ուսումնասիրման նպատակով հետազոտության ընթացքում կիրառվել են նաև վիճակագրական տվյալների

վերլուծության, փաստաթղթերի հետազոտության, հարցազրույցի, անկետավորման, համեմատական-իրավական վերլուծության մեթոդները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության տեսական հիմքն են կազմել քրեական, քրեակատարողական իրավունքների, կրիմինալոգիայի, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի ոլորտներում գիտական ուսումնասիրություններ իրականացրած հայ և օտարերկրյա հեղինակների մի շարք աշխատություններ՝ մենագրություններ, ատենախոսություններ, գիտական հրապարակումներ, մեթոդական և ուսումնական ձեռնարկներ, գիտական ու գործնական այլ նյութեր, զեկույցներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԻՄՔԸ: Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի, «Նվազագույն տարիքի մասին» կոնվենցիաները, «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները, Եվրոպական քրեակատարողական (պենիտենցիար) կանոնները, «Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ» ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ), ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը, ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թ.-ի ապրիլի 23-ի ՍԴՈ-1082 որոշումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի և 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ և այլ իրավական ակտեր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՌՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Հետազոտության փորձառնական հիմքն են կազմել Կրիմինոլոգների եվրոպական միության նախաձեռնությամբ 30-ից ավելի երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, 12-17 տարեկան 2100 դպրոցականների շրջանում միասնական հարցաթերթիկով 2006 թ.-ին իրականացված ISRD-2 և 2014 թ.-ին 1060 դպրոցականների շրջանում անցկացված ISRD-3

ուսումնասիրության արդյունքները: Ատենախոսության փորձառնական հիմքն են կազմել նաև «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ինը անչափահաս դատապարտյալների հետ 2015-2016 թթ.-ին անցկացված հարցազրույցները:

Ներկայացված ուսումնասիրության արդյունքների ներկայացուցչականությունը և իրականացված ատենախոսական հետազոտության հետ համադրելիությունն ապահովելու նպատակով ուսումնասիրվել, վերլուծվել և օգտագործվել են անչափահասների հանցավոր և շեղվող վարքագծի վերաբերյալ այլ հեղինակների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ներկայացված աշխատանքով առաջին անգամ ավարտուն մենագրության ձևով, համակարգային վերլուծության է ենթարկվում ներկա ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի կրիմինալոգիական բնութագիրը:

Աշխատանքում ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում անչափահասների հանցավորության արդի վիճակը և վերջին տասնամյակում դրանում տեղ գտած փոփոխությունները, հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի առանձնահատկությունները, անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի պատճառ հանդիսացող գործոնները, դրանց կրիմինոգեն ազդեցության չեզոքացմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ: Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները՝

1. Թեև ՀՀ-ում պաշտոնապես գրանցվում է անչափահասների հանցավորության նվազում, սակայն դա ոչ թե կապված է իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի, անչափահասների արժեքային համակարգի, բարոյական հայացքների բարելավման, այլ անչափահասների հանցավոր վարքագծի լատենտայնության մեծացման և բնակչության զանգվածում անչափահասների մասնաբաժնի նվազման հետ: Հետևաբար՝ անչափահասների հանցավորությունը ոչ թե նվազում է, այլ դառնում առավել լատենտային: Ավելին, այն ենթարկվում է որակական

բացասական փոփոխությունների. անչափահասների շրջանում ավելանում է ինքնուրույն հանցավոր վարքագիծը, աճում է իգական սեռի ներկայացուցիչների հանցավոր ակտիվությունը, անչափահասների շրջանում առավել հաճախ է ապօրինի կերպով զենք շրջանառվում:

2. Թեև ՀՀ անչափահասները եվրոպական շատ երկրների համեմատ ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում և վիկտիմիզացիայի ենթարկվում, սակայն իրենց եվրոպացի տարեկիցներից ավելի հաճախ են նախընտրում բռնություն գործադրել:

Չնայած ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ վերջին 15 տարվա ընթացքում անչափահասների կողմից թմրանյութի գործածման, ապօրինի շրջանառությանը նրանց ներգրավվածության ցուցանիշները գրեթե չեն աճել, սակայն նշված ժամանակահատվածում Հայաստանում տեղ գտած բացասական փոփոխությունները՝ հատկապես՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, հասարակության խիստ բևեռացումը, գրեթե համատարած բնույթ կրող աղքատությունը, գործազրկությունը, արժեքային անոմիան, զուգակցվելով Իրանի հետ ՀՀ սահմանների բացման, թմրանյութերի գործածման համար քրեական պատասխանատվության վերացման հետ՝ հիմք են տալիս ենթադրելու, որ ՀՀ-ում թմրանյութ գործածողների, այդ թվում թմրանյութ գործածող անչափահասների թվաքանակը աճում է:

3. Հայ ընտանիքներում ծնողների, և հատկապես՝ տատիկների և պապիկների անվերապահ նվիրվածությունը երեխային, երեխաներին «կուրորեն սիրելը», «երես տալը», մանկավարժական գիտելիքների պակասը, դաստիարակությունն իրականացնելիս միմյանց հակադրվելը ձևավորում է թողտվության մթնոլորտ, նպաստում երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորմանը, ինչի վկայությունը լիարժեք համարվող ընտանիքներում դաստիարակվող երեխաների շեղվող վարքագծի դրսևորմանը ավելի բարձր ներգրավվածությունն է:

4. ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի, հատկապես դրա հանրային բարձր վտանգավորություն չունեցող ձևերի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունի ինքնավերահսկումը՝ անչափահասի ռիսկային վարքագծի

դիմելու պատրաստակամությունը և հեղոնիստական գաղափարներին հետևելը:

5. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում գրանցվել է երեխաների հետ ծնողների հուզական կապի և ընտանեկան հսկողության թուլացում, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունեցել երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա: Թեև այլ երկրների համեմատ ՀՀ-ում ծնողների մոտ բարձր է երեխաների առօրյայի մասին տեղեկացվածությունը, սակայն այն հաճախ կրում է ձևական բնույթ. օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ծնողներից շատերի մոտ բացակայում է երեխայի կյանքով, ձեռքբերումներով, ձգտումներով իրական հետաքրքրվածությունը, երեխային աջակցելը: ՀՀ-ում անչափահասի շեղվող կամ հանցածին վարքագծի ձևավորման վրա ներկայումս էական ազդեցություն ունի ծնողների՝ երեխային դաստիարակելու իրենց գործառույթին, մանկավարժական, հոգեբանական գիտելիքներին չտիրապետելը, երեխայի իրավունքները խախտելը:

6. Ինչպես և ընտանիքը, այնպես էլ դպրոցը, երեխային գիտելիքներ տալուց զատ, պետք է զբաղվի նաև երեխայի դաստիարակությամբ, դպրոցական տարիների ավարտին հետևող կյանքին նախապատրաստմամբ, սակայն հասարակությունում և կրթական ոլորտում տեղ գտած փոփոխությունների արդյունքում երեխայի կյանքում կարևոր դերակատարություն ունեցող այս ինստիտուտները մեր երկրում ձախողել են երեխայի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունեցող այնպիսի գործառույթի իրականացում, ինչպիսին է ապագայի առումով նրանց կողմնորոշելը: ՀՀ անչափահասների շրջանում, ի համեմատ եվրոպական այլ երկրների, մեծ թիվ են կազմում ապագայի առումով կողմնորոշում չունեցող անձինք, մինչդեռ ապագայի առումով անորոշությունը բարձրացնում է երեխայի կողմից հետագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

7. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ երեխաները, հասարակության ազատականացման և ընտանեկան, սոցիալական հսկողության թուլացման պայմաններում, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են ազատ ժամանցն անցկացնում տանից, ընտանեկան հսկողությունից դուրս, այդ թվում՝ երեկոյան ժամերին, ալկոհոլ և թմրանյութ գործածում, ինչը բարձրացնում է նրանց կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

8. ՀՀ-ում սոցիալական հսկողությունը երեխայի շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման առումով կանխարգելիչ ազդեցություն ունի, եթե երեխան գիտակցում է, որ հսկողություն իրականացնողը գտնվում է ոչ թե պասիվ դիտորդի դերում, այլ ամեն պահի կարող է ակտիվություն դրսևորել՝ միջամտել: Ցավոք, վերջին տասնամյակում ՀՀ-ում նվազել է այն անձանց թիվը, ովքեր պատրաստ են միջամտել իրենց կամ իրենց մերձավորների շահերը անմիջականորեն չոտնահարող իրավիճակներին:

9. Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի կանխարգելման, դրան արդյունավետորեն արձագանքելու համար հրատապ է ՀՀ գործող քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության վերանայումը՝ առավելապես երեխայի շահերը, կարիքները հաշվի առնող, միջազգային փաստաթղթերի պահանջներին համահունչ կանոնակարգումներ և ընթացակարգեր նախատեսելու, անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի, քրեաիրավական արձագանքման այլ միջոցների համակարգը իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով և քրեաիրավական ներգործության այլ միջոցներով համալրելու նպատակով:

ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել անչափահասների արդարադատության պահանջները արտացոլող ինստիտուցիոնալ համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների տարիքային առանձնահատկություններին տիրապետող, նրանց իրավունքների շրջանակը հստակ պատկերացնող կադրերի, մասնավորապես՝ դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, քրեակատարողական հիմնարկների, պրոբացիոն ծառայության աշխատակիցների ընտրությանը, անհրաժեշտության դեպքում՝ պատրաստմանն ու վերապատրաստմանը:

10. Ընտանիքում առկա խնդիրները իրենց անմիջական ազդեցությունն են գործում անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երեխաների հետ համատեղ ապրող չափահասներին, հատկապես ծնողներին, մանկավարժական, հոգեբանական տարրական գիտելիքներ տալուն, դաստիարակման նրբություններին,

ծնողական վերահսկողության առանձին դրսևորումների արդյունավետության կամ անարդյունավետության մասին տեղեկացնելուն:

11. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր դերակատարություն ունի դպրոցը, ուսումնադաստիարակչական հաստատությունը, հետևաբար այս ոլորտում առկա խնդիրները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է՝ վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, հնարավորինս դրանք բեռնաթափել ու հետաքրքիր դարձնել երեխայի համար, իրականացնել միջոցառումներ ուսուցչի հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ, ինչն, առաջին հերթին, ենթադրում է դպրոցում կոռուպցիայի, մասնավոր պարապմունքների արատավոր պրակտիկայի վերացում, ինչպես նաև ուսուցիչներին զերծ պահելը քաղաքական գործընթացներից, վերացնել երեխաների անհարգելի բացակայությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը, նախատեսել հստակ, ազդեցիկ ներգործության միջոցներ՝ դպրոցից անհարգելի բացակայությունների համար:

12. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր է ՀՀ-ում կանոնակարգել ազատ ժամանցի ոլորտը՝ ընդլայնել երեխաների համար նախատեսված, նրանց համար հասանելի, մատչելի սոցիոմշակութային հաստատությունների ցանցը, պետական բուջեում նախատեսել միջոցներ՝ անապահով ընտանիքների երեխաների՝ սպորտային, մշակութային, ստեղծագործական խմբակներ անվճար մուտքը ապահովելու համար, բոլոր երեխաների համար նախատեսել անվճար մուտք թանգարաններ, պատկերասրահներ, ինչպես նաև տարեկան կտրվածքով նախատեսել 4-5-ական անվճար այցելություն դասական երաժշտության (օպերա, բալետ, համերգ), մանկական համերգի կամ թատրոն, սահմանափակումներ նախատեսել՝ որոշակի հաստատություններում առանց ծնողի ուղեկցության երեխայի գտնվելու առումով, ինտերնետ ակումբներում արգելափակել երեխայի վրա բացասական ազդեցություն թողնող կայքեր անչափահաս հաճախորդների մուտքը, ալկոհոլի վաճառքի բոլոր կետերում ուժեղացնել հսկողությունը երեխաներին ալկոհոլ վաճառելու արգելքի պահպանման նկատմամբ, խստացնել այդ արգելքը խախտելու

համար նախատեսվող պատասխանատվությունը, ԶԼՄ-ների նկատմամբ նախատեսել ժողովրդավարական գրաքննություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ ներկայացված աշխատանքը ՀՀ-ում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի արդի վիճակի վերաբերյալ ՀՀ-ում կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են հետագա ուսումնասիրությունների տեսական հիմք հանդիսանալ: Ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքները, դրանց վրա հիմնված առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդրության, հատկապես՝ քրեական, քրեակատարողական օրենսդրության կատարելագործման, ուսումնական գործընթացի բարելավման՝ ուսումնական նյութերի, գրականության պատրաստման նպատակներով, կիրառվել «Կրիմինալոգիա», «Անչափահասների արդարադատություն», «Քրեակատարողական իրավունք», «Հանցավոր վարքագծի մոտիվացիա», «Վիկտիմոլոգիա» դասընթացների դասավանդման ընթացքում:

Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել նաև իրավակիրառ պրակտիկայում՝ անչափահասների կողմից, նրանց նկատմամբ կամ նրանց ներկայությամբ կատարված գործերը քննելիս, անչափահասներին քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկելիս կամ դրանցից ազատելիս, ինչպես նաև անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու քաղաքականություն կամ առանձին միջոցառումներ մշակելիս:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ: Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, որտեղ էլ անցկացվել է դրա քննարկումը և հավանություն է տրվել հիմնական դրույթներին, եզրահանգումներին ու առաջարկություններին:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները իրենց արտացոլումն են գտել հեղինակի հրապարակումներում, Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում, ինչպես նաև

ՀՀ-ում և արտասահմանյան մի շարք երկրներում կայացած գիտական կոնֆերանսներին ներկայացված զեկուցումներում:

Հետազոտության արդյունքները հաշվի են առնվել ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի մշակման ժամանակ, ինչպես նաև տեղ են գտել Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում դասավանդվող առանձին դասընթացներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, տասը պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից և հապավումների ցանկից: Աշխատանքի ծավալը, առանց հավելվածի և հապավումների ցանկի, կազմում է 262 մեքենագիր էջ:

ԳԼՈՒԽ 1. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

1.1. Անչափահասների հանցավորության վիճակը ՀՀ-ում

Հասարակության անդամների իրավական և սոցիալական պաշտպանությունը, անվտանգության ապահովումը, հանցավորության դեմ պայքարը յուրաքանչյուր պետության առաջնային, սակայն լուծման առումով բարդություն ներկայացնող խնդիրներից է: Հանցավորության առկայությունը, ինքնին, պայմանավորված է սոցիալ-տնտեսական, իրավական, մշակութային, քաղաքական, կազմակերպական, գաղափարախոսական գործոններով, ինչն էլ խիստ դժվարացնում է դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության սահմանումը: Միաժամանակ, հանցավորությունը իրական վտանգ է ներկայացնում պետության անվտանգության համար՝ հանգեցնելով սոցիալ-քաղաքական անկայունության, խոչընդոտում է տնտեսական բարեփոխումների իրականացմանը¹:

Այդ առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ-ում հանցավորության ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում գրանցված սոցիալ-քաղաքական, տնտեսական ճգնաժամը, աղքատության խորացումը², սոցիալական լարվածության, գործազրկության աճը (2015 թ.-ին գործազուրկ է համարվել բնակչության 8.1%-ը (243


¹ Տե՛ս **Кожевников И. С., Верменко В. М.** Анализ состояния борьбы с преступностью несовершеннолетних. Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России 2008. № 2-2, էջ 122:

² ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2015 թ.-ի ընթացքում Հայաստանում աղքատության մակարդակը կազմել է 29.8%՝ 2008 թ.-ին արձանագրված 27.6-ի դիմաց, աղքատների ընդհանուր թվաքանակը՝ մոտ 900 000 մարդ (Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2015թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան 2016, էջ 39: http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf), ընդ որում առանձին փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀՀ բնակչության 45-80%-ը ապրում է աղքատության եզրին (Բոստանջյան. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանում միջին խավը վերացավ <https://armeniasputnik.am/exclusive/20160823/4711323.html>; About 45 percent of Armenia's population is poor, http://arka.am/en/news/society/about_45_percent_of_armenia_s_population_is_poor/ 05.11.2017, 18.45):

700 մարդ)³ ի համեմատ 2008 թ.-ին գրանցված 7.2%-ի (231 600 մարդ³)), արտագաղթը, հասարակության խիստ բևեռացումը, հասարակությունում նոր՝ բարոյական բազմաթիվ արժեքների հանդեպ նյութական արժեքների գերակայություն ենթադրող արժեքային համակարգի ձևավորումը, օրենքի, իրավապահ մարմինների և արդարադատության հանդեպ վստահության պակասը:

ՀՀ Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնից տրամադրված վիճակագրական նյութերի համաձայն՝ 1993 թ.-ի համեմատ 2016 թ.-ին հանցավորությունը ՀՀ-ում բացարձակ թվերով աճել է 1.4 անգամ, և նման ցուցանիշ գրանցվել է ՀՀ-ում բնակչության նվազման պարագայում (ՀՀ բնակչությունը 1993 թ.-ին եղել է 3.753.500, իսկ 2016 թ.-ին՝ 2.986.500 մարդ):

Գծապատկեր 1. Հանցավորությունը ՀՀ-ում 1993-2016թթ.



ՀՀ-ում հանցավորության գործակիցների ուսումնասիրությունը վկայում է, որ հանցավորության աճի տեմպերն ավելի արագ են, ինչն ակնհայտ երևում է աղյուսակ 1-ում: 1993 թ.-ին ՀՀ-ում հանցավորության գործակիցը 100.000 բնակչի հարաբերակցությամբ եղել է 349.2, իսկ 2016 թ.-ին՝ արդեն 628.3, այսինքն՝ հանցավորության գործակիցը ի համեմատ 1993 թ.-ի 2016 թ.-ին աճել է 1.8 անգամ: Եվ դա այն դեպքում, երբ գործակցի հաշվարկման հիմքում դրվել է բնակչության թվի ՀՀ

³ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016, Երևան 2016, http://www.armstat.am/file/article/15._trud_2016_8.pdf, 05.11.2017, 19.11:

պաշտոնական վիճակագրական ցուցանիշը, թեև տարբեր փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀՀ պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում բնակչության իրական պատկերը և շատ ավելի մեծ թիվ է ցույց տալիս, քան իրականում առկա է⁴:

Աղյուսակ 1. Հանցավորությունը ՀՀ-ում 1993-2016թթ.՝ գործակիցներով

Գործակից	Թվական
349.2	1993
264.4	1994
269.2	1995
330.1	1996
325.9	1997
283.3	1998
264.4	1999
316.9	2000
357.4	2001
376.1	2002
344.7	2003
313.6	2004
275.7	2005
302.8	2006
260.9	2007
286.3	2008
441.3	2009
474.4	2010
548.5	2011
518.8	2012
607.6	2013
582.8	2014
568.4	2015
628.3	2016

Պաշտոնական վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ գրանցված հանցավորության ցուցանիշները սկսել են կտրուկ աճել 2009 թ.-ից, ինչը ՀՀ ոստիկանությունը բացատրում է հանցագործությունների առավել հստակ գրանցմամբ⁵: Սակայն, նույնիսկ այդ պատճառաբանության պարագայում պետք է արձանագրել, որ հանցավորությունը դրսևորում է աճի միտում, ինչի ակնառու վկայությունն է 2009 թ.-ի համեմատ 2016 թ.-ին հանցավորության գործակցի գրեթե 1.4 անգամ աճը: Միաժամանակ, ՀՀ դատախազության կողմից ՀՀ նախագահին ներկայացված «ՀՀ Դատախազության 2011 թ.-ի գործունեության մասին» հաղորդման մեջ շեշտվում է այն հանգամանքը, որ «... դեռևս շարունակվում է կատարված հանցագործությունների մասին ոստիկանության մարմիններում քաղաքացիների հաղորդումների չգրանցման և հանցագործության դեպքերը հաշվառումից թաքցնելու արատավոր երևույթը...»⁶, ուստի պատշաճ հաստատում չի գտնում այն վարկածը, որ

⁴ ՀՀ-ում ծնելիության մակարդակը նվազում է, և այդ միտումը շարունակական է. Ռուբեն Եգանյան <http://barometer.am/news/top-news/20150309/1266/>; <http://lurer.com/?p=18568&l=am>

⁵ <http://www.lragir.am/index/arm/0/comments/wv5k/24763>

⁶ ՀՀ դատախազության կողմից ՀՀ նախագահին ներկայացված ՀՀ Դատախազության 2011 թ.-ի գործունեության մասին հաղորդում, էջ 3: <http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2011.pdf>, 08.11.2017, 19.24:

հանցագործությունների աճը պայմանավորված է միայն հանցագործությունների առավել հստակ գրանցմամբ:

Այն, որ ՀՀ-ում հանցավորությունն աճում է, ակնհայտ է նաև ՀՀ-ում գրանցված հանցավորության տվյալները այլ պետությունների հանցավորությունների տվյալների հետ համեմատելիս:

Աղյուսակ 2. Հանցավորության գործակիցները մի շարք երկրներում՝ 2007-2011 թթ

	2007	2008	2009	2010	2011	գործակցի % փոփոխություն
Ալբանիա	318	431	411	507	623	96
Ավստրիա	7174	6885	7081	6397	-	10
Բելգիա	9351	9291	9377	9319	9469	1
Բուլղարիա	1754	1658	1816	1944	1745	-1
Գերմանիա	7635	7436	7383	7253	7328	-4
Դանիա	8174	8710	8923	8511	8394	3
Էստոնիա	3753	3802	3608	3607	3176	-15
Լեհաստան	3024	2839	2962	3016	3009	-1
Խորվաթիա	1708	1681	1657	1657	1714	0
Կիպրոս	970	928	890	1024	1003	3
ՀՀ	261	287	441	474	549	94
Շվեդիա	14334	15005	15186	14671	15042	5
Շվեյցարիա	-	-	8781	8437	8805	-
Չեխիա	3474	3312	3180	2983	3025	-13
ՌԴ	2519	2260	2110	1852	1683	-33
Սլովենիա	4387	4075	4304	4372	4328	-1
Վրաստան	1377	1019	820	783	722	-48
Ուկրաինա	864	832	946	1094	1131	31
Ֆինլանդիա	8259	8315	8287	8066	8525	3
Ֆրանսիա	5808	5725	5646	5506	5462	-6

Հանցավորության և քրեական արդարադատության ոլորտի վիճակագրությունն ամփոփող եվրոպական ժողովածուի վերջին թողարկման մեջ տեղ գտած տվյալների համաձայն՝ 2007-2011 թթ.-ին հանցավորության գործակիցների տոկոսային աճի առումով ՀՀ-ը զիջել է միայն Ալբանիային⁷:

Նման պայմաններում առանձին հետաքրքրություն է ներկայացնում անչափահասների հանցավորության վիճակի գնահատումը: Դասականորեն, նման ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ անչափահասների հանցավորությունը դիտարկվում է որպես չափահասների հանցավորության պահուստային ենթակառույց, այն կանխորոշում է ապագայում ընդհանուր հանցավորության պատկերի փոփոխումը⁸:

Անչափահասների հանցավորության ուսումնասիրության կարևորությունը ներկա փուլում պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առանց դրա վիճակը, կառուցվածքային առանձնահատկությունները, փոփոխման միտումները, անչափահասների հանցավոր վարքագծի պատճառ կամ պայման հանդիսացող երևույթները հասկանալու՝ հնարավոր չէ մշակել անչափահասների հանցավոր ոտնձգությունների կանխման արդյունավետ մեխանիզմներ, ապահովել երեխաների իրավունքների պաշտպանությունը: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թթ ռազմավարական ծրագրի 10-րդ կետը, որպես ռազմավարական հիմնախնդիր է դիտարկվում «...անչափահասների կողմից կատարված իրավախախտումների պատճառների ու պայմանների վեր հանման, զանցանքների և հանցանքների կանխման մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը,...»⁹:

⁷ St' u European Sourcebook on Crime and Criminal Justice Statistics, Fifth edition, Helsinki 2014, էջ 32:

⁸ St' u **Габузян А.А.** Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 159; **Демидова-Петрова Е. В.** Специфика преступности несовершеннолетних как одного из видов преступности в Российской Федерации. Ученые записки Казанского юридического института МВД России. 2017. Т. 2. № 1 (3), էջ 14:

⁹ Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր, Հավելված N 1, ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշման:

ՀՀ Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 1993-2016 թթ. ՀՀ-ում անչափահասների հանցավորության մասնաբաժինը ընդհանուր հանցավորության մեջ տատանվել է՝ կազմելով 2-ից 7 տոկոս. 1993 թ.-ի համեմատ 2016 թ.-ին նկատվել է ընդհանուր հանցավորության կառուցվածքում անչափահասների հանցավորության մասնաբաժնի կտրուկ նվազում՝ 3.3%-ից դարձել է 2%, և դա այն պարագայում, երբ 2007 թ.-ին այդ ցուցանիշը կազմել է 6.7%:

Աղյուսակ 3. Անչափահասների հանցավորության մասնաբաժինը ընդհանուր հանցավորության կառուցվածքում՝ 1993-2016 թթ.

Թվական	Մասնաբաժին
1993	3.3%
1994	3.8%
1995	4.1%
1996	4.0%
1997	6.0%
1998	5.5%
1999	5.8%
2000	5.1%
2001	4.8%
2002	4.3%
2003	5.0%
2004	5.5%
2005	5.8%
2006	5.2%
2007	6.7%
2008	5.8%
2009	3.7%
2010	3.5%
2011	3.2%
2012	2.6%
2013	2.3%
2014	2.2%
2015	2.3%
2016	2%

Հարկ է նշել, որ հանցավորության մեջ անչափահասների հանցավորության մասնաբաժնի առումով ՀՀ-ը առաջատար դիրքեր չի զբաղեցնում:

Աղյուսակ 4. Անչափահասների հանցավորության մասնաբաժինը ընդհանուր հանցավորության կառուցվածքում մի շարք երկրներում 2010թ.

Ալբանիա	11%	Իսպանիա	5.5%	Չեխիա	5%
Ավստրիա	14.9%	Իտալիա	3.4%	ՌԴ	2.8%
Բելգիա	11.4%	Լեհաստան	9.9%	Սլովենիա	4.9%
Բուլղարիա	7.8%	Լիտվա	14.7%	Ուկրաինա	6.2%
Գերմանիա	15%	ՀՀ	3.5%	Ֆրանսիա	18.5%
Էստոնիա	9.9%	Շվեդիա	13.2%	Ֆինլանդիա	12.6%

Հանցավորության և քրեական արդարադատության ոլորտի վիճակագրությունն ամփոփող եվրոպական ժողովածուի վերջին թողարկման մեջ տեղ գտած տվյալների համաձայն՝ ՀՀ-ն այս ցուցանիշով դեռևս 2010 թ.-ին զբաղեցրել է վերջին հորիզոնականներից մեկը¹⁰: Այնուհանդերձ, ՀՀ պաշտոնական վիճակագրության վերլուծությունից հետևում է, որ ներկայացված ցուցանիշը 2010 թ.-ից հետո էլ ավելի է նվազել:

Նման վիճակը կարող է ունենալ մի քանի հնարավոր բացատրություն.


1. ավելի մեծ թվով չափահասներ են հանցավոր վարքագիծ դրսևորել, ինչն էլ հանգեցրել է ընդհանուր հանցավորության մեջ անչափահասների հանցավորության համամասնության նվազման,
2. անչափահասների հանցավորության վերահսկման գործում իրավապահ մարմինները դրսևորել են արդյունավետ աշխատանք, ինչը հանգեցրել է անչափահասների հանցավորության կտրուկ նվազման,
3. նախկինում անչափահասների հանցավորությունը ավելի հստակ է գրանցվել ոստիկանության կողմից, քան չափահասներինը, հետևաբար ներկայումս չափահասների հանցավորության գրանցման պահանջների խստացման պարագայում անչափահասների հանցավորության մասնաբաժինը նվազել է,
4. ինչպես և նախկինում, ներկայումս ևս անչափահասների հանցավորությանը բնորոշ է բարձր լատենտայնությունը՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով, հետևաբար հանցագործության բոլոր դեպքերը արձանագրելու պահանջը անչափահասների հանցավորության լրիվ արտացոլման առումով էական դերակատարություն չի ունեցել,
5. փոփոխության է ենթարկվել անչափահասների հանցավորության կառուցվածքը, դրա մաս հանդիսացող առանձին տարրեր ապաքրեականացվել են կամ դրանց գրանցման նկատմամբ իրավապահ մարմինների վերաբերմունքն է փոփոխվել, ինչն էլ վիճակագրական պատկերում հանգեցրել է անչափահասների հանցավորության նվազման:

¹⁰ Տե՛ս European Sourcebook on Crime and Criminal Justice Statistics, Fifth edition, Helsinki 2014, էջ 78:

Հասկանալու համար, թե առաջադրված տարբերակներից որն է առավել իրատեսական, անհրաժեշտ է վերլուծության ենթարկել անչափահասների հանցավորության վիճակի, կառուցվածքի փոփոխությունը:

ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրությունը վկայում է, որ անչափահասների հանցավորությունը, բացարձակ թվերով, դրսևորում է կայուն նվազման միտում: Մասնավորապես, եթե 1993 թ.-ին գրանցվել է անչափահասների կողմից կատարված 436 հանցանք, ապա 2016 թ.-ին՝ միայն՝ 375:

Գծապատկեր 2. Անչափահասների հանցավորությունը ՀՀ-ում 1993-2016թթ.



Անչափահասների հանցավորության 100.000 բնակչության հարաբերակցությամբ գործակիցների համեմատությունը, սակայն, վկայում է, որ 1993 թ.-ի համեմատ 2016 թ.-ին անչափահասների հանցավորությունը աճել է՝ 11.7-ից դառնալով 12.6: Անչափահասների հանցավորության գործակցային արտացոլմամբ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1997 թ.-ին՝ 19.5, որից հետո՝ 1998-2012 թթ.-ին անչափահասների հանցավորության վիճակը եղել է անկայուն՝ դրսևորելով մերթ աճ, մերթ նվազում, իսկ վերջին 4 տարիների ընթացքում այն դրսևորում է կայուն նվազման միտում, թեև այդ ցուցանիշը 1993 թ.-ի համեմատ դեռևս շարունակում է մնալ բարձր:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, որ ի տարբերություն չափահասների հանցավորության, երբ 2009 թ.-ին գրանցվեց հանցավորության կտրուկ աճ, անչափահասների հանցավորությունում նման պատկեր տեղ չգտավ. 2008 թ.-ի համեմատ 2009 թ.-ին անչափահասների հանցավորության գործակիցը 16.6-ից դարձավ 16.4, որը պահպանվեց նաև 2010 թ.-ին:

Աղյուսակ 5. Անչափահասների հանցավորությունը 1993-2016 թթ.՝ գործակիցներով

Գործակից	Թվական
11.7	1993
10.1	1994
11.2	1995
13.3	1996
19.5	1997
15.5	1998
15.5	1999
16	2000
17.2	2001
16.2	2002
17.2	2003
17.3	2004
15.9	2005
15.7	2006
17.4	2007
16.6	2008
16.4	2009
16.4	2010
17.4	2011
13.6	2012
13.9	2013
12.9	2014
12.8	2015
12.6	2016

Առաջին հայացքից, ստեղծվում է տպավորություն, որ անչափահասների հանցավորությունն իրոք օբյեկտիվորեն նվազում է, ինչը կարող է պայմանավորված լինել այս երևույթի դեմ իրավապահ մարմինների մղած պայքարի արդյունավետությամբ: Չնսեմացնելով անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու գործում իրավապահ մարմինների ձեռնարկած միջոցառումները, այնուհանդերձ, դժվար է սոսկ դրանք դիտարկել որպես անչափահասների պաշտոնապես գրանցված հանցավորության նվազման պատճառ, հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ հասարակությունում առկա սոցիալ-տնտեսական, քաղաքական գործընթացները իրենց անմիջական բացասական ազդեցությունն են գործում նաև երեխաների վրա:

Մասնավորապես, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2015 թ.-ին 15-17 և մինչև 5 տարեկան երեխաների շրջանում, աղքատության մակարդակն ավելի բարձր է եղել այլ տարիքային խմբերի համեմատ: Ընդ որում, նշված կատեգորիայի անձանց շրջանում աղքատության մակարդակը 2015 թ.-ին ավելացել է. եթե 2008 թ.-ին 15-17 տարիքային խմբում ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 2.3, իսկ աղքատության

մակարդակը՝ 32.4, ապա 2015 թ.-ին՝ համապատասխանաբար 2.3 և 36.8: Աղքատության եզրից այն կողմ առավելապես հայտնվել են այն ընտանիքների երեխաները, որտեղ եղել է միայն մեկ չափահաս. նման ընտանիքներում ծայրահեղ աղքատության մակարդակը 2015 թ.-ին կազմել է 2.6, իսկ աղքատության մակարդակը՝ 44.9, մինչդեռ 2008 թ.-ին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 3.8 և 21.0¹¹: Ավելին, կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 2015 թ.-ին բարձր է տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակից՝ 32.1%՝ 28.9%-ի դիմաց: 2015 թ.-ին կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունները կազմել են աղքատների և ամբողջ բնակչության համապատասխանաբար՝ 29% և 27%-ը¹²:

Բազմաթիվ կրիմինալոգիական և հոգեբանական ուսումնասիրություններ¹³ վկայում են, որ սոցիալ-տնտեսական վիճակի կայուն վատթարացումը հանգեցնում է հոգեհուզական գերձանրաբեռնվածության, ընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, ինչն էլ իր բացասական ազդեցություն է գործում անչափահասների վրա. անորոշությունը ներկայի, անվստահությունը ապագայի հանդեպ, գործազրկությունը, կրթություն ստանալու ոլորտում առկա դժվարությունները, ազնիվ աշխատանքով կենսական կարիքները բավարարելու սահմանափակ հնարավորությունները, փոխարենը՝ խաբեությամբ, ռիսկի դիմելով, օրենքը շրջանցելով և անպատիժ մնալով հաջողության հասնելու և նյութական խոշոր միջոցներ ստեղծելու ակնառու

¹¹ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2015թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան 2016, էջ 51: http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

¹² Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2015թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան 2016, էջ 52: http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

¹³ Տե՛ս **Филиппова В.О.** Несовершеннолетняя преступность как объект криминологического исследования. Известия Оренбургского государственного аграрного университета, 2015. № 2 (52), էջ 258-259; **Васкэ** **Е.В.**

Некоторые философские аспекты преступности несовершеннолетних в современной России Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. Серия: Право. 2001, № 2, էջ 76; **Просвирнин В.Г.** Преступность несовершеннолетних: современные тенденции и проблемы профилактики

Вестник Воронежского государственного университета. Серия: Право. 2007. № 1, էջ 300; **Забрянский Г.И.** Социология преступности несовершеннолетних. Минск, 1997. էջ 77; **Пиджаков А.Ю., Макарова Т.Г., Леженникова И.М.** Детерминация преступности несовершеннолетних. Юридическая мысль. 2006. № 5. էջ 83:

օրինակները, դրանով պայմանավորված՝ կրթության արժեքը կունենա հանգեցնում են գիտակցության պարզունակացման, նյութական պահանջմունքների գերակայության հոգևորի հանդեպ, իսկ հաճախ էլ՝ անչափահասին մղում իրավախախտումների կատարման: Ունենալով իրենց պահանջմունքները օրինական ճանապարհով բավարարելու խիստ սահմանափակ հնարավորություններ՝ երեխաները փորձում են պահանջմունքները բավարարել իրենց հասանելի, առավել հեշտ ու արագ թվացող ճանապարհներով, այդ թվում՝ հանցավոր ոտնձգություններ կատարելով:

Նման պայմաններում, ՀՀ-ում անչափահասների հանցավորության պաշտոնապես գրանցված նվազումը կասկածի տեղիք է տալիս, հատկապես երբ ուշադրություն ենք դարձնում անչափահասների հանցավորության գործակիցներին՝ ըստ մարզերի:

Աղյուսակ 6. Անչափահասների հանցավորության գործակիցները 2003-2015 թթ.՝ ըստ մարզերի

	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2003	26	12.2	9.9	8.3	18.9	12.7	13.9	13.1	10.5	7.2	14.1
2004	19.8	5	26.3	15.8	10	19.4	14.9	13.8	15.7	7.4	15.6
2005	19.8	8.6	12.4	2.9	5.4	18	29.8	16.3	9.2	7.2	17.1
2006	16.9	2.1	12.4	5	12.9	20.9	9.8	33.4	12.4	5.	20.9
2007	27.1	10.7	65.5	8.5	9.2	13.5	9.4	19.6	16.4	47.2	17.9
2008	21.9	9.9	26.3	7.4	2.9	21.3	19.4	10.3	5.2	1.8	12.7
2009	16.6	9.2	13.7	20	10.4	26.6	14.6	13.5	6.5	10.8	29
2010	18.8	4.9	12.8	8	20.2	32.6	14.9	12.1	9.2	7.1	12.6
2011	15.6	7	16.7	12.9	15.2	13.5	28.2	12.7	9.2	10.7	32.6
2012	18.9	3.8	14.6	6.7	7.6	10.7	11.8	15.1	8.5	7.7	19.5
2013	20.1	9.1	9.2	8.6	5.1	16.9	18	5.6	9.1	15.5	8.7
2014	14.1	3.8	10	10.5	8.6	18.9	16.9	7.6	8.6	17.5	26.8
2015	14.3	6.2	5.8	9.8	5.2	19.6	22.1	6.6	13.6	9.8	23.9

Մասնավորապես, աղյուսակ 6-ում ներկայացված վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ ՀՀ մի շարք մարզերում, հատկապես Կոտայքում, Լոռիում, Տավուշում, Արմավիրում, Սյունիքում, Վայոց Ձորի մարզում անչափահասների հանցավորությունը աճում է: Օրինակ, Տավուշում անչափահասների հանցավորության գործակիցը 2003 թ.-ին եղել է 14.1, իսկ 2015 թ.-ին՝ 23.9, Լոռիում՝ համապատասխանաբար՝ 12.7 և 19.6, Կոտայքում՝ 13.9 և 22.1, Արմավիրում՝ 8.3 և 9.8, Սյունիքում՝ 10.5 և 13.6, Վայոց Ձորում՝ 7.2 և 9.8 (ուշագրավ է, որ անչափահասների հանցավորության աճ է գրանցվել ՀՀ-ում դասականորեն ցածր հանցավորության մակարդակ ունեցող այնպիսի մարզում, ինչպիսին Վայոց Ձորի մարզն է): Հետևաբար, նման պայմաններում դժվար է խոսել անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողության սահմանման, անչափահասների հանցավորության կայուն նվազման մասին և առավել իրատեսական է թվում դրա լատենտայնացումը:

Ընդ որում, 2015 թ.-ին անչափահասների հանցավորության աճ գրանցած մարզերից Տավուշում, Արմավիրում և Սյունիքում 2008 թ.-ի համեմատ նկատվել է աղքատության ցուցանիշի աճի արագ տեմպ, մասնավորապես՝ Տավուշում 1,5, Արմավիրում և Սյունիքում՝ 1,2 անգամ: Նույն ժամանակամիջոցում Կոտայքում, Լոռիում, Տավուշում և Արմավիրում աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը. այդ ցուցանիշը առավել բարձր է եղել Լոռու (2,8%), ինչպես նաև Կոտայքի (2,3%) մարզերում¹⁴:

Անչափահասների հանցավորության մասին եզրահանգումներ կատարելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև բնակչության մեջ քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասների մասնաբաժնին: ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա են 14-18 տարիքային խմբի անչափահասները:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական վեբկայքում ներկայացված տեղեկատվության համաձայն¹⁵ հնարավոր է գնահատել առանձին

¹⁴ Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական - վերլուծական զեկույց, ըստ 2015թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, Երևան 2016, էջ 44: http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

¹⁵ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2016, էջ 45, http://www.armstat.am/file/article/demog_2016_2.pdf, 05.11.2017, 22.59

տարիքային խմբի ներկայացուցիչների, այդ թվում՝ 15-19 տարեկան անձանց համամասնության փոփոխությունը ըստ տարիների: Թեև առավել հստակ հետևություններ հնարավոր կլինեն կատարել, եթե հասանելի լինեին 14-18 տարեկան երեխաների քանակի վերաբերյալ տվյալները, սակայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վերկայքում վիճակագրական տվյալների բաշխումը ներկայացված է ըստ 10-14, 15-19 տարիքային խմբերի, հետևաբար ստացված արդյունքները հնարավորություն կտան եզրակացություններ կատարել ընդհանուր միտումների մասին:

2003-2015 թթ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ 15-19 տարեկանների մասնաբաժինը տարեցտարի նվազում է՝ 2003 թ.-ի 9.9%-ից 2015 թ.-ին հասնելով 5.9%-ի, ինչը ևս պայմանավորում է անչափահասների հանցավորության նվազումը: Համադրելով 2003 և 2015 թթ. անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քանակը և բնակչության շրջանում նույն թվականներին 15-19 տարիքային խմբի ներկայացուցիչների մասնաբաժինը, կտեսնենք, որ անչափահասների հանցավորության նվազումը զուգակցվում է բնակչության շրջանում այդ տարիքային խմբի ներկայացուցիչների համամասնության նվազմամբ:

Աղյուսակ 7. 15-19 տարիքային խմբի ներկայացուցիչների մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվում՝ 2003-2015 թթ.

Թվական	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Համամասնություն	9.9%	9.9%	9.9%	9.9%	9.7%	9.5%	8.9%	8.3%	8.3%	7.1%	6.6%	6.3%	5.9%

Մասնավորապես, 2003 թ.-ին անչափահասների կողմից կատարված հանցագործությունների բացարձակ ցուցանիշը (553 հանցանք) 1.43 անգամ գերազանցել է 2015 թ.-ի տվյալը (385 հանցանք), մինչույն ժամանակ, 15-19 տարիքային խմբի ներկայացուցիչների քանակը բնակչության ընդհանուր զանգվածում 2003 թ.-ին 1.78 անգամ (320.100) ավելին է եղել 2015 թ.-ի ցուցանիշի (179.700) համեմատ: Եթե դիտարկենք անչափահասների հանցագործությունների բաշխումը նշված խմբերում, ապա կստացվի, որ 2015 թ.-ին այդ հարաբերակցությունը կազմել է 0.21424, իսկ 2003 թ.-ին՝ ընդամենը 0.00172, հետևաբար իրականում այդ տարիքային խմբի ներկայացուցիչները 2015 թ.-ին առավել հաճախ են հանցավոր վարքագիծ դրսևորել: Ընդ որում, 2015 թ.-ի տվյալը այս կտրվածքով գերազանցում է նաև 2014 թ.-ի ցուցանիշը՝ 0.21424 ի համեմատ 0.20419-ի: Հետևաբար, պաշտոնական վիճակագրության մեջ անչափահասների հանցավորության նվազման պատկերը առավելապես բնակչության կազմում այդ տարիքային խմբի ներկայացուցիչների նվազման, քան իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի արդյունք է: Ավելին, կատարված վերլուծությունը վկայում է, որ անչափահասների հանցավորությունը իրականում ոչ թե նվազման, այլ աճի միտում է գրանցում:

Անչափահասների հանցավորության վիճակի մասին պատկերացում կազմելու համար կարևոր նշանակություն ունի անչափահասների հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը:

Առաջին իսկ դիտարկումը, որն աչքի է զարնում, վերաբերում է պաշտոնական վիճակագրության մեջ անչափահասների կողմից կատարվող շահադիտական հանցագործությունների, հատկապես՝ գողությունների թվաքանակի կրճատմանը, ինչին դժվար է հիմնավոր բացատրություն գտնելը:

Ըստ ներկայացված տվյալների՝ անչափահասների կողմից կատարված գողությունները բացարձակ թվերով 2015 թ.-ին 2003 թ.-ի համեմատ նվազել են գրեթե երկու անգամ (գործակիցը 2015 թ.-ին եղել է 6.5 ի համեմատ 2003 թ.-ին գրանցված 12.3-ի): Եվ դա այն պարագայում, երբ ընդհանուր հանցավորության մեջ գողությունները բացարձակ թվերով 2003 թ.-ի համեմատ 2015 թ.-ին աճել են 2.1 անգամ՝ 2829 դեպքից դառնալով 5995:

Աղյուսակ 8. Անչափահասների հանցավորության կառուցվածքային հիմնական բաղադրիչները 2003-2015 թթ.՝ բացարձակ թվերով

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
սպանություն	5	5	4	2	3	3	2	3	0	3	1	2	0
մարմնական վնաս	64	81	50	45	39	33	79	73	85	75	66	74	55
ծեծ	3	0	3	5	2	2	35	49	41	60	66	69	52
առևանգել	1	2	1	1	0	0	1	2	3	0	1	1	1
սեքսուալ ոտնձգություն	3	3	3	0	3	0	4	0	1	6	3	3	3
ավազակություն	9	9	6	9	2	16	10	12	17	2	4	4	0
կողոպուտ	13	13	24	17	16	16	41	26	6	3	7	5	10
գողություն	396	379	354	361	435	414	259	286	318	203	210	181	195
խարդախություն	3	2	5	3	5	6	2	3	1	5	1	1	8
յուրացում	1	0	0	1	0	0	0	1	2	0	0	0	0
շորթում	1	1	1	1	1	3	3	2	0	2	1	0	1
ավտոմեքենայի տիրանալ	8	14	18	5	19	6	9	2	4	0	4	4	9
գույք ոչնչացնել	1	2	2	2	3	3	6	9	2	5	3	4	2
զենքի շրջանառություն	8	7	6	2	8	4	9	16	2	11	9	14	20
ՃՏՊ	5	7	11	11	6	3	11	9	7	11	8	6	6
խուլիգանություն	11	22	12	22	5	8	19	16	17	5	6	2	0
թմրանյութի շրջանառություն	0	3	5	3	3	8	5	1	7	5	8	6	4

Առավել իրատեսական է թվում այն, որ անչափահասների կողմից կատարվող գողությունների, հատկապես դրա հասարակ տեսակների մեծ մասը պարզապես մնում է լատենտային:

Միաժամանակ, կտրուկ նվազել են անչափահասների կողմից կատարված խուլիգանությունների դեպքերը: Դժվար է հավատալ, որ օբյեկտիվ իրականության մեջ անչափահասները խուլիգանական արարքներ չեն կատարում, սակայն վիճակագրական նման ցուցանիշները ևս ունեն իրենց բացատրությունը. խուլիգանություն հանդիսացող արարքների քրեաիրավական գնահատականի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների¹⁶ ընդունման արդյունքում կտրուկ նվազել է այն արարքների շրջանակը, որոնք իրավապահ մարմինների կողմից կարող են որակվել որպես խուլիգանություն, ինչն էլ իր անմիջական արտացոլումն է գտել պաշտոնական վիճակագրության մեջ:

ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն, անչափահասների հանցավորության կառուցվածքում աճել են ծեծի դեպքերը, հատկապես 2009 թ.-ից սկսած, երբ 2008 թ.-ի համեմատ գրանցված ծեծի դեպքերը ավելացան 17.5 անգամ: Նման վիճակը, հավանաբար, արդյունք է 2009 թ.-ին հանցավորության գրանցման նկատմամբ ոստիկանության դիրքորոշման փոփոխման, երբ խնդիր դրվեց առավել հստակ գրանցել ոստիկանությանը հայտնի դարձած հանցագործությունները: Հետևաբար, պետք է ենթադրել, որ հանցագործությունների գրանցման առումով ոստիկանությունը թե՛ չափահասների, թե՛ անչափահասների հանդեպ դրսևորել է նույն մոտեցումը:

Իհարկե, չպետք է անտեսել նաև այն, որ մեր հասարակությունում նկատվում է բռնի, ագրեսիվ մոտիվացիայով վարքագծի տարածում: Վերջին փաստարկի վկայությունն են նաև մեր կողմից անցկացված հարցումների արդյունքները. 2006 թ.-ին անցկացված ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն հարցված անչափահասների 1.4 %-ն էին նշել, որ վերջին մեկ տարվա ընթացքում նրանք բռնություն են գործադրել, վնաս են հասցրել ուրիշի առողջությանը, մինչդեռ 2014 թ.-ին անցկացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 3.1%-ը¹⁷:

¹⁶ Տե՛ս Արման Միերի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՎԲ-223/06 որոշում, Շահեն Նշանի Հախվերդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշում:

¹⁷ Տե՛ս **Anna Margaryan, Ara Gabuzyan**. Juvenile self-reported delinquency in Armenia in 2006. Juvenile Delinquency in Europe and Beyond, Springer, [2010], էջեր 369-382:

Այն, որ բռնությունը անչափահասների շրջանում առավել տարածում է ստանում, ակնառու է, առաջին հերթին, անչափահասների կողմից կատարվող շահադիտական և բռնի հանցագործությունների համամասնությունների համեմատության արդյունքում:

Աղյուսակ 9-ից երևում է, որ անչափահասների հանցավորության կառուցվածքը վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ-ում ենթարկվել է որոշակի փոփոխության: Թեև պահպանվում է այն միտումը, որ անչափահասների կողմից առավել հաճախ կատարվում են շահադիտական, քան բռնի հանցանքներ, սակայն 2009 թ.-ից սկսած այդ համամասնությունը, ըստ պաշտոնական վիճակագրության փոխվել է:

Աղյուսակ 9. Անչափահասների կողմից կատարվող բռնի և շահադիտական հանցագործությունների համամասնությունը 2003-2015 թթ.` բացարձակ թվերով

	բռնի	շահադիտական
2003	16%	76%
2004	20%	73%
2005	14%	76%
2006	15%	77%
2007	9%	82%
2008	9%	85%
2009	27%	59%
2010	27%	62%
2011	28%	65%
2012	36%	52%
2013	34%	53%
2014	39%	49%
2015	29%	56%

Եթե 2003 թ.-ին անչափահասների հանցավորության կառուցվածքում անչափահասների կողմից կատարված շահադիտական հանցավորության մասնաբաժինը 76% էր, իսկ բռնիինը՝ 16%, ապա 2015 թ.-ին այդ համամասնությունը համապատասխանաբար 56% և 29% էր. անչափահասների կողմից բռնությամբ կատարվող հանցագործություններն կառուցվածքային առումով աճել են գրեթե 2 անգամ, իսկ այդ ֆոնի հիման վրա շահադիտականի մասնաբաժինը նվազել է:

Ընդ որում, անչափահասների կողմից բռնությամբ կատարվող հանցագործությունների մասնաբաժինը առավել ինտենսիվ՝ գրեթե 3.3 անգամ աճել է Երևանում՝ 2003 թ.-ի 12%-ից 2015 թ.-ին դառնալով 40 %, Արագածոտնում՝ 4 անգամ՝ համապատասխանաբար կազմելով 6% և 25% , Արարատում և Շիրակում՝ գրեթե 2 անգամ, իսկ մյուս մարզերում էապես չի փոփոխվել:

Ստացված տվյալները հատկապես հետաքրքրական են, երբ դրանք համեմատում ենք ընդհանուր հանցավորության կառուցվածքային առանձնահատկությունների հետ: Ընդհանուր հանցավորության կառուցվածքում շահադիտական և բռնի հանցավորության մասնաբաժինների փոփոխությունը այլ կերպ է զարգացել: Մասնավորապես, եթե անչափահասների հանցավորության կառուցվածքում 2003 թ.-ի համեմատ 2015 թ.-ին նկատվում է շահադիտական հանցավորության մասնաբաժնի նվազում և բռնությամբ կատարվող հանցագործությունների տոկոսային հարաբերակցության աճ, ապա ընդհանուր հանցավորության մեջ աճել են ինչպես բռնի, այնպես էլ շահադիտական հանցագործությունների համամասնությունները:

Աղյուսակ 10. Բռնի և շահադիտական հանցագործությունների համամասնությունը ընդհանուր հանցավորության մեջ 2003-2015 թթ.` բացարձակ թվերով

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
բռնի	16%	18%	14%	13%	12%	12%	21%	21%	22%	27%	24%	26%	26%
շահադիտական	31%	35%	36%	39%	40%	43%	36%	32%	32%	33%	32%	34%	39%

Նման վիճակը, թերևս կարող է բացատրվել այն հանգամանքով, որ անչափահասները առավել սուր են ընկալում կյանքի դժվարությունները, հասարակական կյանքի, այդ թվում՝ իրենց կարիքների, հավակնությունների և հասանելի հնարավորությունների միջև առկա հակասությունները, ինչն էլ զուգակցվելով անչափահասներին բնորոշ հոգեբանական առանձնահատկությունների, հատկապես՝ իմպուլսիվության, ինքնակառավարման ցածր մակարդակի, առանց հետևանքների մասին երկար մտածելու ռիսկի դիմելու պատրաստականության հետ՝ հանգեցնում է բռնության առավել հաճախ գործադրման¹⁸: Դրան մեծապես նպաստում են նաև ՀՀ-ում կատարվող բացասական փոփոխությունները, որոնք անչափահասների մոտ ձևավորում են անվստահություն, ագրեսիա շրջապատողների նկատմամբ, հանգեցնում հասարակությունից օտարման¹⁹:

Առավել մտահոգիչ է անչափահասների կողմից բռնությամբ զուգորդված հանցագործությունների կատարման ժամանակ զենքի կամ որպես զենք ծառայող առարկաների գործադրումը: Թեև ՀՀ Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի կողմից ներկայացված տվյալների համաձայն հրազենի գործադրմամբ հանցանքի կատարման համամասնությունը նվազել է՝ ընդհանուր հանցավորության մեջ 2015 թ.-ին կազմելով 0.4%՝ ի համեմատ 2003 թ.-ին գրանցված 1.07%-ի, իսկ անչափահասների հանցավորության մեջ՝ համապատասխանաբար 0% և 0.36%, սակայն նույն աղբյուրից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2003-2015 թթ. գրանցվել են անչափահասների կողմից ավազակությունների կատարման 100 դեպք, որոնցից 37-ի (37%) պարագայում կիրառվել է զենք կամ որպես զենք ծառայող առարկա: Թերևս, պետք է ենթադրել, որ նման պարագայում կիրառվել է հրազեն չհանդիսացող զենք:

Անչափահասների կողմից զենքի ապօրինի շրջանառությանը առավել հաճախ

¹⁸ Տե՛ս **Думов С.Б.** Условия и причины возникновения насилия как формы проявления девиантности среди несовершеннолетних. Интеграция образования. 2005. № 1-2. էջ 167;

¹⁹ Տե՛ս **Cox P.** History and global criminology: (re)inventing delinquency in Vietnam. British Journal of Criminology, 2012, vol. 52, no. 1, էջ. 17–31; **Chmielewicz J., Rajewski A.** Health politics and strategies of action against drug addiction in European countries and the States. Family Medicine and Primary Care Review, 2012, vol. 14, no. 1, էջ 97–102; **Корнакова С.В., Корягина С.А.** Современные тенденции насильственных преступлений, совершаемых несовершеннолетними. Всероссийский криминологический журнал. 2016. Т. 10. № 1. էջ 148-155; **Куринова Я. И.** Современная преступность несовершеннолетних: криминологическая характеристика и предупреждение. Автореферат диссертации на соискание степени кандидата юридических наук, Ростов-на-Дону, 2011, էջ 11:

ներգրավվելու գործոնը ի հայտ է գալիս նաև ՀՀ պաշտոնական վիճակագրության ուսումնասիրության արդյունքում, այն է՝ գրանցվել է քննարկվող հանցավոր արարքների 2.5 անգամ աճ. 2003 թ.-ին գրանցվել է նման 8, մինչդեռ 2015 թ.-ին՝ 20 դեպք (գործակիցը 2003 թ.-ին եղել է 0.249, իսկ 2015 թ.-ին՝ 0.667): Նշված ցուցանիշները վկայում են այն մասին, որ անչափահասների հանցավորությունը որակական փոփոխությունների է ենթարկվում, վերածվում առավել բարձր վտանգավորություն ունեցող երևույթի:

Անչափահասների հանցավորության վիճակը գնահատելիս առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն հարցի պարզաբանումը, թե որքան հաճախ են անչափահասները իրենց հանցավոր վարքագիծը իրագործել խմբի կազմում: Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ անչափահասները հանցանք կատարելիս նախընտրում են գործել ոչ թե մենակ, այլ ուրիշ անձանց հետ միասին²⁰: Որպես նման վարքագծի ընտրության պատճառ նշվում են տարաբնույթ գործոններ՝ երեխայի կենսափորձի պակասը, մեծերին նմանակելու ձգտումը, ենթարկվողականությունը, հեշտ ներշնչվողականությունը և այլն²¹, սակայն, կարծում ենք, որպես առավել վճռորոշ գործոններ պետք է դիտարկվեն անչափահասի մոտ առավել վառ արտահայտված սոցիալական շփման կարիքը, ինքնահաստատման՝ սեփական «եսի» դրսևորման, իր հասակակիցների, տարիքով իրենից մեծերի հարգանքին արժանանալու պահանջմունքը, ինչպես նաև խմբի կազմում գործելիս՝ ապահովության, ինքնավստահության, անպատժելիության զգացումը: Խմբում անձը դառնում է անդեմ, նվազում է նրա անհատական պատասխանատվությունը, դրանով պայմանավորված՝ նաև վախը հնարավոր պատասխանատվության հանդեպ, ինչն էլ նպաստում է նրա կողմից հանցանքի կատարմանը:

²⁰ Տե՛ս **Юзиханова Э. Г.** Статистические показатели и тенденции преступности несовершеннолетних в новейшей России. //Юридическая наука и правоохранительная практика. 2014, № 4 (30), էջ 84, **Игнатенко В. И.** Групповая преступность несовершеннолетних как объект криминологического исследования//

Юрист Юга России и Закавказья. 2016, № 2 (14), էջ 34:

²¹ Տե՛ս **Аванесов Г.А.** 10 глав о мотивации и мотивах. Через призму науки криминологии / Г.А Аванесов. М. : Юнити- Дана : Закон и право, 2012, էջ 96; Криминология : учебник / под ред. В.Д. Малкова. 2-е изд.М. : Юстицинформ, 2006, էջ 131; **Плешаков А.В.** Институт семьи в предупреждении пьянства и алкоголизма среди несовершеннолетних: его недо- статки и возможности / А.В. Плешаков, А.В. Долгов // Преступность в России и борьба с ней: региональный аспект. М, 2003, էջ 172:

Ասվաճը հաստատվում է նաև ՀՀ-ում առկա պաշտոնական վիճակագրությունը ուսումնասիրելիս, թեև 2003 թ.-ի համեմատ վերջին տարիներին ինչպես ընդհանուր, այնպես էլ անչափահասների հանցավորության մեջ նկատվում է խմբի կազմում հանցանքի կատարման համամասնության նվազում, ինչն էլ վկայում է անչափահասների ինքնուրույն հանցավոր վարքագծի ակտիվացման մասին:

Աղյուսակ 11. Խմբի կազմում կատարված հանցանքները 2003-2015 թթ.՝ տոկոսային հարաբերակցությամբ

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
հանցավորության մեջ	5,1%	9,5%	8,3%	8,5%	10,5%	8%	10,2%	7,1%	9,8%	4,2%	2,7%	2,7%	2,9%
անչափահասների հանցավորության մեջ	34,4%	37,7%	38,9%	39,7%	53,5%	45,9%	36,3%	39%	38%	22%	22,3%	20,8%	21%

Ընդ որում, խմբի կազմում հանցանք գործելիս, անչափահասները հիմնականում ներգրավվում են միայն անչափահասներից կազմված խմբերում:

Աղյուսակ 12. Անչափահասների կողմից խմբի կազմում կատարված հանցանքները կատարումը 2003-2015 թթ.՝ ըստ խմբի տարիքային կազմի

	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
միայն անչափահասներից կազմված խումբ	54,7%	68,7%	69,2%	78,3%	63,7%	51,8%	51,1%	54,3%	57,8%	58,8%	64,4%	54,7%	34,2%
անչափահասներից և չափահասներից կազմված խումբ	45,3%	31,3%	30,8%	21,7%	36,3%	48,2%	48,9%	45,7%	42,2%	41,2%	35,6%	45,3%	65,8%

Այնուհանդերձ, ներկայացված տվյալները դեռևս հիմք չեն տալիս պնդելու, որ անչափահասների կողմից խմբի կազմում հանցանքի կատարման միտումները կայուն կերպով նվազում են, ինչի վկայությունը ՀՀ մարզերում գրանցված արդյունքներն են: Մասնավորապես, 2015 թ.-ին 2003 թ.-ի համեմատ Կոտայքում, Սյունիքում և Տավուշում նկատվում է անչափահասների կողմից խմբի կազմում հանցավոր վարքագծի դրսևորման ակտիվացում:

Աղյուսակ 13. Խմբի կազմում անչափահասների կողմից կատարված հանցագործությունների տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ մարզերի՝ 2003-2015թթ. (տոկոսային հարաբերությամբ)

	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2003	30,8	29,4	29,6	39,1	68,9	30,6	34,2	35,1	3,3	25	31,6
2004	33,9	42,9	41,7	56,8	25	36,4	46,3	35,9	58,3	0	23,8
2005	36,7	8,3	17,7	25	38,5	31,6	75,6	47,8	42,9	50	4,4
2006	38,5	33,3	52,9	57,1	58,1	37,3	59,3	30,9	47,4	66,7	7,1
2007	54	46,7	33,3	50	81,8	42,1	46,2	61,8	68	0	45,8
2008	42,4	50	20,6	33,3	14,3	61,7	81,5	58,6	12,5	0	58,8
2009	31,4	23,1	36,8	47,4	56	36	17,1	26,3	30	33,3	64,1
2010	33,6	28,6	44,4	43,4	49	35,9	52,4	41,2	57,1	50	23,5
2011	24,4	20	36,2	45,1	46	21,1	56,3	41,7	35,7	83,3	52,3
2012	22,3	0	10,8	0	22,2	28	3,3	39,5	0	50	52
2013	20,9	16,7	33,3	8,7	16,7	43,6	13	21,4	23,1	0	45,5
2014	9,9	0	26,9	14,3	10	18,6	58,1	11,1	16,7	0	47,1
2015	10,4	12,5	0	7,7	41,7	22,7	39,3	6,3	42,1	0	53,3

Անչափահասների հանցավորության վիճակի ուսումնասիրությամբ վեր հանվեց
ևս մեկ հետաքրքիր միտում. ՀՀ-ում նկատվում է իգական սեռի անչափահասների
հանցավոր վարքագծի ակտիվացում: 2003 թ.-ին քրեական պատասխանատվության
ենթարկված անչափահասների ընդհանուր զանգվածում իգական սեռի
ներկայացուցիչների մասնաբաժինը 2,5% էր, մինչդեռ 2015 թ.-ին՝ արդեն 8,3%:

Ընդ որում, ի համեմատ իգական սեռի չափահաս ներկայացուցիչների՝
անչափահաս աղջիկների կողմից հանցավոր ակտիվությունն առավել ինտենսիվ է
զարգանում. 2003 թ.-ի համեմատ՝ 2015 թ.-ին չափահաս կանանց կողմից կատարվող
հանցագործությունների գործակիցը 100.000 բնակչի հաշվով աճել է 2.67 (45.6-ից
դառնալով 122), իսկ անչափահասներինը՝ 3.1 անգամ (0.8-ից դառնալով 2.5):

Նման միտումը մտահոգիչ է, քանի որ վկայում է ՀՀ-ում սոցիալական ոչ ֆորմալ
հսկողության խիստ թուլացման մասին, որն առավել խիստ արտահայտված էր
աղջիկների նկատմամբ: Կրիմինալոգիական բազմաթիվ ուսումնասիրություններ
վկայում են, որ իգական սեռի ներկայացուցիչների, հատկապես անչափահասների
հանցավորությանը նպաստող գործոնների շարքում էական դերակատարություն ունի
սոցիալական հսկողության թուլացումը²²:

Իգական սեռի անչափահասների հանցավոր վարքագծի մեջ ներգրավման
աստիճանը տարբեր է ըստ մարզերի. առավել խիստ, ավանդական մոտեցումներ
ունեցող հասարակություններում, որտեղ ուժեղ է սոցիալական հսկողությունը իգական
սեռի ներկայացուցիչների նկատմամբ, ավելի ցածր է հանցագործության մեջ նրանց
ներգրավվածության աստիճանը:

Դրա վկայությունն է այն, որ իգական սեռի անչափահասների հանցավոր
ակտիվության ամենացածր մակարդակը գրանցվել է Վայոց Ձորի, Շիրակի մարզերում,
իսկ առավել վատ ցուցանիշներ գրանցվել են Երևանում, որտեղ սոցիալական
հսկողությունը գնալով թուլանում է:

²² St' u Криминология/ под ред. Шели Дж.Ф. СПб, 2003, էջ 153; Лелеков В. А. Урусова Т. В. О предупреждении женской преступности мерами общесоциальной профилактики, Вестник Воронежского института МВД России, N 2, 2014, էջ 15; **Симосян Т.** Молодежная женская преступность в РА. «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 142.3, 2014, էջ 65:

Աղյուսակ 14. Քրեական պատասխանատվության ենթարկված իգական սեռի անչափահասների համամասնությունը հանցանք կատարած անչափահասների զանգվածում՝ 2003-2015 թթ.՝ ըստ մարզերի (տոկոսային հարաբերությամբ)

	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2003	2,1	5,6	0	0	6,7	0	3,2	6,5	0	0	5,3
2004	2,7	0	3,5	0	0	4,3	0	0	0	0	0
2005	1,7	0	0	0	8,3	4,1	0	2,6	0	0	5,9
2006	1,4	0	0	0	5	2	0	1,9	0	0	8,7
2007	2,1	5,6	0	6,3	6,3	0	0	4,9	0	0	0
2008	3,9	0	0	0	0	5,7	0	3,9	0	0	0
2009	5,2	7,7	7,1	3	8,6	7,6	6,1	10,8	0	0	12
2010	5,7	16,7	7,7	8,7	6,5	5,6	3,9	9,7	0	0	4,4
2011	6	5,6	0	3,7	2,6	7	0	0	5,6	0	0
2012	7	0	5,3	5,6	0	0	3,9	3,6	9,1	0	10,5
2013	6,4	8,3	9,5	4	1,1	10,3	8	5,9	0	0	0
2014	6,8	20	0	5,6	5,6	5,3	0	0	7,7	0	5,9
2015	11,8	0	0	5	9,1	0	6,9	0	12,5	0	11,1

Անչափահասների հանցավորության վիճակի վերաբերյալ հաջորդ դիտարկումը վերաբերում է հանցանք կատարած անձանց տարիքային կազմին. քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների շուրջ 1/5-ը հանցանքի կատարման պահին եղել են 14-15 տարեկան: Ընդ որում, այդ համամասնությունը ՀՀ-ում գրեթե չի փոփոխվել 2003-2015 թթ.-ին՝ 22,2-ից դառնալով 23,1%, սակայն առանձին մարզերում, մասնավորապես Տավուշում (2003 թ.-ին 15.8%-ից 2015 թ.-ին դարձել է 38.9%), Արմավիրում (2003 թ.-ին 23.5%-ից 2015 թ.-ին դարձել է 40%)

նկատվել է այս տարիքային խմբի ներկայացուցիչների հանցավոր վարքագծի ակտիվացում:

Անչափահասների հանցավորության վիճակի գնահատման առումով կարևորություն ներկայացնող գործոններից է նաև ռեցիդիվը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 22-ի 1-ին մասի համաձայն՝ ռեցիդիվ է համարվում դիտավորյալ հանցանքի կատարումը այն անձի կողմից, ով դատվածություն ունի դիտավորյալ հանցանքի կատարման համար: Սակայն նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ. «Այն հանցանքների համար դատվածությունը, որը հանվել կամ մարվել է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև այն հանցանքները, որոնք կատարվել են մինչև անձի տասնութ տարին լրանալը, ռեցիդիվը գնահատելիս հաշվի չեն առնվում»:

Կրիմինալոգիական առումով ռեցիդիվի հասկացությունը շատ ավելի լայն է, քանի որ այն հաշվի է առնում ոչ թե առկա դատվածությունը, այլ շեշտադրում է կատարում նախկինում կատարված հանցագործությանը պետության կողմից տրված արձագանքին:

ՀՀ Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հանցանք կատարած անձանց շրջանում ռեցիդիվ դրսևորած անձանց քանակը զգալիորեն պակասում է՝ 2003 թ.-ի 17.8%-ից դառնալով 2.6%: Այնուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ այդ տվյալները վերաբերում են քրեաիրավական, այլ ոչ թե կրիմինալոգիական ռեցիդիվին, քանի որ ընդգրկում են այն դեպքերը, երբ կատարված հանցանքի համար անձի դատվածությունը մարված կամ հանված չէ:

Թվում է, թե ռեցիդիվի նվազումը պետք է դրական գնահատվեր, քանի որ վկայում է պրոֆեսիոնալ հանցավորության նվազման մասին, սակայն հանցավորության իրական աճի պայմաններում դա միաժամանակ վկայում է, որ ավելի ու ավելի մեծ թվով անձինք են ներգրավվում հանցավոր վարքագծի դրսևորման մեջ: Ասվածի վկայությունն է այն, որ օրինակ Տավուշի մարզում հանցավորության աճի ֆոնի վրա նկատվում է ռեցիդիվ դրսևորած անձանց մասնաբաժնի նվազում՝ 2003 թ.-ի 10,3%-ից 2015 թ.-ին հասնելով 1,1%: Նույն պատկերն է նաև Կոտայքում՝ 2003 թ.-ին 16,7%-ից ռեցիդիվի ցուցանիշը հասել է 0,9%-ի, Սյունիքում՝ 23,5-ից 6,1%:

Անչափահասների ունեցած դատվածությունների վերաբերյալ ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տվյալները վկայում են, որ ՀՀ-ում 2003 թ.-ին քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների շրջանում դատվածություն ունեցող անձինք կազմել են 12,2%, իսկ 2015 թ.-ին՝ 0,3%:

Ընդ որում, ինչպես և չափահասների պարագայում, անչափահասների շրջանում ևս մեծանում է նախկինում հանցանք չկատարած անձանց առավել ակտիվ ներգրավվածությունը հանցանքի կատարմանը, ինչն առավել ակնառու է ըստ մարզերի անչափահասների շրջանում դատվածությունների առկայությունը գնահատելիս:

Աղյուսակ 15. Դատվածություն ունեցող անչափահասների համամասնությունը հանցանք կատարած անչափահասների զանգվածում՝ 2003-2015 թթ.՝ ըստ մարզերի (տոկոսային հարաբերությամբ)

	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
2003	13,8	16,7	6,3	0	0	11,6	12,9	19,4	15,8	0	10,5
2004	9,4	0	3,4	10,5	4,8	4,3	3	3,6	11,1	0	5,3
2005	10,1	14,3	0	0	0	8,2	3,8	2,6	5,3	0	5,9
2006	9,3	0	0	0	0	0	0	3,9	5,3	0	13
2007	7,1	11,1	0	0	6,3	3,6	3,9	7,3	12,5	0	16,7
2008	2,9	6,7	,2	5,9	16,7	8,6	4	0	22,2	0	0
2009	2,9	0	4,8	3	0	10,6	6,1	0	0	0	4
2010	2,8	0	0	0	0	6,6	7,7	0	14,3	0	4,3
2011	1,8	5,6	0	0	0	4,7	0	6,5	0	0	0
2012	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2013	0	0	0	0	0	0	0	0	0	25	0
2014	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2015	0,6	0	0	0	0	0	0	0	0	0	0

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ.

1. Թեև ՀՀ-ում պաշտոնապես գրանցվում է անչափահասների հանցավորության նվազում, սակայն դա ոչ թե կապված է իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի, անչափահասների արժեքային համակարգի, բարոյական հայացքների բարելավման, այլ անչափահասների հանցավոր վարքագծի լատենտայնության մեծացման և բնակչության զանգվածում անչափահասների մասնաբաժնի նվազման հետ: Հետևաբար՝ անչափահասների հանցավորությունը ոչ թե նվազում է, այլ դառնում առավել լատենտային:
2. Անչափահասների հանցավորությունը ենթարկվում է որակական փոփոխությունների. անչափահասների շրջանում ավելանում է ինքնուրույն հանցավոր վարքագիծը, աճում է իգական սեռի ներկայացուցիչների հանցավոր ակտիվությունը, անչափահասների շրջանում առավել հաճախ է ապօրինի կերպով զենք շրջանառվում:

1.2. Անչափահասների շեղվող վարքագծի բնութագիրը ՀՀ-ում

Անչափահասների հանցավորության վիճակն ու միտումները գնահատելու առումով կարևոր նշանակություն ունի ոչ միայն անչափահասների հանցավոր վարքագծի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության, այլև նրանց կողմից դրսևորվող շեղվող վարքագծի վերաբերյալ առկա այլընտրանքային տեղեկատվության ուսումնասիրությունը: Որպես այդպիսիք հանդես են գալիս անչափահասների շեղվող վարքագծի բացահայտման նպատակով իրականացված ուսումնասիրությունները:

Նախ, հստակեցման կարիք ունի «շեղվող վարքագիծ» հասկացությունը, քանի որ կրիմինալոգիական գրականության մեջ կարելի է հանդիպել «դեվիանտ», «դեվիանկվենտ», «հանցավոր» վարքագիծ բնորոշումներին և անհրաժեշտություն է առաջանում հասկանալ, թե ինչ երևույթների մասին է խոսքը:

Հանցավոր վարքագծի բնորոշումը լուրջ խնդիր չի ստեղծում, քանի որ դրաներքո հասկացվում է քրեական պատասխանատվության տարիքի հասած, մեղսունակ անչափահասի կողմից քրեական օրենսգրքով արգելված արարքի մեղավորությամբ կատարումը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 24-ի 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին լրացել է նախքան հանցանք կատարելը»: Միևնույն ժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում թվարկված են այն հանցավոր արարքները, որոնց կատարման դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության 14 տարեկանից, մասնավորապես՝ սպանության (104-108-րդ հոդվածներ), դիտավորությամբ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու (112-116-րդ հոդվածներ), մարդուն առևանգելու (131-րդ հոդված), բռնաբարության (138-րդ հոդված), սեքսուալ բնույթի բռնի գործողությունների (139-րդ հոդված), ավազակության (175-րդ հոդված), գողության (177-րդ հոդված), կողոպուտի (176-րդ հոդված), շորթման (182-րդ հոդված), առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային կամ տրանսպորտային այլ միջոցին ապօրինաբար տիրանալու (183-րդ հոդված), ծանրացուցիչ հանգամանքներում գույքը

դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու (185-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասեր), զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր հափշտակելու կամ շորթելու (238-րդ հոդված), թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելու կամ շորթելու (269-րդ հոդված), տրանսպորտային միջոցները կամ հաղորդակցության ուղիները փչացնելու (246-րդ հոդված), խուլիգանության (258-րդ հոդված) համար:

Ներկայացված հանցավոր արարքների ցանկը սպառնիչ է և այն, ըստ էության, հանդիսանում է պետության կողմից դրսևորված քաղաքականության, պետական կամքի արդյունք, քանի որ նշված ցանկում տեղ գտած արարքների շրջանակը կարող է ժամանակի ընթացքում փոփոխության ենթարկվել: Ընդ որում, նույնը կարելի է ասել նաև քրեական պատասխանատվության տարիքի մասին:

Պատահական չէ, որ չկա որևէ միջազգային իրավական փաստաթուղթ, որում հստակ սահմանված լինի քրեական պատասխանատվության տարիքը. միակ պահանջը, որն միջազգայնորեն ամրագրված է վերաբերում է այդ տարիքը շատ ցածր չսահմանելուն և օրենսդրական մակարդակում ամրագրելուն (Պեկինյան կանոններ, հոդված 4):

Արդյունքում՝ տարբեր երկրների քրեական օրենսդրությունները համեմատելիս, կարելի է հանդիպել քրեական պատասխանատվության տարիքի սահմանման բևեռայնորեն իրարից տարբերվող մոտեցումների, մասնավորապես՝ ԱՄՆ-ի տարբեր նահանգներում երեխան քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել սկսած 6, Եգիպտոսում՝ 7, Շոտլանդիայում՝ 8, Շվեյցարիայում 10 (ընդ որում, մինչ 2006 թ.-ը այս երկրում նույնպես երեխաները ենթակա էին քրեական պատասխանատվության 7 տարեկանից), Անգլիայում, Հյուսիսային Իռլանդիայում՝ 10, Իռլանդիայում, Պորտուգալիայում, Հունաստանում, Թուրքիայում՝ 12, Ֆրանսիայում՝ 13, Գերմանիայում, Ավստրիայում, Իտալիայում, Իսպանիայում՝ 14, Դանիայում, Ֆինլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում՝ 15, Բելգիայում, Լյուքսեմբուրգում՝ 18 տարեկանից²³:

²³ Տե՛ս **Muncie J.** The ‘Punitive Turn’ in Juvenile Justice: Cultures of control and rights compliance in Western Europe and the USA. *Jouth Justice* 2008, Volume 8, Issue 2, էջ 107-121; **D ü n k e l F.** Juvenile Justice

Քրեական պատասխանատվության տարիքի սահմանումը ունի ոչ միայն քրեաիրավական, այլև կրիմինալոգիական նշանակություն. մի կողմից, այն կարևոր նշանակություն ունի տարբեր երկրներում անչափահասների հանցավորության տվյալները համեմատելիս, մյուս կողմից՝ այն սահմանում է երեխայի կողմից իրավախախտ վարքագծի դրսևորման պարագայում պետական արձագանքման միջոցների կիրառման սահմանները, օրինակ՝ պետությունը իրավունք չունի քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձին ենթարկել քրեական պատասխանատվության, և եթե պետությունը օրենսդրական մակարդակով չի սահմանում քննարկվող կատեգորիայի անձանց նկատմամբ պետական ներգործության այլ ընթացակարգեր, ապա գործնականում, ինչպես ՀՀ-ի պարագայում է, նման վարքագիծ դրսևորած երեխաների հետ աշխատանքը առավելապես ընթանում է չկանոնակարգված ձևով, կրում է ձևական բնույթ և ոչ միշտ է արդյունավետ լինում:

Եթե անչափահասի հանցավոր վարքագծի բնորոշումը մեծ դժվարություններ չի առաջացնում, ապա նույնը չի կարելիս ասել դեվիանտ վարքագծի բնորոշման առումով: Կրիմինալոգիական, հոգեբանական, մանկավարժական գրականության մեջ կարելի է հանդիպել դեվիանտ վարքագծի տարբեր բնորոշումների. մի դեպքում այն բնորոշվում է որպես օրենքներում, սոցիալական դիրքորոշումներում, կանոններում ու բարոյական նորմերում ամրագրում ստացած հասարակական պահանջներից շեղվող արարքների կատարում, որն առավելապես պայմանավորված է հասարակությունում իր տեղի վերաբերյալ անձի սխալ պատկերացմամբ²⁴, մյուս դեպքում՝ որպես սոցիալական և իրավական սանկցիաների հանգեցնող հասարակական նորմերից շեղվող վարքագիծ՝ պայմանավորված ոչ ադեկվատ սոցիալիզացիայով, հասարակության արժեքներն ու սոցիալական նորմերը մանկապատանեկան տարիքում ոչ բավարար չափով յուրացմամբ²⁵:

Դեվիանտ վարքագիծը նաև բնութագրվում է որպես սոցիալ-հոգեբանական երևույթ, որը դրսևորվում է կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ հասարակությունում ընդունված միջանձնային փոխհարաբերությունների նորմերից

Systems in Europe – Reform developments between justice, welfare and ‘new punitiveness’. Kriminologijos studijos 2014/1 ; էջ 43-44:

²⁴ Տե՛ս **Клейберг Ю. А.** Психология девиантного поведения: М.: Просвещение, 2003, էջ 154:

²⁵ Տե՛ս **Менделевич В. Д.** Психология девиантного поведения. СПб.: Речь, 2005, էջ 445:

շեղվող վարքագծով²⁶: Լ. Ռալնիկովան անձի դեվիանտ վարքագիծը դիտարկում է որպես հասարակություն ընդունված նորմերից շեղվող արարքի կատարում՝ պայմանավորված սեփական վարքագծի նկատմամբ բարոյագեղագիտական վերահսկողության բացակայությամբ²⁷:

Դեվիանտ վարքագծի բնորոշման առավել լայն տարածում ստացած մոտեցման համաձայն՝ այն հասարակությունում ընդունված իրավական, բարոյական նորմերից ու կանոններից շեղված վարքագիծն է՝ պայմանավորված ինչպես երեխայի անձնային հատկանիշներով, այնպես էլ նրա դաստիարակության և զարգացման գործընթացում սոցիալական, ընտանեկան, կրթական գործոններով, շփման ոլորտով²⁸: Ինչ վերաբերում է դելինկվենտ վարքագծին, ապա այն ավելի նեղ ընդգրկում ունի, դրսևորվում է իրավական նորմերի խախտմամբ և փաստացի նույնանում է իրավախախտ վարքագծի հետ²⁹:

Պետք է փաստել, որ բոլոր հեղինակները համակարծիք են մի հարցում. դեվիանտ կամ շեղվող վարքագիծը հասարակությունում ընդունված իրավական, բարոյական, համակեցության նորմերից ու կանոններից շեղվող վարքագիծն է, որի հիմքում ընկած են անձի սոցիալիզացիայի խնդիրները: Ընդ որում, դելինկվենտ և հանցավոր վարքագծերը նույնպես շեղվող վարքագծի տարատեսակ են. եթե առաջինը նույնանում է իրավախախտ վարքագծի հետ, ապա հանցավոր վարքագիծը՝ շեղվող վարքագծի առավել վտանգավոր դրսևորումն է:

Ակնհայտ է, որ շեղվող վարքագծի ոչ բոլոր դրսևորումներն են հանգեցնում պատասխանատվության, սակայն կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ անչափահասի շեղվող վարքագիծը անտեսելը, դրա պատճառ հանդիսացող երևույթների բացասական ազդեցությունը չվերացնելը հետագայում

²⁶ Տե՛ս **Кондрашенко, В.П.** Девиантное поведение у подростка: социально - психологические и психиатрические аспекты. Минск, 1988, էջ 77:

²⁷ Տե՛ս **Ральникова Л.А.** Девиантное поведение несовершеннолетних: причины и проявления. Северо-Кавказский психологический вестник. 2015. № 3 (13), էջ 34-41.

²⁸ Տե՛ս **Паатова М.Э., Бегидова С.Н., Хакунов Н.Х.** Теоретико-методологический анализ социально-педагогических феноменов «девиантное поведение» и «делинквентное поведение» подростков. Вестник Адыгейского государственного университета. Серия 3: Педагогика и психология. 2012. № 1. էջ 96-104:

²⁹ Տե՛ս **Миннегалиев М.М.** Типология и сущность понятия «девиантное поведение» в воспитательно-профилактической работе с несовершеннолетними. Вестник Башкирского университета. 2012. Т. 17. № 3. էջ 1416-1422:

հանգեցնում է այդ անձի կողմից հանցավոր վարքագծի դրսևորման³⁰: Ի Ուպորովի կարծիքով, անչափահասների հանցավորությունը ուղղակիորեն կոռելյացիայի մեջ է գտնվում շեղվող վարքագծի հետ³¹:

ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի ուսումնասիրության նպատակով 2006 և 2014 թթ.-ին 12-17 տարեկան դպրոցականների շրջանում մեր կողմից անցկացվեցին ուսումնասիրություններ՝ ուղղված նրանց շեղվող վարքագծի և վիկտիմիզացիայի իրական վիճակի բացահայտմանը: Այդ ուսումնասիրությունները Կրիմինոլոգների եվրոպական միության նախաձեռնությամբ և աջակցությամբ կենսագործված, եվրոպացի գործընկերների հետ համատեղ մշակված հարցաթերթով 25-ից ավելի պետություններում իրականացված ISRD-2 և ISRD-3 հետազոտությունների մի մասն էին կազմում, ինչն էլ հնարավորություն ընձեռեց ՀՀ-ում ստացված արդյունքները համադրել այլ երկրներում ստացված արդյունքների հետ:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված էին հարցեր, որոնք նպատակ ունեին վեր հանել ինչպես անչափահասների շրջանում առավել հաճախ տեղ գտնող շեղվող վարքագծի դրսևորումները (օրինակ՝ ալկոհոլի գործածումը), այնպես էլ քրեական օրենքով արգելված արարքների կատարման կամ դրանցից տուժելու հաճախականությունը:

Կատարված ուսումնասիրությունը վեր հանեց մի ուշագրավ դիտարկում. իրենց կյանքի ընթացքում երբևիցե ալկոհոլ գործածած անչափահասների քանակը ՀՀ-ում շատ ավելի մեծ է, քան եվրոպական բազմաթիվ երկրներում: Մասնավորապես, ISRD-2 հետազոտության շրջանակներում, այդ ցուցանիշով՝ 66.3%, ՀՀ-ը հայտնվել էր ալկոհոլի գործածման առավելագույն ցուցանիշներ արձանագրած երկրների հնգյակում, առաջ անցնելով ալկոհոլի գործածման մեծ ծավալներ ունեցող ՌԴ-ից և Ֆինլանդիայից, իրենից առջև թողնելով միայն Էստոնիային, Հունգարիային, Չեխիային և Լիտվային³²:

³⁰ Տե՛ս *Weis J.G., Sakumoto K., Sederstrom J., Zeiss C.* Jurisdiction and the elusive status offender: A comparison of involvement in delinquent behavior and status offences. Washington, 1980, էջ 96; *Kobrin S., Hellum F., Peterson J.* Offence patterns of status offenders. Critical Issues in Juvenile Delinquency, 1980, էջ 211; *Shelden R., Horwath J., Tracy S.* Do status offenders get worse? Some clarifications on the question of escalation. Crime and delinquency 35, 1989, էջ 214-215:

³¹ Տե՛ս *Унопов И.В.* Девиантное поведение несовершеннолетних как предпосылка совершения ими преступных деяний. Общество и право. 2012. № 4 (41), էջ 312:

³² Տե՛ս *Steketee M., Jonkman H., Berten H., Vettenburg N.* Alcohol use Among Adolescents in Europe, Utrecht 2013, էջ 59, <http://www.verwey-jonker.nl>.

2014 թ.-ի ISRD-3 տվյալների համաձայն՝ իրենց կյանքի ընթացքում երբևէ ալկոհոլ գործածած անչափահասների քանակը նվազել էր՝ դառնալով 45.6%:

ISRD-2 ուսումնասիրության արդյունքները, սակայն, վկայում են, որ թեև ՀՀ-ում մեծ թիվ են կազմել իրենց կյանքում երբևէ ալկոհոլ գործածած անչափահասները, սակայն հարբածության վիճակում հայտնվածների թիվը շատ փոքր է եղել՝ 6.5%-ը, մինչդեռ Էստոնիայում այդ ցուցանիշը եղել է շուրջ 49%:

Միաժամանակ, ՀՀ անչափահասների կողմից ալկոհոլի գործածումը հաճախակի բնույթ չի կրել. վերջին մեկ ամսվա ընթացքում ալկոհոլի գործածման հաճախականության ցուցանիշով ՀՀ անչափահասները 25 երկրների տվյալների համեմատության ժամանակ հայտնվել են վերջին հնգյակում. ալկոհոլի գործածման ավելի ցածր հաճախականություն գրանցվել է միայն Իսլանդիայում, Ֆրանսիայում և Բոսնիա-Հերցեգովինայում³³:

Թեև բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ վկայում են, որ ալկոհոլի և թմրանյութի գործածումը կոռելացված է անչափահասների շեղվող՝ հատկապես բռնի վարքագծի դրսևորման հետ³⁴, սակայն ՀՀ-ում այն նույն դետերմինացնող ազդեցությունը չունի, ինչի վկայությունը նաև ՀՀ Ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվությունն է: Այդ տեղեկատվության համաձայն՝ 2003 թ.-ին հանցանք կատարած անչափահասների 3.9%-ը հանցանքի կատարման պահին գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ, սակայն հետագա տարիներին նշված ցուցանիշը կայուն նվազում է արձանագրել՝ 2005 թ.-ին եղել է 3.1%, 2007 թ.-ին՝ 1.6%, 2009 թ.-ին՝ 1.5%, 2011 թ.-ին՝ 1.3%, 2013 և 2015 թթ.-ին՝ 0%:

Պետք է նշել, սակայն, որ անչափահասների հանցավոր վարքագծում ալկոհոլի գործոնի ցածր դերակատարությունը ոչ թե պետական արդյունավետ

³³ Տե՛ս **Steketee M., Jonkman H., Berten H., Vettenburg N.** Alcohol use Among Adolescents in Europe, Utrecht 2013, էջ 61, <http://www.verwey-jonker.nl>

³⁴ Տե՛ս **Barnes G., Welte J., Hoffmann J.** Relationship of Alcohol Use to Delinquency and Illicit Drug Use in Adolescents: Gender, Age, and Racial/Ethnic Differences. *Journal of drug issues* 2002, 32(1), էջ 153-178; **Зайко Т.М.** Психолого-криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника В книге: Меры борьбы с преступностью несовершеннолетних и молодежи: правовой и психолого-криминологический аспекты Тамбов, 2017, էջ 29:

քաղաքականության, այլ թեև թուլացող, սակայն դեռևս առկա ընտանեկան, սոցիալական հսկողության արդյունք է:

ՀՀ-ում անչափահասների կողմից ալկոհոլի գործածման արգելք սահմանված է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հոդված 178-ով, որով պատասխանատվություն է սահմանվում հասարակական վայրերում մինչև 16 տարեկան դեռահասների հարբած վիճակում երևալու, ինչպես նաև նրանց կողմից ոգելից խմիչքներ օգտագործելու համար: Ընդ որում, պատասխանատվությունը նախատեսված է ոչ թե երեխաների, այլ նրանց ծնողների համար: Միաժամանակ, նույն օրենսգրքի հոդված 158-ը 50 000 դրամի չափով տուգանք է սահմանում 18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելու համար, իսկ 100 000 դրամի չափով տուգանք՝ նրանց նշված առարկաների և նյութերի վաճառքին ներգրավելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 166.1-ը պատասխանատվություն է սահմանում 18 տարին լրացած անձի կողմից երեխային պարբերաբար ոգելից խմիչքների օգտագործմանը, ուժեղ ներգործող կամ այլ թմրեցնող նյութերի ոչ բժշկական օգտագործմանը ներգրավելու համար: Այնուհանդերձ, ՀՀ դատական վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ վերջին 10 տարիների ընթացքում նշված հոդվածով ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

Ներկայացված օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ ՀՀ-ում, ինչպես և Իտալիայում է, սահմանված չէ նվազագույն տարիք, որից սկսած երեխան կարող է ալկոհոլ գործածել. սահմանափակումները վերաբերում են մինչև 16 տարին լրանալը հասարակական վայրում ալկոհոլի գործածմանը, ինչպես նաև հասարակական վայրում հարբած վիճակում երևալուն:

Մինչդեռ Եվրոպական բազմաթիվ երկրներում՝ Դանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում որպես ալկոհոլի գործածման նվազագույն շեմ դիտվում է 15 տարեկանը, Շվեյցարիայում՝ 15 տարեկանը՝ գարեջրի, գինու, իսկ 18 տարեկանը՝ այլ ալկոհոլի գործածման համար, Չեխիայում, ՌԴ-ում, Ֆրանսիայում, Հունգարիայում՝ 18 տարեկանը, Իսլանդիայում, Շվեդիայում՝ 20 տարեկանը: Ալկոհոլի իրացման

պարագայում ևս պետությունները սահմանում են տարբեր տարիքային շեմեր, օրինակ՝ Բելգիայում, Իսպանիայում որպես այդպիսին սահմանվում է 16 տարեկանը, Գերմանիայում՝ 16 տարեկանը գարեջրի և գինու, իսկ 18 տարեկանը՝ ալկոհոլային այլ խմիչքների ձեռք բերման համար, Նորվեգիայում, Սլովենիայում, ՌԴ-ում, Ֆրանսիայում՝ 18 տարեկանը, Շվեդիայում՝ 20 տարեկանը³⁵:

Թեև ՀՀ-ը հայտնի է ալկոհոլի, հատկապես գինու և կոնյակի արտադրությամբ, սակայն ալկոհոլի անվերահսկելի գործածման առումով այն երբեք առաջատար դիրքեր չի զբաղեցրել: Դրա պատճառը, թերևս, ոգելից խմիչքների գործածման յուրահատուկ մշակույթն է (ալկոհոլի գործածումը զուգակցելով սննդի ընդունման, կենացների հետ), ինչպես նաև հարբած վիճակում հասարակության մեջ հայտնվելը, ինքնակառավարումը կորցնելը հասարակության անդամների մեծամասնության կողմից ամոթալի երևույթ դիտելը:

Այնուհանդերձ, վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում նկատվում է ալկոհոլի գործածման հաճախականության աճ: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալների վերլուծությունը վկայում է 2003 թ.-ի համեմատ 2015 թ.-ին «հարբեցողություն, հարբեցողային փսիխոզ» ախտորոշում ունեցող առաջնակի հիվանդների թիվը գրեթե կրկնապատկվել է՝ 100 000 բնակչի հաշվով գործակիցը 2003 թ.-ին գրանցված 6.6-ից 2015 թ.-ին դարձել է 12.6³⁶:

Այս բացասական փոփոխությունը, բարեբախտաբար, դեռևս իր անմիջական արտացոլումը չի գտել անչափահասների շեղվող վարքագծում: Թեև մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում գրանցվել է ալկոհոլ գործածած անչափահասների տոկոսային բարձր ներկայացուցչականություն, սակայն ալկոհոլի գործածումը հիմնականում տեղի է ունեցել ծնողների կողմից վերահսկելիության պայմաններում, ընտանեկան միջոցառումների ժամանակ, երբ երեխային թույլ է տրվել փոքր քանակությամբ ալկոհոլ գործածել (փաստացի, նշվածը ալկոհոլի գործածման մշակույթի ուսուցանման դրսևորում է): Մեր ուսումնասիրության արդյունքների

³⁵Տե՛ս **Van den Toorn J., Steketee M., Jonkman H.** Paper on Policies toward Alcohol among Juveniles in Europe. NL, 2012, էջ 7:

³⁶ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Առողջապահություն, 2005, էջ 144, <http://armstat.am/file/doc/527.pdf>; Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Առողջապահություն, 2016, էջ 161, <http://armstat.am/file/doc/99499408.pdf>

համաձայն՝ ավոհոլ գործածած անչափահասների միայն 12.7%-ն է նշել, որ ավոհոլը գործածել է մենակ, 24.7%-ը նշել է. որ ավոհոլ է գործածել իր հասակակիցների հետ, իսկ մյուսները ավոհոլ են գործածել ընտանիքի անդամների վերահսկողությամբ:

Թեև հայ հասարակությունում առկա է հանդուրժողական մոտեցում անչափահասների կողմից ոգելից խմիչքների վերահսկելի գործածման նկատմամբ, սակայն բացարձակ անհանդուրժողականություն է դրսևորվում թմրամիջոցների գործածողների հանդեպ, ինչով էլ, թերևս, պայմանավորված է մեր ուսումնասիրության շրջանակներում անչափահասների կողմից թմրամիջոցների գործածման տոկոսային ցածր ներկայացուցչականությունը:

Թմրամիջոցների գործածման, ապօրինի շրջանառության վերաբերյալ հայ երեխաների հաղորդումները շատ ավելի քիչ են, քան այլ երկրներից ստացված արդյունքները: Մասնավորապես, եթե 2006 թ.-ին ՀՀ-ում հարցվածների 0.2% էր տեղեկացրել թմրամիջոցների իրացմանը ներգրավվելու մասին, ապա Շվեյցարիայում՝ 3.7%, ԱՄՆ-ում՝ 5%, Ֆինլանդիայում՝ 1.1%-ը³⁷:

Աղյուսակ 16. ՀՀ անչափահասների շրջանում թմրամիջոցների գործածումը և ապօրինի շրջանառությունը՝ ISRD-2 և ISRD-3

	2006 թ. – ISRD-2	2014թ.- ISRD -3
մարիխուանայի, հաշիշի գործածում	1.4%	2.2%
էքստազիի գործածում	0.1%	0.8%
այլ թմրամիջոցի գործածում	0.2%	0.5%
թմրամիջոցի իրացում	0.2%	-

Այնուհանդերձ, վերջին տարիներին նկատվում է անչափահասների կողմից թմրամիջոցների օգտագործման տոկոսային հարաբերակցության մեծացում, որը վերաբերում է ինչպես մարիխուանայի, այնպես էլ այլ թմրանյութերի գործածմանը:

Երեխաների շրջանում թմրանյութի գործածման աճը անմիջական արդյունք է Հայաստան թմրամիջոցների ավելի հաճախ ներթափանցման, դրանց ապօրինի

³⁷ Տե՛ս *Junger-Tas J, Marshall I., Enzmann D., Killias M.*, etc. Juvenile Delinquency in Europe and Beyond. Results of the Second International Self-Reported Study, Springer 2010, էջ 83, 152, 165:

շրջանառության աճի: Թմրամիջոցների շրջանառության առումով հետաքրքիր դերակատարություն ունեն ՀՀ աշխարհագրական դիրքը և հարաբերությունները հարևանների հետ: ՀՀ-ը փակ սահմաններ ունի Ադրբեջանի և Թուրքիայի հետ, որոնք հայտնի են թմրամիջոցների շրջանառության ոլորտում իրենց ակտիվ ներգրավվածությամբ: Նախկինում ՀՀ-ը փակ սահմաններ ուներ նաև իր մյուս հարևանի՝ թմրանյութերի շուկայի առաջատարների շարքին դասվող Իրանի հետ: Ներկայումս, սակայն, Իրանի հետ սահմանները բացվել են, ինչն էլ հնարավորություն է ընձեռել Իրանից ՀՀ թմրանյութերի ապօրինի ներթափանցման համար և անմիջականորեն խթանել է ՀՀ-ում թմրանյութերի գործածման աճը: 2003 թ.-ի համեմատ 2015 թ.-ին 3.7 անգամ աճել են նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության պաշտոնապես գրանցված դեպքերը՝ 134-ից դառնալով 492:

Վերջինս վկայում է, որ ՀՀ-ում մեծանում է նաև թմրամիջոցների շուկան, որը երկար ժամանակ, թմրամիջոցների ցածր պահանջարկի պարագայում, զարգացում չէր ապրում:

ՀՀ քրեական օրենսդրությունը պատասխանատվություն է սահմանում թմրանյութերի ապօրինի շրջանառության, բայց ոչ գործածման համար (ՀՀ քրեական օրենսգրքում մինչ 2008 թ.-ի մայիսի 26-ի օրենքով կատարված փոփոխությունը թմրամիջոցներ գործածելը առաջացնում էր քրեական պատասխանատվություն), ուստի հանցագործությունների վերաբերյալ ՀՀ պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը հնարավորություն չի ընձեռում հետևություններ կատարել թմրամիջոցների գործածման առկա վիճակի մասին:

Փոխարենը, ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության վերկայքում հասանելի են բնակչության առողջական վիճակին վերաբերող տվյալները, որոնց վերլուծությունը վկայում է, որ 2003 թ.-ի համեմատ 2015 թ.-ին գրանցվել է «թմրամոլություն» ախտորոշմամբ առաջնակի հիվանդների կտրուկ աճ. եթե 100 000 բնակչի հաշվով գործակիցը 2003 թ.-ին եղել է 0.5, 2004 թ.-ին՝ 0.2, 2008 թ.-ին՝ 4.1, 2009 թ.-ին՝ 6.2, ապա 2011 թ.-ին՝ արդեն 11.3, 2012 թ.-ին՝ 21.9, 2013 թ.-ին՝ 24, 2014 թ.-ին՝ 18.1, 2015 թ.-

ին՝ 19.3³⁸:Ընդ որում, նման ցուցանիշները չնչին տոկոսն են կազմում թմրանյութ օգտագործողների իրական զանգվածի, որը մնում է լատենտային: Մասնավորապես, առանձին փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀՀ-ում թմրամոլների թիվը 30 000-ից ավելի է³⁹:

Եթե 2003-2004 թթ.-ին գրանցված ցածր ցուցանիշները կարող են բացատրվել թմրամիջոցների գործածման համար այն ժամանակ գոյություն ունեցած քրեական պատասխանատվության պայմաններում այս երևույթի բարձր լատենտայնությամբ, թմրամոլների կողմից առողջապահական հիմնարկներ չդիմելով, իսկ 2008-2009 թթ.-ին գրանցված աճը՝ թմրամիջոցների գործածման ապաքրեականացման արդյունքում առողջապահական հիմնարկներ դիմելիության աճով, ապա հետագա տարիներին «թմրամոլություն» ախտորոշմամբ անձանց քանակի ավելացումը վկայում է հասարակությունում այս արատավոր երևույթի տարածման մասին, ինչն իր ազդեցությունն է գործում նաև անչափահասների շեղվող վարքագծի վրա:

Անչափահասների շրջանում անցկացված ուսումնասիրությունները թույլ տվեցին գնահատել 2006 և 2014 թթ.-ին ՀՀ անչափահասների շեղվող վարքագծի առանձին դրսևորումների փոփոխությունները:

Մասնավորապես, ինչպես և պաշտոնական վիճակագրության մեջ, նկատվում է երեխաների կողմից բռնի վարքագծի դրսևորման, հատկապես՝ առողջությանը վնաս պատճառելու հաճախականության աճ ($p=0.000$): Ինչ վերաբերում է գողությանը, ապա դրանց քանակը ևս չի նվազել: Միաժամանակ, 2006 թ.-ի համեմատ նվազել են երեխաների խմբային կռիվները ($p=0.000$), նրանց կողմից զենք կրելը ($p=0.002$), ինչպես նաև վանդալիզմի դեպքերը ($p=0.001$): Այնուհանդերձ, նույնիսկ նման նվազման պարագայում, անչափահասների շրջանում խմբային կռիվների հաճախականությունը բարձր է միջին եվրոպականից:

³⁸ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Առողջապահություն, 2005, էջ 144, <http://armstat.am/file/doc/527.pdf>; Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Առողջապահություն, 2016, էջ 161, <http://armstat.am/file/doc/99499408.pdf>


³⁹ Տե՛ս ՀՀ-ում թմրամոլների քանակը 30 հազար է, որոնցից 12700 ներերակային թմրանյութեր են օգտագործում, <http://www.iravunk.com/news/879>, 13.11.2017, 1.03; Հայաստանում թմրամոլների թիվը տարեցտարի աճում է, <https://armenpress.am/arm/news/862815/hayastanum-tmramolneri-tivy-tarectari-atsum-e.html>; 13.11.2017, 00.59:

**Աղյուսակ 17. Անչափահասների կողմից շեղվող վարքագծի դրսևորումները՝ ISRD-2
և ISRD-3**

	2006		2014	
	երբևէ	վերջին 1 տարում	երբևէ	վերջին 1 տարում
Խմբային կռիվներ	23.5%	18.4%	13.2%	9.8%
Զենք կրել	9.5%	5.8%	5.1%	3.4%
Առողջությանը վնաս պատճառել	2.7%	1.4%	4.2%	3.1%
Պայուսակ հափշտակել	0.5%	0%	-	-
Կողոպուտ/ավազակություն/շորթում	0.5%	0.4%	2.5%	1.1%
Վանդալիզմ	8.3%	3.3%	2.7%	1.3%
Գողություն խանութից	2.1%	0.5%	1.4%	0.3%
Գողություն	-	-	0.9%	0.2%
Հեծանիվի գողություն	0.5%	0.2%	0.9%	0.2%
Բնակարան մուտք գործել	0.5%	0.2%	0.4%	0.1%
Մեքենայի գողություն	0.5%	0.3%	0.6%	0.4%
Հակերություն	4%	2.8%	14.8%	9.4%
Գրաֆիտի	-	-	12.8%	8.7%
Կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունք	-	-	5.6%	3.1%

ՀՀ-ում ստացված արդյունքների համադրումը ISRD-3 ուսումնասիրության մեջ ներգրավված մի շարք եվրոպական երկրների արդյունքների հետ՝ ցույց տվեց, որ ի համեմատ եվրոպական երկրների իրենց հասակակիցների՝ ՀՀ անչափահասները ավելի հազվադեպ են խանութներից գողություններ կատարել կամ վանդալիզմ դրսևորել: Մնացած ցուցանիշներով, սակայն, ՀՀ անչափահասները էապես չեն զիջել եվրոպական երկրներում հարցման ենթարկված անչափահասներին:

Գծապատկեր 3. Անչափահասների շեղվող վարքագիծը եվրոպական մի շարք երկրներում՝ ISRD -2 և ISRD -3



Անչափահասների շեղվող վարքագծի գնահատման առումով կարևոր նշանակություն ունի նաև վիկտիմիզացիայի ուսումնասիրությունը, քանի որ այս երկու ցուցանիշների համադրումը հնարավորություն է տալիս առավել անաչառ հետևություն կատարել անչափահասների շեղվող վարքագծի իրական պատկերի մասին: Բացի այդ, բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ վեր են հանել վիկտիմիզացիայի և դրան ենթարկված երեխայի կողմից հետագայում շեղվող վարքագծի դրսևորման միջև կոռելյացիայի առկայությունը⁴⁰:

⁴⁰ Տե՛ս **Carson D., Sullivan C., Cochran J.** General strain theory and the relationship between early victimization and drug use. *Deviant Behavior*, 2008, Volume 30, Issue 1, էջ 54-88; **Zhang L., Welte J., Wieczorek W.** Deviant lifestyle and crime victimization. *Journal of Criminal Justice*, 2001. Volume 29, Issue 2, էջ 133-143; **Hinduja S., Patchin J.** Offline Consequences of Online Victimization. *School Violence and Delinquency*. 2007, Volume 6, Issue 3, էջ 89-112; **Smith C., Thornberry T.** The relationship between childhood maltreatment and adolescent involvement in delinquency. *Criminology*, 1995, Volume 33, Issue 4, էջ 451-481:

Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ-ում անչափահասները, որպես կանոն, ավելի հազվադեպ են դառնում հանրորեն վտանգավոր ոտնձգության զոհ, քան նրանց եվրոպացի, մասնավորապես շվեյցարացի հասակակիցները: Ասվածն առավել հստակ կարելի է պնդել շահադիտական ոտնձգությունների կտրվածքով, մինչդեռ բռնության գործադրման, մասնավորապես՝ առողջությանը վնաս պատճառելու կտրվածքով ՀՀ-ում վիկտիմիզացիայի ցուցանիշները ավելի բարձր են:

Աղյուսակ 18. Անչափահասների վիկտիմիզացիան ՀՀ-ում և Շվեյցարիայում՝ ISRD-2 և ISRD-3

	2006		2014	
	ՀՀ	Շվեյցարիա	ՀՀ	Շվեյցարիա
կողոպուտ, շորթում	1.1%	2.3%	1.1%	3.3%
առողջությանը վնաս պատճառել	4.6%	2.4%	5.5%	3.8%
գողություն	8.8%	22.7%	11.1%	26.9%
հալածանք, հետապնդում	2.6%	12.4%	-	-

Միաժամանակ, կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ գողությունների տարածվածությունը անչափահասների շրջանում չի նվազել. եթե ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն գողությունից տուժել էին հարցվածների 9%-ը, ապա ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 11.1%, հետևաբար օբյեկտիվորեն անչափահասների շրջանում գողությունների քանակը չի նվազել, ինչն էլ հաստատելու է գալիս մեր այն ենթադրությունը, որ ՀՀ պաշտոնեական վիճակագրությունը չի արտացոլում անչափահասների շրջանում գողությունների իրական պատկերը:

Զարմանալի է թվում այն, որ Հայաստանում ISRD-2 ուսումնասիրության շրջանակներում հարցման ենթարկված անչափահասների միայն 2.6%-ն է նշել հալածանքի ենթարկվելու մասին, մինչդեռ 4.6%-ը հայտնել է, որ դարձել է առողջությանը վնաս պատճառելու զոհ: Որպես կանոն, եվրոպական երկրների մեծ մասում հալածանքի ենթարկված անչափահասների քանակը մի քանի անգամ

գերազանցում է առողջությանը վնաս պատճառելուց տուժած անչափահասների քանակը: Ասվածի վկայությունն է նույն Շվեյցարիան, որտեղ հալածանքի ենթարկված անչափահասների ցուցանիշը 5 անգամ գերազանցում է նրանց քանակը, ում առողջությանը վնաս է պատճառվել:

Նման տարբերակումը, թերևս պայմանավորված է նրանով, որ ելնելով ազգային մենթալիտետի առանձնահատկություններից, հայերի բռնկուն բնավորությունից, ինչպես նաև կոնֆլիկտային իրադրությունների լուծման մեր հասարակությունում տարածում ստացած, ինչու չէ՝ նաև ծնողների վարքագծի արդյունքում երեխաների համար ստերեոտիպ դարձած վարքագծային մոդելներից, հայ երեխաները թույլ չեն տալիս, որ իրենց համար անցանկալի, ֆրուստրացնող իրադրությունը խորանա և շատ արագ անցնում են բռնության գործադրման:

Ուշադրության են արժանի նաև այն տվյալները, որոնք վերաբերում են կատարված ուսնձգության մասին իրավապահ մարմիններին հայտնելուն, հետևաբար նաև՝ արարքների լատենտայնությանը: ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ շվեյցարացի անչափահասները իրենց հայ հասակակիցների համեմատ գրեթե 5 անգամ ավելի հաճախ են ոստիկանությանը տեղեկացրել կողոպուտի, շորթման, մարմնական վնասվածքի ենթարկվելու, գրեթե 7 անգամ՝ գողության զոհ դառնալու մասին: Նման բաշխումը, թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններից ելնելով մեր հասարակությունում ընդունված է խնդիրները լուծել սեփական ուժերով՝ առանց իրավապահ մարմիններին դիմելու, ինչն էլ իր անմիջական արտացոլումն է ստացել անչափահասների շրջանում:


Աղյուսակ 19. Վիկտիմիզացիայի վերաբերյալ իրավապահ մարմիններին հայտնելը՝ ՀՀ-ում և Շվեյցարիայում՝ ISRD-2

	2006	
	ՀՀ	Շվեյցարիա
կողոպուտ, շորթում	4.5%	22.3%
մարմնական վնասվածք	6.25%	32.4%
գողություն	3.7%	32.3%
հալածանք	0%	7.8%

Միաժամանակ, ISRD-3 ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բռնության զոհ դարձած երեխաները նման կենսափորձ չունեցածների համեմատ երկու անգամ ավելի հաճախ են կատարել իրավախախտումներ (համապատասխանաբար 30.2 և 17.8%), 2.5 անգամ ավելի հաճախ՝ գողություն (համապատասխանաբար 1.3 և 3.4%): Դժվար է միանշանակ պատասխանել այն հարցին, թե որն է եղել վիկտիմիզացիայի ենթարկված երեխաների կողմից շեղվող վարքագծի դրսևորման պատճառը, առավել ևս հնարավոր չէ միանշանակ պատասխանել, թե արդյոք վիկտիմիզացիայի ենթարկվելն է նրանց մոտ հանգեցրել շեղվող վարքագծի դրսևորման վճռականության, թե ընդհակառակը՝ շեղվող վարքագծի դրսևորումն է հանգեցրել նրանց վիկտիմիզացիային: Երկրորդ ենթադրությունն առավել իրատեսական է թվում:


Առավել հետաքրքրական են ISRD-3 ուսումնասիրության այն արդյունքները, որոնք վերաբերում են ծնողների կողմից դրսևորված բռնությունից կամ վատ վերաբերմունքից տուժելու և շեղվող վարքագծի միջև կապին:

Գծապատկեր 4. Ծնողների կողմից բռնության ենթարկված երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորումը



Մասնավորապես, ուժեղ արտահայտված կապ է գրանցվել վերջին մեկ տարվա ընթացքում ծնողների բռնությունից, վատ վերաբերմունքից տուժելու և շեղվող վարքագիծ դրսևորելու, իրավախախտումներ կատարելու միջև. ծնողների կողմից բռնության ենթարկված անչափահասները գրեթե 2, վատ վերաբերմունքի ենթարկվածները՝ 2,5 անգամ ավելի հաճախ են նշել իրենց կողմից իրավախախտում կատարելու մասին: Ընդ որում, այդ կապը գրանցվել է ինչպես ՀՀ-ում, այնպես էլ հետազոտության մեջ ընդգրկված մյուս երկրներում:

Գծապատկեր 5. Ծնողների կողմից վատ վերաբերմունքի ենթարկված երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորումը



Առավել իրատեսական է թվում այն, որ ոչ թե երեխաները շեղվող վարքագիծ են դրսևորել, քանի որ ընտանիքում իրենց հանդեպ գործադրվել է բռնություն կամ վատ վերաբերմունք, այն ընդհակառակը՝ բռնությունը, վատ վերաբերմունքը գործադրվել է ի պատասխան նրանց կողմից դրսևորված շեղվող վարքագծի:

Մասնավորապես, նույն ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ երեխաները իրենց լավ են զգում ընտանեկան միջավայրում, լավ հարաբերություններ ունեն ծնողների հետ (հարցվածների 94,7%-ը նշել է, որ լավ հարաբերությունն ունի հոր, 96,1%-ը՝ մոր հետ, 95,4%-ը նշել է, որ ընտանիքում հուզական աջակցություն է

ստանում): Հարցվածների միայն 4%-ն է նշել, որ ծնողները միմյանց նկատմամբ բռնություն են գործադրել և 2,6%-ը նշել է, որ ծնողները ակոհիոլ կամ թմրանյութ են գործածել:

Ծնողների կողմից երեխաների շեղվող վարքագծին նման ոչ համարժեք արձագանքումը պայմանավորված է մի քանի գործոններով. նախ, ՀՀ-ում ընտանիքները ավանդաբար ձևավորվում են վաղ չափահասության տարիքում և երիտասարդ ծնողները ոչ միշտ են տիրապետում երեխաներին դաստիարակելու, նրանց շեղվող վարքագծին արձագանքելու հոգեբանական, մանկավարժական գիտելիքներին ու հմտություններին: Հետևաբար՝ երեխայի շեղվող վարքագծին արձագանքելու իրենց հասանելի ամենակարճ ու իրենց կարծիքով առավել արդյունավետ միջոցը բռնության գործադրումն է: Միևնույն ժամանակ, երեխայի իրավահավասար վարքագիծը ձևավորելու հիմնական պատասխանատվությունը ևս կրում է ընտանիքը. հասարակության արժեքային անոմիայի ներկայիս պայմաններում դպրոցը արդյունավետ չի իրականացնում երեխային դաստիարակելու պարտականությունը: Ինչ վերաբերում է իրավապահ մարմիններին⁴¹, ապա նրանց նկատմամբ ներկայումս առկա է վստահության պակաս, ուստի ընտանիքը և հասարակությունը նախընտրում են իրենք ստանձնել երեխայի շեղվող վարքագծին արձագանքելու պարտականությունը:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ.

1. Թեև ՀՀ անչափահասները եվրոպական շատ երկրների համեմատ ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում և վիկտիմիզացիայի ենթարկվում, սակայն իրենց եվրոպացի տարեկիցներից ավելի հաճախ են նախընտրում բռնություն գործադրել:
2. Անչափահասների կողմից գողությունների կատարման դինամիկան նվազման միտում չունի, հետևաբար ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված պաշտոնեական վիճակագրությունը չի արտացոլում անչափահասների կողմից

⁴¹ Պետք է ընդունել, որ ՀՀ իրավապահ մարմինները առավելապես ուշադրություն են դարձնում այն երեխաներին, որոնք կամ նախկինում կատարված իրավախախտման հետևանքով հայտնվել են ոստիկանության տեսադաշտում, կամ զբաղվում են թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ կամ դարձել են բռնության զոհ: Ընդ որում, այս ոլորտում որոշակի հաջողություններ արձանագրվել են, մասնավորապես նվազել է անչափահաս մուրացկանների քանակը: 2011 թ.-ին ՀՀ ոստիկանությունում հաշվառված է եղել 20, 2016 թ.-ին՝ 13 անչափահաս մուրացկան:

գողությունների կատարման իրական վիճակը և ընդամենը վկայում է դրանց լատենտայնացման մասին:

3. Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում տեղ գտած բացասական փոփոխությունները՝ հատկապես՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, հասարակության խիստ բևեռացումը, գրեթե համատարած բնույթ կրող աղքատությունը, գործազրկությունը, արժեքային անոմիան, զուգակցվելով Իրանի հետ ՀՀ սահմանների բացման, թմրանյութերի գործածման համար քրեական պատասխանատվության վերացման հետ՝ հանգեցրին ՀՀ-ում թմրանյութ գործածողների, այդ թվում թմրանյութ գործածող անչափահասների թվաքանակի աճի:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԻԾ ԴՐՍԵՎՈՐԱԾ ԱՆՀԱՓԱՀԱՍԻ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1. Հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկությունները

Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի պատճառների և պայմանների բացահայտումը, կանխման արդյունավետ միջոցառումների մշակումն ու իրականացումն անհնարին է առանց հանցավոր վարքագծի մեխանիզմի կարևորագույն օղակի՝ հանցավորի անձի ուսումնասիրության:

Կրիմինալոգիական գրականության մեջ մշտական բանավեճերի առարկա են եղել և այսօր էլ շարունակում են մնալ այն հարցերը, թե կարելի՞ է արդյոք խոսել անչափահաս հանցավորի անձի, որպես ինքնուրույն սոցիալական տիպի մասին, կա՞ն այնպիսի առանձնահատկություններ, որոնցով հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասները տարբերվում են իրենց օրինապահ հասակակիցներից, ինչպես նաև հանցավոր վարքագիծ դրսևորած չափահասներից և որոնցով կանխորոշվում է անչափահասների կողմից հանցավոր վարքագծի դրսևորումը որոշակի կրիմինոգեն իրադրությունում, և եթե այո, ապա ինչո՞վ են պայմանավորված այդ առանձնահատկությունները, հնարավո՞ր է արդյոք ազդել դրանց վրա՝ հանցանքի կատարումը կանխելու համար:

Առաջադրված հարցերի պատասխանները կրիմինալոգիական գիտության մեջ միանշանակ չեն և հանգեցրել են երկու հակադիր տեսակետների ձևավորման. հեղինակների մի խումբը գտնում է, որ անչափահասների կողմից հանցավոր վարքագծի դրսևորումը պայմանավորված է նրանց կենսաբանական, հոգեբանական կամ էլ սոցիալիզացիայի արդյունքում ձևավորված առանձնահատկություններով, որոնցով էլ նրանք տարբերվում են օրինապահ քաղաքացիներից⁴², մինչդեռ դրան հակադիր մոտեցման կողմնակիցները ժխտում են անչափահաս հանցավորի անձի,

⁴² Տե՛ս **Долгова А.И.** Социально-психологические аспекты преступности несовершеннолетних. М., 1981. էջ 23-45; **Михайловская И.Б., Вершинина Г.В.** Трудные ступени: профилактика антиобщественного поведения. М., 1990. էջ 19-37; **Макогон И.В., Косарева Л.В.** Проблема личности несовершеннолетнего преступника. Современные тенденции развития науки и технологий. 2016. № 1-7. էջ 69-71; **Зайко Т.М., Петухов Е.Н.** К вопросу об изучении личности несовершеннолетнего преступника: социолого-правовой аспект. Историческая и социально-образовательная мысль. 2016. Т. 8. № 6-1. էջ 137-141:

որպես ինքնուրույն սոցիալական տիպի, առանձնացման հնարավորությունը: Այս տեսակետի կողմնակիցների կարծիքով հասարակության յուրաքանչյուր անդամ սոցիալական միջավայրի որոշակի պայմանների առկայության դեպքում կարող է հանցանք կատարել⁴³:

Պարզելու համար, թե առաջադրված տեսակետներից որն է առավել ընդունելի՝ վերլուծության ենթարկենք հանցավոր և շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների կրիմինալոգիական բնութագիրը, ինչն, առաջին հերթին, ենթադրում է նրանց սոցիալ-ժողովրդագրական, սոցիալ-հոգեբանական և վարքագծի մոտիվացիոն առանձնահատկությունների ուսումնասիրություն:

Հանցանք կատարած անչափահասների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ հանցավոր վարքագիծ առավելապես դրսևորվում է արական սեռի անչափահասների կողմից. 2015 թ.-ին տղաները 12 անգամ ավելի հաճախ են հանցանք կատարել, քան աղջիկները, թեև պետք է փաստել, որ ՀՀ-ում վերջին տարիներին նկատվում է իգական սեռի անչափահասների հանցավոր ակտիվության աճ. 2015 թ.-ին ի համեմատ 2003 թ.-ի այդ ցուցանիշը աճել է 3 անգամ:


Արական սեռի անչափահասների կողմից շեղվող վարքագծի առավել հաճախ դրսևորման մասին են վկայում նաև մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները. 2014 թ.-ին իրականացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ աղջիկների համեմատ ՀՀ-ում տղաները 3 անգամ ավելի հաճախ են հաղորդել նախորդ տարվա ընթացքում իրավախախտում կատարելու, 4 անգամ հաճախ՝ զենք կրելու, գրեթե 6 անգամ հաճախ՝ բռնությամբ զուգորդված արարք կատարելու, առողջությանը վնաս պատճառելու, 13 անգամ հաճախ՝ խմբային կռիվներին մասնակցելու, 17 անգամ հաճախ՝ գողություն կատարելու մասին: Ի համեմատ աղջիկների՝ տղաները 4 անգամ ավելի հաճախ են հաղորդել նաև նախորդ

⁴³ Տե՛ս **Тарарухин С.А.** Преступное поведение (Социальные и психологические черты). М., 1974, էջ 11; Механизм преступного поведения/ Под редакцией Кудрявцева В.Н., Ионина Л.Н., Петрухина И.Л., Туманова В.А., Яковлева А.М., Казимирчука В.П., М., 1981, էջ 20-21; **Polana Selie.** The analysis of Special Psychological profile: Beginning of Profiling in Slovenia, Slovenia 1996, Policing in Central and Eastern Europe: Comparing Firsthand Knowledge with Experience from the West. Ljubljana: Visoka policijsko-varnostna šola; էջ 175-184; **Абельцев С.Н.** Личность преступника и проблемы криминального насилия. М., 2000, էջ 11:

ամսվա ընթացքում թմրանյութ գործածելու մասին: Թերևս միայն նախորդ ամսվա ընթացքում ակոհով գործածելու առումով է, որ աղջիկների և տղաների պատասխանները էապես չեն տարբերվել. աղջիկների 32 և տղաների 35.9%-ն է տեղեկացրել ակոհով գործածման մասին:

Շեղվող վարքագծի առումով իգական սեռի ներկայացուցիչների համեմատ արական սեռի անչափահասների առավել բարձր ակտիվությունը կրիմինալոգիական գրականության⁴⁴ մեջ բազմիցս հաստատում գտած օրինաչափություն է, որն ուժեղ կոռելյացիա է դրսևորել նաև ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված մյուս եվրոպական երկրներում: Թերևս միայն Ուկրաինայում և Բոսնիա-Հերցեգովինայում է, որ աղջիկները իրենց շեղվող վարքագծով գրեթե չեն զիջում տղաներին:

Գծապատկեր 6. Շեղվող վարքագծի դրսևորումը ըստ սեռի




Ընդ որում, ուսումնասիրության մեջ ընդգրկված երկրներում աղջիկների համեմատ տղաների շեղվող վարքագծի բարձր հաճախականությունը գրանցվել է


⁴⁴ Տե՛ս *Hadjar A., Baier D., Boehke K., Hagan J.* Juvenile Delinquency and gender Revisited. European Journal of Criminology, 2007, Volume 4 , Number 1, էջ 34; *Junger-Tas J, Marshall I., Ribeaud D.* Delinquency in an International Perspective. Amsterdam, 2003:

ինչպես բռնությամբ դրսևորվող, այնպես էլ շահադիտական ոտնձգությունների պարագայում:

Գծապատկեր 7. Բռնի վարքագծի դրսևորումը ըստ սեռի



Գծապատկեր 8. Գողությունների կատարումը ըստ սեռի



Շեղվող վարքագծի դրսևորմանը ՀՀ-ում իգական սեռի ներկայացուցիչների ցածր ներգրավվածությունը պայմանավորված է ինչպես նրանց կենսաբանական,

հոգեբանական, այնպես էլ դեռևս մանկուց սերմանվող սեռային-դերային, վարքագծային առանձնահատկություններով:

Հայ ընտանիքներում տղաների դաստիարակության ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում նրանց ֆիզիկական ուժի զարգացմանը, հաստատակամության և նպատակասլացության ձևավորմանը, մինչդեռ աղջիկները դաստիարակվում են որպես ապագա մայրեր, ընտանիքների պահապաններ: Տարբեր է նաև հասարակության դիրքորոշումը նրանց նկատմամբ. եթե տղաների նկատմամբ դրսևորվում է առավել ազատական, հանդուրժողական մոտեցում, ապա աղջիկների հանդեպ առավել ուժեղ է հասարակության ոչ ֆորմալ հսկողությունը: Այս ամենն էլ հանգեցնում է նրան, որ տղաներն ու աղջիկները հայտնվում են տարբեր սոցիալ-հոգեբանական իրադրություններում. աղջիկները ձգտում են ապահով, կայուն, կոնֆլիկտներից ազատ վիճակի, մինչդեռ տղաները՝ նվաճումների և հասարակության մեջ ինքնահաստատման⁴⁵, ինչն էլ հաճախ իրագործում են իրավախախտում կատարելով:

Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում կանանց էմանսիպացիան, ֆեմինիստական գաղափարախոսության տարածումը, հասարակական կյանքում, ինչպես նաև սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխմամբ պայմանավորված՝ նյութական միջոցների ձեռք բերմանն ու բաշխմանը իգական սեռի ներկայացուցիչների առավել ակտիվ մասնակցությունը, զուգակցվելով սոցիալական հսկողության թուլացման հետ հանգեցրեցին նրանց սեռային-դերային ընկալման վերանայման, ինչն իր ազդեցությունն ունեցավ նաև նրանց կրիմինալ ակտիվության աճի վրա:

Մեր կողմից իրականացված ISRD-3 տվյալների համեմատությունը 2006 թ.-ին անցկացված ISRD-2 ուսումնասիրության հետ փաստում է ՀՀ-ում աղջիկների կողմից շեղվող վարքագծի առավել հաճախ կատարումը: Մասնավորապես, ISRD-2 ուսումնասիրության համաձայն՝ նախորդ ամսվա ընթացքում ակոհոլ գործածած տղաների և աղջիկների հարաբերակցությունը եղել է 2:1 (համապատասխանաբար՝

⁴⁵ Տե՛ս **Голубничая Л.С.** Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Амурский научный вестник. 2015. № 1. էջ 160; **Նալչաջյան Ա.Ա.** Հոգեբանության հիմունքներ, Երևան 1997, էջ 570; **Стасенко О.В.** Преступное поведение: гендерный анализ. Женщина в Российском обществе, 2009, <https://cyberleninka.ru/article/n/prestupnoe-povedenie-gendernyy-analiz>; 13.11.2017, 22.59:

30.6 և 17.5%), մինչդեռ ISRD-3-ով գրեթե հավասար ցուցանիշներ են գրանցվել, թմրանյութ գործածածներինը՝ 16:1 (համապատասխանաբար՝ 1.6 և 0.1%), որը, սակայն, 2014 թ.-ին 4 անգամ կրճատվել է, նախորդ մեկ տարվա ընթացքում զենք կրածներինը՝ 8:1 (համապատասխանաբար՝ 11.3 և 1.4%), մինչդեռ ISRD-3 հետազոտության արդյունքներով այդ հարաբերակցությունը գրեթե 2 անգամ կրճատվել է, անձի առողջությանը վնաս պատճառածներինը՝ 31:1 (համապատասխանաբար՝ 3.1 և 0.1%), որը 2014 թ.-ին կրճատվել է 5 անգամ:

Հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների սոցիալ-ժողովրդագրական բնութագրի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առավել բարձր կրիմինալ ակտիվություն դրսևորում են 16-17 տարիքային խմբի ներկայացուցիչները. քրեական պատասխանատվության ենթարկված անչափահասների միայն 1/5-ն է հանցանքի կատարման պահին եղել 14-15 տարեկան: Նման բաշխումը լիովին ընկալելի է, հաշվի առնելով, որ ՀՀ-ում քրեական պատասխանատվության առումով տարբերակված մոտեցում կա մինչև հանցանքի կատարումը 14 և 16 տարին լրացած անձանց համար: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե մինչև հանցանքի կատարումը լրացել է նրա 16 տարին, իսկ 14 տարեկանների համար պատասխանատվություն սահմանված է սահմանափակ թվով արարքների համար: Բնական է, որ նման պարագայում օբյեկտիվորեն 16 և 17 տարեկան անչափահասների համամասնությունը պետք է ավելի մեծ լիներ ի համեմատ 14 և 15 տարիքային խմբի ներկայացուցիչների:

Միաժամանակ, հասկանալու համար, թե որքանով է այս բաշխումն իրավաչափ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև երեխայի զարգացման հոգեբանական ընթացքին: Մասնավորապես, հոգեբանների կողմից 14 տարեկանը դիտարկվում է որպես էքստրավերտության փուլի սկիզբ, երբ երեխան լի է էներգիայով, ձգտում է շփման, աճում է նրա ինքնավստահությունը, հետաքրքրությունը այլ անձանց նկատմամբ: Երեխան համեմատում է իրեն ուրիշների հետ, վեր է հանում իրենց միջև տարբերությունները, ինչպես նաև իրեն նույնացնում է ֆիլմերի և գրքերի հերոսների հետ, վերջիններիս մեջ փնտրում իրեն բնորոշ հատկանիշները: 15 տարեկանում այս ամենին ավելանում է նաև անկախության զգացումը, երեխան ձգտում է ազատվել

արտաքին՝ ընտանիքի և դպրոցի վերահսկողությունից, դառնում է ըմբոստ: Այս տարիքում երեխան առավել խոցելի է և ենթակա արտաքին բացասական ազդեցությանը: 16 տարեկանում երեխան վերադառնում է հուզականորեն առավել հավասարակշռված վիճակի, դառնում է ավելի ինքնուրույն, ձգտում որոշումների ինքնուրույն կայացման, իր կյանքի ստրատեգիական ուղիների որոշման⁴⁶:

Մի շարք կրիմինալոգիական ուսումնասիրություններ վկայում են, որ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում վերջին տարիներին նկատվում է 14-15 տարիքային խմբի ներկայացուցիչների տոկոսային ներկայացուցչականության աճ⁴⁷:

ՀՀ-ում, սակայն պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը նման հետևության չի հանգեցնում. 2015 թ.-ին 2003 թ.-ի համեմատ գրանցվել է 14-15 տարեկանների կողմից հանցավոր վարքագծի դրսևորման գրեթե նույն համամասնությունը, թեև 2012 թ.-ի համեմատ նկատվում է 14-15 տարիքային խմբի ներկայացուցիչների տոկոսային ներկայացուցչականության աճ:

Աղյուսակ 20. Հանցավոր վարքագիծ դրսևորած 14-15 տարեկան անձանց տոկոսային համամասնությունը անչափահասների հանցավորության մեջ

Թվական	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
%	22,2%	32,6%	36,2%	32,4%	33,9%	28,4%	24,7%	22,4%	27,2%	18,6%	20,5%	19,7%	23,1%


Այս առումով, հետաքրքիր է նաև անչափահասների շեղվող վարքագծի դրսևորման ժամանակ անչափահասների տարիքային խմբերի մասնակցության ուսումնասիրությունը: Մասնավորապես, ISRD-3 ուսումնասիրության համաձայն՝ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ հետազոտության մեջ ընդգրկված մյուս երկրների մեծ

⁴⁶ Տե՛ս Психология личности: конспект лекций Т. В. Каратьян: издательство «Эксмо», 2008:

⁴⁷ Տե՛ս Мельникова-Шаркова Е.А. Формирование и криминализация личности несовершеннолетнего преступника. Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы. 2016. № 1 (39). էջ 17-22; Голубничая Л.С. Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Амурский научный вестник. 2015. № 1, էջ 160:

մասում, շեղվող վարքագծի դրսևորում առավելապես գրանցվել է մինչև 15 տարիքային խմբի ներկայացուցիչների շրջանում:

Գծապատկեր 9. Շեղվող վարքագծի դրսևորումը ըստ տարիքային խմբերի



Ընդ որում, նույն օրինաչափությունը նկատվում է նաև, երբ դիտարկվում են անչափահասների կողմից շահադիտական կամ բռնի ոտնձգությունների կատարումը: Մասնավորապես, ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ընդգրկված 13 տարեկանների 1,1%, 14 տարեկանների 2,3% և 15-17 տարիքային խմբի ներկայացուցիչների 0,5% է հաղորդել իրենց կողմից գողություն կամ սեփականության դեմ ուղղված այլ ոտնձգություն կատարելու մասին, բռնությամբ դրսևորվող ոտնձգությունների պարագայում այդ հարաբերակցությունը կազմել է համապատասխանաբար 2,5, 3,5 և 3%: Այնուհանդերձ, ուսումնասիրության արդյունքներով՝ հավաստի կոռելյացիա չի գրանցվել տարիքային խմբի պատկանելության և կատարված շեղվող վարքագծի միջև:

Իհարկե, ստացված արդյունքները գնահատելիս, չպետք է բացառել, որ տարիքային ավելի բարձր խմբի անչափահասները, հատկապես տղաները, ավելի

զգուշավոր են իրենց կողմից կատարված ոտնձգությունները հաղորդելու առումով, մինչդեռ տարիքային ավելի ցածր խմբի ներկայացուցիչները հակված են չափազանցման, սակայն նույնիսկ այդ պարագայում պետք է փաստել, որ շեղվող վարքագծի դրսևորման և հատկապես բռնությամբ զուգորդված ոտնձգություններ կատարելու, զենք կրելու առումով առավել ակտիվ գտնվել են 15 տարեկան տղաները. նրանց 30%-ն է հաղորդել վերջին մեկ տարվա ընթացքում խմբային կռիվներին մասնակցելու, 8,1%-ը՝ անձի առողջությանը վնաս պատճառելու, 11,8%-ը՝ զենք կրելու մասին: 16 տարիքային խմբի տղաների շրջանում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 23,5, 5,1 և 5,3%, իսկ 14 տարեկան տղաների շրջանում՝ 28,3, 5,8 և 5 %: Միակ շեղումը նկատվել է վերջին 1 ամսվա ընթացքում թմրանյութ գործածած լինելու առումով. հարցված 14 տարեկան տղաների 1,7, 15 տարեկանների 2,6 և 16 տարեկանների 5%-ն է նշել հաշիշ կամ մարիխուանա գործածած լինելու մասին:

Հետևաբար, ակնհայտ է, որ թեև ՀՀ պաշտոնական վիճակագրությունը փաստում է վերջին տարիներին 14-15 տարիքային խմբի երեխաների կրիմինալ ակտիվության նվազման մասին, սակայն օբյեկտիվորեն այս տարիքային խմբի ներկայացուցիչները շեղվող վարքագծի դրսևորման առումով էապես չեն զիջում 16-17 տարեկաններին: Այլ խնդիր է, որ նրանց կողմից կատարված արարքները առավել բարձր լատենտայնությամբ են օժտված. հասարակության անդամները, դպրոցն ու ընտանիքը ամեն կերպ ձգտում են զերծ պահել ցածր տարիքային խմբի երեխաներին իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում հայտնվելուց, քրեաիրավական օրենսդրության դաշտ տարվելուց, դրան հետևող ստիգմատիզացիայից և փորձում են ինքնուրույն արձագանքել նրանց կողմից կատարված ոտնձգություններին:

Ասվածը հաստատվում է մեր կողմից իրականացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքներով. շեղվող վարքագիծ դրսևորած երեխաների վարքագծի հայտնաբերման դեպքում առավելապես տեղեկացվել են ծնողները (12,5%՝ 12 և 13 տարեկանների պարագայում, 37,5%՝ 14, 25%՝ 15 տարեկանների, 12,5%՝ 16 և բարձր տարիքային խմբի անչափահասների դեպքում): Ընդ որում, այդ երեխաների միայն 15%-ն է նշել, որ իրենք իրենց ծնողների կողմից պատժվել են կատարվածի համար:

Անչափահասների տարիքային առանձնահատկությունների հետևանքով՝ նրանց շրջանում բացակայում է կրթական բարձր ցենզ ունեցողների քանակը: Կրթական ցածր մակարդակը, որպես կանոն, ենթադրում է անձի մոտ պահանջմունքների և ձգտումների պրիմիտիվություն, նեղ մտահորիզոն, կուլտուրայի և ինքնագսպման ցածր մակարդակ, խնդիրները հաղթահարելու սահմանափակ ուղիներ, մինչդեռ կրթական բարձր մակարդակը անձի մոտ ձևավորում է հոգևոր պահանջմունքների լայն շրջանակ, ընդգրկում աշխարհայացք: Հետևաբար, սա ևս այն գործոններից է, որոնք կարևորվում են շեղվող կամ հանցավոր վարքագծի պատճառական մեխանիզմի գնահատման ժամանակ:

Առավել կարևոր նշանակություն ունի անչափահասների վերաբերմունքը ուսման նկատմամբ: Կրիմինալոգիական բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասները գրեթե լիովին անտարբեր են ուսման նկատմամբ, ինչն էլ խոչընդոտում է նրանց զարգացմանը, սոցիալիզացիային, հետաքրքրությունների լայն շրջանակի առաջացմանը, կործանարար ազդեցություն է ունենում նրանց հանրորեն օգտակար վարքագծային ակտիվության, իրավագիտակցության կայացման վրա⁴⁸:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները ևս վեր հանեցին այն օրինաչափությունը, համաձայն որի այն երեխաները, ովքեր սիրում են դպրոցը, հետաքրքրված են ուսմամբ, ավելի հազվադեպ են շեղվող վարքագիծ դրսևորում: Մասնավորապես, ISRD-3 ուսումնասիրության համաձայն՝ այդ կատեգորիայի անձանց շրջանում 3 անգամ քիչ է բռնություն գործադրելու կամ սեփականության դեմ ոտնձգելու հավանականությունը:

⁴⁸ Տե՛ս **Голубничая Л.С.** Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Амурский научный вестник. 2015. № 1, էջ 160; **Шуняева В.А.** Социально-демографические признаки личности несовершеннолетнего преступника: особенности современного состояния. Социально-экономические явления и процессы. 2017. Т. 12. № 1, էջ 138-139; **Сапронова Н.А.**

Социально-типологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Алтайский вестник государственной и муниципальной службы. 2012. № 9. էջ 70; **Савельев А.И.** Криминологическая характеристика и предупреждение преступности несовершеннолетних в крупных городах Сибири: автореф. диссертации на соискание ученой степени канд. юрид. наук. Омск, 2006, էջ 13:

Առանձին կրիմինալոգիական նշանակություն ունի նաև անչափահասների զբաղվածության հարցը, մասնավորապես դատական վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ դատարանում հայտնված անչափահասների գրեթե կեսը ո՛չ սովորել են, ո՛չ աշխատել. 2014 թ.-ի դատական վիճակագրության համաձայն՝ 87 անչափահաս դատապարտյալներից 44-ը, 2012 թ.-ին 87-ից 45-ը գտնվել են հենց նշված կարգավիճակում⁴⁹:

Այս օրինաչափությունը հաստատվել է նաև այլ երկրներում իրականացված կրիմինալոգիական ուսումնասիրությունների արդյունքում⁵⁰:

Երեխաների զբաղվածության բացակայությունը նրանց մոտ հանգեցնում է ծանծրայթի, նաև սեփական «եսի» ռեալիզացման ձախողման, ինչը հաղթահարելու համար էլ երեխաները միավորվում են իրենց նմանների խմբերում, հաճախ դիմում իրավախախտումների կատարման:

Մինչույն ժամանակ, պետք է փաստել, որ տարեցտարի ավելանում է գործազուրկ անչափահասների տոկոսային հարաբերակցությունը: Գործազրկության մակարդակը 15-19 տարիքային խմբում 2015 թ.-ին կազմել է 25,6, իսկ 2016 թ.-ին՝ արդեն 40,5%: Ընդ որում, նկատվում է գործազուրկների ընդհանուր զանգվածում մինչև 18 տարեկանների համամասնության մեծացում. եթե 2004 թ.-ին նրանց միայն 0,1% էր անչափահաս, 2007 թ.-ին՝ 0,4%-ը, ապա 2016 թ.-ին՝ 1,2%-ը⁵¹:

Ընդ որում, նույնիսկ այն անչափահասները, ովքեր զբաղվածություն ունեն, իրենց կրթական, մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի պատճառով գերազանցապես ներգրավված են ժամանակավոր և ցածր վարձատրվող

⁴⁹ 2014թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - անչափահաս դատապարտյալների վերաբերյալ; 2012թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ - անչափահաս դատապարտյալների վերաբերյալ <http://www.court.am/?l=lo&id=50>, 15.11.2017, 9.43:

⁵⁰ **Цыбенков С.В., Бельгаев М.Л.** Общесоциальные факторы, влияющие на подростково-молодежную преступность. Проблемы правоохранительной деятельности. 2007. № 1, էջ 46; **Лаушкин, А. С.** Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника, отчужденного до совершения преступления от учебы и трудовой занятости. // Преступность в России: причины и перспективы: материалы Международной научно-практической конференции. - М. : ВНИИ МВД России, 2005, էջ 85; **Алиев Х.О.** Факторы, способствующие вовлечению несовершеннолетних в совершение антиобщественных действий. В сборнике: Актуальные вопросы правовой мысли человечества сборник статей Международной научно-практической конференции. 2016, էջ 29-35.

⁵¹ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, զբաղվածություն 2017, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, զբաղվածություն 2005, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, զբաղվածություն 2008: <http://armstat.am/file/doc/99504348.pdf>; էջ 74: 15.11.2017. 10.34:

աշխատանքներում, հետևաբար չունենալով իրենց պահանջմունքների բավարարման, նյութական միջոցների ձեռք բերման օրինական հնարավորություններ՝ հաճախ դիմում են հանցավոր վարքագծի:

ՀՀ պաշտոնական վիճակագրության մեջ տեղ չեն գտել հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների ընտանեկան վիճակի մասին տեղեկությունները: Սակայն մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները թույլ են տալիս գնահատել շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների ընտանեկան կարգավիճակի առանձնահատկությունները:

Մասնավորապես, ISRD-3 ուսումնասիրության համաձայն՝ շեղվող վարքագիծ առավել հաճախ են դրսևորել լիարժեք ընտանիքներում մեծացող և դաստիարակվող անչափահասները:

Աղյուսակ 21. Նախորդ 1 տարվա ընթացքում շեղվող վարքագիծ դրսևորած անձանց բաշխումը՝ ըստ ընտանիքի կազմի

	մայր և հայր	միայն 1 ծնող	ծնողներ, տատ, պապ
ալկոհոլ գործածել	32,9%	42,2%	30%
հաշիշ գործածել	1,1%	1,5%	-
զենք կրել	3,5%	1,6%	3%
խմբային կռիվներ	10,2%	11,5%	13,3%
առողջությանը վնաս պատճառել	3%	4,7%	3,1%
գրաֆիտի	8,6%	9,4%	9,4%
վանդալիզմ	1,3%	1,5%	-
մանր գողություն	0,4%	-	-
ավտոմեքենայի ապօրինի տիրանալը	1%	1,5%	-

Ստացված արդյունքը մտահոգիչ է, քանի որ հակառակ տարիներ ի վեր կրիմինալոգիական գրականության մեջ արտահայտված այն տեսակետի⁵², որ շեղվող վարքագծի դրսևորման առավել հակված են միայն հոր կամ միայն մոր հետ ապրող երեխաները, ՀՀ-ում շեղվող վարքագիծն առավել հաճախ դրսևորվել է 2 ծնողների կամ 2 ծնողների և տատիկի, պապիկի հետ բնակվող երեխաների կողմից, ինչից էլ կարելի է հետևություն կատարել, որ այդ ընտանիքներում պատշաճ չի իրականացվում երեխաների դաստիարակության գործընթացը, չեն ապահովվում նրանց բնականոն զարգացման պայմանները: Դա կարող է դրսևորվել ոչ միայն երեխայի հանդեպ ծնողների կողմից անտարբեր վերաբերմունք դրսևորելով, այլև ընդհակառակը՝ չափից շատ «երես տալով», դաստիարակությունն իրականացնելիս չափահասների կողմից միմյանց հակադրվելով, պատշաճ հետևողականություն չցուցաբերելով, թողտվության մթնոլորտ ձևավորելով⁵³: Դրան էապես նպաստում է նաև հայ հասարակության մեջ երեխաների նկատմամբ ծնողների, և հատկապես՝ տատիկների և պապիկների անվերապահ նվիրվածությունը, երեխաներին «կուրորեն սիրելը», ինչը հաճախ հանգեցնում է երեխաների կողմից շեղվող վարքագծի դրսևորման պարագայում անպատժելիության:

Ընտանիքի կարևորագույն գործառույթներից մեկը երեխայի հոգեբանական պաշտպանությունն է, մինչդեռ ընտանեկան անբարենպաստ մթնոլորտը հանգեցնում է երեխայի մոտ նյարդահոգեկան խանգարումների ձևավորման և նպաստում նրա կողմից շեղվող վարքագծի դրսևորմանը⁵⁴:

⁵² Տե՛ս **Լեևոյ Յ.Ա., Կոշելեյա Է.Բ.** Влияние семьи на преступность несовершеннолетних // Социологические исследования. 2006. № 1, էջ 104; **Շատալով Է.Ա., Մալաևա Լ.Օ.** Преступность среди несовершеннолетних: влияние семьи. Вопросы современной юриспруденции. 2015. № 45-46, էջ 6-10; **Փեժժովա Յ.Օ.** Криминологическая характеристика личности несовершеннолетнего правонарушителя в аспекте правосознания. Вестник Краснодарского университета МВД России. 2009. № 1, էջ 99:

⁵³ Տե՛ս **Տամուլինա Ե.Յ.** Семейное неблагополучие как причина преступности несовершеннолетних // Юридический аналитический журнал. 2005. № 4, էջ 39:

⁵⁴ Տե՛ս **Վոլոգինա Զ.Ե.** Преступность среди несовершеннолетних / Զ.Ե. Վոլոգինա, Ն.Յ. Տրիվակովա, Ա.Ա. Կամալով // Право: современные тенденции: материалы междунар. науч. конф. № 3. 2012, էջ 64—69:

Կրիմինալոգիական հետազոտությունները⁵⁵ վկայում են, որ աճում է հանցավոր վարքագիծ դրսևորած այն անձանց քանակը, ում մոտ առկա են հոգեկան կամ նյարդային խանգարումներ:

Ըստ Ռ.Ի.Միխեևի, Ս.Վ.Միխեևայի՝ «հոգեկան անոմալիաները գլխուղեղի ֆունկցիոնալ կամ օրգանական այնպիսի ձեռքբերովի կամ բնածին փոփոխություններն են, որոնք, արտացոլվելով սուբյեկտի գործունեության տարբեր կողմերի վրա, ազդում են նրա վարքագծի բնույթի և բովանդակության, այդ թվում նաև հանրորեն վտանգավոր վարքագծի վրա⁵⁶: Յու.Մ.Անտոնյանը, զարգացնելով արտահայտված տեսակետը, նշում է, որ հոգեկան անոմալիաները անձի մոտ առաջացնում են այնպիսի անձնային փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել նորմայից շեղվող վարքագծի դրսևորման: Մասնավորապես, հոգեկան խանգարումները նպաստում են ներշնչվողականության բարձրացմանը, կամային պրոցեսների և հսկիչ մեխանիզմների թուլացմանը, անձի սոցիալական ադապտացիայի դժվարացմանը, դյուրագրգռության, ագրեսիվության, կասկածամտության, դաժանության զարգացմանը⁵⁷: Ընդ որում, հոգեկան անոմալիաներով անչափահասների շրջանում բռնի, շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքների կատարմամբ աչքի են ընկնում փսիխոպաթները. հանցավոր վարքագծի դրսևորմանը փսիխոպաթների նման ներգրավվածությունը հիմնականում բացատրվում է նրանց հարմարվողականության և ինքնավերահսկման ցածր մակարդակով⁵⁸, իրադրության թյուր ընկալմամբ:

Յուրաքանչյուր նորմալ անձ, բախվելով իր համար անցանկալի իրադրությանը, փորձում է կամ հարմարվել դրան կամ իրադրությունը ենթարկել որոշակի փոփոխությունների: Մինչդեռ փսիխոպաթը, չունենալով հարմարվողականության բավարար ունակություններ, չկարողանալով հոգեպես վերակառուցվել և ձևավորել իր մոտեցումները ստեղծված իրադրության հանդեպ, ձգտում է այն քայքայել: Դրան

⁵⁵ Տե՛ս **Анисимова Я.Б.** Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Таврический научный обозреватель. 2016. № 11-2 (16). էջ 63-65; **Уткина Е.Ю., Богунцова Г.В.**

Элементы криминологической характеристики несовершеннолетних преступников и профилактические меры предупреждения преступности несовершеннолетних. Ученые заметки ТОГУ. 2014. Т. 5. № 4, էջ 341-342:

⁵⁶ Տե՛ս **Антонян Ю.М., Бородин С.В.** Преступность и психические аномалии. М., 1987, էջ 8:

⁵⁷ Տե՛ս **Антонян Ю.М., Бородин С.В.** Преступность и психические аномалии. М., 1987, էջ 9-15:

⁵⁸ Տե՛ս **Антонян Ю.М., Гульдман В.В.** Криминальная патопсихология. М., 1991, էջ 60-72:

էապես նպաստում է նաև այն, որ ի տարբերություն հոգեպես առողջ անձանց, փսիխոպաթոններն իրադրությունն ընդունում են իրենց համար առավել սպառնալից, ուստի առավել սուր և հապճեպ արձագանք են տալիս դրան՝ դրսևորելով հաճախ հենց իրենց համար անսպասելի, բռնության գործադրմամբ, իմպուլսիվ հանցավոր վարքագիծ: Նման վարքագծի դրսևորումը հիմնականում պայմանավորված է լինում չգիտակցված շարժառիթներով, ինչն էլ ավելի է դժվարացնում փսիխոպաթոնների կողմից իրենց արարքի ղեկավարումը⁵⁹:

Թեև պաշտոնական վիճակագրությունը հնարավորություն չի տալիս գնահատել, թե ՀՀ-ում հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում հոգեոնյարդային խանգարումները որքան տարածում են ունեցել, սակայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀՀ բնակչության հոգեկան առողջության վերաբերյալ տվյալներն են մտահոգության տեղիք տալիս: Մասնավորապես, 100,000 բնակչի հաշվով առաջին անգամ հայտնաբերված հոգեկան հիվանդությունների գործակիցը 2016 թ.-ին 2002 թ.-ի համեմատ աճել է 2.1 անգամ՝ 122.1-ից 264,9, նյարդային համակարգի հիվանդությունների գործակիցը աճել է 5,4 անգամ՝ 784,9-ից դառնալով 4251,7: 0-14 տարիքային խմբի ներկայացուցիչների շրջանում, 100 000 երեխայի հարաբերակցությամբ առաջին անգամ հայտնաբերված նյարդային համակարգի հիվանդությունների գործակիցը 2016 թ.-ին 2002 թ.-ի համեմատ աճել է գրեթե 3,5 անգամ՝ 1922,8-ից դառնալով 6,526,8⁶⁰:

Բնակչության հոգեկան և նյարդային համակարգի առողջության վատթարացումը փաստող այս տվյալները խիստ մտահոգիչ են, քանի որ դրանք անմիջական անդրադարձ են ունենում ընտանիքում անչափահասի ձևավորման, զարգացման, դաստիարակության գործընթացի վրա:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ.

1. Գլոբալիզացման գործընթացներում ՀՀ-ի ներգրավվածությունը, կանանց էմանսիպացիան, ֆեմինիստական գաղափարախոսության տարածումը հանգեցրել են կանանց մասնակցության ակտիվացմանը ոչ միայն

⁵⁹ Տե՛ս **Антонян Ю.М., Гильдан В.В.** Криминальная психопатология. М., 1991, էջ 46-48:

⁶⁰ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք. Առողջապահություն 2006, էջ 151 <http://armstat.am/file/doc/99450503.pdf>; Հայաստանի վիճակագրական տարեգիրք. Առողջապահություն 2016, էջ 175; <http://armstat.am/file/doc/99504368.pdf>:

հասարակական-քաղաքական կյանքում, այլև իրավախախտումների կատարման ոլորտում, ինչը դրսևորվում է նաև հանցավոր և շեղվող վարքագծին իգական սեռի երեխաների ներգրավվածության մեծացմամբ:

2. Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 14-15 տարիքային խմբի ներկայացուցիչները 16-17 տարեկան անչափահասների համեմատ գրեթե 5 անգամ ավելի հազվադեպ են քրեական պատասխանատվության ենթարկվում, սակայն դա ոչ թե պայմանավորված է նրանց կողմից քրեական օրենքով արգելված արարքների կատարումից, շեղվող վարքագծի դրսևորումից զերծ մնալով, այլ այս խմբերի համար քրեական պատասխանատվության ենթադրող արարքների տարբեր շրջանակի սահմանումով, ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների հանրորեն վտանգավոր արարքների լատենտայնության ավելի բարձր աստիճանով:
3. Հայ ընտանիքներում երեխայի հանդեպ ծնողների, և հատկապես՝ տատիկների և պապիկների անվերապահ նվիրվածությունը, երեխաներին «կուրորեն սիրելը», «երես տալը», մանկավարժական գիտելիքների պակասը, դաստիարակությունն իրականացնելիս չափահասների միմյանց հակադրվելը ձևավորում է թողտվության մթնոլորտ, նպաստում երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորմանը, ինչի վկայությունը լիարժեք համարվող ընտանիքներում դաստիարակվող երեխաների շեղվող վարքագծի դրսևորմանը ավելի բարձր ներգրավվածությունն է:

2.2. Հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասի սոցիալ-հոգեբանական և մոտիվացիոն առանձնահատկությունները

Հանցանք կատարած անչափահասի կրիմինալոգիական բնութագրի ուսումնասիրությունը ենթադրում է նրա ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական ենթակառուցվածքների վերլուծություն: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է նրանով, որ անձի ոչ սոցիալական կարգավիճակը, ոչ սոցիալական դերերը և ոչ էլ հանցավոր վարքագծի դրսևորման պատճառ հանդիսացող օբյեկտիվ կամ սուբյեկտիվ այլ գործոնները չեն կարող հանգեցնել հանցանքի կատարման՝ առանց հանցանք կատարող անձի հոգեբանական ոլորտով անցնելու, հոգեբանական կարգավիճակ ձեռք բերելու: Ուստի, հանցավոր վարքագծի դրսևորման իրական պատճառները պարզելու համար, անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել հանցանք կատարող անչափահասի սոցիալ-հոգեբանական բնութագիրը, ինչը ենթադրում է նրա պահանջմունքների, շահերի, արժեքային կողմնորոշումների, իրավագիտակցության, բնութագրիչ անձնային հատկանիշների ուսումնասիրություն:

Մարդկային վարքագծի, այդ թվում նաև հանցավոր վարքագծի դրսևորման գործոնների համակարգում առաջատար դերը պատկանում է պահանջմունքներին և շահերին: Հոգեբանության կողմից պահանջմունքը դիտարկվում է որպես մարդկային ակտիվության աղբյուր, շարժիչ ուժ՝ մարդու կողմից զգացվող որոշակի կարիք, որն արտացոլվելով նրա գիտակցության մեջ, առաջացնում է այդ կարիքի վերացմանն ուղղված մղում⁶¹: Մինչդեռ շահը անձի ներքին վերաբերմունքն է օբյեկտի հանդեպ՝ նկատի ունենալով կոնկրետ անձի համար այդ օբյեկտի կենսական կարևորությունն ու հուզական գրավչությունը⁶²: Պահանջմունքները և դրանց հիման վրա առաջացող շահերը հանցավոր վարքագծի շարժառիթները ձևավորող հիմնական հոգեբանական երևույթներն են:

⁶¹ Տե՛ս **Петровский А.В., Ярошевский М.Г.** Теоретическая психология. М., 2001, էջ 129; **Немов Р.С.** Психология. М., 2001, էջ 672; **Рубинштейн С.Л.** Основы общей психологии. СПб 2001, էջ 522:

⁶² Տե՛ս Механизм преступного поведения / Под редакцией Кудрявцева В.Н., Ионина Л.Г., Казимирчука В.П., Петрухина И.Л., Туманова В.А., Яковлева А.М. М., 1981, էջ 53-57.

Մարդու պահանջմունքները բազմաթիվ են, սակայն պայմանականորեն դրանք բաժանվում են 5 խմբի՝ 1-ին՝ ամենաստորին մակարդակում են գտնվում ֆիզիոլոգիական պահանջմունքները (սննդի, սեքսուալ և այլն), 2-րդում՝ անվտանգության պահանջմունքը (պաշտպանություն ցավից, վախից, ցրտից և այլն), 3-րդում՝ սոցիալական շփման պահանջմունքը (սիրո, քնքշության, սոցիալական նույնականացման, միավորման և այլն), 4-րդում՝ սեփական անձի հանդեպ հարգանքի պահանջմունքը (հավանության, ճանաչման հասնելու և այլն), իսկ ամենաբարձր մակարդակում ինքնառեալիզացման պահանջմունքն է (իր հնարավորությունների և ունակությունների իրացման, ուրիշի կողմից ընկալման և այլն)⁶³:

Հանցավոր վարքագիծ դրսևորող անձանց, այդ թվում՝ անչափահասներին, որպես կանոն, բնութագրական է կենսաբանական, նյութական պահանջմունքների գերակայությունը հոգևորի նկատմամբ. հանցավոր վարքագիծ դրսևորած անձանց ճնշող մեծամասնության համար ներկա ժամանակաշրջանում երջանիկ կյանքի համար կարևորագույն նախադրյալներից մեկը նյութական ապահովվածությունն է: Ինչ վերաբերում է այնպիսի հոգևոր պահանջմունքներին, ինչպիսիք են՝ հոգևոր արժեքներին հաղորդակցվելու, ստեղծագործելու, ինքնակատարելագործման պահանջմունքները, ապա դրանք հետին պլան են մղվում ինչպես հանցանքներ կատարած անձանց, այնպես էլ օրինապահ քաղաքացիների կողմից⁶⁴: Հոգևոր արժեքներին հաղորդակցվելու տարբերակներից մեկը գրքեր կարդալն է, ֆիլմեր դիտելը, սակայն «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների հետ անցկացված հարցազրույցները վկայում են, որ վերջիններիս առավելապես հետաքրքրում են ոչ թե բարձր գեղարվեստական արժեք ունեցող

⁶³ Տե՛ս *Хеккхаузен Х.* Мотивация и деятельность. М., 1986, Т. 1, էջ 114:

⁶⁴ Նման օրինաչափություն գրանցվել է նաև նախկինում կատարված ուսումնասիրությունների ժամանակ, մասնավորապես շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցագործությունների համար պատիժ կրողների 94 և օրինապահ քաղաքացիների 91%-ը կարևորել է նյութական բարեկեցությունը, ընդ որում, այդ պահանջմունքը դատապարտվածների 47%-ի համար ունեցել է առաջնային նշանակություն: Մինչդեռ հոգևոր պահանջմունքները կարևորվել են օրինապահ քաղաքացիների 17 և դատապարտյալների 12%-ի կողմից: *Մարգարյան Ա.* Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-հոգեբանական բնութագիրը, «Պետություն և իրավունք», թիվ 2 (16), Երևան, 2002, էջեր 78-88:

ստեղծագործությունները, այլ մարտական ֆիլմերը, հանցավոր կյանքին վերաբերող գրքերը:

Պահանջմունքների նման բաշխումը պայմանավորված է հասարակության կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտած այնպիսի փոփոխություններով, ինչպիսիք են բնակչության հիմնական զանգվածի աղքատացումը, նյութական միջոցների ձեռք բերման օրինական հնարավորությունների սահմանափակությունը, համատարած գործազրկությունը, սպառողական կողմնորոշումների տարածումը: Օրվա ապրուստի հայթայթման, իրենց սոցիալական կարգավիճակի պահպանման խնդրի լուծումն այնքան հրատապ է հասարակության անդամների համար, որ հոգևոր պահանջմունքների բավարարումը նրանց զգալի մասի համար կրում է երկրորդական բնույթ: ՀՀ դատական տեղեկատվական համակարգում՝ «DATALEX» վեբկայքում, տեղադրված դատավճիռների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վերջին տարիներին անչափահասների կողմից գողությունների առարկա հաճախ լինում է սնունդը, ծխախոտը կամ հագուստը, որոնք նախատեսված են անչափահասների նյութական, կենսաբանական պահանջմունքները բավարարելու համար:

Կենսաբանական մակարդակի, օրինակ՝ սննդի կամ ինքնապահպանման պահանջմունքները, դժվար են վերահսկվում, հաճախ դրսևորվում են բնազդային մակարդակում, հետևաբար դրանց նկատմամբ վերահսկողության սահմանումը հնարավոր է միայն ուժեղ կամքի պարագայում: Մինչդեռ ավելի բարձր մակարդակի՝ անձի ինքնագիտակցության հետ կապված պահանջմունքները առավել հեշտ վերահսկելի են⁶⁵:

Այս առումով, առանձին հետաքրքրություն է ներկայացնում անչափահասների ինքնավերահսկման մակարդակի ուսումնասիրությունը: Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ վկայում են, որ անչափահասների հանցավոր վարքագիծը հիմնականում կրում է իմպուլսիվ բնույթ, տեղի է ունենում պահի ազդեցության տակ⁶⁶: Հետևաբար, նման իրավիճակներում ինքնավերահսկումը

⁶⁵Տե՛ս *Кудрявцев В. Н.* Борьба мотивов в преступном поведении. М., 2007, էջ 12:

⁶⁶ Տե՛ս *Брижак З.И., Волочай С.Н.* Характеристика преступлений несовершеннолетних и её значение для повышения эффективности расследования. Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2011. № 1 (7), էջ 100-103; *Wikstrom P., Svensson R.* When does self-control matter? The interaction between morality and self –control in crime causation. European Journal of Criminology, 2010, Volume 7, number 7, էջ 404; *Wikstrom P., Trieber K.* The role of self-control

կարևոր գործոն է հանցավոր կամ շեղվող վարքագծի դրսևորումից անչափահասների զերծ մնալու համար:


Մեր կողմից անցկացված ISRD-3 հետազոտության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել անչափահասների ինքնավերահսկման գործոնին: Այն ուսումնասիրվել է երկու կտրվածքով՝ ռիսկային վարքագծի դիմելու պատրաստակամության և հեղոնիստական⁶⁷ հաճույք ստանալու պահանջմունքների բավարարման:

Ուշագրավ են այդ առումով ՀՀ-ում ստացված արդյունքները, որոնք վկայում են, որ ՀՀ-ում մեծ թիվ են կազմում այն երեխաները, ովքեր իրենց վարքագիծն իրականացնում են պահի ազդեցությամբ (69%): Ընդ որում, հարցվածների 79,1%-ը նշել է, որ սիրում է փորձել իրեն և պատրաստ է ռիսկի դիմել: Նման դիրքորոշում ունեցող երեխաների քանակով ՀՀ-ը առաջատար է ISRD-3 հետազոտության մեջ ընդգրկված մյուս եվրոպական երկրների համեմատությամբ:


Գծապատկեր 10. Ես գործում եմ պահի ազդեցությամբ՝ ISRD-3

in crime causation: Beyond Gottfredson and Hirschi's General theory of Crime. European Journal of Criminology, 2007, Volume 4, number 2, էջ 237:

⁶⁷ Հեղոնիզմը էթիկայի փիլիսոփայական ուղղություն է, որը հաճույք ստանալն ու ուրախանալը դիտարկում է որպես բարձրագույն արժեք և երջանկության նախապայման:



Գծապատկեր 11. Ես սիրում եմ փորձել ինձ և պատրաստ եմ ռիսկի դիմել՝ ISRD-3



Ընդ որում, ՀՀ-ում հարցված երեխաներին (65,8%) ավելի շատ հուզում է, թե իրենց հետ ինչ կկատարվի մոտ, այլ ոչ թե հեռու ապագայում: Ուշագրավ է, որ այդ


առումով ՀՀ-ում նկատվում է նույն միտումը, ինչ և նախկին Հարավսլավիայի երկրներում, մինչդեռ Ուկրաինայում և Շվեյցարիայում երեխաները, իրենց վարքագիծը դրսևորելիս, առավել պատասխանատու են մոտենում դրա հետևանքներին, իրենց ապագային:

Հոգեբանության մեջ ժամանակի ընկալումը կարևոր նշանակություն ունի, քանի որ այն ազդում է անձի արժեքային համակարգի, մոտիվացիայի ձևավորման, վարքագծային մոդելի ընտրության վրա⁶⁸: Դրա դերակատարությունը հատկապես կարևորվում է տարբեր տարիքային խմբերում և ճգնաժամային իրավիճակներում. երեխաների համար ապագան շատ անորոշ է և հեռու, մինչդեռ մեծահասակների համար այն շատ մոտ է: Միաժամանակ, ֆրուստրացնող իրադրություններում (պատերազմ, սոցիալ-տնտեսական ճգնաժամ, օտարում ընտանիքից, կյանքի պլանների ձախողում և այլն) անձն առավելապես կողմնորոշվում է դեպի մոտ, քան հեռու ապագա⁶⁹: Թերևս դրանով էլ կարելի է բացատրել, որ հետպատերազմական հասարակություններում՝ ՀՀ-ում, Հարավսլավիայում բնակվող երեխաները, իրենց վարքագծում առավելապես կարևորում են այն, թե իրենց հետ ինչ կկատարվի մոտ, քան հեռու ապագայում:

Գծապատկեր 12. Ինձ ավելի շատ հուզում է, թե ինձ հետ ինչ կկատարվի մոտ, քան հեռու ապագայում՝ ISRD-3


⁶⁸ Տե՛ս **Квасова О.** К современному состоянию проблемы временной перспективы личности. Историческая и социально-образовательная мысль 2012, N 5 (15), էջ 138:

⁶⁹ Տե՛ս **Муздыбаев К.** Переживание времени в период кризисов // Психологический журнал. 1999, Т 2, N 4; **Миско Е.А., Тарабрина Н.В.** Особенности жизненной перспективы у ветеранов войны в Афганистане и ликвидаторов аварии ЧАЭС // Психологический журнал. 2004. № 3.




Թեև ՀՀ անչափահասների շրջանում բարձր է ռիսկի դիմելու պատրաստակամությունը, սակայն զուտ հաճույք ստանալու համար ռիսկի դիմելը ընդունելի է համարվել հարցվածների միայն 44,1%-ի կողմից: ՀՀ-ում հարցման ենթարկված անչափահասների գրեթե նույն համամասնությունն (41,9%) է նշել, որ արկածներն ու աղբյուրներն իրենց համար շատ ավելի կարևոր են, քան անվտանգությունը:

Գծապատկեր 13. Երբեմն ես ռիսկի եմ դիմում զուտ դրանից հաճույք ստանալու համար՝ ISRD-3



Գծապատկեր 14. Արկածներն ու աղբյուրներն ինձ համար շատ ավելի կարևոր են, քան անվտանգությունը՝ ISRD-3




Վերջին գծապատկերը հաստատում է ՅՈՒ. Անտոնյանի այն դատողությունը, որ անչափահասներին, հատկապես դեռահասներին, բնորոշ է արկածախնդրությունը, սուր զգացողություններ ապրելու, անհավանական իրադրություններում հայտնվելու ձգտումը, որտեղ իրենք կարող են ի ցույց դնել իրենց խիզախությունը, ֆիզիկական

ուժն ու ճարպկությունը⁷⁰: Հեղինակի կարծիքով, դեռահասները մի մասը այդ պահանջմունքները բավարարում է սպորտով զբաղվելով, իսկ նման հնարավորություն չունեցողների մի մասը՝ հանցավոր վարքագիծ դրսևորելով:

Աղյուսակներ 10-14-ում ներառված դատողությունները հաշվի են առնվել անչափահասների ռիսկի դիմելու մակարդակի և նրանց շեղվող վարքագծի միջև հնարավոր կապը գնահատելու նպատակով: Մասնավորապես, ռիսկի դիմելու բարձր մակարդակ է դիտարկվել, եթե հարցվողը համաձայնվել է 5 դատողություններից գոնե 2-ի հետ, իսկ ցածր՝ եթե համաձայնվել է առավելագույնը 1 դատողության հետ:


Ստացված արդյունքները վկայում են, որ ռիսկի դիմելու բարձր մակարդակ ունենալու և շեղվող վարքագիծ դրսևորելու պարագայում առկա է կոռելյացիա: Մասնավորապես, ռիսկի դիմելու բարձր մակարդակ ունեցողները գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, քան ռիսկի դիմելու ցածր մակարդակ ունեցողները: Սեփականության դեմ ուղղված կամ բռնի ոտնձգություն կատարելու պարագայում ռիսկի դիմելու պատրաստակամությունը վճռորոշ դերակատարություն չի ունեցել:

Գծապատկեր 15. Ռիսկի դիմելը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




⁷⁰ См'у **Антонян Ю.М.** Личность несовершеннолетнего преступника. Вестник Всероссийского института повышения квалификации сотрудников Министерства внутренних дел Российской Федерации. 2013. № 2 (26), էջ 3-9:

Գծապատկեր 16. Ռիսկի դիմելը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Գծապատկեր 17. Ռիսկի դիմելը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Ստացված տվյալների վերլուծությունից հետևում է, որ երեխաների ռիսկի դիմելու պատրաստակամությունը նշանակություն ունի միայն շեղվող վարքագծի առանձին տեսակների դրսևորման առումով, հատկապես՝ վանդալիզմի, գրաֆիտիի, մանր գողության, խմբային կռիվների, մինչդեռ անձի առողջությանը վնաս հասցնելու, կողոպուտ կամ ավազակային հարձակում կատարելու պարագայում ռիսկի դիմելու պատրաստակամությունը էական ազդեցություն չունի, և այստեղ առավել վճռորոշ են դառնում անչափահասի անձի սոցիալ-հոգեբանական այլ առանձնահատկությունները:

Նման վիճակը թերևս բացատրվում է երեխաների կողմից իրենց վարքագծի համար պատասխանատվության ենթարկվելու հնարավորության գնահատմամբ. գրաֆիտիի, վանդալիզմի, խմբային կռիվների պարագայում նրանք իրատեսական չեն համարում պետության կողմից պատասխանատվության ենթարկվելը, վստահ են, որ իրենց ծնողները կգնան ամեն քայլի երեխաներին նման կենսափորձից հեռու պահելու համար, մինչդեռ առավել լուրջ իրավախախտումներ կատարելիս՝ երեխաները վստահ չեն, որ ծնողները միշտ հաջողության կհասնեն իրենց պատասխանատվությունից զերծ պահելու առումով: Պատահական չէ, որ երեխաների ավելի մեծ զանգվածին է հուզում, թե սեփական վարքագիծը իրենց վրա ինչպես կանդրադառնա ապագայում:


Գծապատկեր 18. Ես անում եմ այն, ինչ այս պահին ինձ հաճույք է պատճառում, նույնիսկ եթե դրա հետևանքով ապագայում ինչ-ոչ բան կկորցնեմ՝ ISRD-3



ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցման ենթարկված անչափահասների միայն 27%-ն է նշել, որ իրենց չի անհանգստացնում, թե ներկա պահին իրենց վարքագիծը ինչ նշանակություն կունենա հետագա կյանքի առումով և իրենք ավելի կարևորում են հաճույք ստանալը:

Միաժամանակ, կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ երեխաների շրջանում կարևորվում է սեփական կարիքների բավարարումը առանց ուրիշներին վնասելու, նրանց համար բարդություններ ստեղծելու: Ընդ որում, ուրիշների կարիքների հանդեպ նրբանկատություն առավելապես արտահայտվել է Ուկրաինայի (78,8), ՀՀ-ի (72,7%) և Շվեյցարիայի (73,8%) անչափահասների կողմից:


Գծապատկեր 19.Ես առաջին հերթին հոգ եմ տանում իմ մասին, նույնիսկ եթե դրանով ուրիշների համար բարդություններ եմ ստեղծում՝ ISRD-3




Հարցված անչափահասների կողմից համանման դիրքորոշում է արտահայտվել նաև այն դատողությունների վերաբերյալ, որոնք վերաբերում են իրենց վարքագծից ուրիշների հուզվելուն, ամեն գնով սեփական նպատակներին հասնելուն: Ակնհայտ է, որ անչափահասների մեծ մասին բնութագրական է ուրիշների զգացմունքները, իրավունքներն ու շահերը չտոնահարելու ցանկությունը: Այլ խնդիր է, որ երեխայի ցանկությունը և փաստացի կատարածը կարող են չհամընկնել. երեխաները, իրենց

տարիքային առանձնահատկություններից, կենսափորձից, մտավոր և երևույթները քննադատական վերլուծության ենթարկելու ունակություններից ելնելով, միշտ էլ, որ գիտակցում են ուրիշներին վնաս կամ տառապանք պատճառելու հանգամանքը

Գծապատկեր 20. Եթե իմ արածներից ուրիշները հուզվում են, դա ոչ թե իմ, այլ իրենց խնդիրն է՝ ISRD-3




Գծապատկեր 21. Ես ամեն գնով կձգտեմ իմ ուղածին հասնել, եթե նույնիսկ դրանով ուրիշների համար խնդիրներ են ստեղծում՝ ISRD-3



Աղյուսակներ 18-21-ում ներառված դատողությունները հաշվի են առնվել անչափահասների հեղոնիստական գաղափարների և նրանց շեղվող վարքագծի միջև հնարավոր կապը գնահատելու նպատակով: Մասնավորապես, հեղոնիստական հակվածության բարձր մակարդակ է դիտարկվել, եթե հարցվողը համաձայնվել է 4 դատողություններից գոնե 1-ի հետ, իսկ ցածր՝ եթե չի համաձայնվել ոչ մի դատողության հետ:


Կատարված վերլուծությունը վեր է հանել ուժեղ արտահայտված կոռելյացիա հեղոնիստական հակվածության բարձր մակարդակի և շեղվող վարքագծի առանձին դրսևորումների՝ հատկապես գրաֆիտիի, վանդալիզմի, մանր գողության, խմբային կռիվների միջև:

Գծապատկեր 22. Հեղոնիստական մոտեցումը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Էական տարբերություն չի գրանցվել հեղոնիստական հակվածության բարձր մակարդակ և ցածր մակարդակ ունեցող անչափահասների կողմից սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կատարման առումով, սակայն կատարված ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ հեղոնիստական հակվածության բարձր մակարդակ ունեցող երեխաների խմբում գրեթե 2 անգամ ավելի հաճախ է բռնի վարքագիծ գրանցվել:

Գծապատկեր 23. Հեղինիստական մոտեցումը և սեփականության դեմ ուղղված արարքները՝ ISRD-3



Գծապատկեր 24. Հեղինիստական մոտեցումը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Վերջին բացահայտումը հաստատում է կրիմինալոգիական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը⁷¹, որ բռնի վարքագիծ դրսևորած երեխաներին բնորոշ

⁷¹ Տե՛ս **Грудинин Н. С., Галынская Д. С.** Личность несовершеннолетнего преступника. Вестник Уральского Финансово-Юридического института, № 4(6)/2016, էջ 7; **Ратанина О.В.** Самоконтроль, импульсивность, агрессивность и эмпатия как факторы делинквентного поведения подростков. В сборнике: Молодёжь третьего тысячелетия. Сборник научных статей. 2016. էջ 683-685:

է բարձր հուզականությունը, հուզական անկայունությունը, էմպատիայի ցածր մակարդակը:

Ակնհայտ է, որ անչափահասների կամային ոլորտը, ինքնավերահսկումը և հատկապես՝ հեղոնիստական գաղափարներին հետևելը, կարևոր դերակատարություն ունեն ՀՀ-ում նրանց շեղվող վարքագծի վրա: Ընդ որում, ինքնավերահսկման ցածր մակարդակը առավելապես ազդում է բռնի վարքագծի դրսևորման վրա:

Հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասի անձի ուսումնասիրության կարևոր բաղադրիչներից մեկը նրա արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշումների ուսումնասիրությունն է, հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղ գտած բեկումնային փոփոխությունները հանգեցրել են հասարակության արժեքային համակարգի անորոշության, մի շարք արժեքներ վերացել են և փոխարենը հայտնվել են այնպիսիք, որոնք չեն ընդունվում նախկին արժեքային համակարգով դաստիարակություն ստացած անձանց կողմից:

Հասարակությունում գոյություն ունեցող տարաբնույթ հայացքներից, գաղափարներից, սկզբունքներից, վարքագծի նորմերից և կանոններից անձն ընդունում է միայն նրանք, որոնք առավելապես համապատասխանում են իր սոցիալական փորձի արդյունքում ձևավորված ներքին դիրքորոշմանը: Այդ ընդունված արժեքներով էլ նա ղեկավարվում է շրջապատող իրականության երևույթները, իր և այլ անձանց վարքագիծը գնահատելիս⁷²:

Արժեքային կողմնորոշումներով է պայմանավորված նաև ցանկալի նպատակին հասնելու համար անձի կողմից դրսևորվող վարքագծի կոնկրետ, այդ թվում՝ հանցավոր տարբերակի ընտրությունը:

Մինչդեռ երեխան, դեռևս չունենալով բավարար կենսափորձ, արժեքային կողմնորոշումների իր համակարգը կառուցում է հիմնվելով ընտանիքի, սոցիալական միջավայրի, ընկերների կողմից դրանք իրեն փոխանցելու վրա:

⁷² Տե՛ս **Тарарухин С.А.** Преступное поведение (социальные и психологические черты). М., 1974, էջ. 26-30; **Аракелян С.** Криминологическая характеристика лица, совершившего убийство в Республике Армения. «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015 № 2 (17), էջ 18:

Հասարակության ճգնաժամային փուլերում, երբ տեղի է ունենում արժեքային համակարգի վերակառուցում, այն դեռևս գտնվում է չկանոնակարգված վիճակում, լուրջ խնդիրներ են ծագում անչափահասների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացում⁷³։ ընտանիքում, ուսուցիչների շրջանում արժեքային համակարգի վերաբերյալ կայուն պատկերացումների բացակայությունը, ծնողների, ուսուցիչների կողմից կարևորվող և երեխաներին ուսուցանվող, սակայն նոր սոցիալական իրողությանը չհամապատասխանող և դրա պարագայում կիրառություն չգտնող վարքագծային նորմերը, սկզբունքներն ու գաղափարները երեխայի մոտ ձևավորում են անորոշություն, անվստահություն իրեն փոխանցվող արժեքների կարևորության վերաբերյալ, ինչն էլ արդյունքում հանգեցնում է երեխայի մոտ հիմնարար՝ կյանքի իմաստի, նշանակության, հայրենասիրության, հոգևոր ոլորտի արժեքների բացակայություն։

Եթե նախկինում երեխայի արժեքային համակարգում, մասնավորապես արժեք-նպատակներում, առաջնային տեղ էր տրվում ընտանեկան երջանկությանը, որից հետո՝ կրթությանը, ընկերական լավ միջավայրի ձևավորմանը, ապա ներկայումս՝ նյութական բարեկեցությանն ու բարօրությանը։

Այսպես, ISRD-2 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ նյութական միջոցների առկայությունը անչափահասների շրջանում դիտվում է որպես կարևոր արժեք, հարգանքի արժանանալու նախապայման, ինքնահաստատման միջոց։ Դրա անուղղակի վկայությունն է նաև այն, որ նյութապես անապահով ընտանիքների երեխաների նկատմամբ գրեթե երկու անգամ ավելի հաճախ է հալածանք իրականացվում, նրանց ավելի հաճախ են ծաղրուծանակի ենթարկվում։

Փոփոխության է ենթարկվում նաև անչափահասների արժեք-միջոցների համակարգը. ավանդաբար այդ համակարգում առաջնային էին դիտվում ազնվությունը, ճշտախոսությունը, դաստիարակվածությունը, ինքնատիրապետումն ու հարգանքն այլ անձանց, հատկապես մեծահասակների նկատմամբ։ Մեր կողմից իրականացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքները, սակայն, վկայում են, որ ՀՀ-ում երեխաների կողմից այդ արժեքները վերանայվում են. կարևորվում է

⁷³ Տե՛ս **Волков Б.С.** Психология юности и молодости: Учебник для вузов. М.: Трикта, 2006.

ձեռներեցությունը, նյութական միջոցների ձեռք բերման նպատակով արդարացվում է խաբեությունը, ընկերներին մոլորեցնելը: Այն հարցին, թե «ի՞նչ եք կարծում, ինչպես կվերաբերվեն Ձեզ Ձեր ընկերները, մայրը, հայրը, ուսուցիչը, հարևանները, եթե Դուք Ձեր օգտագործած իրը թանկ գնով վաճառեք Ձեր ընկերոջը, իսկ Դուք ավելի մատչելի գնով ձեռք բերեք նորը» հարցվածների միայն 25,9%-ն է նշել, որ իր կարծիքով ընկերները կքննադատեն իրեն դրա համար, 44,3 %-ը նշել է, որ մայրը կքննադատի, 43,8%-ի կարծիքով՝ ինքը կարժանանա հոր պարսավանքին, 34,1%-ը՝ ուսուցչի, 24,1%-ը՝ հարևանների քննադատությանը: Հետևաբար, հարցվածների 50%-ից ավելին չի ընկալում նման վարքագծի բացասական ուղղվածությունը, ինչը թերևս պայմանավորված է նաև հասարակությունում նման երևույթների տարածվածությամբ ու անպատժելիությամբ:

Պատահական չէ, որ հարցված երեխաների 23,9 %-ը նշել է, որ իրենց կարծիքով, մեծերին խաբելը ամոթալի չէ, ավելին՝ արդարացված է: Ընդ որում, շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելի մեծ է:

Միևնույն ժամանակ, ստացված արդյունքները վկայում են, որ երեխայի ասոցիալ վարքի կանխարգելման առումով նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործընթացում թուլանում է առանձին սոցիալական կառույցների դերը. եթե ուշադրություն դարձնենք այն սուբյեկտներին, ում քննադատությունը երեխան ակնկալում է «ձեռներեցություն» դրսևորելիս, ապա ակնհայտ է, որ ամենաշատ նման մոտեցում նա ակնկալում է ընտանիքից՝ մորից և հորից, ապա՝ դպրոցից, ուսուցչից, հետո միայն՝ ընկերական միջավայրից ու հարևաններից: Առավել հետաքրքիր է հենց վերջին երկու սոցիալական օղակների դերակատարությունը. եթե ընկերների կողմից քննադատություն չակնկալելը հասկանալի է, քանի որ երեխան իրեն լիովին ինտեգրված է զգում այդ միջավայրում, վստահ է, որ ընկերների մեծամասնությունը իր հետ համամիտ է, ապա հարևաններից քննադատություն չակնկալելը պայմանավորված է մի կողմից՝ վերջիններիս կողմից երեխայի նկատմամբ սոցիալական հսկողության թուլացմամբ, մյուս կողմից՝ հարևանների կարծիքի հանդեպ երեխայի անտարբերությամբ:

Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն արժեքային կողմնորոշումները, այլև վարքագծի դրդապատճառները, շարժառիթները:

ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից տրամադրված տվյալները վկայում են, որ անչափահասների կողմից բռնությամբ զուգորդված հանցավոր վարքագիծ դրսևորելու պարագայում կարևոր դերակատարություն ունեն խուլիգանական շարժառիթները: Մասնավորապես, 2003-2015 թթ. ընթացքում նրանց կողմից կատարված սպանությունների 12,1%-ը կատարվել են խուլիգանական շարժառիթներով, սակայն անձի առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու պարագայում այդ շարժառիթը կազմել է ընդամենը 0,9%: Ընդ որում, անչափահասների կողմից դրսևորված բռնի վարքագիծը, հատկապես սպանությունները, հաճախ կատարվել են առանձին դաժանությամբ: 2003-2015 թթ. նրանց կողմից կատարված սպանությունների 6,1%-ը դրսևորվել է առանձին դաժանությամբ:

Ինչ վերաբերում է սեփականության դեմ ուղղված հանցավոր ոտնձգություններին, ապա կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ անչափահասների կողմից կատարված գողությունների մոտ 30%-ի դեպքում է առկա եղել շահադիտական դրդապատճառը, մինչդեռ մնացած դեպքերում գերակայել են ինքնահաստատման, արկածախնդրության, սուր զգացողություններ ունենալու, խմբից կախվածության, տարիքային թեթևամտության դրդապատճառները⁷⁴: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ ինչպես և չափահասների պարագայում, անչափահասների հանցավոր վարքագիծը ևս պոլիմոտիվացված է, այսինքն՝ միաժամանակ կարող են առկա լինել ինչպես նյութական շահ ստանալու, այնպես էլ ինքնահաստատման կամ ընկերասիրության շարժառիթները:

Անչափահասների կողմից հանցավոր վարքագիծը հաճախ պայմանավորված է ինքնահաստատման շարժառիթով: Մարդկանց հավանությանն արժանանալու, սեփական անձի նկատմամբ հարգանքի, ինքնահաստատման պահանջումները բնորոշ են յուրաքանչյուր անձի: Սակայն, եթե օրինապահ քաղաքացիները ձգտում են

⁷⁴ Տե՛ս **Գաբրույան Ա., Առաքելյան Ս., Ղուկասյան Ա., Մարգարյան Ա.** և ուրիշներ: Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում Երևան, 2010, էջեր 66-86:

այդ պահանջմունքը բավարարել աշխատանքում, ուսման մեջ, կյանքում հաջողությունների հասնելու ճանապարհով, ապա հանցավոր վարքագիծ դրսևորող անչափահասները՝ հաճախ բռնության գործադրմամբ կամ հափշտակություն կատարելով: Այս երեխաների կողմից բռնության գործադրման հիմնական պատճառն, թերևս այն է, որ չկարողանալով օրինական ճանապարհով հասնել ցանկալի նպատակին, նրանք հայտվում են ֆրուստրացված վիճակում, ինչն էլ հանգեցնում է տագնապայնության և ի վերջո՝ ագրեսիվ վարքագծի: Կրիմինալոգիական ուսումնասիրություններով ևս հաստատվել է, որ հանցավոր վարքագիծ դրսևորած երեխաների շրջանում մեծ է տագնապայնության բարձր մակարդակ ունեցողների քանակը (շուրջ 60%)⁷⁵:

Անչափահասներին բնորոշ է պատասխանատվության անխուսափելիության հանդեպ թերահավատությունը, իրենց վարքագծին ոչ համարժեք գնահատական տալը: Այսպես, ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում հարցված անչափահասների 79,2%-ն է նշել, որ երեխաների կողմից խանութներից կատարվող գողությունը դատապարտելի, ամոթալի երևույթ է, 83%-ը դատապարտելի է համարել վանդալիզմը, 84,9%-ը՝ անձի առողջությանը վնաս պատճառելը, 90%-ը՝ ավազակությունը, շորթումը:

Ընդ որում, շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում այս հարաբերակցությունը ավելի ցածր է եղել. գողություն կատարած անչափահասների միայն 50%-ն է ուրիշի ունեցվածքին ապօրինի տիրանալը դիտարկել որպես դատապարտելի երևույթ, անձի առողջությանը վնաս պատճառելը դատապարտելի է համարել նման վարքագիծ դրսևորած երեխաների 73,4%-ը: Փաստորեն, շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասները հաճախ իրենց կատարածի առումով մեղքի զգացում չեն էլ ունենում, ինչը, ըստ Յու. Անտոնյանի, ենթադրում է նաև բարոյականության բացակայություն⁷⁶: Ընդ որում, դրա պատճառը, հաճախ ԶԼՄ-ներով

⁷⁵ Տե՛ս **Пекарь И.В.** Влияние тревожности на противоправное поведение несовершеннолетнего правонарушителя в норме и умственной отсталости. Актуальные вопросы современной науки. 2009. № 10. էջ 75-80.

⁷⁶ Տե՛ս **Антонян Ю.М.** Личность несовершеннолетнего преступника. Вестник Всероссийского института повышения квалификации сотрудников Министерства внутренних дел Российской Федерации. 2013. № 2 (26). էջ 3-9:

անչափահասի կողմից կատարված արարքի սխալ լուսաբանումն է, հանցավոր վարքագիծ դրսևորած երեխային սոսկ որպես կյանքի իրադրության գոհ ներկայացնելը, ինչի արդյունքում էլ վերջինս իր կատարածի համար մեղավորություն չի զգում:

Ինչպես արդեն նշել ենք, երեխաների շրջանում բարձր է պատասխանատվության անխուսափելիության հանդեպ թերահավատության մակարդակը, որում էական դերակատարություն ունեն ինչպես իրավապահ մարմինների աշխատանքի թերացումները, այնպես էլ կոռուպցիայի միջոցով պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունը:

Նման ընկալմանը մեծապես նպաստում է հասարակությունում, այդ թվում դպրոցներում ծաղկում ստացած այնպիսի երևույթ, ինչպիսին կոռուպցիան է: Ցավոք երեխաները այդ երևույթին ականատես, որոշ դեպքերում՝ մասնակից են լինում գրեթե ամեն օր:

Մեր կողմից իրականացված ISRD-2 ուսումնասիրության շրջանակներում երեխաներին հարցեր տրվեցին, թե արդյո՞ք իրենք, իրենց ընկերները, ծնողները նվեր տվել են ուսուցչին՝ չվաստակած բարձր առաջադիմությունն ապահովելու համար: Հարցվածների 50%-ը հաղորդել է, որ իրենց ծնողները նման նվերներ տվել են, իսկ 82%-ի հաղորդմամբ՝ իր ընկերոջ, ընկերուհու ծնողն էր նման կերպ վարվել: Հարցման խմբում ընդգրկված անչափահասների 33%-ը նշել է, որ մասնավոր դասերի է հաճախել ուսուցչի մոտ՝ իր կողմից չվաստակված բարձր առաջադիմությունն ապահովելու համար, 76%-ը նշել է, որ իր ընկերը կամ ընկերուհին էր մասնավոր դասեր վերցրել ուսուցչից: ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում երեխաներին հարցեր ուղղվեցին՝ կապված ոստիկանության գործունեության իրենց ընկալումների հետ. ստացված արդյունքների համաձայն՝ հարցվածների 44,8%-ի կարծիքով ոստիկանությունը կաշառք է վերցնում:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ՝

1. Ներկա ժամանակաշրջանում հասարակության կարգավորիչ գործառույթի, հասարակական հսկողության թուլացման, կրթական ոլորտում կոռուպցիայի տարածման և դրանով պայմանավորված՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ հարգանքի նվազման պարագայում ՀՀ-ում երեխայի ասոցիալ վարքի

կանխարգելման առումով նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործընթացում նկատվում է դպրոցի և հասարակության դերի նվազում:

2. ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի, հատկապես դրա հանրային բարձր վտանգավորություն չունեցող ձևերի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունի ինքնավերահսկումը՝ անչափահասի ռիսկային վարքագծի դիմելու պատրաստակամությունը և հեղոնիստական գաղափարներին հետևելը:
3. ՀՀ հասարակական կյանքում տեղ գտած փոփոխությունների, հատկապես սոցիալ-տնտեսական ճգնաժամային ցնցումների հետևանքով ներկա ժամանակաշրջանում նկատվում է անչափահասների արժեքային համակարգի անոմիա, նյութական պահանջմունքների գերակայություն հոգևորի նկատմամբ, երեխաների շրջանում սպառողական հոգեբանության աճ, ինչն անդրադառնում է նաև հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների մոտիվացիոն ոլորտի վրա:

ԳԼՈՒԽ 3. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

3.1. Ընտանիքի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողները ունեն անփոխարինելի դերակատարություն. այս միջավայրում են տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալիզացիան, ձևավորվում դերային և վարքագծային ստերեոտիպները, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար՝ բարդություններից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջները ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ունեցող, հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ ունեցած պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում է միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է ընտանիքում⁷⁷:

Մինչդեռ ընտանիքում առկա սոցիալ-տնտեսական և հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ «հանուն երեխայի» հարաբերությունները, հաճախակի բնույթ կրող վիճաբանությունները,

Տե՛ս **Ковтуненко Л.В.** Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей. Вестник Воронежского института МВД России. 2012. № 3, էջ 137-143.

հանդուրժողականության պակասով պայմանավորված «սերունդների կոնֆլիկտը», բռնությունը հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման:

Ընտանիքը և հատկապես՝ երեխան, մեր հասարակության մեջ մշտապես դիտարկվել են որպես բարձրագույն արժեք: Սակայն ՀՀ-ում ընթացող ճգնաժամային երևույթները չէին կարող իրենց ազդեցությունը չգործել նաև սոցիալական այս ինստիտուտի վրա. աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը, ժողովրդագրական բացասական փոփոխությունները, արտագնա աշխատանքի մեկնելու հետևանքով՝ կիսատ ընտանիքների առաջացումը, արժեքային անոմիայով պայմանավորված՝ բարոյական մի շարք նորմերի անտեսումն ընդունելի համարելը հանգեցրեցին հասարակության մի մասի, հատկապես երիտասարդների շրջանում, ընտանիքի ինստիտուտի արժեզրկման: Պատահական չէ, որ ներկայումս նկատվում է ամուսնալուծությունների աճի միտում:

Աղյուսակ 22. Ամուսնալուծությունների թիվը ՀՀ-ում՝ 2003-2016թթ.

Տարի	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Ամուսնալուծություն	0,6	0,6	0,8	0,9	0,9	0,9	0,9	0,9	1	1,1	1,2	1,5	1,2	1,2

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2003-2016. թթ ընդգրկող ժամանակահատվածում ամուսնալուծությունների թիվը աճել է գրեթե 2 անգամ. 2003 թ.-ին 1000 բնակչի հաշվով ամուսնալուծությունների գործակիցը եղել է 0,6, իսկ 2016 թ.-ին՝ 1,2: Ընդ որում, ամուսնալուծությունների ամենամեծ մասնաբաժինը վերաբերում է ամուսնությանը

հաջորդող 1-9-րդ տարիներին (2016 թ.-ին ամուսնալուծությունների 26,1%-ը գրանցվել է ընտանիքի ձևավորումից 1-4 տարի, իսկ 21,5%-ը՝ 5-9 տարի հետո)⁷⁸:

Բնական է, որ ամուսնալուծությունները պետք է հանգեցնեն կիսատ ընտանիքների ձևավորման, որտեղ, ցավոք, ամենից շատ տուժողը երեխան է: Շատ քիչ դեպքերում է, որ ամուսնալուծությունից հետո նախկին ամուսինները, ինչպես նաև նրանց ծնողները կարողանում են պահպանել լավ հարաբերություններ, ժամանակ առ ժամանակ հանդիպել միմյանց, քննարկել ընդհանուր խնդիրները և ամենակարևորը՝ երեխայի համար ապահովել ծնողների միջանձնային խնդիրներից զերծ ջերմ հուզական հարաբերություններ: Առավել հաճախ երեխան պարզապես դառնում է նրանց եսասիրական մոլուկների զոհը, վերածվում միմյանց ցավ պատճառելու, նախկին ամուսնու կամ կնոջ (առանձին դեպքերում՝ հարսի կամ փեսայի) նկատմամբ գերակայության, իշխանության հասնելու կամ վերահսկողություն սահմանելու «խաղաղթի»:

Կիսատ ընտանիքներում դաստիարակվող երեխաների շարքին են դասվում նաև այն երեխաները, ում ծնողները՝ մայրը կամ հայրը մեկնել են արտագնա աշխատանքի կամ ովքեր դաստիարակվում են այրիացած ծնողի կամ միայնակ մոր կողմից: Առանձին փորձագիտական գնահատականների⁷⁹ համաձայն՝ ՀՀ-ում միայն 2014 թ.-ին 125 000 կին ունեցել են միայնակ մոր կարգավիճակ և այդ թիվը գնալով աճում է: Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ⁸⁰ վկայում են, որ հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում՝ ի համեմատ նման վարքագիծ չդրսևորած իրենց հասակակիցների, ավելի հաճախ են հանդիպում կիսատ ընտանիքներում ապրողները:

⁷⁸ Տե՛ս ՀՀ Վիճակագրական տարեգիրք. Բնակչություն, 2017, էջ 43, <http://www.armstat.am/file/doc/99504343.pdf>:

⁷⁹ Հայաստանում ավելացել է միայնակ կանանց թիվը. <https://www.aysor.am/am/news/2014/05/14/aharon-adibekyan/789666>, 14.05.2014. 13.45:


⁸⁰ Տե՛ս **Գաբրիելյան Ա., Մարգարյան Ա., Առաքելյան Ս.** և ուրիշներ: Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան 2010, էջ 27; **Таилова А.Г.** Дисфункциональность семьи как фактор совершения преступления несовершеннолетними. Современные тенденции развития науки и технологий. 2015. № 7-6, էջ 115-117:

Սակայն մեր կողմից կատարված ISRD-3 ուսումնասիրությունը, ինչպես արդեն նշվել է, վեր հանեց լիովին այլ պատկեր. ՀՀ-ում առավելապես շեղվող վարքագիծ են դրսևորել լրիվ ընտանիքում մեծացող երեխաները:

Կարծում ենք, ավելի ճիշտ կլինի շեշտադրում կատարել ոչ թե ընտանիքի կիսատ կամ լրիվ, այլ դրա բարեկեցիկ լինելու՝ երեխայի հետ հուզական ջերմ հարաբերություններ ունենալու, նրա համար հուզական աջակցություն ու հարմարավետություն, երջանկություն ապահովելու վրա:

Հետաքրքիր են այդ առումով ISRD-3 ուսումնասիրության արդյունքները. հետազոտության մեջ ընդգրկված երկրներում հարցվածների մեջ մեր երեխաները իրենց համարել են ամենաերջանիկներից մեկը. ՀՀ երեխաների 94%-ը իրեն երջանիկ է համարել: Ավելի լավ ցուցանիշներ գրանցվել են Կոսովոյում՝ 95.5, Շվեյցարիայում՝ 94.2%, մինչդեռ Սերբիայում նման դիրքորոշում է արտահայտել հարցված երեխաների միայն 86.3, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 90.4%-ը: Միաժամանակ, վեր է հանվել մի օրինաչափություն՝ իրենց երջանիկ համարող երեխաները ավելի քիչ են ներգրավվել շեղվող վարքագծի, բռնություն գործադրել կամ ոտնձգել սեփականության դեմ:


Գծապատկեր 25. Երջանկության զգացողությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Իրենց երջանիկ համարող ՀՀ երեխաները 1.3 անգամ ավելի հազվադեպ են շեղվող վարքագիծ, գրեթե 2 անգամ ավելի հազվադեպ՝ բռնի վարքագիծ դրսևորել,

գրեթե 3 անգամ ավելի հազվադեպ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն կատարել:

Գծապատկեր 26. Երջանկության զգացողությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 27. Երջանկության զգացողությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Թերևս երեխաների և ծնողների միջև հուզական ջերմ հարաբերություններն են, որ երեխաների մոտ ձևավորում են նման երջանկության ընկալում՝ դրանով իսկ նրանց

նկատմամբ նվազեցնելով ՀՀ-ում առկա բազմաթիվ գործոնների, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, բացասական ազդեցությունը:

Դրա վկայությունն է այն, որ ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում հարցված երեխաների 96%-ը նշել է, որ իրենց ընտանիքները մյուսների համեմատ ավելի լավ վիճակում են: Ուշագրավ են այդ առումով հետազոտության մեջ ընդգրկված մյուս երկրներից ստացված արդյունքները. իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը մյուսների համեմատ ավելի լավ են համարել Բոսնիա-Հերցեգովինայում՝ հարցված երեխաների 92.1, Կոսովոյում՝ 94.6. Մակեդոնիայում՝ 87.7, Սերբիայում՝ 85.6, Ուկրաինայում՝ 89.7, Շվեյցարիայում՝ 91.8%-ը: Համադրելով այս տվյալները՝ երեխաների՝ իրենց երջանիկ համարելու տվյալների հետ, կտեսնենք, որ իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը մյուսների համեմատ ավելի լավ գնահատելու ցուցանիշները ամենաբարձրն են այն երկրների երեխաների շրջանում, ովքեր իրենց ավելի երջանիկ են համարել:

Կարելի էր ենթադրել, որ իրականում այդ երեխաները, իրոք, սոցիալ-տնտեսական ավելի լավ վիճակում են գտնվում, ինչն էլ նրանց մոտ ձևավորում է երջանկության զգացում, սակայն այդ ենթադրությունը իր հաստատումը չի գտնում, երբ ուշադրություն ենք դարձնում հետազոտության մեջ ընդգրկված երկրներում աղքատության և գործազրկության տվյալներին⁸¹:

Աղյուսակ 23. Աղքատությունը և գործազրկությունը ISRD-3 հետազոտության մեջ ընդգրկված երկրներում՝ 2014 թ.

	ՀՀ	Բոսնիա-Հերցեգովինա	Կոսովո	Մակեդոնիա	Սերբիա	Ուկրաինա	Շվեյցարիա
աղքատ բնակչություն	35,8%	18,6%	30%	30,4%	9,2%	24,1%	7,6%
գործազրկություն	17,3%	44,3%	30,9%	28,6%	19,7%	8%	3,2%

⁸¹ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields/2046.html>

Ներկայացված տվյալներն առավել քան հետաքրքիր են. թեև ՀՀ-ում է գրանցվել համեմատվող երկրների աղքատության ամենաբարձր ցուցանիշը, իսկ Կոսովոյում՝ դրան գումարվել նաև գործազրկության բարձր մակարդակը, այս երկրների երեխաներն են իրենց առավել երջանիկ համարել: ՀՀ-ում որպես նման վիճակի բացատրություն կարող է լինել այն, որ ծնողները, ընտանիքի չափահաս անդամներն անում են ամեն հնարինն ու անհնարինը, որպեսզի երեխաները չզգան ընտանիքի ծանր սոցիալական վիճակում գտնվելու փաստը, ի պատասխան՝ երեխաները ձգտում են ցույց տալ, որ իրենց ծնողները այդ առումով հաջողության են հասել և իրենք ուրիշներից վատ վիճակում չեն:

Մի հետաքրքիր դիտարկում ևս. չնայած աղքատության բարձր ցուցանիշին՝ ՀՀ-ում գործազրկության մակարդակը, ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված մյուս երկրների համեմատ, բացառությամբ Շվեյցարիայի և Ուկրաինայի, բարձր չի ներկայացվում: Մի կողմից դա բացատրվում է գործազրկության գրանցման, ցուցանիշի ոչ հստակությամբ, բայց նաև մեկ այլ գործոն է վեր հանում. նույնիսկ աշխատող ծնողները ի վիճակի չեն վաստակել այնքան, որ կարողանան լիարժեք ապահովել ընտանիքների գոյությունը, ինչն էլ գործազրկության՝ մյուս երկրների համեմատ ցածր ցուցանիշի պարագայում հանգեցրել է ՀՀ-ում աղքատության բարձր մակարդակի գրանցման:


ISRD-3 ուսումնասիրության համաձայն՝ ՀՀ-ում հարցված երեխաների 5,4%-ը նշել է, որ հայրը (գրեթե նույն՝ 5,8% ցուցանիշն է գրանցվել նաև 2006 թ.-ին), իսկ 26,8%-ը՝ մայրը չի աշխատում (այս ցուցանիշը գրեթե 4 անգամ աճել է ի համեմատ 2006 թ.-ին գրանցված 6,3 %-ի):

Երեխաների ընկալմամբ, ընտանեկան վատ վիճակը առավելապես կապվում է հոր աշխատանք չունենալու հետ: Մասնավորապես, հոր գործազուրկ լինելը փաստած երեխաները 5 անգամ ավելի հաճախ են նշել (15,7%՝ ի համեմատ 3%-ի), որ չունեն համակարգիչ, առանձնացված սենյակ, ընտանիքում չկա ավտոմեքենա, 2 անգամ ավելի հաճախ՝ ուրիշների համեմատ ավելի քիչ գրպանի, ծախսելու գումար ունենալու մասին (22,4% ի համեմատ 12,8%-ի): Մինչդեռ մոր չաշխատելու պարագայում այդ


հարաբերակցությունը շատ ավելի փոքր է՝ համապատասխանաբար՝ 5,5%՝ ի համեմատ 3,6%-ի և 15,6%՝ ի համեմատ 13,6%-ի:

Այնուհանդերձ, երեխայի կողմից թե՛ ընտանիքի ֆինանսական վիճակի ընկալումը, թե՛ իրեն հասանելի նյութական միջոցների քանակով բավարարված լինելը, և թե՛ ծնողների գործազրկությունը իրենց անմիջական ազդեցությունն են գործում երեխայի կողմից շեղվող, բռնի վարքագծի դրսևորման, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու հավանականության վրա, սակայն դրանց առանձին տեսակների ազդեցության ինտենսիվությունը նույնը չէ: Մասնավորապես, ընտանիքի սոցիալական վիճակը լավ կամ վատ գնահատելը, ծախսելու գումարի քիչ կամ շատ լինելը <<-ում էական նշանակություն չի ունեցել երեխաների կողմից շեղվող վարքագիծ դրսևորելու՝ վանդալիզմ, գրաֆիտի կատարելու, խմբային կոիվներին մասնակցելու առումով, մինչդեռ 1,3-1,8 անգամ բարձրացրել է բռնի վարքագիծ դրսևորելու, 2-4 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու հավանականությունը:


Գծապատկեր 28. Ընտանիքի սոցիալական վիճակի գնահատումը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 29. Ընտանիքի սոցիալական վիճակի գնահատումը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 30. Ընտանիքի սոցիալական վիճակի գնահատումը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Այս ցուցանիշների առումով, ՀՀ-ում դրսևորվում է նույն օրինաչափությունը, ինչ և եվրոպական այլ երկրներում: Հետաքրքիր է, որ ՀՀ-ում երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորման, հատկապես՝ սեփականության դեմ ուղղված

ոտնձգությունների կատարման հավանականությունը բարձրանում է, երբ սոցիալական խնդիրները ընտանիքի մակարդակից տեղափոխվում են անձնային մակարդակ, մասնավորապես՝ երեխայի մոտ ավելի քիչ է լինում սեփական կարիքների համար նախատեսված գրպանի, ծախսելու գումարը:

Գծապատկեր 31. Գրպանի, ծախսելու գումարը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 32. Գրպանի, ծախսելու գումարը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Կրիմինալոգիական, հոգեբանական գրականության⁸² մեջ նշվում է, որ աղքատությունը, նյութական վատ պայմանները, գործազրկությունը ազդում են երեխայի ասոցիալ վարքի ձևավորման վրա, սակայն դա ոչ թե պայմանավորված է նյութական միջոցների քանակով, այլ ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտում տեղ գտնող փոփոխություններով. ընտանիքում ձևավորվում է լարված մթնոլորտ, ծնողների մոտ՝ «անլիարժեքության» բարդույթ, ընկճվածություն, օտարվածություն, ֆրուստրացիա, ագրեսիվություն, որոնք էլ տեղակալվում են երեխաների վրա՝ երբեմն՝ բռնության ձևով, փոխվում են արժեքային կողմնորոշումները, չի ապահովվում երեխաների բնականոն ֆիզիկական և հոգևոր զարգացումը, կրթությունը: Աղքատությունը հաղթահարելու համար՝ ծնողները մեկնում են արտագնա աշխատանքի կամ մի քանի տեղ աշխատում, ինչն էլ հանգեցնում է երեխայի նկատմամբ հսկողության թուլացման, ծնողները գրեթե ժամանակ չեն ունենում երեխայի առօրյայով հետաքրքրվելու, ինչն էլ բացասաբար է անդրադառնում երեխայի անձի ձևավորման վրա և նպաստում նրա կողմից շեղվող կամ հանցավոր վարքագծին:


⁸² Տե՛ս **Аствацатуров С.** Безработные: проблемы и решения.// Меняющееся общество. Ереван, 2001, N1-2, էջ 16; **Реан А.А.** Семья: агрессия и виктимность несовершеннолетних, Вестник Московского университета МВД России. 2014. № 12. էջ 305; **Реан А.А.** Агрессия и виктимность в контексте семейной социализации

Психопедагогика в правоохранительных органах. 2016. № 4, էջ 35:


ՀՀ-ում գործազրկության ազդեցությունը երեխայի ասոցիալ վարքի ձևավորման առումով երկակի է. մի կողմից՝ գործազուրկ ծնողները, հատկապես՝ մայրերը, ավելի շատ ազատ ժամանակ ունեն, հետևաբար՝ հնարավորություն ունեն ավելի շատ ժամանակ հատկացնելու երեխայի հետ շփմանը, նրա կարիքների գնահատմանը, ինչու է՝ նաև ավելի լավ հսկողությանը իրականացմանը, մյուս կողմից՝ գործազրկությունը ծնողի մոտ հանգեցնում է արդեն իսկ վերը նշված բարոյահոգեբանական խնդիրներին, որոնք անդրադառնում են երեխայի վրա:

Մեր ուսումնասիրության համաձայն՝ ծնողի՝ հոր կամ մոր գործազրկությունը էապես չի ազդում ՀՀ-ում երեխաների կողմից շեղվող վարքագծի՝ գրաֆիտի, վանդալիզմ, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու, խմբային կոիվների մասնակցության վրա, սակայն վիճակը վատթարանում է, երբ խոսքը վերաբերում է երեխայի կողմից բռնությամբ զուգորդված ոտնձգությունների կատարմանը:

Գծապատկեր 33. Հոր գործազրկությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 34. Մոր գործազրկությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Ներկայացված տվյալները վկայում են, որ գործազուրկ հայր ունեցող ՀՀ երեխաները 2,8, գործազուրկ մայր ունեցողները՝ 1,5 անգամ ավելի հաճախ են բռնի վարքագիծ դրսևորում, անձի առողջությանը վնաս պատճառում:

Գործազուրկ ծնողների, հատկապես գործազուրկ հոր պարագայում երեխայի կողմից բռնի վարքագծի առավել հաճախ կիրառումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ընտանեկան մթնոլորտի ազդեցությամբ երեխայի մոտ ձևավորված ֆրուստրացիայից ազատվելու նրա ձգտումով: Այստեղ արդեն առաջնային նշանակություն է ձեռք բերում երեխայի կողմից հակասությունները, խնդիրները հաղթահարելու վարքագծի տարբերակներին տիրապետելու, դրանց ընտրության հարցը: Խնդիրների հաղթահարման կոնստրուկտիվ՝ կառուցողական տարբերակներին երեխաներից շատերի, իրենց տարիքային առանձնահատկություններով, կենսափորձով պայմանավորված անհրազեկությունը հանգեցնում է նրանց կողմից դրանց հաղթահարման դեստրուկտիվ տարբերակի կիրառման⁸³:

Երեխան իր վարքագիծը հիմնականում կառուցում է հիմնվելով ընտանիքում նրան տրվող վարքագծային մոդելների, տարբեր իրավիճակներում արձագանքելու հմտությունների ու կարողությունների վրա: Մեր հետազոտության արդյունքները,

⁸³ Տե՛ս **Реш А.А.** Агрессия и виктимность в контексте семейной социализации Психопедагогика в правоохранительных органах. 2016. № 4, էջ 36; **Keltikangas-Jarvinen L., Kangas P.** Problem-solving strategies in aggressive and nonaggressive children // Aggressive Behaviour 1988, No 4. էջ 255–264:

ինչպես արդեն նշել ենք, վկայում են, որ երեխաների մի մասի նկատմամբ հայ ընտանիքում բռնություն է կիրառվել, կամ էլ նրանք ականատես են եղել նման վարքագծի: Փաստացի, երեխան ընտանիքում տեսնում է բռնությունը, «սովորում» և հետագայում կիրառում այն:

Ասվածի վկայությունն են նաև ISRD-2 ուսումնասիրության ժամանակ վեր հանված մի շարք դիտարկումներ. այսպես, հարցված երեխաների 43,8%-ի կարծիքով, բռնություն գործադրելը տղամարդու կողմից ինքնահաստատման միջոց է, իսկ հարցվածների 82,9%-ը նշեցին, որ եթե իրենց հարվածեն, իրենք ի պատասխան ևս կհարվածեն:

Անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի դրսևորման վրա ազդեցություն ունի ոչ միայն ընտանիքի՝ սոցիալ-տնտեսական վատ վիճակում գտնվելը, այլև ընդհակառակը՝ ապահովվածության և սպառման բարձր մակարդակ ունենալը:

Մասնավորապես, 2006 թ.-ին մեր կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակներում հարցվողները պայմանականորեն բաժանվեցին երկու խմբի՝ սպառման բարձր և ցածր մակարդակ ունեցող ընտանիքներից սերողների. առաջին խմբում ներառվեցին նրանք, ում պնդմամբ իրենք առանձնացված սենյակ, բջջային հեռախոս, համակարգիչ ունեն, իսկ ընտանիքը՝ ավտոմեքենա, մինչդեռ երկրորդ խմբում՝ այն երեխաները, ովքեր բացասական պատասխան էին տվել առաջադրված 4 տարբերակներից թեկուզ մեկին: Վերլուծության արդյունքում ի հայտ եկավ հասարակության, արժեքային համակարգի ներկայիս վիճակը արտացոլող պատկեր. սպառման բարձր մակարդակ ունեցող ընտանիքների երեխաները՝ ի համեմատ մյուսների ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, իսկ հալածանքի ենթարկվել են առավել անապահով ընտանիքների երեխաները:

Աղյուսակ 24. Երեխաների շեղվող վարքագիծը և վիկտիմիզացիան՝ ըստ սպառման բարձր կամ ցածր մակարդակի՝ ISRD-2

	սպառման բարձր մակարդակ	սպառման ցածր մակարդակ
խմբային կոիվներ	27,4	21,6

զենք կրել	10,3	6,8
առողջությանը վնաս պատճառել	2,2	2
կողոպուտ, ավազակություն, շորթում	1	0,2
խանութից գողություն կատարել	0,7	0,5
հակերություն	5,3	3,4
իր առողջությանը վնաս է պատճառվել	5,8	5,5
շորթման է ենթարկվել	0,5	2,6
իրենից գողություն է կատարվել	12	8,6
հալածանքի է ենթարկվել	1,4	2,3

Առավել ապահովված ընտանիքներից սերող երեխաները 1,3 անգամ ավելի հաճախ են ներգրավվել խմբային կոնֆլիկտների, 1,5 անգամ՝ զենք կրել կամ հակերություն, 5 անգամ՝ շորթում կամ կողոպուտ կատարել, ինչի բացատրությունը, թերևս, հոգեբանական մակարդակում անպատժելիության զգացումն է, վստահությունը, որ ընտանիքի նյութական լավ վիճակը հնարավորություն կտա իրենց ցանկացած պարագայում խուսափել պատասխանատվությունից:

Բացի այդ, ապահովվածության բարձր մակարդակ ունեցող ընտանիքներում առկա են նաև այլ խնդիրներ. որպես կանոն, նման ընտանիքներից սերող երեխաների նկատմամբ, ծնողի կամ ծնողների ավելի մեծ զբաղվածության պարագայում, թույլ է ծնողական հսկողությունը, ծնողի կողմից երեխայի հանդեպ ջերմությունը հաճախ դրսևորվում է ոչ թե նրա կյանքով հետաքրքրվելով, այլ նրան նվերներ տալով:

Երեխայի անձի ձևավորման գործընթացում ընտանիքի ազդեցությունը, առաջին հերթին, պայմանավորված է ընտանիքում երեխայի հետ հուզական կապի առկայության գործոնով: Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ⁸⁴

⁸⁴ Տե՛ս **Bartol, C., Bartol A.** Juvenile Delinquency and Antisocial Behavior: A Developmental Perspective, 2009. 3rd ed: Pearson Prentice Hall; **Голубев Ю.В.** Девиантное поведение как социальная проблема. образование и саморазвитие 2013, N2 (36), էջ 178-183; **Антоян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 109, **Антоян Ю. М.** Насилие. Человек. Общество. М., 2001, էջ 3:

վկայում են, որ ծնողների հետ կապվածության բարձր աստիճանը կոռելացված է երեխաների շեղվող վարքագծի դրսևորման ավելի ցածր հավանականության հետ:

Երեխաների և ծնողների միջև հուզական կապի որոշման նպատակով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրան, թե ի՞նչ հարաբերությունների մեջ են գտնվում ծնողների հետ, որքա՞ն ժամանակ են նրանց հետ անցկացնում, որքա՞նով են հուզական աջակցություն ստանում նրանցից և որքա՞նով է երեխաների համար կարևոր ծնողների կարծիքը: Եթե այս ոլորտներից գոնե 3-ի առումով դրական դիրքորոշում է առկա, ապա պետք է փաստել, որ գործ ունենք ուժեղ հուզական կապի առկայության հետ:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ հասարակություն տեղ գտած ճգնաժամային երևույթներն արդեն իսկ անդրադարձել են հայ ընտանիքների վրա, տեղի է ունեցել ծնողների և երեխաների միջև հուզական կապի թուլացում. 2006 թ.-ին հարցված երեխաների 1,1%-ն էր նշել հոր հետ ունեցած վատ հարաբերությունների մասին, մինչդեռ 2014 թ.-ին՝ արդեն 2,4 %-ը, մոր հետ վատ հարաբերությունների մասին հայտնել էր 2006 թ.-ին հարցվածների 0,7, իսկ 2014 թ.-ին՝ 1,1%-ը:

Սակայն, նույնիսկ այս պարագայում, ծնողների և երեխաների հուզական կապն ՀՀ-ում ավելի մեծ է, քան եվրոպական երկրներից շատերում: Մասնավորապես, ISRD-3 հետազոտության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում, ինչպես նաև Բոսնիա-Հերցեգովինայում, թույլ հուզական կապ է գրանցվել հարցված երեխաների 3,7, Կոսովոյում՝ 4,3, Մակեդոնիայում՝ 4,9, Սերբիայում 14,6, Ուկրաինայում 8,5 և Շվեյցարիայում՝ 12,8%-ի մոտ:


Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընտանիքի հետ թույլ հուզական կապ ունեցող երեխաները ավելի քիչ են հակված իրենց կյանքի, խնդիրների մասին պատմել ծնողներին. ընտանիքի հետ ուժեղ հուզական կապ ունեցողների միայն 9,9%-ն է նշել, որ իր կյանքի մասին չի տեղեկացնում ծնողներին, թույլ հուզական կապ մատնանշածների 18,2%-ը: Ծնողների կողմից իրենցով չհետաքրքրվելը, հարցվածների շրջանում, նշվել է համապատասխանաբար 4,4 և 15,2%-ի, ծնողների կողմից աջակցություն չստանալը՝ 3,3 և 9,1%-ի կողմից:

Ծնողների կողմից աջակցություն ստանալը խիստ կարևորվում է երեխայի ձևավորման գործընթացում, քանի որ այն անչափ կարևոր դերակատարություն ունի երեխայի համարժեք ինքնագնահատականի ձևավորման առումով: Հոգեբանների կողմից կատարված ուսումնասիրությունները⁸⁵ վկայում են, որ ծնողների հետ ընկերական և փոխվստահության վրա հիմնված հարաբերություններ ունեցող երեխաների 75%-ը, մինչդեռ խիստ ընդգծված, պաշտոնական հարաբերությունների մեջ գտնվողների միայն 25%-ի մոտ է կայուն և համարժեք ինքնագնահատական ձևավորվում: Հուզական աջակցություն չստացող երեխաները սկսում են փնտրել այնպիսի անձի, ով կարող է իրենց տալ ծնողների կողմից չտրվող սերն ու ջերմությունը, գնահատել իրենց, բարձրացնել իրենց ինքնագնահատականը, ինչը սակայն, կարող է հանգեցնել նաև երեխաների նկատմամբ հանցավոր վարքագծի դրսևորման կամ հանցավոր վարքագծի նրանց ներգրավման:


Ծնողների և երեխայի հուզական կապի և երեխայի կողմից շեղվող, բռնի վարքագծի, սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների հավանականության գնահատման նպատակով իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ ընտանիքի հետ թույլ հուզական կապ ունեցող երեխաները՝ մյուսների համեմատ, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել՝ գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարել, խմբային կռիվների ներգրավվել և 1,2 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորել: Ընդ որում, այս օրինաչափությունը գրանցվել է նաև մյուս եվրոպական երկրների մեծամասնությունում:

Գծապատկեր 35. Ընտանեկան հուզական կապերը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3

⁸⁵ Տե՛ս **Абрамова Г.С.** Возрастная психология. М., 2006, էջ 565; **Карabanова О.А.** Дисгармоничность детско-родительских отношений как фактор риска девиантного поведения личности Вестник Московского университета МВД России. 2014. № 12. էջ 299; **Соколова В.В.** Влияние семейного воспитания на формирование девиантного поведения детей. Вестник Челябинского государственного университета. Образование и здравоохранение. 2015. № 1 (3). էջ 102-105.




Գծապատկեր 36. Ընտանեկան հուզական կապերը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կատարման առումով ընտանեկան հուզական կապերի թուլացումը, մեր ուսումնասիրությունների շրջանակում, ՀՀ-ում էական տարբերություն վեր չի հանել:

Գծապատկեր 37. Ընտանեկան հուզական կապերը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Առանձին ուշադրության են արժանի ընտանեկան հսկողությանը վերաբերող հիմնախնդիրները: Ծնողական հսկողությունը պետք է դիտարկել 3 կտրվածքով, այն է՝

- 1. երեխան ծնողներին տեղեկացնում** է, թե ո՞վքեր են ընկերները, ինչպե՞ս է անցկացնում ազատ ժամանցը, ինչի՞ վրա է ծախսում գրպանի գումարը: Ծնողների վերահսկողության այս կտրվածքը թույլ է տալիս գնահատել նաև ծնողների հետ երեխայի հուզական կապի դրսևորման աստիճանը, քանի որ ենթադրում է ոչ այնքան ծնողի, որքան երեխայի կողմից ակտիվության, իր կյանքի իրադարձությունների մասին ծնողներին տեղեկացնելու պատրաստակամության դրսևորում:

- 2. ծնողները տեղեկացված** են, թե երեխան որտե՞ղ , ու՞մ հետ է, ինչո՞վ է զբաղված,
- 3. ծնողները վերահսկում** են, այսինքն՝ ստուգում են, թե երեխան որքանո՞վ է պատրաստվում դասերին, ի՞նչ ֆիլմեր է նայում կամ գրքեր կարդում, պատվիրում են որոշակի ժամից չուշանալ, իսկ ուշանալու դեպքում՝ նախապես տեղեկացնել:


Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ-ում, ի համեմատ մյուս երկրների (բացառությամբ Կոսովոյի), մեծ է այն երեխաների մասնաբաժինը (88,3%), ովքեր ծնողներին տեղեկացնում են, թե ում հետ են ժամանակ անցկացրել:

Գծապատկեր 38. Երեխայի կողմից ծնողներին տեղեկացնելը, թե ում հետ է ժամանակ անցկացրել՝ ISRD-3




Սակայն ցուցանիշները սկսում են կտրուկ նվազել և եվրոպական այլ երկրների մեծամասնության հետ դրական իմաստով ունեցած տարբերությունը սկսում է անհետանալ, երբ խոսքը վերաբերում է իրենց ժամանցի բովանդակության կամ սեփական ծախսերի ուղղվածության մասին ծնողներին տեղեկացնելուն: Մասնավորապես, հայ երեխաների 15,7%-ը նշել է, որ ծնողներին երբեք չի տեղեկացնում, թե գումարը ինչի վրա է ծախսում. այս ցուցանիշով ՀՀ-ը զիջել է միայն Շվեյցարիային: Իհարկե, կարելի է ենթադրել, որ երեխաները չեն ցանկանում ծնողներին տեղեկացնել, թե գումարն ինչի վրա են ծախսում, քանի որ իրենց բավականաչափ հասուն և ինքնուրույն են համարում և այդ առումով՝ ծնողների հավանության, աջակցության կարիքը չեն զգում, սակայն շատ ավելի մեծ է հավանականությունը, որ ծնողներից նման տեղեկատվություն թաքցնում են նրանք, ովքեր ծնողների կողմից հավանության չարժանացող ապրանք են գնում կամ ծառայություններից օգտվում: Թերևս նույն տրամաբանությամբ է բացատրվում նաև երեխաների կողմից իրենց զբաղմունքի բովանդակությունը ծնողներից թաքցնելը:

Գծապատկեր 39. Երեխայի կողմից ծնողներին տեղեկացնելը, թե ինչի վրա է գումար ծախսել՝ ISRD-3



Գծապատկեր 40. Երեխայի կողմից ծնողներին տեղեկացնելը, թե ազատ ժամանակ ինչով է զբաղվել՝ ISRD-3




Հասկանալու համար՝ թե երեխայի կողմից իր առօրյայի մասին ծնողներին տեղեկացնելը որքանո՞վ է ազդում նրա շեղվող վարքագծի դրսևորման վրա, ներկայացված երեք հարցերը միավորվեցին և որոշվեց երեխայի և ծնողների միջև կապի աստիճանը. եթե երեխան նշված հարցերից 2-ին տվել էր բացասական պատասխան, ապա դա դիտարկվեց որպես թույլ կապ:


Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ ինչպես և մյուս եվրոպական երկրներում, ՀՀ-ում ևս, երեխայի կողմից ծնողներին իր առօրյայի մասին

տեղեկացնելու առումով թույլ կապը բարձրացնում է նրա կողմից ինչպես շեղվող (2,5 անգամ), բռնի վարքագծի (4 անգամ), այնպես էլ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու հավանականությունը (2,4 անգամ):


Գծապատկեր 41. Երեխայի կողմից ծնողներին տեղեկացնելը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 42. Երեխայի կողմից ծնողներին տեղեկացնելը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 43. Երեխայի կողմից ծնողներին տեղեկացնելը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Ծնողների հսկողության երկրորդ կտրվածքը վերաբերում է երեխայի կյանքի մասին տեղեկացվածությանը: ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ ծնողները հիմնականում տեղեկացված են, թե տանից բացակայելիս, երեխան որտեղ է գտնվում և ում հետ: Այս առումով, հետազոտության մեջ ընդգրկված երկրների շրջանակում, ՀՀ-ում, ինչպես նաև Կոսովոյում, գրանցվել են ամենաուժեղ հսկողության ցուցանիշները: Մասնավորապես, ՀՀ-ում հարցված երեխաների 93,1, Կոսովոյում՝ 95,4, Մակեդոնիայում և Բոսնիա-Հերցեգովինայում՝ 91, Ուկրաինայում՝ 89,8, Սերբիայում՝ 86,7 և Շվեյցարիայում՝ 85,8%-ն է նշել, որ ծնողները միշտ տեղյակ են իրենց գտնվելու մասին: Համանման արդյունքներ են ստացվել նաև երեխայի զբաղմունքի մասին տեղեկացվածության առումով. ՀՀ-ում, Բոսնիա-Հերցեգովինայում հարցվածների 90,4, Կոսովոյում՝ 89, Մակեդոնիայում՝ 80,8, Ուկրաինայում՝ 80,2, Սերբիայում՝ 72,4 և Շվեյցարիայում՝ 71,4%-ն է նշել, որ ծնողները միշտ տեղյակ են, թե իրենք ինչով են զբաղված:

Սակայն, երեխայի ինքնուրույնության պահանջմունքը, ծնողների հսկողությունից էմանսիպացվելու, անձնական տարածքի անձեռնմխելիությունը ապահովելու ճգտումը իր արտացոլումն է գտնում երեխայի կողմից շփման անձնական շրջանակը ձևավորելու

գործընթացում⁸⁶: Պատահական չէ, որ մեր ուսումնասիրությունների համաձայն՝ ծնողական հսկողությունը նույն ազդեցությունը չի կարողանում ունենալ, երբ առնչվում ենք ընկերների այն շրջանակին, ում հետ, տանից դուրս գտնվելիս, երեխան սովորաբար անցկացնում է իր ժամանակը: Ի տարբերություն նախորդ ցուցանիշների, ՀՀ-ում ծնողական հսկողության այս տարբերակը ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված այլ երկրների համեմատ առավելագույնը չէ. թեև ծնողները տեղյակ են, թե երեխաները որտեղ են, ինչով են զբաղված, սակայն ոչ միշտ են տեղեկացված, թե կոնկրետ ում հետ են նրանք այդ պահին: Մասնավորապես, ՀՀ-ում հարցվածների 87,5, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 88,8, Կոսովոյում՝ 91,6, Մակեդոնիայում՝ 87,8, Ուկրաինայում՝ 85,1, Սերբիայում՝ 83,4 և Շվեյցարիայում՝ 81,9%-ն է նշել, որ ծնողները միշտ տեղյակ են, թե տանից դուրս գտնվելիս, իրենք ում հետ են ժամանակ անցկացնում:


Ինչպես և ծնողական հսկողության նախորդ տարբերակում՝ երեխաներին առաջադրված հարցերը միավորվեցին և, ըստ այդմ, որոշվեցին թույլ և ուժեղ հսկողության տարբերակները, որոնք էլ վերլուծության ենթարկվեցին՝ դրանց և երեխաների շեղվող վարքագծի միջև կապը վեր հանելու նպատակով: Հսկողությունը համարվեց թույլ, եթե երեխան բացասական դիրքորոշում էր արտահայտել ծնողական հսկողության այս տարբերակի վերաբերյալ առաջադրված 4 հարցերից 3-ին:

ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հավաստի ուժեղ կապ անչափահասի շեղվող, բռնի վարքագծի և նրա մասին ծնողների տեղեկացվածության միջև:


Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ հսկողության քննարկվող տարբերակի թույլ դրսևորման պարագայում, ՀՀ-ում երեխաները՝ ի համեմատ ուժեղ հսկողության խմբի ներկայացուցիչների, 2,3 անգամ ավելի հաճախ են գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարել, ներգրավվել խմբային կռիվների, 3,1 անգամ՝ բռնություն գործադրել, անձի առողջությանը վնաս պատճառել, 1,6 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարել:

⁸⁶ St' u **Карабанова О.А.** Дисгармоничность детско-родительских отношений как фактор риска девиантного поведения личности. Вестник Московского университета МБД России. 2014. № 12. էջ 295-299.


Գծապատկեր 44. Երեխայի կյանքի մասին ծնողների տեղեկացվածությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 45. Երեխայի կյանքի մասին ծնողների տեղեկացվածությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 46. Երեխայի կյանքի մասին ծնողների տեղեկացվածությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Առավել հետաքրքիր փոփոխություններ, սակայն, ՀՀ-ում տեղի են ունեցել ծնողների հսկողության երրորդ դրսևորման պարագայում, որը ավելի շատ ենթադրում է երեխաների վերաբերյալ ոչ թե մակերեսային տեղեկատվության առկայություն, այլ երեխայի կյանքով, խնդիրներով իրական հետաքրքրվածություն, նրան աջակցության տրամադրում, առօրյային ակտիվ մասնակցություն:

Թեև ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցված երեխաների 93,1%-ն էր նշել, որ ծնողները տեղյակ են, թե իրենք որտեղ են գտնվում, իսկ 90,4%-ը՝ թե ինչով են զբաղված, սակայն միայն 86%-ն էր նշել, որ ծնողները հետաքրքրվում են, թե տանից դուրս գտնվելիս, երեխան իրականում ինչո՞վ է զբաղվել, որտե՞ղ է եղել և ու՞մ հետ: Ավելին, հարցվածների 9,1%-ը նշել էր, որ ծնողները երբեք էլ այդ առումով իրապես չեն հետաքրքրվում: Ցավալի է, սակայն այս ցուցանիշով, ՀՀ-ում ծնողական հսկողության մակարդակը երկու անգամ ավելի թույլ է, քան Կոսովոյում և նույնիսկ Ռկրաինայում:

Փաստորեն, ծնողները թեև տեղեկացված են լինում, թե երեխան որտեղ է և ինչով է զբաղված, սակայն իրականում, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, չեն փորձում երեխայի՝ տանից դուրս վարվող կյանքին իրապես ծանոթանալ, հասկանալ նրա հետաքրքրությունները, ձգտումներն ու խնդիրները,

աջակցել նրան՝ կյանքում առաջ գնալու կամ առկա խնդիրները հաղթահարելու գործում:

Գծապատկեր 47. Ծնողները հետաքրքրվածությունը, թե տանից դուրս գտնվելիս, երեխան ում հետ է, որտեղ և ինչով է զբաղված՝ ISRD-3




Մինչդեռ, ծնողների՝ երեխայի կյանքին և հատկապես՝ ընկերական միջավայրին ծանոթ լինելը, էապես նվազեցնում է երեխայի շեղվող վարքագծի դրսևորման և վիկտիմիզացիայի հավանականությունը: Ընդ որում, այդ կտրվածքով կարևոր դերակատարություն ունի նաև ծնողների կողմից՝ երեխայի տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը:


ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ծնողական հսկողության այս տարբերակով ևս նկատվում է որոշակի հետընթաց. 2006 թ.-ին անցկացված ISRD-2 հետազոտության շրջանակներում հարցված անչափահասների 90,4%-ն էր նշել, որ տանից դուրս գալիս ծնողները սահմանում են այն ժամը, երբ ինքը արդեն պետք է վերադարձած լինի, մինչդեռ ISRD-3-ի ցուցանիշների համաձայն՝ այդ ցուցանիշը նվազել է՝ դառնալով 85,9%:

Միաժամանակ, ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցվածների 90,7%-ը նշել է, որ սահմանված ժամից ուշանալու դեպքում պետք է այդ մասին նախապես տեղեկացնի ծնողներին:

Գծապատկեր 48. Ծնողների կողմից՝ երեխայի տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը՝ ISRD-3



Գծապատկեր 49. Ծնողների կողմից՝ երեխայի տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը՝ ISRD-3



Մինչդեռ, ISRD-2 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հենց այս ցուցանիշներն են, որ էական զսպիչ ներգործություն ունեն երեխաների կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու, ինչպես նաև վիկտիմիզացիայի վրա:

Աղյուսակ 25. Ծնողների հետաքրքրվածությունը երեխայի կյանքով, տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը և երեխաների շեղվող վարքագիծն ու վիկտիմիզացիան՝ ISRD-2

	երեխայի ընկերներին ճանաչելը			տանից դուրս գտնվելու ժամանակը սահմանափակելը		
	միշտ	երբեք		այո	ոչ	
խմբային կոիվներ	11.2%	41.8%	***	23.8%	32.0%	*
զենք կրել	3.2%	20.9%	***	7.1%	14.1%	**
առողջությանը վաս պատճառել	1.0%	8.9%	***	1.9%	1.6%	Ns
հակերություն	1.8%	8.9%	***	3.3%	6.3%	Ns
գինի/գարեջուր գործածել	18.4%	38.9%	***	25.8%	32.8%	Ns
թունդ ալկոհոլ գործածել	3.2%	22.4%	***	6.9%	14.1%	Ns
իր առողջությանը վնաս է պատճառվել	3.9%	11.9%	**	5.5%	21.4%	Ns

Ներկայացված տվյալները վկայում են, որ հատկապես երեխայի ընկերներին իմանալը թե՛ կրիմինոգեն, թե՛ վիկտիմոգեն առումով էական կանխարգելիչ նշանակություն ունի. այն երեխաները, ում ծնողները մշտապես տեղյակ են, թե երեխան ում հետ է շփվում, 3,7 անգամ ավելի քիչ են հաղորդել խմբային կոիվների մասնակցելու, 6,5 անգամ՝ զենք կրելու, 8,9 անգամ՝ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու, 5 անգամ՝ հակերությամբ զբաղվելու, 7 անգամ՝ թունդ ալկոհոլ գործածելու, 3 անգամ՝ իր առողջությանը ուրիշի կողմից վնաս պատճառվելու մասին:


Հետևաբար, ծնողական հսկողության տեսանկյունից, առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի ոչ թե ձևական բնույթ կրող, խիստ, պահանջկոտ ծնողի կերպարին

համահունչ վարքագծին, այլ երեխայի կյանքով իրական հետաքրքրվածություն ունենալուն:

Այս առումով, հետաքրքիր է նաև ծնողների ներգրավվածությունը երեխայի զարգացման գործընթացին, այն է՝ թե որքանով է ծնողը հետևում տնային առաջադրանքների կատարմանը և երեխայի կողմից դիտվող ֆիլմերին:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում մեծ թիվ են կազմում այն ընտանիքները, որտեղ երեխայի տնային աշխատանքների կատարումը թողնված է ինքնահոսի: ՀՀ-ում հարցված երեխաների միայն 56,5%-ն է նշել, որ ծնողները միշտ հետևում են իրենց տնային աշխատանքների կատարմանը, իսկ 22%-ի պնդմամբ՝ ծնողները երբեք դա չեն անում: Ուշագրավ են այդ առումով եվրոպական այլ երկրներից ստացված արդյունքները, որոնց հետ համեմատությամբ, ակնհայտ է դառնում, որ չնայած ՀՀ-ում երեխաների նկատմամբ իրականացվող ուժեղ հսկողությանը, բովանդակային առումով այն էապես զիջում է եվրոպական երկրների մեծամասնությանը:

Գծապատկեր 49. Ծնողների կողմից՝ երեխայի տնային առաջադրանքները կատարելուն հետևելը՝ ISRD-3



Ծնողական հսկողության իրականացման տեսանկյունից, առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, թե որքանով են ծնողները հետևում երեխայի

պաշտպանությանը անձի հոգեբանական ձևավորման վրա կործանարար ազդեցություն ունեցող այնպիսի երևույթներից, ինչպիսիք են պոռնոգրաֆիան, բռնությունը:

Թեև ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում երեխային պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու, հոդված 263-ի 2-րդ մասը՝ համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելու կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիա պահպանելու, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդված 158-ը՝ երեխային սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն կամ տեսաերիզներ վաճառելու կամ վաճառելուն նրանց ներգրավելու համար, սակայն թե՛ հեռուստատեսությունը, թե՛ վեբկայքերը հեղեղված են բռնության տեսարաններ պարունակող նյութերով, իսկ համացանցը՝ պոռնոգրաֆիայով: Երեխայի համար որևէ դժվարություն չի ներկայացնում նաև նույնաբովանդակ նյութերը ձեռք բերելը. ավելին, ներկայումս շուկայում, ինչպես նաև համացանցում, առկա են պոռնոգրաֆիկ բնույթի կամ բռնությունը խթանող համակարգչային խաղեր⁸⁷:

Այսօր համացանցը, վերահսկողության բացակայության պարագայում, իրական վտանգ է ներկայացնում երեխայի համար՝ թե՛ ինքնասպանության քարոզման, թե՛ աղանդների կամ տարաբնույթ ենթամշակույթների, թե՛ թմրանյութերի գործածմանը կամ այլ հակաիրավական, հակաբարոյական արարքներին ներգրավվելու, թե՛ ահաբեկչական խմբավորումների կողմից հավաքագրվելու առումով: Ուստի, անհրաժեշտ է, որ ծնողները գոնե տանը երեխաների համար արգելափակեն նման կայքերը, իսկ օրենսդրությամբ պատասխանատվություն սահմանվի ինտերնետ

⁸⁷ Տե՛ս **Галимова А.А.** Влияние сети интернет и иных средств массовой информации на преступность несовершеннолетних. В сборнике: Современность в творчестве талантливой молодежи Сборник материалов научно-практической конференции молодых ученых. Редакционная коллегия: Капустюк П.А., Рогова Е.В., Таюрская Т.А., Шаевич А.В., Грозин С.Ю., Загорьян С.Г., Загайнов В.В., Ломухина А.В.. 2016. էջ 36-40; **Волошин И.А., Сударикова Т.Е.** Влияние СМИ на формирование криминогенных установок у несовершеннолетних в возрасте от 14 до 18 лет. Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки. 2016. Т. 2. № 4 (68). էջ 49-54:

ակումբներում անչափահաս հաճախորդների համար նման կայքերը չարգելափակելու համար:

Հոգեբանական, կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ ուրիշի վարքագծի սիստեմատիկ դիտարկումը, հատկապես եթե այն հաջողության է հասցնում, հեշտությամբ, նույնիսկ ենթագիտակցական մակարդակում, ձևավորում է տեսածը կրկնելու ձգտում: ՀՀ-ում 2011-2012 թթ. հոգեբանների խմբի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն՝ հեռուստատեսությամբ, միայն մեկ սերիալի ընթացքում ցուցադրվել է 130-ից ավելի բռնության տեսարան: Ընդ որում, նման վարքագիծ դրսևորած անձինք այդ սերիալներում գրեթե միշտ հաջողության էին հասել ու խուսափել պատասխանատվությունից⁸⁸:

Սա ուղղակիորեն հակասում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի պահանջներին, որի մաս 2-ի համաձայն՝ էրոտիկ բնույթի հեռուստահաղորդումները, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-ից 06.00 ընկած ժամանակահատվածում:


Ընդ որում, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի պահանջները վերաբերում են ոչ միայն բռնության, սարսափի, այլև «երեխայի մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների» տարածման արգելքին: Այդ առումով, առանձին վտանգ են ներկայացնում հեռուստատեսությամբ այնպիսի ֆիլմերի, սերիալների, հաղորդումների տարածումը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն «գողական աշխարհի ռոմանտիզմ» են տարածում: Մասնավորապես, ֆիլմերում կամ սերիալներում հանցավոր աշխարհի ներկայացուցիչները հաճախ ներկայացվում են հաջողակ, խիզախ, ընկերասեր, արդար, յուրաքանչյուր հարց լուծելու ունակ մարդկանց, իսկ իրավապահ մարմինների ներկայացուցիչները՝ թույլ, կաշառվող, ստորաքարշ, քծնող մարդկանց կերպարով: Արդյունքում՝ երեխաների համար

⁸⁸ Տե՛ս *Шнайдер Г. Й.* Криминология. М., 1994, էջ 311-312; *Սերոբյան Ա., Թերզյան Ա., Ասափրյան Ե.* ԶԼՄ-ների դերը հասարակության ձևավորման գործում. Երևան 2012, էջ 20-22:

հանցավոր աշխարհի ներկայացուցիչները դառնում են իդեալներ, որոնց փորձում են նմանվել, իսկ իրավապահ մարմինների աշխատակիցների նկատմամբ հակակրանքն ավելի է խորանում: Դրա վկայությունը տարիներ առաջ հայկական հեռուստատեսություններից մեկով հեռարձակվող «Որոգայթ» ֆիլմն էր, որի ցուցադրումից հետո երեխաներից շատերը երազում էին մեծանալ ու նմանվել գլխավոր հերոսին՝ հանցավոր աշխարհի ներկայացուցիչ Հովոյին:

Հետևաբար, ծնողների կողմից իրականացվող հսկողության տեսանկյունից, այս խնդրի վերահսկումը խիստ կարևորվում է, մինչդեռ մեր կողմից իրականացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում հարցված երեխաների միայն 64,5%-ի ծնողներն են հետևում, թե երեխան ինչ ֆիլմեր է նայում:

Գծապատկեր 50. Ծնողների կողմից՝ երեխայի կողմից դիտվող ֆիլմերին, հեռուստահաղորդումներին հետևելը՝ ISRD-3




Պարզելու համար, թե ծնողների կողմից երեխաների նկատմամբ հսկողություն իրականացնելու՝ վերահսկողական բնույթ կրող տարբերակները (երեխայի կողմից տնային առաջադրանքների կատարումը ստուգելը, նրա կողմից դիտվող ֆիլմերը վերահսկելը, տանից դուրս գտնվելիս ժամանակային սահմանափակում դնելը, իսկ ուշացման դեպքում՝ տեղեկացնելը, երեխայի ընկերական միջավայրին ծանոթ լինելը) որքանո՞վ են անդրադառնում երեխաների կողմից շեղվող, բռնի վարքագծի դրսևորման կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու վրա,


դրանք վերլուծության ենթարկվեցին. վերահսկողությունը գնահատվեց թույլ, եթե երեխան բացասական պատասխան էր տվել 5 հարցերից 3-ին:

Կատարված ուսումնասիրությունը վեր հանեց հավաստի կոռելյացիա՝ ծնողների վերահսկողության պակասի և երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորման միջև: Մասնավորապես, ծնողական թույլ վերահսկողության ներքո եղած երեխաները՝ ի համեմատ ուժեղ վերահսկողության ենթարկվածների, 2 անգամ ավելի հաճախ էին շեղվող վարքագիծ դրսևորել, բռնություն գործադրել, 7,5 անգամ հաճախ՝ սեփականության դեմ ուղղված հանցանք կատարել:


Գծապատկեր 51. Ծնողների վերահսկողությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 52. Ծնողների վերահսկողությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 53. Ծնողների վերահսկողությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Երեխայի անձի ձևավորման վրա ընտանեկան ազդեցությունը գնահատելիս՝ կարևորագույն հարցերից մեկը ծնողների կողմից իրականացվող դաստիարակությունն է: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում շեղվող վարքագիծ առավելապես դրսևորվել է լրիվ, արտաքուստ լիարժեք համարվող ընտանիքներում մեծացող երեխաների կողմից: Ընդ որում, որպես նման վիճակի բացատրություն, մենք առավել հակված ենք այն

տեսակետին, որ խնդիրը դաստիարակության ոլորտում է, երբ ծնողների, տատիկների ու պապիկների կողմից երեխայի նկատմամբ չափից դուրս ուշադրությունը, նրան բոլոր տեսակի կենցաղային պարտականություններից ազատելը⁸⁹, երեխայի մոտ ձևավորում է ամենաթողության և անպատժելիության պատկերացում:

Երեխայի դաստիարակությունը վեհ, բայց նաև՝ խիստ պարտավորեցնող առաքելություն է, որը ենթադրում է դրան նախապատրաստություն, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների ու հմտությունների ձեռք բերում: Մինչդեռ ՀՀ-ում, ի տարբերություն բազմաթիվ Արևմտավրոպական երկրների, ծնողների համար նման դասընթացներ նախատեսված չեն: Հետևաբար, ծնողները երեխաներին դաստիարակում են կամ իրենց ծնողների օրինակով, վերջիններիս խորհուրդներով ու ցուցումներով, կամ առաջ շարժվում «փորձերի ու սխալների» մեթոդով՝ մոռանալով, որ փորձարկվողը երեխա է, և իրենց յուրաքանչյուր սխալ կարող է կործանարար լինել նրա համար:

Ամենալուրջ խնդիրը, որն այսօր առկա է դաստիարակման ոլորտում, ծնողների և երեխաների կողմից ընդունելի համարվող արժեքային տարբեր կողմնորոշումներն են⁹⁰: Այսօրվա դեռահասների ծնողները հիմնականում 1970-80-ական թթ.-ի սերունդն են, ովքեր դաստիարակություն են ստացել Խորհրդային Միության ժամանակ ընդունելի համարվող արժեքային համակարգով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո բախվելով նոր իրականությանը, ի հայտ եկած նոր արժեքներին, որոնցից շատերն իրենց համար պարզապես ընդունելի չեն, նրանց համար ստեղծվեց կազուսային իրավիճակ. կա՛մ երեխաներին դաստիարակել մի արժեքային համակարգով, որն իրենց համար ընդունելի չէ, սակայն երեխաներին թույլ կտա գոյատևել և առաջ շարժվել ձևավորված նոր հասարակական հարաբերություններում, կա՛մ երեխաներին սերմանել այն արժեքները, որոնք իրենց կարծիքով, ավելի ճիշտ են, հիմնավոր: Վերջին դեպքում, սակայն, երեխաների մոտ է ձևավորվում արժեքային անորոշություն. ծնողների կողմից

⁸⁹ Տե՛ս **Ковтуненко Л.В.** Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей. Вестник Воронежского института МВД России. 2012. № 3, էջ 137-143; Юридическая психология: учебник / под общ. ред. Ю. Ф. Чуфаровского. 3-е изд., испр. и доп. М., 2003.

⁹⁰ Տե՛ս **Жигинас Н.В., Зверева Н.А., Гребенникова Е.В.** Девиантное поведение подростков как искажение нравственного воспитания. Вестник Томского государственного педагогического университета. 2014. № 1 (142). էջ 39-44.

սերմանվող արժեքները, որոնք պետք է օգնեին իրենց զարգանալ, ընդունվել հասարակության կողմից, իրականում ցանկալի արդյունքը չեն տալիս: Ծնողների սերմանաձևը և իրականությունը հակադրվում են, երեխայի մոտ առաջանում է ներքին կոնֆլիկտ, որն էլ իր հանգուցալուծումն է ստանում առաջադրված հարցերի պատասխանը ինքնուրույն կամ հասակակիցների շրջանում փնտրելով, հաճախ հանգեցնում ծնողների հետ կոնֆլիկտների, նրանց հեղինակազրկման:

Երեխաների շեղվող վարքագծի ձևավորման վրա ազդեցություն ունեցող գործոն է նաև այն, թե ծնողները ինչ դաստիարակության մեթոդներ են կիրառում: Կրիմինալոգիական գրականության մեջ, ինչպես նաև մեր ուսումնասիրությամբ փաստվել է, որ երեխայի նկատմամբ բռնություն, կոպիտ կամ դաժան վերաբերմունք դրսևորելը հանցածին ազդեցություն ունի⁹¹: Առավել հետաքրքրական է, սակայն, թե ՀՀ-ում երեխաների դաստիարակությունը ծնողների կողմից ինչպես է իրականացվում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված «Աղքատության պատկերը ՀՀ-ում 2008-2015 թթ.-ին» զեկույցի շրջանակներում, ներկայացված են այն մեթոդները, որոնք չափահասները կիրառելի են համարել երեխաների նկատմամբ: Մասնավորապես՝ չափահասների 55.6%-ը համաձայն է եղել, որ ծնողները որպես դաստիարակչական մեթոդ երեխաներին առաջարկեն խրախուսող կամ շահավետ առաջարկ լավ պահվածքի համար, օրինակ՝ գովասանք, նվերներ, սիրած զբաղմունքի և ժամանցի ապահովում, 73.4%-ը կարևորել է երեխային իր վարքագծի սխալ լինելը բացատրելը, 27.0%-ը համաձայնել է, որ ծնողները որպես դաստիարակչական մեթոդ օգտագործեն՝ երեխային արտոնություններից զրկելը, սիրելի զբաղմունքով զբաղվելը արգելելը, կամ չթույլատրեն տնից դուրս գալը: Հարցվածների 17.8%-ի կարծիքով ծնողները կարող են բղավել, ճշալ կամ հանդիմանել երեխային, անվանել հիմար, ծուլիկ/անբան կամ այլ ածականներ օգտագործել, իսկ 5.2%-ը համաձայնել են, որ ծնողները կարող են ապտակել կամ հարվածել երեխային,

⁹¹ Ст'и **Антонян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 109, **Антонян Ю. М.** Насилие. Человек. Общество. М., 2001, էջ 3

այդ թվում՝ ձեռքով, գոտիով, փայտով կամ այլ գործիքով, ծեծել, հարվածներն ուղղելով երեխայի գլխին, ականջներին, ոտքերին, ձեռքերին կամ արմունկներին⁹²:

Ներկայացված պատասխանները վկայում են, որ ՀՀ-ում ծնողները պատրաստ են խախտել երեխայի իրավունքները՝ նրա նկատմամբ բռնություն գործադրել, զրկել ազատությունից, ինչպես նաև իրենց վարքագծով երեխայի մոտ հոգևոր արժեքներ սերմանելու փոխարեն ձևավորել շահադիտական, սպառողական հոգեբանություն: Հետևաբար, ՀՀ-ում անհրաժեշտ է պետական մակարդակով ծնողների համար նախատեսել հատուկ դասընթացներ՝ երեխաների դաստիարակման գործընթացում անհրաժեշտ մանկավարժական, հոգեբանական գիտելիքներ տալու, հմտություններ ու կարողություն ձևավորելու համար:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում գրանցվել է երեխաների հետ ծնողների հուզական կապի և ընտանեկան հսկողության թուլացում, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունեցել երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա:
2. Թեև այլ երկրների համեմատ ՀՀ-ում ծնողների մոտ բարձր է երեխաների առօրյայի մասին տեղեկացվածությունը, սակայն այն հաճախ կրում է ձևական բնույթ. օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ծնողների մոտ բացակայում է երեխայի կյանքով, ձեռքբերումներով, ձգտումներով իրական հետաքրքրվածությունը, երեխային աջակցելը:
3. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման դետերմինացնող գործոններից է, ինչպես պետության, այնպես էլ ծնողների թույլ հսկողության հետևանքով, երեխաների շրջանում ՁԼՄ-ներով, համացանցով կամ երեխաներին հասանելի այլ եղանակներով բռնության, պոռնոգրաֆիայի, հակաբարոյական այլ երևույթների տարածումը:
4. Անչափահասի շեղվող կամ հանցածին վարքագծի ձևավորման վրա էական ազդեցություն ունի ծնողների՝ երեխային դաստիարակելու իրենց գործառույթին,

⁹²

Աղքատության

պատկերը

Հայաստանում

2008-2015թթ.էջ

102,

http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

մանկավարժական, հոգեբանական գիտելիքներին չտիրապետելը, երեխայի
իրավունքները խախտելը:

3.2. Դպրոցի, ուսումնական հաստատության դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում

Յուրաքանչյուր երեխայի ձևավորման վրա իր անմիջական ազդեցությունն է գործում ոչ միայն ընտանիքը, այլև ուսումնական հաստատությունը, հիմնականում դպրոցը: Վերջինս կարևոր դերակատարություն ունի երեխայի կյանքում. օրվա զգալի մասն երեխան անցկացնում է դպրոցում կամ ուսուցիչների հանձնարարած առաջադրանքները կատարելով:

Դպրոցում երեխան ոչ միայն գիտելիք, կրթություն է ստանում, այլև կյանքի իրական դպրոց անցնում՝ յուրացնում հասարակության նորմերը, կանոնները, այլ անձանց՝ ինչպես մեծերի, այնպես էլ իր հասակակիցների հետ շփման, վարքագծի կանոնները, ձեռք բերում ինքնուրույնություն, հաճախ բախվում այնպիսի խնդիրների, որոնց գոյության մասին իր ընտանիքում չէր էլ պատկերացնում, առանց ծնողների միջամտության փորձում հասնել դրանց լուծմանը:

Վերջին տասնամյակների ընթացքում կրթության ոլորտը, հատկապես դպրոցական համակարգը, անընդհատ բարեփոխումների է ենթարկվում: Երեխաների շեղվող վարքագծի դրսևորման առումով, առավել լուրջ դերակատարություն ունեցավ 2006-2007 ուսումնական տարվանից ավագ (10-12-րդ դասարաններ) դպրոցների ստեղծումը ու դրանց առանձնացումը տարրական (1-4-րդ դասարաններ) և միջին (5-9-րդ դասարաններ) դպրոցներից:

9 տարի շարունակ նույն երեխաների հետ ուսում ստացած, միմյանց հետ շփման խնդիրները հաղթահարած անչափահասները, հոգեբանական առումով ճգնաժամային համարվող տարիքում ստիպված են կրկին նույն ճանապարհն անցնել՝ արդեն նոր միջավայրում ընկերներ ձեռք բերել, նրանց հետ ընդհանուր հետաքրքրություններ ու շփման եզրեր գտնել, ինքնահաստատվել:

Բնական է, որ այդ գործընթացում աճում է երեխաների կողմից ինչպես շեղվող վարքագծի դրսևորումը, այնպես էլ վիկտիմիզացիան. նոր միջավայրում հարգանքի արժանանալու, իրենց ինքնագնահատականը պահպանելու նպատակով երեխաները

հաճախ դիմում են բռնության գործադրման, ինչի վկայությունը ՁԼՄ-ներով պարբերաբար հաղորդվող տեղեկատվությունն է ՀՀ ավագ դպրոցներում ծեծկռտուքների, առողջությանը վնաս պատճառելու դեպքերի վերաբերյալ⁹³: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ դպրոցներում, այդ թվում՝ ավագ դպրոցներում, հիմնականում կանայք են դասավանդում, ովքեր ի վիճակի չեն արագ, համարժեք արձագանքել կատարվող ծեծկռտուքներին, կանխել դրանք, ապա լիովին պարզ է դառնում նման վիճակի պատճառը:

Միաժամանակ, դպրոցում, բացասական առումով, փոփոխության են ենթարկվում «ուսուցիչ-աշակերտ» հարաբերությունները. ուսուցչի և աշակերտի միջև անկեղծ, իրական հուզական կապերի ձևավորման փոխարեն ի հայտ են գալիս «մասնավոր ուսուցիչ-պոտենցիալ աշակերտ» հարաբերությունները, ուսուցչի կողմից երեխային քաջալերելը, աջակցելը, նրա կյանքով և խնդիրներով հետաքրքրվելը, առանձին դեպքերում, մարդկային հարաբերությունների հարթությունից տեղափոխվում է ֆինանսական դաշտ: Մինչդեռ, ինչպես և ընտանիքում, ուսուցչի և աշակերտի միջև հուզական ջերմ հարաբերությունները կարևոր նշանակություն ունեն երեխայի զարգացման, ինքնագնահատականի ձևավորման, որպես անհատ կայացման համար: Ուսուցչի անձով է հաճախ պայմանավորված դպրոցում երեխայի առաջադիմությունը. առարկայով երեխայի հետաքրքրվածությունը մեծանում է, եթե այն դասավանդող ուսուցչի և երեխայի միջև կա փոխադարձ հարգանք, համակրանք, դրական տրամադրվածություն:

Ցավոք, ներկայումս դպրոցներում ավելի հաճախ կարելի է հանդիպել ուսուցչի անտարբերության, երեխաների հանդեպ, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված խտրական մոտեցման, ուսուցչական կազմի մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի, տարրական հոգեբանական գիտելիքների

⁹³ Գորիսում ծեծված աշակերտի առողջական վիճակը վատացել է, <http://hetq.am/arm/news/31429/>, 22.11.2017, 23.36; Վարդենիկի դպրոցի ծեծկռտուքի գործով քննիչը մի շարք խախտումներ է թույլ տվել, <https://news.am/arm/news/188690.html>, 22.11.2017, 23.37; Վերաքննիչ դատարանը բեկանել է Սևանի դպրոցում աչքը կորցրած 9-ամյա աշակերտի գործով վճիռը, 22.11.2017, 23.37, Կոտայքի մարզի դպրոցում սկսված անչափահասների մահակներով կոփվն ավարտվել է մի քանիսի դանակահարությամբ, <http://www.1in.am/1804479.html>, 27.12.2015; Համադասարանցուն ստիպել է համբուրել ոտքերը. «չնչին» միջադեպը՝ 19-ամյա երիտասարդի մահվան պատճառ, <https://www.yerkir.am/news/view/65345.html>, 22.11.2017, 23.42:

չտիրապետելու, դյուրագրգռության, ագրեսիայի դրսևորման⁹⁴, աշակերտի հանդեպ հոգեբանական և նույնիսկ ֆիզիկական բռնության գործադրման: Հասկանալի է, որ այս բոլորը իրենց անմիջական ազդեցությունն են ունենում երեխայի ինչպես արժեքային համակարգի, հոգեբանական առանձնահատկությունների, իրավագիտակցության, այնպես էլ վարքագծային մոդելների ձևավորման վրա:

Այնուհանդերձ, երեխայի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման և կանխարգելման առումով դպրոցի դերակատարությունն շատ ավելի ընդգրկուն է: Ինչպես արդեն նշել ենք, հանցավոր վարքագիծ դրսևորած երեխաների կողմից առկա է նեգատիվ վերաբերմունք կրթության նկատմամբ, ցածր առաջադիմություն՝ նույնիսկ տառաճանաչության բացակայության դրսևորում: Միաժամանակ, կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ բացի առաջադիմությունից, երեխայի կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու առումով կարևոր դերակատարություն ունի դպրոցի հանդեպ վերաբերմունքը, դպրոցում հակաիրավական արարքների տարածվածությունը, դպրոցից հետո՝ հետագա կյանքի կարճաժամկետ կամ երկարաժամկետ պլաններ ունենալը, դպրոցից անհարգելի բացակայելը կամ դասերից փախչելը, նույն դասարանում մնալը⁹⁵:

ISRD-3 հետազոտության շրջանակներում 2014 թ.-ին ՀՀ-ում կատարված ուսումնասիրությունը թույլ տվեց գնահատել, թե երեխաները ի՞նչ վերաբերմունք ունեն դպրոցին և ինչպե՞ս է դպրոցի հանդեպ լավ կամ վատ վերաբերմունքն անդրադառնում երեխայի շեղվող կամ հանցավոր վարքագծի վրա:

ՀՀ-ում երեխաների 90,9%-ը (2006 թ.-ին՝ 91,1%) նշեց, որ կկարոտի դպրոցը, եթե ստիպված լինի տեղափոխվել: ՀՀ-ի այս ցուցանիշը, եվրոպական այլ երկրների համեմատությամբ բավականին բարձր է և զիջում է միայն Կոսովոյին (95,1%): Սակայն,


⁹⁴ Տե՛ս *Гаврилова Т.В., Диденко-Чинтимур Д.С.* Социальные аспекты распространения насилия в отношении несовершеннолетних. Всероссийский криминологический журнал. 2012. № 3, էջ 72-78; *Пруцкова Е.А.* Профилактика девиантного поведения среди подростков в образовательных учреждениях. Педагогика. Вопросы теории и практики. 2017. № 1 (5). էջ 39-41:

⁹⁵ Տե՛ս *Pritchard C., Williams R.* A three-year comparative longitudinal study of a school-based social work family service to reduce truancy, delinquency and school exclusions- Journal of Social Welfare and Family Law. Volume 23, 2001, Issue 1, էջ 23-43; *Henry K.* Who's Skipping School: Characteristics of Truants in 8th and 10th Grade. Journal of School Health. Volume 77, 2007, Issue 1, էջ 29-35; *Farrington, D.* Childhood risk factors and risk-focused prevention. In Maguire, M. et al. (Eds.), *The Oxford Handbook of Criminology*, Oxford University Press. 2007, էջ 602-640: *Lucia S., Killias M., Junger-Tas J.* The School and its Impact on Delinquency. *The Many Faces of Youth Crime*, 2011, էջ 211-235:


դժվար է միանշանակ գնահատել, արդյո՞ք մեր երեխաների նման մոտեցումը կապված է ուսուցիչներին, ուսման գործընթացը, թե, ինչն առավել հավանական է, համադասարանցիներին կարոտելու հետ:

Քննարկվող գործոնի և երեխաների շեղվող վարքագծի միջև կապը բացահայտելու նպատակով իրականացված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ-ում այն 1,3 անգամ նվազեցրել է վանդալիզմ, գրաֆիտի, մանր գողություն կատարելու ռիսկը, մինչդեռ, ի տարբերություն ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված մյուս երկրների, բռնի վարքագծի և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կանխարգելման առումով դերակատարություն չի ունեցել:


Գծապատկեր 54. Դպրոցը կարոտելը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 55. Դպրոցը կարոտելը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 56. Դպրոցը կարոտելը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




ՀՀ-ում հարցված երեխաների 78,6%-ը նշեց, որ դասերին սիրով է հաճախում, մինչդեռ նույն դիրքորոշումն արտահայտած երեխաների համամասնությունը Բոսնիա-Հերցեգովինայում 67,3, Կոսովոյում՝ 91,7, Մակեդոնիայում՝ 76,2, Սերբիայում՝ 50,4, Ռկրաինայում՝ 72,9, Շվեյցարիայում՝ 65,4% էր: Ի տարբերություն նախորդ գործոնի՝ դասի սիրով հաճախելը ուժեղ արտահայտված հավաստիությամբ ՀՀ-ում 2 անգամ նվազեցնում է երեխաների կողմից շեղվող, 3 անգամ՝ բռնությամբ զուգորդված վարքագիծ դրսևորելու, 3,1 անգամ՝ գողություն կատարելու հավանականությունը:


Գծապատկեր 57. Դասերին սիրով հաճախելը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 58. Դասերին սիրով հաճախելը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 59. Դասերին սիրով հաճախելը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




ՀՀ-ում հարցված երեխաների 84,6%-ը նշել է, որ դասերը հետաքրքիր են անցնում: Ընդ որում, այն երեխաները, ովքեր նշել էին, որ դասերը հետաքրքիր են անցնում, 1,6 անգամ ավելի քիչ էին հաղորդել շեղվող վարքագծի ներգրավվելու, 2,6 անգամ՝ սեփականության դեմ ոտնձգելու և 3 անգամ՝ բռնությամբ զուգորդված վարքագիծ դրսևորելու մասին:


Գծապատկեր 60. Դասերը հետաքրքիր են և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 61. Դասերը հետաքրքիր են և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 62. Դասերը հետաքրքիր են և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Ներկայացված դիրքորոշումները, խմբավորման արդյունքում, թույլ տվեցին գնահատել երեխաների լավ կամ վատ վերաբերմունքը դպրոցի հանդեպ. առաջադրված հարցերից 2-ին բացասական պատասխան տված անձինք ընդգրկվեցին դպրոցի մասին վատ կարծիք ունեցողների խմբում: Արդյունքում՝ ՀՀ-ում հարցված երեխաների միայն 13,1%-ը հայտնվեցին այդ խմբում, մինչդեռ Բոսնիա-Հերցեգովինայում հարցվածների՝ 26,7, Կոսովոյում՝ 5,8, Մակեդոնիայում 19,3, Սերբիայում՝ 42,4, Ուկրաինայում՝ 23, Շվեյցարիայում՝ 30,8%-ը: ՀՀ-ում դպրոցի նկատմամբ վատ վերաբերմունք ունեցողները գրեթե 2 անգամ ավելի հաճախ էին նշել շեղվող, այդ թվում՝ բռնի վարքագիծ դրսևորելու, 3,3 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու մասին:

Այն, որ դպրոցի հանդեպ վերաբերմունքը կոռելացված է երեխայի կողմից շեղվող վարքագիծ դրսևորելու հետ, վեր էր հանվել նաև մեր կողմից իրականացված ISRD-2 ուսումնասիրության շրջանակներում: Մասնավորապես, դպրոցի հանդեպ վատ վերաբերմունք ունեցողները գրեթե 2 անգամ ավելի հաճախ էին զենք կրել, խմբային կռիվների ներգրավվել, 3 անգամ հաճախ՝ թունդ ալկոհոլ գործածել:

Դպրոցի հանդեպ վատ վերաբերմունքի պարագայում շեղվող վարքագծի ավելի հաճախ դրսևորումը, ամենայն հավանականությամբ կապված է մեկ այլ գործոնի՝ դպրոցից անհարգելի բացակայելու, դասերից «փախչելու» հետ, որի կրիմինոգեն ազդեցությունը կրմինալոգիական գրականության⁹⁶ մեջ բազմիցս քննարկվել է:


Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, թե արդյո՞ք երեխայի շեղվող վարքագծի դրսևորման վրա ազդեցություն գործում են դպրոցում հակահրավակական արարքների՝ գողությունների, կռիվների կամ թմրանյութ գործածելու տարածված լինելը:

ՀՀ-ում հարցված երեխաների միայն 9,5%-ը նշեց, որ դպրոցում գողությունները տարածված են, ինչը ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված և մեր կողմից համեմատվող երկրներում ամենացածր ցուցանիշն էր: Թերևս դրանով էլ բացատրվում


⁹⁶ Տե՛ս **Henry K., Huizinga D.** School-related risk and protective factors associated with truancy among urban youth placed at risk The journal of primary prevention, 2007, Volume 28, Issue 6, էջ 505–519; **Lawrence R.** School Performance, Containment Theory, and Delinquent Behavior. Youth & society 1985, Vol 17, Issue 1, էջ 69–95.

է, որ ՀՀ-ում դպրոցներում գողության տարածված լինելը կամ դրա բացակայությունը էապես չի անդրադարձել երեխաների կողմից շեղվող, այդ թվում՝ բռնի վարքագծի կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների հաճախականության վրա:


Գծապատկեր 63. Գողությունների տարածվածությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 64. Գողությունների տարածվածությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 65. Գողությունների տարածվածությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Այլ իրավիճակ է, սակայն դպրոցում խմբային կոիվների տարածվածության առումով. նվազագույն ցուցանիշը, այս պարագայում, գրանցվել է Շվեյցարիայում: Հարցված շվեյցարացի երեխաների 18,4%-ն է նշել, որ դպրոցում խմբային կոիվները տարածված են, մինչդեռ ՀՀ-ում՝ 25%-ը, Կոսովոյում՝ 46,5%-ը, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 49,2%, Մակեդոնիայում՝ 33,4%-ը: Նկատի ունենալով այն, որ մեր ուսումնասիրության շրջանակում Մակեդոնիայից հետո հենց ՀՀ երեխաներն էին առավելապես հաղորդել խմբային կոիվներին ներգրավվածության մասին, կարելի է եզրակացնել, որ ՀՀ երեխաների շրջանում խմբային կոիվները առավելապես տեղի են ունենում դպրոցների տարածքներից դուրս:


Դպրոցներում կոիվների տարածվածությունը հավաստիորեն բարձրացնում է երեխաների կողմից շեղվող, հատկապես՝ բռնի վարքագիծ դրսևորելու հավանականությունը, մինչդեռ սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների առումով էական նշանակություն չի ունենում: Մասնավորապես, դպրոցում խմբային

կոիվների տարածվածությունը մատնանշած ՀՀ երեխաների կողմից 1,7 անգամ հաճախ է հաղորդվել շեղվող, 2,2 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու մասին:


Գծապատկեր 66. Կոիվների տարածվածությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 67. Կոիվների տարածվածությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 68. Կռիվների տարածվածությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ ՀՀ դպրոցներում քիչ է նաև թմրանյութերի տարածված լինելը. հարցվածների միայն 3,1%-ն է նշել, որ իր դպրոցում թմրանյութերը տարածված են: Գրեթե նույնքան ցածր ցուցանիշ՝ 4,2%, ստացվել է Ուկրաինայից, մինչդեռ մյուս երկրներում երեխաների 10-28%-ն են նշել թմրանյութերի տարածվածության մասին:

Ինչպես և կռիվների տարածվածության դեպքում, դպրոցում թմրանյութերի տարածման մասին հաղորդած երեխաները ավելի հաճախ են նշել իրենց կողմից շեղվող կամ բռնի վարքագծի դրսևորման մասին:

Գծապատկեր 69. Թմրանյութի տարածվածությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 70. Թմրանյութի տարածվածությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Դպրոցում հակաիրավական երևույթների տարածման մասին հարցերի պատասխանները խմբավորվել են. դպրոցում վատ միջավայր է գնահատվել, եթե հարցվողը համաձայնվել է առաջադրված հարցերից գոնե 2-ի հետ: ՀՀ-ում նման անձանց համամասնությունը կազմել է 14,7%, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 46,3, Կոսովոյում 33,6, Մակեդոնիայում 31,8, Սերբիայում 43,2, Ռկրաինայում 17,9, Շվեյցարիայում 20,9%:


Խմբավորված ցուցանիշը երեխաների շեղվող վարքի հետ համադրելու արդյունքում ՀՀ-ում հստակ կոռելյացիա է նկատվում դպրոցներում հակաիրավական երևույթների տարածվածության և շեղվող վարքագիծ դրսևորելու միջև: Մասնավորապես, ՀՀ-ում վատ միջավայրով դպրոցներում սովորողները 1,5 անգամ ավելի հաճախ են հայտնել իրենց կողմից շեղվող (25,4 և 17,4%), 1,8 անգամ՝ բռնի

վարքագծի դրսևորման մասին (4,6 և 2,6%): Սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների առումով դպրոցում վատ միջավայրի կրիմինոգեն ազդեցությունը չի բացահայտվել:

Երեխայի շեղվող վարքագծի դրսևորման առումով կարևոր խնդիր է նաև երեխայի կողմից դպրոցում իր հաջողությունները գնահատելը, առաջադիմությունը:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ երեխաների կողմից դպրոցում իրենց հաջողությունների գնահատման բաշխումը համաչափ է նաև եվրոպական երկրների մեծամասնությունում դրսևորված ցուցանիշներին:

Գծապատկեր 71. Երեխայի դպրոցում ունեցած առաջադիմությունը՝ ISRD-3



Ընդ որում, թեև ՀՀ-ում հարցվածների 7,7%-ը իր առաջադիմությունը վատ է գնահատել, ինչը շատ ավելի բարձր է քան Բոսնիա-Հերցեգովինայում, Կոսովոյում, Սերբիայում գրանցված ցուցանիշը և շատ մոտ Շվեյցարիայում գրանցվածին, սակայն ՀՀ-ում գրանցվել է երեխային նույն դասարանում թողնելու ամենացածր հաճախականություններից մեկը՝ 0,7%: Գրեթե համանման ցուցանիշներ են գրանցվել Բոսնիա-Հերցեգովինայում և Ուկրաինայում՝ 0,6%, մինչդեռ Կոսովոյում այդ ցուցանիշը կազմել է 1,4, Մակեդոնիայում 2,2, Սերբիայում 1,5, Շվեյցարիայում 16%:

Ամենայն հավանականությամբ այստեղ դերակատարություն ունի այն, որ երեխային նույն դասարանում թողնելը, անվճար կրթություն երաշխավորելու

պարագայում, պետության համար թանկ հաճույք է⁹⁷, ինչով էլ բացատրվում է ՀՀ-ում, Ուկրաինայում նույն դասարանում երեխային թողնելու գրեթե զրոյական ցուցանիշները: Որպես կանոն, այն համակարգերում, որտեղ երեխաները քիչ են թողնվում նույն դասարանում, առաջադիմությունը բարձր է գրանցվում:


Հաշվի առնելով այն, որ ընտրանքում շատ փոքր է եղել ՀՀ-ում նույն դասարանում մնացած երեխաների ներկայացուցչականությունը, դրա և երեխաների շեղվող վարքագծի միջև կապի առումով եզրահանգումներ անել չենք կարող, այնուամենայնիվ ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված մյուս երկրներում հավաստի կոռելյացիա է գրանցվել նույն դասարանում մնալու և շեղվող վարքագիծ դրսևորելու միջև. Շվեյցարիայում նույն դասարանում մնացածները 1,4 անգամ ավելի հաճախ են հաղորդել շեղվող, 3 անգամ՝ բռնի վարքագծի, 1,7 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու մասին:

Այնուհանդերձ, ՀՀ-ում հնարավոր է գնահատել երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորման և դպրոցում նրա առաջադիմության միջև եղած կապը: Վերլուծության արդյունքները վկայում են, որ ի տարբերություն Շվեյցարիայի, Սերբիայի, Մակեդոնիայի, Ուկրաինայի, ՀՀ-ում լավ կամ վատ առաջադիմություն դրսևորելը էապես չի ազդել երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորման կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կատարման վրա:


Կարծում ենք, այստեղ դերակատարություն ունի այն, թե ինչպես է ձևավորվում այդ առաջադիմությունը. ՀՀ դպրոցների ուսուցիչների շրջանում տարածում գտած երևույթ է իրենց աշակերտների հետ արտաժամյա, վճարովի հիմունքներով մասնավոր պարապմունքների անցկացումը, ինչն էլ, անկախ երեխայի կողմից այդ առարկայի յուրացման մակարդակից, երաշխավորում է նրա բարձր գնահատականն ու բարձր առաջադիմությունը: Հետևաբար, իրականում դպրոցի, ուսման հանդեպ դրական տրամադրվածություն չունեցող երեխան հայտնվում է բարձր առաջադիմություն ունեցողների շրջանում, ինչն էլ թույլ չի տալիս ճիշտ գնահատական տալ ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի վրա երեխայի առաջադիմության ունեցած ազդեցությունը:

⁹⁷ When students repeat grades or are transferred out of school: what does it mean for education systems? PISA in focus 2011/6. <https://www.oecd.org/pisa/pisaproducts/pisainfocus/48363440.pdf>, 18.11.2017. 13:55

Գծապատկեր 72. Երեխայի դպրոցում ունեցած առաջադիմությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 73. Երեխայի դպրոցում ունեցած առաջադիմությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Այնուհանդերձ, նույնիսկ այդ պարագայում, պետք է փաստել, որ երեխայի կողմից վատ առաջադիմության դրսևորումը զուգակցվում է բռնությամբ զուգորդված վարքագիծ դրսևորելու, անձի առողջությանը վնաս պատճառելու հետ: Մասնավորապես, ՀՀ-ում հարցված երեխաների՝ ցածր առաջադիմություն ունեցող երեխաները 1,5 անգամ ավելի հաճախ են բռնի վարքագիծ դրսևորել:

Գծապատկեր 74. Երեխայի դպրոցում ունեցած առաջադիմությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Անչափահասների շեղվող վարքագծի ձևավորման վրա դպրոցի ազդեցության ամենակարևոր գործոնը, թերևս, երեխաների դպրոցից անհարգելի բացակայությունն է, որը ուղղակիորեն կապված է երեխաների՝ անվերահսկելի ժամանցի անցկացման հետ: Դպրոցից անհարգելի բացակայող երեխաների ծնողները, ինչպես նաև ուսուցիչները, որպես կանոն, տեղյակ չեն, թե երեխան այդ պահին որտեղ, ում հետ և ինչով է զբաղվում:


Մեր կողմից իրականացված ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում, ի տարբերություն եվրոպական այլ երկրների, գրանցվել է երեխաների՝ դպրոցից անհարգելի բացակայելու բարձր ցուցանիշ՝ 48,5%, մինչդեռ Բոսնիա-Հերցեգովինայում այն կազմել է 12,8, Ուկրաինայում՝ 26,2, Կոսովոյում՝ 23,6. Մակեդոնիայում՝ 21,2, Սերբիայում՝ 33,4, Շվեյցարիայում՝ 11,8%: Ընդ որում, ուսումնասիրության մեջ ընդգրկված համեմատվող երկրներից՝ ՀՀ-ում դրսևորվել է ամենաբարձր ցուցանիշը, թեև 2006 թ.-ի համեմատ այն նվազել է՝ 61,7-ից դառնալով 48,5%:

ՀՀ-ում երեխաների դպրոցից անհարգելի բացակայության այս բարձր ցուցանիշը միշտ չէ, որ վկայում է երեխայի կողմից անվերահսկելի ժամանցի

անցկացման մասին: Ավագ դպրոցի, հատկապես ավարտական դասարանների, աշակերտների շրջանում դրանք առավելապես կապված են ԲՈՒՀ ընդունվելու նպատակով, դասերի ժամերին մասնավոր պարապմունքների հաճախելով:


Սակայն նույնիսկ դա հաշվի առնելով՝ պետք է փաստել, որ ՀՀ-ում մեծ թիվ են կազմում դասերից անհարգելի բացակայության դեպքերը, որոնք երեխայի համար իրական բացասական հետևանքներ չեն առաջացնում՝ քննարկվող երևույթի հանդեպ ինչպես ծնողների, այնպես էլ ուսուցիչների լոյալ վերաբերմունքի հետևանքով: Մինչդեռ, մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում դպրոցից անհարգելի բացակայող յուրաքանչյուր 4-5-րդ երեխան շեղվող վարքագիծ է դրսևորում:

Գծապատկեր 75. Դպրոցից անհարգելի բացակայությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Ընդ որում, ՀՀ-ում դպրոցից անհարգելի բացակայած երեխաները գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող, այդ թվում՝ բռնության գործադրմամբ վարքագիծ դրսևորել, 2,5 անգամ հաճախ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն կատարել:

Գծապատկեր 76. Դպրոցից անհարգելի բացակայությունը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 77. Դպրոցից անհարգելի բացակայությունը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



2006 թ.-ին անցկացված ISRD-2 ուսումնասիրության արդյունքների համաձայն ևս դպրոցից անհարգելի բացակայությունը հավաստիորեն բարձրացնում է շեղվող վարքագծի դրսևորման ռիսկը, մասնավորապես դպրոցից անհարգելի բացակայած երեխաները 3 անգամ ավելի հաճախ են խմբային կոիվների մասնակցել, 4,5 անգամ՝

զենք կրել, 2 անգամ՝ անձի առողջությանը վնաս պատճառել, 5 անգամ՝ վանդալիզմ դրսևորել, 2,8 անգամ՝ հակերություն արել:

Աղյուսակ 26. Դպրոցից անհարգելի բացակայությունը և շեղվող վարքագիծը՝ ISRD -2

	Այո	Ոչ	
խմբային կոիվներ	24.0	7.8	***
զենք կրել	8.0	1.8	***
առողջությանը վնաս պատճառել	1.8	0.8	Ns
վանդալիզմ	4.7	0.9	***
հակերություն	3.6	1.3	***

ՀՀ-ում, այդ թվում՝ կրթական համակարգում տեղ գտած փոփոխությունների արդյունքում, թուլացել է ոչ միայն դպրոցի դերակատարությունը երեխայի անձի ձևավորման գործընթացում, այլև դպրոցը ծախսողում է արձանագրել ապագայի առումով երեխային կողմնորոշելու իր գործառույթը կատարելու առումով: Այս առումով, հետաքրքրություն է ներկայացնում, թե երեխաները ինչպես են պատկերացնում դպրոցից հետո իրենց ապագան. ՀՀ-ում հարցվածների 60,7%-ը նշել է ԲՈՒՀ-ում կրթությունը շարունակելու ցանկության մասին, 2,4%-ը նշել, որ աշխատանք կփնտրի, 24,4%-ը նշել, որ դեռ չի կողմնորոշվում: Ընդ որում, ի համեմատ 2006 թ.-ի՝ ավելի մեծ թվով երեխաների մոտ է ապագայի հանդեպ անորոշություն ձևավորվել. 2006 թ.-ին հարցվածների 15,2%-ն էր նշել, որ չի կողմնորոշվում, թե ինչով է զբաղվելու դպրոցն ավարտելուց հետո, մինչդեռ 2014 թ.-ին՝ 24,4%: ԲՈՒՀ դիմելու ցանկության առումով 2006 և 2014 թթ.-ին անցկացված ուսումնասիրությունները երեխաների շրջանում գրեթե նույն՝ 60% ցուցանիշն են վեր հանել: Սակայն, ի համեմատ ISRD-2 ուսումնասիրության, ISRD-3-ի մասնակիցների շրջանում նվազել է նրանց թիվը, ովքեր դպրոցն ավարտելուց հետո պատրաստվում են աշխատել՝ 5,7%-ից նվազելով մինչև 2,4%:

Ապագա պլանների առումով անորոշության ամենաբարձր ցուցանիշները ՀՀ-ում և Ուկրաինայում են՝ համապատասխանաբար՝ 24,4 և 19,9%, ընդ որում՝ անորոշություն առավելապես առկա է ցածր առաջադիմություն ունեցողների մոտ՝ 35,1% ի համեմատ լավ սովորողների 23,5%-ի:

Մինչդեռ կրիմինալոգիական գրականության⁹⁸ մեջ իր հաստատումն է գտել այն տեսակետը, որ ապագայի առումով պլանների բացակայությունը բարձրացնում է երեխայի՝ ապագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի դրսևորման վրա վճռորոշ ազդեցություն ունի երեխաների՝ դպրոցից բացակայության բարձր մակարդակը, որը թեև 2006 թ.-ի համեմատ նվազել է, սակայն դեռևս շարունակում է մնալ եվրոպայում գրանցված ամենաբարձր ցուցանիշներից մեկը:
2. Հասարակությունում և կրթական ոլորտում տեղ գտած փոփոխությունների արդյունքում դպրոցը ձախողել է երեխայի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունեցող այնպիսի գործառույթի իրականացում, ինչպիսին է ապագայի առումով նրանց կողմնորոշելը: ՀՀ անչափահասների շրջանում, ի համեմատ եվրոպական այլ երկրների, մեծ թիվ են կազմում ապագայի առումով կողմնորոշում չունեցող անձինք, մինչդեռ ապագայի առումով անորոշությունը բարձրացնում է երեխայի կողմից ապագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

⁹⁸ Տե՛ս **Robbins R., Bryan A.** Relationships Between Future Orientation, Impulsive Sensation Seeking, and Risk Behavior Among Adjudicated Adolescents. *Journal of Adolescent Research* , 2004, Vol 19, Issue 4, էջ. 428 – 445:

3.3. Ընկերական միջավայրի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում

Անչափահասի անձի ձևավորումն ու զարգացումը իրականացվում է իր տարաբնույթ գործոնների ազդեցությամբ, որոնց մեջ իրենց կարևորությամբ առանձնանում են ընտանիքը, կրթական հաստատություններն ու ընկերական միջավայրը, սակայն տարիքի աճին զուգընթաց՝ ընտանիքի ազդեցությունը երեխայի վրա փոքրանում է՝ իր տեղը զիջելով երեխայի համար ռեֆերենտային խումբ հանդիսացող, նրա համար շփում ու հուզական հարմարավետություն, նոր տեղեկատվություն ու կենսափորձ ապահովող հասակակիցների միջավայրին:

Կրիմինալոգիական բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են, որ անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում ընկերական միջավայրը, նրանց հետ ազատ ժամանցի անցկացումն ունի առանցքային նշանակություն⁹⁹, ինչի վկայությունն է նաև անչափահասների կողմից հանցավոր վարքագիծը խմբի՝ հիմնականում հասակակիցներից բաղկացած միավորման կազմում կատարելուն նախապատվություն տալը: Տ.Ա. Շիլովան նշում է, որ երեխաների հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման վրա էապես ազդում է երեխայի մտավոր ցածր մակարդակը, անձի ձևավորման գործընթացի անավարտ լինելը, միջավայրի բացասական ազդեցությունը և հատկապես երեխայի կախվածությունը իր համար ռեֆերենտային համարվող ընկերական-շփման խմբից և դրանում ընդունելի համարվող արժեքային կողմնորոշումներից, մոտիվացիայից¹⁰⁰:


⁹⁹ Տե՛ս **Мельникова-Шаркова Е.А.** Неформальное окружение как фактор криминализации несовершеннолетнего преступника. Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы. 2015. № 1 (37). էջ 47; **Гурьев М.Е.** Детерминирующее влияние социально-психологических факторов на формирование личности несовершеннолетнего преступника. Психология и педагогика: методика и проблемы практического применения. 2014. № 35-1. С. էջ 84:

¹⁰⁰ Տե՛ս **Шилова Т.А.**, Психологические особенности отклоняющегося поведения подростков. Системная психология и социология. 2012. № 5, էջ 86:


ՀՀ-ում մեր կողմից իրականացված ISRD-2 և ISRD-3 ուսումնասիրությունները ևս վկայում են երեխայի շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման գործընթացում ընկերական միջավայրի ունեցած ազդեցության մասին:

ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում 12-17 տարեկան անչափահասները առավելապես նախընտրում են իրենց ժամանակն անցկացնել ընկերների (50.7%), ծնողների հետ(41.8%) և միայն մի փոքր զանգվածն է նախընտրում մենակ մնալ (7,5%): Ընդ որում, նույն օրինաչափությունը գրանցվել է նաև ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված մյուս երկրներում, բացառությամբ Կոսովոյի, որտեղ երեխաները ազատ ժամանցի անցկացման առումով առավել մեծ նախապատվությունը տվել են ընտանիքին: Միաժամանակ, կատարված ուսումնասիրությունը վկայում է, որ այն, թե ում հետ է երեխան նախընտրում անցկացնել իր ազատ ժամանակը, հավաստիորեն ուժեղ կոռելյացված է շեղվող վարքագծի դրսևորման հետ. ընկերների հետ ազատ ժամանցն անցկացնող երեխաները 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել՝ գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարել, գրեթե 3 անգամ հաճախ՝ բռնություն գործադրել, քանի ընտանիքի հետ ժամանցն անցկացնել նախընտրողները: Այս օրինաչափությունը գրանցվել է հետազոտության մեջ ընդգրկված նաև մյուս երկրներում:

Գծապատկեր 78. Ժամանցի համար նախապատվելի տարբերակը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 79. Ժամանցի համար նախապատվելի տարբերակը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Միևնույն ժամանակ, բռնի վարքագիծ դրսևորելու կամ սեփականության դեմ ոտնձգելու մասին առավել հաճախ տեղեկացրել են նրանք, ովքեր նախընտրել են ինքնուրույն տնօրինել իրենց ազատ ժամանցը:

Գծապատկեր 80. Ժամանցի համար նախապատվելի տարբերակը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




Թեև ներկայացված տվյալները վկայում են, որ ՀՀ-ում, ինչպես և այլ երկրներում, 12-17 տարիքային խմբի ներկայացուցիչները ձգտում են հասակակիցների հետ շփման, այնուհանդերձ, հարց է ծագում, թե արդյո՞ք անչափահասները իրականում ունեն ընկերների կայուն խումբ, ում հետ ժամանակ են անցկացնում և եթե այո, ապա ի՞նչ ուղղվածություն ունի այդ խումբը, ինչո՞վ է զբաղվում:

ՀՀ-ում, Կոստվոյում, Մակեդոնիայում հարցված երեխաների 2/3-րդը, Բոսնիա-Հերցեգովինայում, Շվեյցարիայում հարցվածների՝ 3/4-րդը, Սերբիայում և Ուկրաինայում հարցվածների՝ 7/8-րդը նշել է, որ ունի ընկերների կայուն խումբ, ում հետ էլ անցկացնում է իր ազատ ժամանակը: Ընդ որում, կրկին, հավաստի ուժեղ կոռելյացիա է գրանցվել ընկերների կայուն խումբ ունենալու և շեղվող վարքագծի դրսևորման միջև. ընկերների կայուն խումբ ունեցող անչափահասները ՀՀ-ում 2 անգամ ավելի հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 1.9 անգամ հաճախ՝ բռնություն գործադրելու մասին, մինչդեռ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն կատարելու առումով՝ ընկերների կայուն խումբ ունենալը կամ դրա բացակայությունը էական ազդեցություն չի ունեցել:

Առավել կարևոր է այն, թե երեխայի կարծիքով, իր ընկերների խումբը ի՞նչ հասարակական ուղղվածություն ունի, արդյոք կարելի է այն դիտարկել որպես ասոցիալ ուղղվածության, «բանդա» հանդիսացող խումբ: Մեր ուսումնասիրությունը վկայում է, որ այն երեխաները, ովքեր հակված են մտածելու, որ իրենք հանդիսանում են «բանդա» հանդիսացող խմբի անդամ, ավելի հաճախ են ներգրավվում ինչպես շեղվող, բռնի վարքագծի դրսևորմանը, այնպես էլ սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների կատարմանը: Ընդ որում, ասվածը, առանց բացառության, հաստատվել է ISRD-3 ուսումնասիրության մեջ ներգրավված բոլոր երկրներում:

Մասնավորապես, 2014 թ.-ին ՀՀ-ում հարցված երեխաների 3,2 (2006 թ.-ին՝ այս ցուցանիշը 1.5% էր), Բոսնիա-Հերցեգովինայում՝ 6,2, Կոսովոյում՝ 11,5, Մակեդոնիայում՝ 13,3, Սերբիայում՝ 7,6, Ուկրաինայում՝ 14,8, Շվեյցարիայում՝ 9,5%-ն է իր ընկերների խումբը դիտարկել որպես «բանդա»: Գրեթե բոլոր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, նշված երեխաների շրջանում 2 անգամ ավելի բարձր է եղել շեղվող վարքագիծ դրսևորելու ռիսկը:


Գծապատկեր 81. Իրեն «բանդայի» անդամ համարելը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




ՀՀ-ում իրենց «բանդայի» անդամ դիտարկող երեխաները 4.6 անգամ ավելի հաճախ են հաղորդել բռնություն գործադրելու, 3.5 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն կատարելու մասին: Ուշագրավ է, որ երեխայի կողմից նման ընկալումը Շվեյցարիայում, Սերբիայում գրեթե 11 անգամ ավելացրել է բռնի վարքագիծ

դրսևորելու, իսկ Ուկրաինայում՝ 7 անգամ՝ սեփականության դեմ ոտնձգելու հավանականությունը:

Գծապատկեր 82. Իրեն «բանդայի» անդամ համարելը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 83. Իրեն «բանդայի» անդամ համարելը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Շեղվող վարքագծի դրսևորմանն առավել հաճախ են ներգրավվում այն երեխաները, ում պնդմամբ, իրենց ընկերական խմբում արդարացված, ընդունելի է համարվում ապօրինի արարքների կատարումը կամ դրանք փաստացի կատարվում են: Ընդ որում, ISRD-2 ուսումնասիրության արդյունքներով վեր հանվեց դրա կոռելյացիան ինչպես երեխաների շեղվող վարքագծի, այնպես էլ վիկտիմիզացիայի հետ:

Մասնավորապես, նման խմբերին անդամակցող երեխաների շրջանում զգալիորեն՝ 2-3 անգամ բարձր է եղել մարմնական վնասվածք ստանալու, ալկոհոլ, թմրանյութ գործածելու, խմբային կռիվներին ներգրավվելու ռիսկը, 5-8 անգամ՝ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու, 3-4 անգամ՝ զենք կրելու, հակերություն իրականացնելու, 15-20 անգամ՝ ավազակություն, 4-6 անգամ՝ վանդալիզմ, նույնիսկ՝ հակերություն կատարելու հավանականությունը:

Հոգեբանության մեջ նման վարքագիծը բացատրվում է նրանով, որ ասոցիալ խմբին պատկանելությունը ենթադրում է հուզական ներգրավվածություն, երեխաների կողմից խմբին պատկանելության, դրա մի մասնիկ լինելու ուժեղ արտահայտված զգացում, «մենք» հասկացության հակադրում «նրանց» հասկացությանը, ինչն էլ հանգեցնում է խմբում ընդունված արժեքներին համապատասխան գործելու վճռականության¹⁰¹:

Շեղվող վարքագծի դրսևորման և ընկերական խմբի կողմից ապօրինի արարքների կատարումը արդարացնելու միջև առկա կապը վեր է հանվել նաև այլ հեղինակների ուսումնասիրություններում¹⁰², սակայն ISRD-2 հետազոտության շրջանակներում այն իր հաստատումը գտավ նաև ՀՀ-ում:

Աղյուսակ 27. Ընկերական խմբի կողմից ապօրինի արարքների կատարումը ընդունելի համարելը և շեղվող վարքագիծը՝ ISRD-2


¹⁰¹ Տե՛ս **Фокина А. В.** Роль личностного эгоцентризма в структуре подростковой девиантности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук, Москва, 2008, էջ 10-11:

¹⁰² Տե՛ս **Gatti U., Haymoz S., Schadee H.** Deviant Youth Groups in 30 Countries. *Results From the Second International Self-Report Delinquency Study*. International Criminal Justice Review, 2011, Vol 21, Issue 3, էջ 208-224; **Лунеев В.В.** Мотивация преступного поведения. М., 1991, էջ 167:

	ապօրինի արարքները ընդունելի են			ապօրինի արարքներ են կատարվում		
	այո	ոչ		այո	ոչ	
իր առողջությանը պատճառված վնաս	7.1	3.8	Ns	9.0	3.8	**
գինի/գարեջուր գործածել	44.4	26.5	***	48.4	26.8	***
թունդ ալկոհոլ գործածել	17.2	6.5	***	21.3	6.5	***
հաշիշ գործածել	1.8	0.6	Ns	3.3	0.5	*
խմբային կոիվներ	43.2	18.7	***	51.6	18.8	***
զենք կրել	20.7	5.6	***	24.6	5.8	***
ուրիշի առողջությանը վնաս պատճառել	6.5	1.2	***	9.0	1.1	***
ավազակություն	3.0	0.2	***	4.1	0.2	***
վանդալիզմ	12.4	3.3	***	17.2	3.1	***
հակերություն	7.7	3.3	**	10.7	3.1	***

ISRD-3 հետազոտության շրջանակներում ուշադրություն դարձվեց ոչ միայն անչափահասների խմբերի ասոցիալ ուղղվածությանը, այլև նրան, թե ընկերների հետ ժամանակ անցկացնելիս՝ երեխան ինչով է առավելապես զբաղվում:

Գծապատկեր 84. Ընկերների հետ ժամանցն անցկացնելու եղանակները՝ ISRD-3



Ստացված արդյունքները վկայում են, որ հայ երեխաները իրենց ազատ ժամանակն անց են կացնում կամ առավելապես սրճարաններ, բարեր գնալով (64,7%) կամ էլ փողոցներում աննպատակ թափառելով (52,7%): Վերջին տվյալը առավել քան մտահոգիչ է, քանի որ ՀՀ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2009-2014 թթ.-ին՝ երեխաների կողմից կատարված յուրաքանչյուր 5-րդ հանցավոր արարք տեղի է ունեցել այգիներում կամ փողոցներում:

ՀՀ-ում հարցված երեխաները, ազատ ժամանակն անցկացնելիս, ի համեմատ հետազոտության մեջ ընդգրկված այլ երկրների, առավել հաճախ են ներգրավվել խմբային կոիվների (22%), ընդ որում՝ ազատ ժամանակն անցկացնելիս՝ խմբային կոիվների մասնակցությունը մեր երեխաների շրջանում 1.7 անգամ հաճախ է նշվել՝ ի համեմատ Ուկրաինայի, Շվեյցարիայի, գրեթե 2 անգամ հաճախ՝ ի համեմատ Կոսովոյի իրենց հասակակիցների:

Ներկայացված՝ 2014 թ.-ի տվյալների համեմատությունը 2006 թ.-ին անցկացված ISRD-2 ուսումնասիրության արդյունքների հետ թույլ տվեց գրանցել տանից դուրս ազատ ժամանցն անցկացնող, հասարակության կողմից անընդունելի վարքագիծ դրսևորող երեխաների թվաքանակի տեսակարար աճ. 2006 թ.-ին հարցվածների 57,1%-ն, իսկ 2014 թ.-ին՝ արդեն 64,7%-ն էր նշել սրճարաններում, բարերում ժամանցն անցկացնելու մասին, ազատ ժամանցի ընթացքում ակոհոլի, թմրանյութի գործածման մասին՝ համապատասխանաբար՝ 3,9 և 8,5%-ը, հաճույքի համար մարդկանց հետապնդելու, վախեցնելու մասին՝ 10,9 և 12,6%-ը:

Պետք է փաստել, որ ընդհանրապես ՀՀ-ում երեխաների ազատ ժամանցի ոլորտի կազմակերպումը հիմնականում թողնված է ինքնահոսի. հարցված երեխաների 82,5%-ը նշել է, որ ազատ ժամանակի մի մասը՝ օրական միջինը 1-2 ժամ տրամադրում է համակարգչային խաղերին, 87,1%-ը՝ 2-3 ժամ անցկացնում է սոցիալական ցանցերում: Մինչդեռ շատ քիչ թվով երեխաներ են նշել, որ իրենց ազատ ժամանցն անց են կացնում գրադարան, կինո կամ թանգարան այցելելով, ինչի պատճառներից մեկը ՀՀ-ում մշակութային օջախների սակավությունն է կամ երեխաների համար ոչ մատչելիությունը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության վեբկայքում տեղադրված տվյալների վերլուծությունը վկայում է, որ ի համեմատ 2000 թ.-ի՝ 2016 թ.-ին գրադարանների թիվը ՀՀ-ում կրճատվել է 1.5 անգամ՝ 1137-ից հասնելով 798-ի: Թանգարանների և թատրոնների թիվը թեև չի պակասել¹⁰³, սակայն մուտքի՝ երեխաների համար ոչ մատչելի վճարներ են սահմանվել:

Երեխաների համար գործում են պարի, նկարչության, քանդակի սպորտաձևերի և այլ խմբակներ, սակայն դրանք բոլորն էլ իրենց ծառայությունները առաջարկում են վճարովի հիմունքներով, ուստի դրանք ևս երեխաների համար միշտ չէ, որ հասանելի են:

Մինչդեռ երեխաների ազատ ժամանցի կազմակերպման որակից է կախված, թե որքանով նա հաղորդակից կդարձվի հոգևոր արժեքներին, զերծ կմնա շեղվող վարքագծի դրսևորումից:

¹⁰³ Տե՛ս ՀՀ վիճակագրական տարեգիրք. կրթություն և մշակույթ 2017, <http://armstat.am/file/doc/99504493.pdf>:


2014 թ.-ին մեր կողմից անցկացված ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում վերլուծության ենթարկվեց երեխաների ժամանցի վատ կազմակերպման և շեղվող վարքագծի միջև կոռելյացիան: Երեխաներին առաջարկվեց նշել, թե ազատ ժամանցի անցկացման՝ հետազոտողների կողմից առաջարկված 6 տարբերակից (1. սրճարան, բար, փոփ համերգ գնալ, 2. կոփների մասնակցություն, 3. փողոցներով աննպատակ թափառել, 4. հաճույքի համար ապօրինի բաներ անել, 5. ալկոհոլ գործածել, 6. հաճույքի համար մարդկանց վախեցնել, հետապնդել) ո՞րն է տեղ գտել իրենց ազատ ժամանցի ոլորտում: Հետազոտական նպատակներով՝ ժամանցի վատ կազմակերպում է դիտարկվել, եթե երեխան դրական է պատասխանել 6 տարբերակներից գոնե 3-ին:

Արդյունքում՝ ՀՀ-ում հարցվածների 20,7, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 17,3, Կոսովոյում՝ 11,1, Մակեդոնիայում՝ 27,4, Սերբիայում՝ 36, Ուկրաինայում՝ 29,5, Շվեյցարիայում՝ 32,1% -ը հայտնվեցին ժամանցի վատ կազմակերպման մասին հաղորդողների խմբում:


Ժամանցի ոլորտի վատ կազմակերպման և շեղվող վարքագծի միջև կոռելյացիան վեր հանելու նպատակով ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուժեղ հավաստի կոռելյացիա է գրանցվել ժամանցի ոլորտի վատ կազմակերպման և շեղվող վարքագծի բոլոր դրսևորումների միջև:

Մասնավորապես, ՀՀ-ում ժամանցի ոլորտի վատ կազմակերպման խմբի մեջ ներառված երեխաները՝ ի համեմատ իրենց հասակակիցների, 2.4 անգամ ավելի հաճախ են գրաֆիտի, վանդալիզմ, խանութից գողություն կատարել, խմբային կոփների ներգրավվել, գրեթե 7 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորել, անձի առողջությանը վնաս պատճառել, 4 անգամ հաճախ՝ ոտնձգել ուրիշների սեփականության իրավունքին, գողություն կատարել:


Գծապատկեր 85. Ժամանցի վատ կազմակերպում և շեղվող վարքագիծ՝ ISRD-3



Գծապատկեր 86. Ժամանցի վատ կազմակերպում և բռնի վարքագիծ՝ ISRD-3




Գծապատկեր 87. Ժամանցի վատ կազմակերպում և սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ՝ ISRD-3



Իրականացված ուսումնասիրությունը վեր հանեց ևս մեկ փոփոխություն. ի համեմատ 2006 թ.-ի՝ 2014 թ.-ին երեխաները գրեթե 1,4 անգամ ավելի հաճախ են նշել երեկոյան ժամերին տանից դուրս գալու, ընկերների հետ ժամանակ անցկացնելու մասին, ինչը, թերևս, պայմանավորված է հասարակությունում տեղ գտնող, այդ թվում՝ անչափահասների վրա ազդեցություն գործող ազատականացման գործընթացներով. ՀՀ-ում հարցվածների 26,7 (2006 թ.-ին՝ 19,8%), Բոսնիա-Հերցեգովինայում՝ 38, Կոսովոյում՝ 15,8, Մակեդոնիայում՝ 41,2, Սերբիայում՝ 45,7, Ուկրաինայում՝ 18,4, Շվեյցարիայում՝ 16,7%-ը նշել է, որ գրեթե ամեն օր կամ շաբաթը 3-6 անգամ երեկոյան ժամերին դուրս են գալիս:


Սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու առումով ՀՀ-ում այս ցուցանիշը էական դերակատարություն չի ունեցել (ի տարբերություն՝ Շվեյցարիայի, Մակեդոնիայի և Ուկրաինայի, որտեղ երեկոյան ժամերին դրսում ժամանակ անցկացնող երեխաների շրջանում գողությունը կատարելու ռիսկը 3-4 անգամ բարձր է գնահատվել), սակայն ուժեղ հավաստի կապ է գրանցվել երեկոյան ժամերին դուրս գալու, շեղվող, բռնի վարքագիծ դրսևորելու, թմրանյութ գործածելու միջև:

Գծապատկեր 88. Երեկոյան ժամերին դուրս գալը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Երեկոյան ժամերին դուրս եկող, ընկերների հետ ժամանակ անցկացնող անչափահասները ՀՀ-ում՝ ի համեմատ իրենց հասակակիցների, 2.4 անգամ ավելի հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 3.2 անգամ հաճախ՝ բռնությամբ զուգորդված արարք կատարելու մասին:

Գծապատկեր 89. Երեկոյան ժամերին դուրս գալը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Երեխաների շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման վրա էական ազդեցություն ունի իր ընկերական միջավայրում այնպիսի անձանց առկայությունը, ովքեր թմրանյութ են գործածել, անձի առողջությանը վնաս պատճառել, գողություն

կամ ավագակություն կատարել. կրիմինալոգիական ուսումնասիրությունները¹⁰⁴ վկայում են, որ նման պարագայում, երեխայի հոգեբանական առանձնահատկություններով՝ իմիտացիայի հակումով, տարեկիցներից «հետ չմնալ» ձգտումով պայմանավորված, բարձրանում է երեխայի կողմից հանցավոր վարքագծին ներգրավվելու հավանականությունը:


ISRD-3 ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում հարցվածների 2,6, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 8,2, Կոսովոյում՝ 5,4, Մակեդոնիայում՝ 7, Սերբիայում՝ 26,9, Ուկրաինայում՝ 7,6, Շվեյցարիայում՝ 41,6%-ն է նշել, որ ունի ընկեր, ով թմրանյութ է գործածել կամ գործածում: Հավաստի ուժեղ կոռելյացիա է գրանցվել այս գործոնի և երեխայի կողմից շեղվող, բռնությամբ զուգորդված կամ դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու միջև: Մասնավորապես, ընկերների շրջանում թմրանյութ գործածած ընկեր ունեցող երեխաները ՀՀ-ում գրեթե 4 անգամ հաճախ են հաղորդել շեղվող վարքագիծ դրսևորելու, 10 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու, 12 անգամ՝ սեփականության դեմ ոտնձգություններ կատարելու մասին: Այս օրինաչափությունը դիտարկվում է նաև եվրոպական մյուս երկրներում:

Գծապատկեր 90. Թմրանյութ գործածած ընկեր ունենալը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




¹⁰⁴ Տե՛ս **Ситник И.Е.** Роль референтной группы в социализации подростков. Проблемы современной науки и образования. 2017. № 22 (104). էջ 107-109; **Челышева Ю.В.** Социально-психологические причины асоциального поведения несовершеннолетних. В сборнике: Социально-психологические аспекты практики социальной работы, под редакцией Овчаренко Л.Ю., Тютченко А.М. М., 2016. էջ 37-43:

Գծապատկեր 91. Թմրանյութ գործածած ընկեր ունենալը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 92. Թմրանյութ գործածած ընկեր ունենալը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3




ISRD-2 և ISRD-3 հետազոտությունների արդյունքների համադրումը վկայում է, որ ընկերների շրջանում թմրանյութ գործածած լինելու և շեղվող վարքագիծ դրսևորելու պարագայում՝ այս գործոնի ազդեցությունը լիովին նույն օրինաչափությունն է դրսևորել. ինչպես և 2014 թ.-ին՝ 2006 թ.-ին հարցվածների միջավայրում քննարկվող գործոնի առկայությունը 12 անգամ մեծացրել է երեխայի կողմից գողություն կատարելու, 8-10 անգամ՝ բռնություն գործադրելու հավանականությունը:

Ավելի հետաքրքիր է այն հանգամանքը, որ ընկերների շրջանում թմրանյութ գործածած ընկեր ունեցող երեխաները 20 անգամ ավելի հաճախ են հաղորդել թմրանյութ գործածելու մասին, ինչից կարելի է ենթադրել, որ տեղի է ունենում յուրօրինակ «մասնագիտացում»։ շեղվող վարքագծի առանձին տեսակներ դրսևորող երեխաները իրենց հասակակիցներին «ներգրավում» են իրենց կողմից կատարված շեղվող վարքագծին բնույթով նույնական արարքների։


Այս ենթադրությունը իր հաստատումն է գտել նաև ընկերական միջավայրում գողություն, ավագակություն կատարած կամ անձի առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալու և երեխայի կողմից, համապատասխանաբար՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու կամ բռնությամբ զուգորդված վարքագիծ դրսևորելու միջև առկա կապը վեր հանելիս։ գողություն կատարած ընկերներ ունեցող երեխաները գրեթե 11 անգամ ավելի հաճախ են հաղորդել գողություն կատարելու, ավագակություն կատարած ընկերներ ունեցող երեխաները՝ 25.4 անգամ հաճախ՝ ավագակություն կատարելու մասին, իսկ անձի առողջությանը վնաս պատճառած ընկերներ ունեցողները՝ 20 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորելու մասին։

Գծապատկեր 93. Գողություն կատարած ընկեր ունենալը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Մասնավորապես, ՀՀ-ում հարցվածների 2,9%-ը հաղորդել է, որ ընկերական միջավայրում ունի գողություն կատարած ընկերներ, նրանցից յուրաքանչյուր 3-րդը հաղորդել է իր կողմից շեղվող վարքագիծ, յուրաքանչյուր 5-րդը՝ բռնի վարքագիծ դրսևորելու, յուրաքանչյուր 8-րդը՝ գողություն կատարելու մասին: Ընդ որում, առկա է ուժեղ հավաստի կապ ընկերների շրջանում գողություն կատարած ընկեր ունենալու և շեղվող, բռնի վարքագիծ դրսևորելու, ինչպես նաև սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու միջև:

Գծապատկեր 94. Գողություն կատարած ընկեր ունենալը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 95. Գողություն կատարած ընկեր ունենալը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Իրենց ընկերների շրջանում ավագակություն կատարած անձի առկայության մասին հաղորդել է ՀՀ-ում հարցված երեխաների 0,5, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 2,3, Կոսովոյում՝ 4,8, Մակեդոնիայում՝ 2,8, Սերբիայում՝ 5,9 Ռկրաինայում՝ 2, Շվեյցարիայում՝ 5,4%-ը: Կրկին, ուժեղ արտահայտված հավաստի կապ է գրանցվել ավագակություն գործած ընկեր ունենալու և շեղվող, բռնի վարքագծի, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու միջև:


Գծապատկեր 96. Ավագակություն կատարած ընկեր ունենալը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3




Ուշագրավ է այն, որ ընկերական միջավայրում ավագակություն կատարած անձի առկայությունը բարձրացրել է երեխայի կողմից ոչ միայն շահադիտական ուղղվածություն ունեցող արարքների, այլև բռնի վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Մասնավորապես, այս գործոնի առկայության պարագայում, 25,6 անգամ բարձրանում է սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու, սակայն, միևնույն ժամանակ, 23 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու հավանականությունը:

Թվում է, թե սա որոշակի կասկածի տակ է դնում մեր արտահայտած այն դիրքորոշումը, որ երեխայի միջավայրում կոնկրետ տեսակի շեղվող վարքագիծ դրսևորած ընկերոջ առկայությունը բարձրացնում է դրան բնույթով նույնական արարքի կատարման հավանականությունը, սակայն պետք է նկատի ունենալ, որ ավագակությունները ունեն մոտիվացիոն առանձնահատկություն, պատկանում են շահադիտական-բռնի մոտիվացիայով արարքների թվին, հետևաբար լիովին տրամաբանական է, որ դրա օրինակի առկայությունը կարող է հանգեցնել ոչ միայն շահադիտական, այլև բռնի վարքագծի դրսևորման:

Գծապատկեր 97. Ավագակություն կատարած ընկեր ունենալը և բռնի վարքագիծը՝ ISRD-3




Գծապատկեր 98. Ավագակություն կատարած ընկեր ունենալը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3



Մեր կողմից իրականացված ուսումնասիրությամբ՝ հավաստի ուժեղ կոռեյացիա է գրանցվել անձի առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալու և շեղվող, բռնի վարքագիծ դրսևորելու, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ իրականացնելու միջև: Նման ընկերների առկայությունը մատնանշվել է ՀՀ-ում հարցվածների 4,6, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 3,5, Կոսովոյում՝ 8, Մակեդոնիայում՝ 5,9, Սերբիայում՝ 13,7 Ուկրաինայում՝ 3,9, Շվեյցարիայում՝ 9,7%-ի կողմից:


Գծապատկեր 99. Առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



Անձի առողջությանը վնաս պատճառած անձի՝ երեխայի ընկերական միջավայրում առկայությունը գրեթե 4 անգամ բարձրացրել է նրա կողմից շեղվող, 20 անգամ՝ բռնի վարքագիծ դրսևորելու, 9.5 անգամ՝ սեփականության դեմ ոտնձգելու հավանականությունը:


Բռնի վարքագծի դետերմինացման առումով բռնություն գործադրած անձի ընկերական միջավայրում առկայությունը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ երեխաները իրենց միկրոմիջավայրում՝ լինի դա ընտանիք, դպրոց թե ընկերական միջավայր, «սովորում» են վարքագծի դրսևորման ձևերը, հաճախ ստերեոտիպային մակարդակով¹⁰⁵: Նման վարքագծի ձևերի թվին է դասվում նաև բռնությունը:

Գծապատկեր 100. Առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալը և բռնի վարքագիծը՝ ISRD-3



Գծապատկեր 101. Առողջությանը վնաս պատճառած ընկեր ունենալը և սեփականության դեմ ուղղված ոտնձգությունները՝ ISRD-3

¹⁰⁵ См'у **Гурьев М.Е.** Анализ теорий агрессивного поведения в отечественной и зарубежной психологической литературе. В сборнике: Проблемы теории и практики современной науки Материалы III Международной научно-практической конференции. Научно-образовательное учреждение «Вектор науки». 2015. էջ 107-114.



Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. ՀՀ-ում, երեխաների կողմից շեղվող և բռնի վարքագիծ առավելապես դրսևորվում է այն երեխաների շրջանում, ովքեր ծագում են շփման. նախընտրում են ազատ ժամանցը անցկացնել ընկերական միջավայրում, հետևաբար՝ հավակնում են այդ խմբի անդամների կողմից հավանության արժանանալու, մինչդեռ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ առավել հաճախ կատարվում են ազատ ժամանակը մենակ տնօրինել ձգտող երեխաների կողմից:

2. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի ձևավորման և դրսևորման առումով կարևոր նշանակություն ունի երեխայի կողմից իր ընկերների խմբի՝ հանրային ուղղվածության կամ հակասոցիալական ուղղվածության հետ ասոցացումը. իր ռեֆերենտային խումբը «ասոցիալ» համարող երեխան ավելի բարձր հավանականություն ունի շեղվող վարքագիծ դրսևորելու:

3. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ երեխաները, հասարակության ազատականացման և ընտանեկան, սոցիալական հսկողության թուլացման պայմաններում, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են ազատ ժամանցն անցկացնում տանից, ընտանեկան հսկողությունից դուրս, այդ թվում՝ երեկոյան ժամերին, ալկոհոլ և թմրանյութ գործածում:

4. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման վրա առանցքային ազդեցություն է գործում նրա միջավայրում թմրանյութ գործածած, բռնություն գործադրած, գողություն կամ ավազակություն կատարած ընկերոջ առկայությունը, ինչը

մի քանի անգամ բարձրացնում է երեխայի կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ընդ որում, երեխայի ընկերական միջավայրում նշված վարքագծի տեսակները դրսևորած ընկերների առկայությունը հանգեցնում է երեխայի կողմից նույնական կամ միաբնույթ արարքների կատարման:

3.4. Հասարակական միկրոմիջավայրի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում

Անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման պատճառական մեխանիզմում, որպես կարևոր գործոն, առանձնացվում է նաև հասարակական միկրոմիջավայրը, մասնավորապես այն տարածքը, որտեղ երեխան ապրում է և նրան շրջապատող հարևանները¹⁰⁶: Եթե հարևանների կողմից ոչ ֆորմալ հսկողության իրականացումը դիտարկվում է որպես երեխայի շեղվող վարքագիծը կանխարգելող կարևոր գործոն, ապա երեխայի հարևանների շրջանում դատապարտված, թմրամիջոցներ գործածող, բռնություն գործադրող, ակոհոլը չարաշահող անձանց առկայությունը լիովին հակառակ ազդեցությունը կարող է ունենալ:

Պարզելու համար, թե որքանով են այդ երևույթները ազդում ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի դրսևորման վրա, 2006 թ.-ին իրականացված ISRD-2 իրականացված և 2014 թ.-ին անցկացված ISRD-3 հետազոտությունների շրջանակներում առանձնացվեցին երկու խումբ հարցեր՝ 1) հարևանների մասին երեխայի կարծիքի, նրանց կողմից իրականացվող սոցիալական հսկողության, 2) հարևանությամբ առկա բացասական գործոնների և երեխաների շեղվող վարքագծի միջև կապը վեր հանելու նպատակով:

Առաջին իսկ դիտարկումը, որը վեր հանվեց այս երկու հետազոտությունների արդյունքների համեմատությամբ, վերաբերում էր հարևանների կողմից իրականացվող սոցիալական հսկողության թուլացմանը. 2006 թ.-ին հարցված երեխաների 57,6%-ը նշել էր, որ հարևանները ուշադիր ու հետևողական են, 77,5%-ը նշել էր, որ հարևանները արժանի են վստահության, մինչդեռ 2014 թ.-ին այդ ցուցանիշները համապատասխանաբար նվազել են՝ դառնալով 43,1 և 73,8%:

Միևնույն ժամանակ, ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հարևանների հետևողականությունը, վստահության արժանի լինելը երեխաների շեղվող վարքագծի կանխարգելման առումով չունի այն ազդեցությունն, ինչը

¹⁰⁶ Տե՛ս **Coughlin, B.C.** The Urban Street Gang after 197 / B.C. Coughlin, S.A. Venkatesh // Annual Review of Sociology. 2003. № 29, էջ 41–64.

ակնկալվում էր. միայն թմրանյութ գործածելու առումով է, որ ավելի բարձր ցուցանիշ է գրանցվել հարցված երեխաների այն խմբում, ում կարծիքով իրենց հարևանները հետևողական չեն: Այն երեխաները, ում կարծիքով իրենց հարևանները վստահելի չեն, ավելի հաճախ են հաղորդել թմրանյութ գործածելու, ավտոմեքենային տիրանալու, գրաֆիտի մասին: Շեղվող վարքագծի մնացած դրսևորումների պարագայում երկու խմբերում էական տարբերություններ չեն գրանցվել:

Աղյուսակ 28. Հարևանների հետևողականությունը և շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3

	հետևողական են	հետևողական չեն	վստահելի են	վստահելի չեն
գրաֆիտի	16,1%	20,3%	17,2%	22,4%
վանդալիզմ	2,4%	2,3%	2,7%	2,5%
հեծանիվ հափշտակել	0,3%	0%	0,6%	0%
խմբային կոիվներ	18,8%	9,5%	0,6%	0%
զենք կրել	5,7%	2,3%	21,9%	17,6%
խանութից կատարված գողություն	0,8%	0%	7,3%	5%
ավտոմեքենային տիրանալ	1,6%	0%	0,6%	0,6%
հաշիշ գործածել	1,2%	4,6%	0,6%	3,8%
առողջությանը վնաս պատճառել	5,2%	5,1%	1,7%	3,8%

Նույն օրինաչափությունն է նկատվում նաև հարևանների միջև խժոժությունների, վիճաբանությունների, վատ հարաբերությունների պարագայում. դրանց առկայությունը կամ բացակայությունը էական նշանակություն չունի անչափահասների շեղվող վարքագծի դրսևորման առումով:

Աղյուսակ 29. Հարևանների վատ հարաբերությունները և շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3

	վատ հարաբերություն	լավ հարաբերություն
գրաֆիտի	16,3%	25,5%
վանդալիզմ	2,1%	7,4%
հեծանիվ հափշտակել	0,2%	1,2%
գողություն	0,6%	0%
խմբային կռիվներ	21%	19%
զենք կրել	6,3%	7,5%
խանութից կատարված գողություն	0,5%	2,4%
ավտոմեքենային տիրանալ	0,7%	6,1%
հաշիշ գործածել	1,8%	4,9%
առողջությանը վնաս պատճառել	5,8%	8,7%

Շեղվող վարքագծի հաճախականությունը սկսում է նվազել այն դեպքում, երբ երեխայի կարծիքով հարևանները պատրաստակամ են օգնության հասնել։ ISRD-2 հետազոտության ժամանակ հարցվածների 84,7 և ISRD-3 հետազոտության ժամանակ հարցվածների 86,1%-ն էր նշել, որ իրենց հարևանները պատրաստ են օգնության հասնել թե՛ իրենց, թե՛ հասարակության մյուս անդամներին։

Անչափահասների այն խումբը, որը նշել է հարևանների օգնության հասնելու պատրաստակամության մասին՝ 1,6 անգամ ավելի հազվադեպ է նշել գրաֆիտի, 4 անգամ՝ գողություն կատարելու, 1,2 անգամ՝ զենք կրելու, 4,8 անգամ՝ ավտոմեքենային ապօրինի տիրանալու, 1,3 անգամ՝ անձի առողջությանը վնաս պատճառելու մասին։

Անչափահասի վարքագծային դիրքորոշման համար, թերևս, կարևոր նշանակություն ունի այն, որ երեխան, ի տարբերություն նախորդ հատկանիշների՝ վստահելի, հետևողական լինելու, հարևանին դիտարկում է արդեն ոչ թե որպես դրական բնութագրվող, սակայն պասիվ վարքագիծ դրսևորող, այլ ակտիվ վարքագծի պատրաստ սուբյեկտ։

**Աղյուսակ 30. Հարևանների օգնության հասնելու պատրաստակամությունը և
շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3**

	հարևանները պատրաստ են օգնել	հարևանները պատրաստ չեն օգնել
գրաֆիտի	16,3%	25,6%
վանդալիզմ	2,7%	2,1%
հեծանիվ հափշտակել	0,5%	0%
գողություն	0,3%	1,2%
խմբային կռիվներ	20,5%	21,6%
զենք կրել	6,7%	8%
խանութից կատարված գողություն	0,4%	1,2%
ավտոմեքենային տիրանալ	0,9%	4,3%
հաշիշ գործածել	2,3%	1,2%
առողջությանը վնաս պատճառել	6%	7,9%

Հետևաբար, սոցիալական հսկողությունը ազդում է երեխայի շեղվող վարքագծի կանխման վրա այն պարագայում, երբ երեխան գիտակցում է, որ հսկողություն իրականացնողը գտնվում է ոչ թե պասիվ դիտորդի դերում, այլ ամեն պահի կարող է միջամտել:

Անչափահասի շեղվող վարքագծի դրսևորման վրա առավել մեծ ազդեցություն ունի երեխայի հարևանությամբ թմրանյութերի, հանցագործությունների, կռիվների տարածվածությունը, լքված շինությունների առկայությունը: ISRD-2 հետազոտության արդյունքներով հավաստի ուժեղ կոռելյացիա էր վեր հանվել հարևանությամբ նման խնդիրների առկայության և երեխաների շեղվող վարքագծի գրեթե բոլոր դրսևորումներ հետ: Մասնավորապես, այն երեխաները, ովքեր նշել են իրենց հարևանությամբ թմրանյութերի, հանցագործությունների, կռիվների տարածվածության, լքված շինությունների առկայության մասին, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են նշել գինի, 2,5 անգամ՝ թունդ ալկոհոլ, 7 անգամ՝ հաշիշ գործածելու, 2,3 անգամ՝ խմբային կռիվների մասնակցելու, 3 անգամ՝ զենք կրելու,

ավազակության, վանդալիզմի, 5 անգամ՝ առողջությանը վնաս պատճառելու, խանութից գողություն կատարելու, 2,7 անգամ՝ հակերության մասին:

Աղյուսակ 31. Հարևանությամբ խնդիրների առկայությունը և շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-2

	հարևանությամբ խնդիրներ առկա չեն	հարևանությամբ առկա են խնդիրներ	
գինի/գարեջուր գործածել	13%	25%	***
թունդ ակոհոլ գործածել	4.5%	10.1%	***
հաշիշ գործածել	0.3%	2.2%	***
խմբային կոիվներ	14%	32%	***
զենք կրել	4.3%	11.8%	***
առողջությանը վնաս պատճառել	0.8%	4.0%	***
ավազակություն	0.3%	0.9%	Ns
վանդալիզմ	2.4%	7.2%	***
խանութից կատարված գողություն	0.3%	1.6%	***
հակերություն	2.1%	5.8%	***

Ընդ որում, նման հարևանությամբ ապրելը ազդում է նաև վիկտիմիզացիայի վրա. հարևանությամբ առկա խնդիրների պարագայում հարցվածները 1,4 անգամ ավելի հաճախ են հաղորդել ավազակությունից, 1,5 անգամ՝ գողությունից տուժելու, 2 անգամ՝ առողջությանը պատճառված վնասի մասին:

Թեև ի համեմատ ISRD-2 ուսումնասիրության՝ ISRD-3 հետազոտության շրջանակներում հարցված երեխաների ավելի փոքր տոկոսը հաղորդեց իր հարևանությամբ հանցագործությունների (համապատասխանաբար՝ 12,8 և 10,5%), կոիվների տարածվածության (համապատասխանաբար՝ 31,5 և 17,4%), քված

շինությունների առկայության մասին (համապատասխանաբար՝ 24,7 և 14,9%), սակայն գրեթե 2 անգամ հաճախ հաղորդեցին թմրամիջոցների տարածվածության մասին (համապատասխանաբար՝ 3,2 և 6,1%): Այնուհանդերձ, ինչպես և ISRD-2 ուսումնասիրության արդյունքներով, այնպես էլ ISRD-3-ով հաստատվեցին շեղվող վարքագծի և հարևանությամբ առկա խնդիրների միջև առկա կոռելյացիաները:

Մասնավորապես, իրենց հարևանությամբ թմրամիջոցների տարածվածությանը դրական պատասխանած անչափահասները 2,4 անգամ ավելի հաճախ են հաղորդել իրենց մասնակցությամբ կատարված վանդալիզմի, 1,3 անգամ՝ խմբային կոիվների, 1,5 անգամ՝ զենք կրելու, 6 անգամ՝ ավտոմեքենային ապօրինի տիրանալու, 2,5 անգամ՝ թմրամիջոց գործածելու, 1,2 անգամ՝ առողջությանը վնաս պատճառելու մասին:

Աղյուսակ 32. Հարևանությամբ թմրամիջոցների տարածվածությունը և շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3

	թմրամիջոցները տարածված են	թմրամիջոցները տարածված չեն
վանդալիզմ	11,2%	4,7%
խմբային կոիվներ	24%	18,7%
զենք կրել	11,3%	7,3%
ավտոմեքենային տիրանալ	12%	2,1%
հաշիշ գործածել	10,6%	4,4%
առողջությանը վնաս պատճառել	8%	6,7%

Իրենց հարևանությամբ հանցագործությունների տարածվածությունը մատնանշած անչափահասների շրջանում 1,2 անգամ բարձր է գրաֆիտի, 9,5 անգամ՝ վանդալիզմ, 9 անգամ՝ հեծանիվի հափշտակություն կատարելու, 1,9 անգամ՝ զենք կրելու, 18,5 անգամ՝ խանութից գողություն կատարելու, 4,8 անգամ՝ ավտոմեքենային ապօրինի տիրանալու, գրեթե 3 անգամ՝ թմրանյութ գործածելու և անձի առողջությանը վնաս պատճառելու հավանականությունը:

**Աղյուսակ 33. Հարևանությամբ հանցագործությունների տարածվածությունը և
շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3**

	հանցանքները տարածված են	հանցանքները տարածված չեն
գրաֆիտի	21,3%	18,1%
վանդալիզմ	12,3%	1,3%
հեծանիվ հափշտակել	1,9%	0,2%
գողություն	0%	0,7%
խմբային կոիվներ	12,4%	26%
զենք կրել	14,1%	7,3%
խանութից գողություն կատարել	3,7%	0,2%
ավտոմեքենային տիրանալ	6,2%	1,3%
հաշիշ գործածել	9,1%	3%
առողջությանը վնաս պատճառել	14,6%	5,3%

Այն երեխաները, ովքեր դրական են պատասխանել իրենց հարևանությամբ կոիվների տարածվածության վերաբերյալ հարցին, 2 անգամ ավելի հաճախ են հաղորդել գրաֆիտի, 4,8 անգամ՝ վանդալիզմ կատարելու, 3 անգամ՝ խմբային կոիվների մասնակցելու, գրեթե 10 անգամ՝ զենք կրելու, թմրանյութ գործածելու, 2,7 անգամ՝ խանութից գողություն կատարելու, 9,4 անգամ՝ ավտոմեքենային ապօրինի տիրանալու, գրեթե 5 անգամ՝ անձի առողջությանը վնաս պատճառելու մասին:

Իրենց հարևանությամբ լքված շինություններ մատնանշած անչափահասների շրջանում 1,3 անգամ բարձր է գրաֆիտի, 2,8 անգամ՝ վանդալիզմ կատարելու, 5,5 անգամ՝ հեծանիվ հափշտակելու, գրեթե 3 անգամ՝ թմրանյութ գործածելու, 1,6 անգամ՝ խանութից գողություն կատարելու, ավտոմեքենային ապօրինի տիրանալու, անձի առողջությանը վնաս պատճառելու հավանականությունը:

Աղյուսակ 34. Հարևանությամբ կռիվների տարածվածությունը և շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3

	կռիվները տարածված են	կռիվները տարածված չեն
գրաֆիտի	31%	16%
վանդալիզմ	7,7%	1,6%
հեծանիվ հափշտակել	2,8%	0%
խմբային կռիվներ	44%	18,6%
զենք կրել	28,3%	2,7%
խանութից գողություն կատարել	1,9%	0,7%
ավտոմեքենային տիրանալ	4,7%	0,5%
հաշիշ գործածել	10,5%	0,9%
առողջությանը վնաս պատճառել	21,4%	4,8%

Աղյուսակ 35. Հարևանությամբ լքված շինությունների առկայությունը և շեղվող վարքագծի դրսևորումը՝ ISRD-3

	լքված շինություններ կան	լքված շինություններ չկան
գրաֆիտի	21,5	17,2
վանդալիզմ	5,6	2
հեծանիվ հափշտակել	1,1	0,2
խմբային կռիվներ	17,7	23,2
զենք կրել	6,6	7,8
խանութից գողություն կատարել	1,1	0,7
ավտոմեքենային տիրանալ	1,1	0,7
հաշիշ գործածել	6,7	2,3
առողջությանը վնաս պատճառել	8,8	5,5

Ստացված արդյունքների համադրումից հետևում է, որ անչափահասների շեղվող վարքագծի վրա, բացառությամբ թմրանյութ գործածելու, հարաբերականորեն ամենաթույլ ազդեցությունն ունի հարևանությամբ լքված շինությունների առկայությունը: Սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների դետերմինացման առումով առավել ուժեղ ներգործություն ունի հարևանությամբ հանցագործությունների, ինչպես նաև թմրամիջոցների տարածվածությունը, մինչդեռ կոնվների տարածվածությունը նպաստում է անչափահասների կողմից բռնության գործադրմամբ վարքագծի դրսևորմանը: Վերջին բացահայտումը անմիջականորեն գալիս է հաստատելու հոգեբանության մեջ արտահայտված այն տեսակետը, որ երեխան «սովորում» է բռնություն գործադրել՝ ուրիշների վարքագիծը պատճենելու, նմանակելու կամ իրեն բռնություն գործադրողի հետ նույնականացնելու միջոցով¹⁰⁷:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. ՀՀ-ում սոցիալական հսկողությունը երեխայի շեղվող վարքագծի ձևավորման, դրսևորման առումով կանխարգելիչ ազդեցություն ունի, եթե երեխան գիտակցում է, որ հսկողություն իրականացնողը գտնվում է ոչ թե պասիվ դիտորդի դերում, այլ ամեն պահի կարող է ակտիվություն դրսևորել՝ միջամտել:

2. Երեխայի հարևանությամբ թմրանյութերի, հանցագործությունների, կոնվների տարածվածությունը, լքված շինությունների առկայությունը ՀՀ-ում բարձրացնում է ինչպես երեխայի կողմից շեղվող վարքագիծ դրսևորելու, բռնության գործադրմամբ կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ իրականացնելու, այնպես էլ դրանցից տուժելու ռիսկը:

¹⁰⁷ Տե՛ս **Фурманов И. А.** Межпоколенная эстафета агрессии и насилия в семье: эндогенные и экзогенные факторы. «Вестник БГУ» : научно-теоретический журнал Белорусского государственного университета, 2009, №1, էջ 69-70:

ԳԼՈՒԽ 4.ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

4.1.Անչափահասների հանցավորությանն արձագանքելու արդի վիճակը ՀՀ-ում

Անչափահասների հանցավոր վարքագծի կանխման առաջնային նախադրյալը նրանց դրսևորած արարքին արձագանքելու արդյունավետ տարբերակի ընտրությունն է, ինչն, առաջին հերթին, ասոցացվում է կատարված հանցավոր արարքի համար անչափահասին քրեական պատասխանատվության ու պատժի ենթարկելու հետ:

Բազմաթիվ հոգեբանական հետազոտություններ¹⁰⁸վկայում են, որ ի համեմատ չափահասների՝ հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների կողմից իրենց վարքագծի հետևանքները լիարժեքորեն ընկալելու, արտաքին ազդեցությանը դիմագրավելու, ինքնուրույն կերպով որոշում կայացնելու ունակությունները սահմանափակ են: Բացի այդ, անչափահասներն առավել զգայուն են կիրառվող պատժատեսակների մաս կազմող սահմանափակումների ու զրկանքների նկատմամբ:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 24-ը սահմանում է, որ քրեական պատասխանատվության է ենթակա այն անձը, ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը, իսկ նույն հոդվածի երկրորդ մասով թվարկված արարքների համար՝ այն անձը, ում տասնչորս տարին է լրացել նախքան հանցանք կատարելը¹⁰⁹:

Քրեական պատասխանատվության ՀՀ օրենսդրի կողմից սահմանված թե՛ տարիքը, թե՛ այն հանցավոր արարքների շրջանակը, որոնց համար

108Տե՛ս **Steinberg, Laurence; Scott, Elizabeth**. Less Guilty by Reason of Adolescence: Developmental Immaturity, Diminished Responsibility, and the Juvenile Death Penalty. *American Psychologist*, Vol 58(12), Dec 2003, էջեր 1009-1018; **Andrew Von Hirsch**. Proportionate Sentences for Juveniles. How Different than for Adults? *Punishment & Society* April 2001 vol. 3 no. 2, էջեր 221-236; **Zimring, Franklin; E.Grisso, Thomas; Schwartz, Robert**. Penal proportionality for the young offender: Notes on immaturity, capacity, and diminished responsibility. *Youth on trial: A developmental perspective on juvenile justice*. , Chicago, IL, US: University of Chicago Press, vi, 2000, էջեր 271-289; **Praveen, Kambam and Christopher, Thompson**. The development of decision-making capacities in children and adolescents: Psychological and neurological perspectives and their implications for juvenile defendants. *Behavioral Sciences & the Law, Special Issue: The Neuroscience and Psychology of Moral Decision Making and the Law* Volume 27, Issue 2, March/April 2009, էջեր 173-190.

¹⁰⁹Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003 թ., ՀՕ-528-Ն

պատասխանատվություն է սահմանված տասնչորս տարեկանից, ինքնին, տարաբնույթ տեսակետների ու տարաձայնությունների տեղիք է տալիս, մասնավորապես խնդրահարույց է երեխաներին 14 տարեկանից պատասխանատվության ենթարկելու նպատակահարմարությունը խուլիգանության, հաղորդակցության և կապի ուղիները վնասելու կամ ոչնչացնելու, գողության, կողոպուտի առանց ծանրացուցիչ հանգամանքներով դրսևորումների համար: ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի շրջանառության մեջ դրված տարբերակում այդ արարքները արդեն իսկ դուրս են բերվել այն արարքների շրջանակից, որոնց համար պատասխանատվություն է սահմանվում 14 տարեկանից:

Այնուհանդերձ ներկայացված աշխատանքի շրջանակներում, առավել կարևորվում է ոչ այնքան քրեական պատասխանատվության տարիքի հարցերի, որքան անչափահասների հանցավոր վարքագծի դրսևորման դեպքում քրեաիրավական արձագանքման միջոցների, մասնավորապես՝ պատժի կիրառման քննարկումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 86-ը սահմանում է այն պատժատեսակները, որոնք կարող են նշանակվել անչափահասների նկատմամբ: Մասնավորապես, դրանք ընդգրկում են՝

- 1) տուգանքը.
- 2) հանրային աշխատանքները.
- 3) կալանքը.
- 4) որոշակի ժամկետով ազատազրկումը:

Հարց է առաջանում. արդյո՞ք պատժի ներկայացված համակարգը ի զորու է ապահովել հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների քրեական պատասխանատվության անխուսափելիությունն ու պատժի նպատակների իրականացումը, այն է՝ վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել հանցանք կատարած անձին և կանխել նոր հանցագործությունների կատարումը:

Առաջադրված հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ինչպես նշված պատժատեսակների օրենսդրական կանոնակարգմանը, այնպես էլ դրանց կիրառման պրակտիկային: Մասնավորապես,

ՀՀ ոստիկանության և դատական դեպարտամենտի կողմից հրապարակված վիճակագրական տվյալների համաձայն՝ 2013 թ.-ին հանցավոր վարքագիծ է դրսևորել 352 անչափահաս, դատապարտվել է 83-ը. 2014 թ.-ին այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 335 և 87:

Աղյուսակ 36. Անչափահաս դատապարտյալները ՀՀ-ում՝ 2004-2014 թթ. (բացարձակ թվերով)

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
դատապարտյալ	222	192	168	179	178	166	176	110	89	83	87	80

2013 թ.-ին անչափահաս դատապարտյալների 83,1%-ի (69 անչափահաս) նկատմամբ կիրառվել է ազատազրկում, սակայն ազատազրկման դատապարտվածների 63,8%-ի (44 անչափահաս) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել¹¹⁰: 2014 թ.-ին դատարանի դատավճռով ազատազրկում է կիրառվել անչափահաս դատապարտյալների 71,3%-ի նկատմամբ, սակայն նրանց 59,7%-ի նկատմամբ կրկին պատիժը պայմանականորեն չի կիրառվել¹¹¹:

Աղյուսակ 37. Անչափահասների նկատմամբ կիրառված պատժատեսակները ՀՀ-ում՝ 2009-2015 թթ. (բացարձակ թվերով)

	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ազատազրկում	135	161	95	76	69	62	53
որից՝ պայմանականորեն չի կիրառվել	52	115	60	52	44	37	49
Ազատազրկման հետ չկապված պատժատեսակներ	29	15	15	11	14	25	27

¹¹⁰Տե՛ս 2013թ. Հաշվետվություն – անչափահաս դատապարտյալների վերաբերյալ http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=3

¹¹¹Տե՛ս 2014թ. Հաշվետվություն – անչափահաս դատապարտյալների վերաբերյալ http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=1

Ներկայացված վիճակագրական տվյալներն արդեն իսկ փաստում են, որ անչափահաս դատապարտյալների նկատմամբ առավել հաճախ կիրառվող պատժատեսակն ազատազրկումն է, սակայն, գիտակցելով ընտանիքից, հասարակությունից մեկուսացման բացասական հետևանքները անչափահասի համար¹¹², դատարանները, դրանց ճնշող մեծամասնության դեպքում, որոշում են կայացրել պատիժը պայմանականորեն չկիրառել:

Ավելին, վիճակագրական տվյալների վերլուծությունը վկայում է, որ ի համեմատ չափահասների՝ անչափահասների նկատմամբ ազատազրկում պատժատեսակի կիրառման տոկոսային հարաբերակցությունը ավելի բարձր է, սակայն, միևնույն ժամանակ, ավելի բարձր է նաև ազատազրկում պատժատեսակը պայմանականորեն չկիրառելու համամասնությունը:

Աղյուսակ 38. Ազատազրկում պատժատեսակի կիրառումը ՀՀ-ում՝ 2009-2015 թթ.

(տոկոսային հարաբերակցությամբ)

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
չափահասներ	42.0%	70.8%	66.4%	58.8%	62.6%	60.3%	54.5%	42.0%	70.8%	66.4%	58.8%	62.6%
↙												
պայմանականորեն չի կիրառվել	40.5%	29.5%	20.7%	34.7%	37.5%	47.0%	63.1%	40.5%	29.5%	20.7%	34.7%	37.5%
անչափահասներ	82.3%	91.5%	86.4%	87.4%	83.1%	71.3%	66.3%	82.3%	91.5%	86.4%	87.4%	83.1%
↙												
պայմանականորեն չի կիրառվել	38.5%	71.4%	63.2%	68.4%	63.8%	59.7%	92.5%	38.5%	71.4%	63.2%	68.4%	63.8%

ՀՀ քրեակատարողական ծառայությունից ստացված տեղեկատվությունը վկայում է, որ երեխաները անչափահասների համար ՀՀ-ում նախատեսված միակ՝

¹¹²Տե՛ս **Чеснокова Е. А.** Актуальные проблемы применения штрафа в отношении несовершеннолетних, осужденных за имущественные преступления. Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России, Выпуск № 2 (11) / 2009, էջ 179.

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում են հայտնվում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման պարագայում: Այսպես, 2010 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ՝ այդ հիմնարկում պատիժ կրող 15 անչափահասներից 13-ը դատապարտված են եղել ծանր, 2-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար, 2015 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ այդտեղ գտնվող 4 անչափահաս դատապարտյալներից 3-ը՝ ծանր, 1-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար:

Այն, որ ազատությունից մեկուսացումը բացասաբար է անդրադառնում անձի, հատկապես անչափահասի զարգացման, սոցիալիզացիայի գործընթացի վրա, հաճախ էլ՝ նախապայման հանդիսանում նրա կողմից հետագա հանցավոր վարքագծի դրսևորման համար, նշվել է բազմաթիվ հետազոտողների կողմից¹¹³: Պատահական չէ, որ ներկայումս պետությունների ճնշող մեծամասնությունում, այդ թվում՝ ՀՀ-ում, քրեական քաղաքականության¹¹⁴ առաջնահերթ խնդիրներից մեկը հանցագործություններին արձագանքելիս ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող միջոցների ներդրումն ու կիրառումն է: Հետևաբար, անհրաժեշտ է հասկանալ, թե ՀՀ-ում ի՞նչն է հանգեցնում անչափահասների նկատմամբ ազատազրկում պատժատեսակի նման լայն կիրառությանը, ինչու՞ արդյունավետ կիրառություն չեն ստանում տուգանք, հանրային աշխատանքներ և կալանք պատժատեսակները, թեև պետք է փաստել, որ վերջին տարիներին դատարանների կողմից դրանց կիրառման տոկոսային ցուցանիշները գրեթե երկու անգամ աճել են՝ 2008 թ.-ի 17,7%-ից 2015 թ.-ին հասնելով 33,8%-ի:

Թերևս հարցի պատասխանը, առաջին հերթին, պետք է փնտրել անչափահասների հանդեպ կիրառվող պատժատեսակների օրենսդրական կարգավորման մակարդակում:

¹¹³Տե՛ս **Аденес И.** Наказание и предупреждение преступлений. М., 1979. էջ 255; **Михайловская И. Б., Кузьминский Ю. Ф., Мазаев Ю. Н.** Преступность: что мы знаем о ней. Милиция: что мы думаем о ней. – М., 1994; **Корецкий Д. А., Тулегенов В. В.** Криминальная субкультура и ее криминологическое значение. СПб., 2006. էջ 138; **Clear T., Rose D., Ryder J.** Incarceration and the community: The problem of removing and returning offenders. Crime & Delinquency, 2001.

¹¹⁴Տե՛ս ՀՀ Կառավարության 2012 թ.-ի դեկտեմբերի 27-ի N 1694 – Ն որոշումը՝ Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013 – 2016 թվականների ռազմավարական ծրագիրը եվ երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի n 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի համաձայն՝ անչափահասների հանդեպ կիրառվող տուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից հինգհարյուրապատիկի չափով: Տուգանքը կիրառվում է անչափահասի ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի առկայության դեպքում, որի վրա կարող է տարածվել բռնագանձում: Եթե դատապարտվողն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, ապա դատարանը նրա համար վճարման ժամկետ է սահմանում առավելագույնը մեկ տարի ժամկետով կամ թույլատրում է տուգանքը մաս առ մաս վճարել նույն ժամկետում: Այդ դեպքում սահմանվում է տուգանքի վճարման ժամանակացույց, և որոշվում է յուրաքանչյուր անգամ վճարման ենթակա գումարի չափը: Նշված արտոնությունը դատարանի որոշմամբ ուժը կորցնում է, եթե դատապարտյալը խախտում է տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 51-ի չորրորդ մասը սահմանում է, որ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Այնուհանդերձ, գործնականում այս դրույթը չի կարող կիրառվել, քանի որ 2013 թ.-ի ապրիլի 23-ի ՀՀ ՍԴՈ-1082 որոշմամբ, այս դրույթը ճանաչվել է անվավեր՝ նկատի ունենալով այն, որ տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելիս օրենսդիրը «...տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև...»:

Տուգանքի ներկայացված ձևակերպումից հետևում է, որ օրենսդրական կանոնակարգման մակարդակում թերևս մեկ հարցի կարգավորումն է բաց մնում. ինչպե՞ս վարվել այն անձի հետ, ով խուսափում է տուգանքի վճարումից: Բնական է, որ այս հարցը հիմնականում ծագում է այն դեպքում, երբ դատարանը անչափահասի

նկատմամբ տուգանք է նշանակել նրա ինքնուրույն վաստակի (եկամտի) առկայության պարագայում: Իրավակիրառ պրակտիկայում նման դեպքերի արձանագրումը և դրանց հետևող համարժեք արձագանքի բացակայությունը դատարաններին արդարացված կերպով հիմք են տալիս կարծելու, որ տուգանքի նշանակման պարագայում հանցանք կատարած անձը գործնականում մնալու է անպատիժ և պատժի նպատակները չեն ապահովվելու:

Այնուհանդերձ, կարծում ենք, անչափահասների նկատմամբ տուգանքի կիրառման դեպքերի սակավությունը ունի նաև մեկ այլ օբյեկտիվ հիմք. ՀՀ-ում 14-18 տարեկան անչափահասները, որպես կանոն, չունեն ո՛չ ինքնուրույն վաստակ, ո՛չ էլ գույք, որի վրա կարող է բռնագանձում տարածվել, ինչն էլ դատարանին հնարավորություն չի ընձեռում կիրառել տուգանք պատժատեսակը: Ավելին, կարծում ենք, պատժի նպատակների ապահովման տեսանկյունից, ճիշտ կլիներ օրենսդրորեն սահմանել, որ տուգանք կարող է նշանակվել անչափահասի ինքնուրույն վաստակի (եկամտի) կամ սեփական վաստակով ձեռք բերված այն գույքի վրա, որի վրա բռնագանձում կարող է տարածվել:

Անչափահասի նկատմամբ կիրառման ենթակա հաջորդ պատժատեսակը հանրային աշխատանքներն են, որոնք հանդես են գալիս որպես այլընտրանք ազատազրկմանը: ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 54-ի համաձայն՝ հանրային աշխատանքները դատարանի կողմից նշանակված, իրավասու մարմնի կողմից որոշված վայրում չվարձատրվող, դատապարտյալի կողմից հանրության համար օգտակար աշխատանքների կատարումն է: Դրանք կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ՝ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով: Հանրային աշխատանքները նշանակվում են որպես որոշակի ժամկետով ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակ՝ դատապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու դեպքում: Հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի

ժամկետով ազատագրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 54-ի 4-րդ մասում ներկայացված են այն անձինք, ում նկատմամբ հանրային աշխատանքներ նշանակվել չեն կարող, մասնավորապես, սահմանվում է, որ՝ «Հանրային աշխատանքները չեն նշանակվում առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամ ճանաչված, դատավճիռ կայացնելու պահին տասնվեց տարին չլրացած, կենսաթոշակային տարիք ունեցող անձանց, հղի կանանց և ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների նկատմամբ»:

Ներկայացված ձևակերպումից հետևում է, որ հանրային աշխատանքներ կարող են կիրառվել ոչ բոլոր անչափահասների նկատմամբ, այլ միայն նրանց, ում տասնվեց տարին լրացել է դատավճիռ կայացնելու պահին: Նաև պարտադիր պահանջ է այն, որ անչափահասը գրավոր դիմում ներկայացնի իր հանդեպ ազատագրկման փոխարեն հանրային աշխատանքներ կիրառելու մասին: Վերջին ձևակերպումը խնդրահարույց է այն առումով, որ անչափահասները գործնականում նախընտրում են նման դիմում չներկայացնել՝ քաջ գիտակցելով, որ իրենց կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի պարագայում դատարանը նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառելու, իսկ այդ ինստիտուտով նախատեսված սահմանափակումների շրջանակը անհամեմատ զիջում է հանրային աշխատանքների կիրառմամբ իր վրա դրվող սահմանափակումներին: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս պետք է սահմանվի փորձաշրջան, որի ընթացքում դատապարտյալի վրա դրվում են որոշակի պարտականություններ: Գործնականում, սակայն, նման պարտականություններ երեխայի վրա գրեթե չեն դրվում, նրա հետ վերականգնողական աշխատանք չի իրականացվում, ինչն էլ երեխայի մոտ ձևավորում է անպատժելիության զգացում, մինչդեռ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ») կարևորում են անչափահասի նկատմամբ քրեաիրավական արձագանքման այս կամ այն տեսակն ընտրելիս հասարակության պահանջներին և անվտանգությանն ուշադրություն դարձնելը: Հետևաբար՝ ՀՀ-ում

հասանելի կրթական, վերականգնողական, կանխարգելիչ ծրագրերի առկայության պարագայում պետք է ուշադրություն դարձնել փորձաշրջանի ընթացքում երեխայի վրա որոշակի պարտականություններ դնելուն (օրինակ՝ ուսումը շարունակելը, հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելը, որոշակի վայրեր այցելելու արգելքը, կրթական, մշակութային ծրագրերին ներգրավվելը և այլն):

Հատկանշական է նաև, որ ՀՀ գործող քրեական օրենսգիրքը, հանրային աշխատանքների տևողության առումով տարբերակում չի դրել չափահասների և անչափահասների միջև. երկուսի պարագայում էլ նախատեսվում է նույն ժամաքանակը՝ երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ: Նախ, ինքնին, հանրային աշխատանքների նման տևողությունը արդարացված չի թվում: Այդ առումով, ավելի առաջադիմական մոտեցում է ամրագրվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում, որտեղ, նախ՝ հանրային աշխատանքները դիտարկվում են որպես ինքնուրույն կիրառման ենթակա հիմնական պատժատեսակ և կարող են կիրառվել նաև 15 տարին լրացած անչափահասի նկատմամբ, բացի այդ՝ դրանց տևողությունը սահմանվում է 60-ից 270 ժամ: Սակայն, ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում այս տևողությունը նախատեսված է թե՛ չափահաս, թե՛ անչափահաս դատապարտյալների համար: Թերևս ճիշտ կլիներ վերանայել այս մոտեցումը և օրենսդրորեն ավելի կարճ ժամանակահատված նախատեսել անչափահասների համար՝ դրանց տևողությունը կրճատելով կիսով չափ:

Միաժամանակ, որպես ուղեցույց ընդունելով «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի 1989 թ.-ի և «Նվազագույն տարիքի մասին» 1973 թ.-ի կոնվենցիաները՝ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, որ դատապարտյալ անչափահասի նկատմամբ նշանակվող հանրային աշխատանքները դրսևորվում են հանրության համար օգտակար այնպիսի աշխատանքների կատարման մեջ, որոնք չեն կարող բացասաբար ազդել նրա ֆիզիկական, հոգեկան վիճակի, զարգացման կամ սոցիալականացման վրա: Հետևաբար, ՀՀ քրեակատարողական օրենսդրության բարեփոխման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել անչափահասների նկատմամբ հանրային աշխատանքների կիրառման հնարավոր ոլորտների կանոնակարգմանը:

Անչափահասների նկատմամբ կիրառվող մյուս պատժատեսակները կապված են ազատությունից զրկելու հետ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 88-ը սահմանում է, որ կալանքը տասնհինգ օրից երկու ամիս ժամկետով նշանակվում է դատավճիռը կայացնելու պահին տասնվեց տարին լրացած անչափահասի նկատմամբ: Կալանքը դրսևորվում է ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից խիստ մեկուսացման պայմաններում դատապարտյալին պահելով: Այն կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում:

Անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի կիրառման նպատակահարմարությունը իրավաբանական գրականության մեջ վիճաբանությունների տեղիք է տալիս: Օրինակ, Մ.Դ.Շարգորոդսկու կարծիքով կալանքն արդյունավետ չէ, քանի որ հնարավոր չէ անձին ուղղել նման կարճ ժամանակահատվածի ընթացքում¹¹⁵: Վ.Մ. Ստեպաշինի կարծիքով ևս կալանքի նախատեսումը նպատակահարմար չէ, քանի որ այն գործառույթները, որոնք պետք է ապահովվեն կալանք պատժատեսակի իրագործման պարագայում, հնարավոր է առավել քիչ ծախսերով ապահովել որոշակի ժամկետով ազատազրկում պատժատեսակի իրականացման պարագայում¹¹⁶:

Մինչդեռ հետազոտողներից շատերը¹¹⁷ գտնում են, որ կալանքն արդյունավետ պատժատեսակ է, որն ունի շոկային ազդեցություն, քանի որ թեև այն նման է ազատազրկում պատժատեսակին, սակայն դրա դեպքում նախատեսված են դատապարտյալին պահելու ավելի խիստ պահանջներ, մեկուսացման ավելի բարձր աստիճան:

Այլ խնդիր է, որ ՀՀ գործող քրեակատարողական օրենսդրության կանոնակարգման պարագայում անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի կիրառումը հակասում է միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջներին: Բանն այն է, որ ՀՀ գործող քրեակատարողական օրենսգիրքը չի

¹¹⁵Տե՛ս Курс советского уголовного права : в 5 т. – Т. 2. Часть Общая. Л., 1970. էջեր 271–272.

¹¹⁶Տե՛ս **Степашин В. М.** Арест как вид уголовного наказания. Вестник Омского университета. Серия: Право. 2011. № 4 (29), էջեր 130-134.

¹¹⁷Տե՛ս Комментарий к Уголовно-исполнительному кодексу Российской Федерации. М., 1997. էջ 136; **Базунов В.** Арест как вид уголовного наказания // Преступление и наказание , 1998, № 4, էջ 53

նախատեսում կրթության ապահովումը կալանքի դատապարտված անչափահասների համար, մինչդեռ «Դատապարտյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» հոդված 77-ը սահմանում է, որ դատապարտյալների համար պետք է ապահովվի կրթություն ստանալու հնարավորությունը: Դատապարտյալների, հատկապես երիտասարդ դատապարտյալներին կրթության հնարավորության երաշխավորման պահանջը սահմանված է նաև Եվրոպական քրեակատարողական (պենիտենցիար) կանոնների հոդված 71.5-ում¹¹⁸:

Համանման դրույթ են պարունակում նաև անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները («Պեկինյան կանոններ»), որի հոդված 26.2-ի համաձայն՝ «Ուղղիչ հիմնարկներում անչափահասները պետք է ապահովվեն իրենց տարիքին, սեռին, անձին և լիարժեք զարգացման շահերին համապատասխան խնամքով, պաշտպանությամբ և սոցիալական, հոգեբանական, բժշկական, ֆիզիկական, կրթության և արհեստավարժության բնագավառների ողջ անհրաժեշտ օգնությամբ»:

Հետևաբար, անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի ՀՀ օրենսդրությամբ առկա ներկայիս կանոնակարգումը խնդրահարույց է և քրեակատարողական օրենսգրքում պետք է նախատեսվի կալանք պատժատեսակի դատապարտված անձանց կրթության երաշխավորումն ապահովող դրույթ:

Մտահոգության տեղիք է տալիս նաև անչափահասների նկատմամբ կիրառվող կալանք պատժատեսակի տևողությունը՝ տասնհինգ օրից երկու ամիս: Կարծում ենք, ճիշտ կլիներ անչափահասների նկատմամբ կալանք պատժատեսակի տևողության կրճատումը՝ տասը օրից մինչև մեկ ամիս տևողությամբ:

Այնուհանդերձ, կալանք պատժատեսակի կանոնակարգման ժամանակ տեղ գտած ամենալուրջ հիմնախնդիրը կապված է այն հանցավոր արարքների շրջանակի հետ, որոնց համար այն կարող է կիրառվել: Մասնավորապես, գործող քրեական օրենսգրքի հոդված 88-ը սահմանում է, որ կալանք կարող է նշանակվել **ոչ մեծ և միջին ծանրության** հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում: Մինչդեռ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ

¹¹⁸ St' u Europe Council documents collection in the sphere of human rights protection and struggle against criminality. <http://www.consilium.europa.eu/en/documents-publications/>

կանոնների («Պեկինյան կանոններ») հոդված 17.1-ի համաձայն՝ «...գ) անչափահաս իրավախախտին պետք չէ ազատագրվել, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու մեջ, ինչպես նաև¹¹⁹ ներգործության ուրիշ համապատասխան միջոցի բացակայության դեպքում»: Ավելին, նույն կանոնների հոդված 19.1-ում սահմանվում է, որ անչափահասին որևէ ուղղիչ հիմնարկում ներփակելը միշտ պետք է ծայրահեղ միջոց լինի, անհրաժեշտ նվազագույն ժամկետի համար կիրառված:

Փաստորեն, Պեկինյան կանոնների համաձայն՝ անչափահասի նկատմամբ կալանքի կիրառումը հնարավոր է երկու դեպքում՝

- այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով լուրջ արարք գործելու,
- լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու դեպքում:

Ընդ որում, անչափահասը նշված երկու դեպքերում էլ ազատությունից կարող է զրկվել, եթե բացակայում է արձագանքման այլ համապատասխան միջոցը:

Թեև Պեկինյան կանոնները չեն հստակեցնում, թե ինչ պետք է հասկանալ «լուրջ արարք», «լուրջ իրավախախտում» հասկացությունների ներքո, սակայն, նշված կանոնների համակարգային մեկնաբանության ներքո հասկանալի է, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունները այդ հասկացությունների ներքո չեն ընդգրկվում: Հետևաբար, ոչ մեծ ծանրության հանցագործությունների պարագայում կալանք պատժատեսակի սահմանումը բովանդակային առումով շեղվում է Պեկինյան կանոններով սահմանված ուղենիշերից: Վիճահարույց է նաև միջին ծանրության հանցագործությունները «լուրջ իրավախախտում» համարելը:

Ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների պարագայում, կալանք պատժատեսակի կիրառումը անչափահասների նկատմամբ նպատակահարմար չի թվում և անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգում դրա առկայությունը կարող է արդարացված համարվել, եթե այն նախատեսվի ծանր կամ

¹¹⁹ Պեկինյան կանոնների ներկայացված թարգմանությունը որոշակի շեղում ունի դրանց անգլերեն բնօրինակից, որտեղ խոսքը գնում է ոչ թե «բազմաթիվ լուրջ իրավախախտումներ կատարելու», այլ «լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու» մասին, իսկ «ինչպես նաև»-ի փոխարեն օգտագործվում է «և» շաղկապը:

առանձնապես ծանր հանցագործության դեպքում՝ օրինակ, օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ նշանակելիս:

Ինչպես արդեն նշվել է, անչափահասների հանդեպ առավել հաճախ կիրառվող պատժատեսակը ազատազրկումն է: ՀՀ գործող քրեական օրենսդրությունը սահմանում է, որ ազատազրկումը որոշակի ժամկետով դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից մեկուսացնելն է:

Ազատազրկումն անչափահասների նկատմամբ նշանակվում է՝

- 1) ոչ մեծ ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, իսկ միջին ծանրության հանցագործության համար՝ առավելագույնը երեք տարի ժամկետով.
- 2) մինչև տասնվեց տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը յոթ տարի ժամկետով.
- 3) տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը կատարած ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար՝ առավելագույնը տասը տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 90-ը սահմանում է, որ մինչև տասնվեց տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել յոթ տարին: Տասնվեցից մինչև տասնութ տարին լրանալը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ ազատազրկումը, ըստ հանցագործությունների համակցության, չի կարող գերազանցել տասը տարին: Ըստ դատավճիռների համակցության՝ ազատազրկման ձևով նշանակվող վերջնական պատիժը չի կարող գերազանցել տասներկու տարին:

Փաստորեն, հայ օրենսդիրը հնարավոր է համարում անչափահաս դատապարտյալի նկատմամբ մինչև 12 տարի ժամկետով ազատազրկման կիրառումը:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը հնարավոր է համարում ազատազրկում պատժատեսակի կիրառումը ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ, ինչը, կարծում ենք, ինչպես և կալանքի դեպքում, հանդիսանում է Պեկինյան կանոններից շեղում: Ակնհայտ է, որ ազատազրկում պատժատեսակը անչափահասի հանդեպ կարող է կիրառվել որպես ծայրահեղ, բացառիկ միջոց,

հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքում պետք է ամրագրել, որ որոշակի ժամկետով ազատազրկումը չի կարող կիրառվել ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ:

ՀՀ-ում անչափահասների նկատմամբ կիրառվող պատժի համակարգի վերլուծությունը վկայում է, որ գործնականում դատարանները, դեպքերի ճնշող մեծամասնության դեպքում, «դատապարտված» են ազատազրկում կիրառելու, քանի որ առկա պատժատեսակների համակարգում այլընտրանքներ չկան. հանրային աշխատանքները ինքնուրույն չեն կարող կիրառվել, այլ կարող են կիրառվել միայն անձին ազատազրկման դատապարտելուց հետո, կալանքը բովանդակային առումով ազատազրկման դրսևորում է, իսկ տուգանքը կիրառել գրեթե չի ստացվում՝ անչափահասների ինքնուրույն վաստակի կամ այնպիսի գույքի բացակայության պատճառով, որի վրա կարող է տարածվել բռնագանձում:

Նման պայմաններում, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում, անչափահասների համար նախատեսված պատժատեսակների համակարգը լրացնել իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով:

Որպես այդպիսին կարող են լինել որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, ազատության սահմանափակումը:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 52-ը չափահասների համար նախատեսում է այնպիսի պատժատեսակ, ինչպիսին է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը: Այդ հոդվածի համաձայն՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությամբ զբաղվելն արգելվել է, որը որպես հիմնական պատիժ սահմանվում է երկուսից յոթ տարի ժամկետով՝ դիտավորյալ հանցագործությունների համար, և մեկից հինգ տարի ժամկետով՝ անզգույշ հանցագործությունների համար, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Թերևս, նույնաբովանդակ պատժատեսակի նախատեսումն անչափահասների համար նույնպես արդարացված կլինի:

Ազատության սահմանափակում պատժատեսակը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում, որում այն բնորոշվում է որպես դատապարտյալին առանց ուսումնառությունից կամ աշխատանքից կտրելու տնային պայմաններում հսկողության տակ պահելը՝ վեց ամսից երեք տարի ժամկետով: Նշված պատժատեսակը կարող է արդյունավետ այլընտրանք հանդիսանալ ազատազրկմանը: Նախատեսվում է, որ դատարանը, ազատության սահմանափակում նշանակելով, արգելում է հանցանք կատարած անձին հաճախել տարբեր ժամանցային կամ այլ հաստատություններ, շփվել անձանց որոշակի շրջանակի հետ կամ որոշակի ժամերի բացակայել տանից: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, կարող է սահմանել նաև այլ արգելքներ կամ փոխարինել դրանք:

Այնուհանդերձ, պետությունը պետք է ձգտի հնարավորինս մեղմ, սակայն անչափահասի վրա ներազդելու, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող միջոցներով արձագանքել անչափահասների կողմից կատարվող հանցավոր արարքներին: Որպես նման միջոցներ ներկայումս հանդես են գալիս դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները, որոնք, սակայն, կիրառվում են միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելիս: Ավելին, ՀՀ դատական վիճակագրությունը վկայում է, որ նշված միջոցների կիրառման պրակտիկան բավականին ցածր է՝ 2010 թ.-ին կիրառվել է 13, 2011 թ.-ին՝ 1, 2012 թ.-ին՝ 2, 2013 թ.-ին՝ 11, 2014 թ.-ին՝ 3 և 2015 թ.-ին՝ 3 երեխայի նկատմամբ:

Անչափահասների նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը ՀՀ-ում կանոնակարգվում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 91-ով, որը նախատեսում է դատարանի կողմից նման միջոցների կիրառման հնարավորություն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասների համար, եթե դատարանը գտնի, որ անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելով և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով հնարավոր է ապահովել նրա ուղղումը: Անչափահասների նկատմամբ կարող են նշանակվել դաստիարակչական բնույթի

հարկադրանքի հետևյալ միջոցները՝ նախազգուշացում, ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով, պատճառված վնասը հարթելու պարտականություն դնելը՝ դատարանի կողմից սահմանված ժամկետում, ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը՝ առավելագույնը 6 ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 93-ը նախատեսում է նաև ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասին պատժից ազատելը՝ առավելագույնը 3 տարի ժամկետով հատուկ ուսումնադաստիարակչական կամ բժշկական-դաստիարակչական հաստատությունում տեղավորելու միջոցով, եթե դատարանը գտնի, որ դրանով կարող են ապահովվել պատժի նպատակները:

Այնուհանդերձ, դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների նախատեսման արդեն իսկ օրենսդրական մակարդակում առկա են թերացումներ. ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը անչափահասի նկատմամբ կիրառվող որևէ պարտականություն չի ենթադրում, բացի այդ օրենսդրությամբ հստակ չի կանոնակարգվում այն մարմինների կամ անձանց պարտականությունները, ինչպես նաև դրանց չկատարման համար առաջացող պատասխանատվությունը, ում հսկողությանն է հանձնվում անչափահասը:

Օրենսդիրը նախատեսում է անչափահասի նկատմամբ մի քանի դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հնարավորություն: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 91-ի 3-րդ մասում սահմանվում է, որ «դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ»: Սակայն գործնականում այս դրույթի կիրառումը խնդրահարույց է, քանի որ Տոկիոյի

կանոնների¹²⁰ կետ 3.1-ը սահմանում է, որ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների սահմանումը և կիրառումը պետք է կանոնակարգված լինի օրենքով:

Կարծում ենք, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսել անվտանգության այնպիսի միջոցներ, որոնք կարող են կիրառվել հանցանք կատարած անձին, հատկապես անչափահասին, քրեական պատասխանատվության ենթարկելիս: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում առաջարկվում է որպես այդպիսին նախատեսել որոշակի վայրեր այցելելու արգելքը, հոգեբանական օգնություն ստանալու պարտականությունը, կրթական, մշակութային, մարզական կամ այլ վերականգնողական ծրագրերին ներգրավվելը: ՀՀ քրեական օրենսգրքում դրանց նախատեսումը հնարավորություն կտա դատարանին առավելագույնս ապահովել քրեական պատասխանատվության և պատժի անհատականացումը, հանցանք կատարած անձի նկատմամբ ապահովել պետության համարժեք և համաչափ արձագանք:

Իհարկե, անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելու գործընթացում ամենակարևոր և պատասխանատու որոշումներից մեկը երեխայի կողմից կատարված հանցագործությանն արձագանքելու գործուն և առավելագույնս «երեխայի լավագույն շահերից» բխող միջոցի ընտրությունն է, անհրաժեշտության դեպքում՝ պատժի նշանակումը: Նման որոշման կայացումը բավականին բարդ է, քանի որ մի կողմից առկա է հանցանք կատարած երեխա, ում վարքագիծը մեծապես պայմանավորված է տարիքային առանձնահատկություններից բխող իրողությամբ, և առկա է մտահոգություն, որ քրեաիրավական ներգործության միջոցների կիրառումը կարող է անդառնալիորեն և բացասաբար անդրադառնալ նրա հետագա կյանքի վրա, մյուս կողմից՝ կատարված հանցագործությամբ խախտվել են այլ անձի իրավունքները, հասարակության կամ պետության շահերը, և դրան չարձագանքելը երեխայի մոտ կարող է ձևավորել անպատժելիության զգացում՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Ուստի, իրավասու մարմնի առաջնային խնդիրը պետք է լինի կատարված արարքին տալ համաչափ պատասխան, ընտրել պատժի կամ քրեաիրավական ներգործության այնպիսի տեսակ, որը հանցանք կատարած

¹²⁰ Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), ընդունվել է 14.12.1990:

անչափահասի համար կլինի իմաստավորված, կապահովի հասարակությունում նրա վերաինտեգրումը, վերասոցիալականացումը և նոր հանցագործությունների կանխարգելումը:

Երեխայի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց նշանակելու սկզբունքները առավել մանրամասն սահմանված են Պեկինյան կանոնների (3) կետ 17.1-ում, որը սահմանում է՝

ա) ներգործության միջոցները միշտ պետք է համարժեք լինեն ոչ միայն իրավախախտման հանգամանքներին և ծանրությանը, այլև անչափահասի դրությանը և կարիքներին, ինչպես նաև հասարակության պահանջներին,

բ) անչափահասի անձնական ազատության սահմանափակման մասին որոշումը պետք է ընդունվի միայն հարցի մանրազնին քննարկումից հետո, և սահմանափակումը պետք է հասցնել հնարավոր նվազագույնի,

գ) անչափահաս իրավախախտին պետք չէ զրկել ազատությունից, եթե միայն նա մեղավոր չի ճանաչվում այլ անձի դեմ բռնությամբ լուրջ արարք գործելու կամ լուրջ իրավախախտումներ բազմիցս կատարելու մեջ, և եթե առկա չէ արձագանքման այլ համապատասխան միջոց,

դ) անչափահասի գործի քննության ժամանակ նրա բարեկեցության հարցը պետք է որոշիչ գործոն լինի:

Անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս առանձնահատուկ են նաև այն նպատակները, որոնց պետք է ձգտի իրավասու մարմինը: Մասնավորապես, Պեկինյան կանոնների կետ 5.1-ի համաձայն՝ «...անչափահասների գործերով արդարադատության համակարգը պետք է հատկապես կարևորի անչափահասի բարեկեցությունը և ապահովի, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ կիրառվող ցանկացած միջոց միշտ համարժեք լինի թե՛ իրավախախտի առանձնահատկություններին, թե՛ իրավախախտման հանգամանքներին»: Ներկայացված դրույթից հետևում է, որ անչափահասների գործերով արդարադատություն իրականացնելիս պետք է երաշխավորվեն՝

- 1) անչափահասի բարեկեցությունը ապահովելու նպատակը, ինչը ենթադրում է՝ խուսափել զուտ պատժիչ ներգործությունից, հանցագործությանն

արձագանքելիս նշանակել այնպիսի քրեաիրավական ներգործության միջոցներ, որոնք կապահովեն հանցանք կատարած անչափահասի կարիքները, կերաշխավորեն «երեխայի լավագույն շահից» գործելու պահանջը:

- 2) «Համաչափության սկզբունքի» ապահովման նպատակը, ինչը ենթադրում է կատարվածին՝ իրավախախտման ծանրությանը, բնույթին, հանցանք կատարած անձի առանձնահատկություններին (առողջական, սոցիալական վիճակին, մտավոր զարգացման, հասունության աստիճանին, ընտանեկան հանգամանքներին, կյանքի պայմաններին և այլն), հանցագործությունից հետո դրսևորած վարքագծին (օրինակ՝ պատճառված վնասը հարթելը կամ հատուցելը) համաչափ արձագանքի երաշխավորում:

Այս նպատակները, թեև փոքր-ինչ վերացական և անորոշ կերպով, ամրագրում են գտել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 90-ի 1-ին մասում, որի համաձայն՝ «անչափահասի նկատմամբ պատիժ նշանակելիս հաշվի են առնվում նրա կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց վրա այլ անձանց ազդեցությունը...»:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանները հաճախ անտեսում են այն միկրոմիջավայրի, օրինակ՝ ռեֆերենտային խմբերի ուսումնասիրությունը, որի հետ անչափահասն անմիջական և անընդհատ շփում է ունենում¹²¹: Մինչդեռ նման գործոնների ուսումնասիրությունը խիստ կարևոր է ոչ միայն նրա հանցավոր վարքի պատճառական մեխանիզմը վեր հանելու, այլև նրա հետագա հնարավոր հանցավոր վարքագիծը կանխելու համար:

Անչափահասի կողմից կատարված հանցանքը քննելիս երեխայի լավագույն շահից բխող որոշում կայացնելու համար դատարանը պետք է ամբողջական տեղեկատվություն ունենա երեխայի, նրա սոցիալական կարգավիճակը, կարիքները բնութագրող հանգամանքների, ինչպես նաև ՀՀ-ում հասանելի, հանցանք կատարած

¹²¹St' u **Долматов А. О.** Обстоятельства, характеризующие условия жизни и воспитания несовершеннолетних, совершивших преступления, подлежащие учету при назначении наказания. Вестник Томского государственного университета. Право. 2014. № 2 (12), էջեր 54-58:

երեխաների համար նախատեսված վերականգնողական, կրթական բնույթի ծրագրերի մասին: Երեխայի վերաբերյալ տեղեկատվությունը դատարանը կարող է ստանալ անչափահասի ծնողներից, հարևաններից, ընկերներից, ուսուցիչներից կամ այլ անձանցից ու մարմիններից: Ճիշտ կլիներ, որ դատարանը չբավարարվեր միայն իր ձեռք բերած նյութերով, այլ զուգակցեր հատուկ մասնագետի (օրինակ՝ պրոբացիոն ծառայության աշխատակցի) կողմից անչափահասի վերաբերյալ պատրաստված զեկույցով, որը թույլ կտար առավել հավաստի ներկայացնել անչափահասի հոգեբանական բնութագիրը, նրան բնութագրող բոլոր առանձնահատկություններն ու կարիքները: Ցավոք, ներկայումս համապատասխան կանոնակարգումների բացակայության պատճառով, ՀՀ-ում նման պրակտիկա չի գործում:

Թեև անչափահասի նկատմամբ պատիժ կամ քրեաիրավական արձագանքման այլ միջոց ընտրելու հարցը առանցքային նշանակություն ունի, այնուհանդերձ, ոչ պակաս կարևորություն ունի այն հարցի պարզաբանումը, թե որքանով է նշանակված պատիժը եղել արդյունավետ:

ՀՀ-ում, ինչպես արդեն նշվել է, անչափահասների հանդեպ առավելապես կիրառվում է ազատազրկում պատժատեսակը, որի իրականացումը ապահովվում է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում: ՀՀ քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված վիճակագրական տվյալների համաձայն՝ այդ քրեակատարողական հիմնարկում պահվող անչափահասների քանակը 2004 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ եղել է 31, իսկ 2016 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ՝ 10 անձ:

Կրիմինալոգիական գրականության մեջ բազմիցս բարձրաձայնվել է, որ ազատազրկումը, հասարակությունից երեխաներին հարաբերականորեն երկար ժամանակով մեկուսացնելը, շատ քիչ դեպքերում է հանգեցնում նրա նկատմամբ կիրառված պատժի նպատակների իրականացման¹²², ավելին՝ ունենում է լրիվ հակառակ ազդեցությունը. այդ երեխաները սոցիալական ցուցանիշներով հետ են մնում իրենց հասակակիցներից, կորցնում են հանրորեն օգտակար կապերը՝

¹²² Տե՛ս *Казакова Д. В.* Несовершеннолетние преступницы, лишённые свободы, и пред упреждение их преступного поведения: Диссертация на соискание ученой степени кандидат юридических наук. М., 2008, էջ 30; *Иголкина К.П.* Социологическая характеристика особенностей отбывания уголовного наказания несовершеннолетними подростками. Конфликтология. 2015. Т. 3. էջ 194-199:

փոխարենը ձեռք բերելով քրեական աշխարհի ներկայացուցիչ ընկերներ, հայտնվում են օտարվածության վիճակում:

Քրեակատարողական հիմնարկներում երեխաների պահվելուն ներկայացվող պահանջները սահմանվում են ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ մի շարք միջազգային ակտերով՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններով¹²³, Բանգկոկյան կանոններով¹²⁴, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2006)2 հանձնարարականով՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ¹²⁵ և այլն: Այդ հարցերը առավելագույն մանրամասնությամբ ներկայացված են Հավանայի կանոններում¹²⁶:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքում արտացոլված է անչափահասներին չափահասներից անջատ պահելու պահանջը, սակայն դա գործնականում հնարավոր չէ իրականացնել, օրինակ, իգական սեռի անչափահաս դատապարտյալների պարագայում: Մինչդեռ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան¹²⁷(5) սահմանում է, որ «...ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ երեխայի լավագույն շահերից ելնելով՝ հարկավոր չէ այդ անել և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ նամակագրության և տեսակցությունների միջոցով՝ բացառությամբ հատուկ հանգամանքների»:

Անչափահասների նկատմամբ ազատագրվում պատժատեսակի կիրառման գործընթացում ուշադրության են բազմաթիվ գործոններ. նրանց պահելու կենցաղային պայմանները, սննդի որակը, տեսակցությունների քանակն ու հաճախականությունը և այլն, սակայն ավելի կարևոր է այն, թե ինչ աշխատանք է իրականացվում անչափահաս

¹²³ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ), ընդունվել է 30.08.1955:

¹²⁴ Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Բանգկոկյան կանոններ), ընդունվել է 06.10.2010:

¹²⁵ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2006)2 հանձնարարական անդամ երկրներին՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ

¹²⁶ Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ (Հավանայի կանոններ), ընդունվել է 14.12.1990:

¹²⁷ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ընդունված 20.11.1989, ՀՀ-ն վավերացրել է 22.06.1993:

դատապարտյալների հետ՝ հասարակությունում նրանց հետագա վերաինտեգրումը ապահովելու նպատակով:

Այդ գործընթացում, առաջին հերթին, կարևորվում է այն անձանց շրջանակը, ովքեր անմիջականորեն շփվում են անչափահասների հետ, իրենց ամենօրյա վարքագծով օրինակ հանդիսանում երեխաների համար: Խոսքը, բնականաբար ՀՀ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների մասին է, որոնց շրջանում, ցավոք, քիչ թիվ են կազմում երեխաների հոգեբանության առանձնահատկություններին տիրապետող, ազատությունից զրկված երեխաների կարիքները և իրավունքների շրջանակը հստակ պատկերացնող անձինք¹²⁸:

Պատահական չէ, որ քրեակատարողական հիմնարկներում նախատեսված է հոգեբանի հաստիք, որը, սակայն, առաջարկվող ցածր աշխատավարձի պարագայում, մեծամասամբ կա՛մ թափուր է մնում, կա՛մ լրացվում ավելի բարձր վարձատրվող աշխատանքի համար անհրաժեշտ որակավորում չունեցող կադրերով:

Մասնավորապես, 2012 թ.-ին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում անցկացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ Աբովյան» քրեակատարողական հիմնարկում թե երեխաներին և թե կանանց սպասարկել է ընդամենը մեկ հոգեբան, մեկ սոցիալական աշխատող և մեկ իրավաբան: Նրանք աշխատել են գերծանրաբեռնվածությամբ, անբարենպաստ աշխատանքային պայմաններում՝ չկահավորված, չջեռուցվող սենյակներում, անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների բացակայության, ցածր աշխատավարձի պարագայում¹²⁹:

Մինչդեռ, քրեակատարողական հիմնարկում գտնող, արդեն իսկ պետության կողմից «դատապարտյալի» խարան ստացած, անձնային տարաբնույթ բարդույթներ ունեցող անչափահասների համար ավելի սուր է թե որակյալ հոգեբանական աջակցություն ստանալու և թե մարդկային նորմալ, մարդասիրական վերաբերմունքի արժանանալու կարիքը:

¹²⁸ Տե՛ս *Тумохов Е.В.* Основные направления профилактики преступлений, совершаемых несовершеннолетними в воспитательных колониях. Человек: преступление и наказание. 2010. № 3. էջ 64-65:

¹²⁹ Տե՛ս Անչափահասների քրեակատարողական հիմնարկում խնդիրները շատ են, 29.10.2002, <http://hra.am/hy/position/2012/11/29/juvenile>

Իհարկե, այդ բացը պետությունը մասնակիորեն փորձում է լրացնել, ընտանիքի և սոցիալական միջավայրի հետ կապը պահպանել անչափահաս դատապարտյալներին կարճատև և երկարատև տեսակցություններ տրամադրելու միջոցով, սակայն այդ տեսակցությունները կրում են թեկուզ պարբերական, սակայն կարճատև բնույթ (կարճատև տեսակցության տևողությունը 4 ժամ է, իսկ երկարատև տեսակցությանը՝ 3 օր)¹³⁰, հետևաբար չեն կարող իրականացնել այն նույն կանխարգելիչ գործառույթը, որն անհրաժեշտ է անչափահաս դատապարտյալի անձնային խնդիրները լուծելու, իրավահպատակ վարքագիծ ձևավորելու և հասարակությունում վերասոցիալականացման համար:

Առանձին կարևորություն ունի քրեակատարողական հիմնարկներում գտնվող անչափահասների ուսման, աշխատանքի և ազատ ժամանցի կազմակերպման հարցը:

ՀՀ Քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում ազատազրկման ձևով պատիժ կրող անչափահասների համար ապահովվում է միջնակարգ կրթությունը, ինչպես նաև հեռահար տարբերակով բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը. 2012-2013 և 2013-2014 թթ.-ին նման հնարավորությունից օգտվել են մեկական, 2014-2015 թթ.-ին՝ 2 անչափահաս դատապարտյալներ:

Այնուհանդերձ, 2012 թ.-ին «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում անցկացված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գործել է հատուկ դպրոցի կարգավիճակ ունեցող կրթահամալիր՝ 7 մանկավարժով, որոնցից 2-ը դասավանդել են 3-ական առարկա, հետևաբար դժվար է խոսել առաջարկվող կրթության բարձր որակի մասին, ինչի վկայությունն է այն, որ երեխաների մի մասի մոտ նույնիսկ տառաճանաչության խնդիր է եղել: Դպրոցը ապահովված չի եղել գրքերով և գրենական պիտույքներով¹³¹:

¹³⁰ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ընդունվել է 24.12.2004 թ.:

¹³¹ Տե՛ս Անչափահասների քրեակատարողական հիմնարկում խնդիրները շատ են, 29.10.2002, <http://hra.am/hy/position/2012/11/29/juvenile>

Նման պարագայում ակնհայտ է անչափահասների քրեակատարողական հիմնարկում կրթության նկատմամբ պատշաճ ուշադրության բացակայությունը, ինչը անմիջական պետական միջամտության անհրաժեշտության մասին է վկայում: Որպես կրթություն ստանալու մոտիվացիա՝ պետք է նախատեսել կրթության մեջ առավելագույն հաջողություններ հասած անչափահաս դատապարտյալների խրախուսում՝ օրինակ՝ քրեակատարողական հիմնարկից լրացուցիչ կարճատև մեկնում կամ կարճատև կամ երկարատև տեսակցություն տրամադրելով:

Միաժամանակ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, թե «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գտնվող անչափահասների հետ ինչ վերականգնողական ծրագրեր են իրականացվել և վերջիններս ի՞նչ ակտիվություն են դրսևորել դրանց մասնակցելու առումով:

ՀՀ Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ եթե 2003 թ.-ին նման ծրագրերին մասնակցության ցուցանիշը 35.5% է, ապա հաջորդող տարիներին՝ բացառությամբ 2014-2015 թթ., ներկայացված ցուցանիշը կտրուկ բարձրացել է, ինչը ենթադրում է, որ նույն անչափահասը մասնակցել է մի քանի միջոցառման:

Մասնավորապես՝ 2003-2004 թթ.-ին «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գտնվող 31 անչափահաս դատապարտյալներից միայն 11-ն է մասնակցել վերականգնողական միջոցառումների, 2004-2005 թթ.-ին՝ 39 անչափահաս մասնակցել են արդեն 42 միջոցառման, 2005-2006 թթ.-ին՝ 36 անչափահաս մասնակցել է 81 միջոցառման, 2006-2007 թ.-ին՝ 37 անչափահաս՝ 79 միջոցառման, սակայն վերջին տարիներին նկատվել է նման մասնակցության հարաբերականորեն պասիվացում՝ 2013-2014 թթ.-ին 12 անչափահաս-դատապարտյալները մասնակցել են 30, 2014-2015 թթ.-ին՝ 13 դատապարտյալները՝ ընդամենը 7 միջոցառման:

Առավել հետաքրքիր էր հասկանալ իրականացված միջոցառումների բնույթը, ինչն էլ ներկայացված է աղյուսակ 39-ում՝

Աղյուսակ 39. Անչափահաս դատապարտյալների մասնակցությունը վերականգնողական ծրագրերին

	հյուն ատաղձագործներ	տրակտորիստ	ռադիո	գյուղատնտեսական	նկարչություն, կավագործություն, փայտի փորագրում	մշակութային	մարզական
2002-2003	–	17	12	–	–	–	–
2003-2004	–	11	–	–	–	–	–
2004-2005	15	14	13	–	–	–	–
2005-2006	10	8	8	–	12	23	20
2006-2007	10	8	6	–	14	25	16
2007-2008	9	10	–	–	10	23	24
2008-2009	9	–	8	10	13	23	16
2009-2010	10	–	10	10	10	23	22
2010-2011	10	–	–	10	9	21	17
2011-2012	9	–	–	9	9	20	19
2012-2013	10	–	10	8	7	8	8
2013-2014	–	–	10	–	7	7	6
2014-2015	–	–	–	–	7		

Ակնհայտ է, որ անչափահասների քրեակատարողական հիմնարկում առաջարկվող միջոցառումները թե՛ քանակով, թե՛ առաջարկվող ոլորտների շրջանակով չեն կարող բավարար գնահատվել՝ անչափահաս դատապարտյալի ինչպես վերասոցիալականացման, այնպես էլ հետագայում ազատության մեջ հայտնվելու պարագայում՝ զբաղվածության հարցը հաջողությամբ լուծելու առումով, հատկապես եթե նկատի ունենանք, որ վերջին տարիներին նկատվում է նույնիսկ դրանց նվազում:

Մինչդեռ, քրեակատարողական հիմնարկում պետք է հատուկ ուշադրություն դարձվի դատապարտյալների օրվա հագեցվածության ապահովմանը:

Կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ ծանձրոյթն ունի հանցավոր կամ շեղվող վարքագիծը դետերմինացնող ազդեցություն ¹³², որի դրսևորումներից է թմրանյութերի գործածումը: Միաժամանակ, պետության կողմից քրեակատարողական հիմնարկում գտնվող երեխայի ազատ ժամանակի չկանոնակարգումը, ժամանցի չկազմակերպումը մեկ այլ՝ քրեական ենթամշակույթի տարածման, դրա մշտական մասնակիցը դառնալու վտանգ է պարունակում:

Անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու առումով կարևոր նշանակություն ունի նրանց նկատմամբ ոչ միայն քրեական պատասխանատվության և պատիժների կիրառումն ու իրականացումը, այլ դրանցից ազատվելու մեխանիզմների հստակեցումը:

ՀՀ գործող քրեական օրենսդրությունը հնարավորություն է տալիս հանցանք կատարած և պատիժը կրող անչափահասին պայմանական-վաղաժամկետ ազատել պատժի կրումից:

ՀՀ քրեակատարողական ծառայությունից տրամադրված նյութերը վկայում են, որ 2013-2015 թթ.-ին, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող և ոչ մի անչափահաս պատժից պայմանական-վաղաժամկետ չի ազատվել: Ընդ որում, անչափահասների տոկոսային հարաբերակցությունը պատժից պայմանական-վաղաժամկետ ազատված անձանց զանգվածում միշտ էլ փոքր է եղել (2003 թ.-ին 2,5%, 2010 թ.-ին 1,5%, 2015 թ.-ին՝ 0%), թերևս պայմանավորված նրանով, որ ազատազրկման ձևով պատիժ իրականում կրել են ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած երեխաները: Ամենայն հավանականությամբ, այս երեխաների մեծ մասը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման իրավունք ձեռք է բերել արդեն չափահասների քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելուց հետո, հետևաբար դա չի արտացոլվել ՀՀ Քրեակատարողական ծառայության կողմից ներկայացված ցուցանիշներում: Մյուս կողմից՝ ՀՀ-ում, պատժից պայմանական

¹³² Ст'я **Коледжа И.В.** Факторы формирования девиантного поведения в молодежной среде. Труды БГТУ. №8. Учебно-методическая работа. 2009. № 8. էջ 159.; **Ашун А.А.** Значение психологических особенностей личности в процессе исправления несовершеннолетних осужденных. Вестник Владимирского юридического института. 2007. № 2. էջ 40-43:

վաղաժամկետ ազատման ներկայիս՝ մասնակցության երեք օղակ ենթադրող համակարգի պարագայում՝ «Քրեակատարողական հիմնարկ-Անկախ հանձնաժողով-Դատարան» պատժից պայմանական վաղաժամկետ ազատվող անձանց թիվը մոտեցել է 0-ի՝ պայմանավորված Անկախ հանձնաժողովի կողմից, իրենց գործառույթների իրականացման, լիազորությունների սահմանի հստակեցման բացակայության պարագայում, դատապարտյալների ազատման վերաբերյալ միջնորդագրերը զանգվածաբար մերժելով:

Մինչդեռ, դատապարտյալի հետ աշխատանքի կարևորագույն օղակներից մեկը պրոբացիոն գործառույթներ իրականացնող մարմնի աշխատանքն է: ՀՀ-ում այն ստեղծվել է 2016 թ.-ի մայիսին՝ ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի հենքի վրա: Հիմնական խնդիրները, որոնք ներկայումս առկա են պրոբացիոն ծառայության ոլորտում՝ պրոֆեսիոնալ կադրերով դրա համալրման անհրաժեշտությունն է և դատապարտյալների աջակցությանն ուղղված ռեսուրսների պակասը:

Պրոբացիոն ծառայությունը ներկայումս աշխատում է այն անչափահաս դատապարտյալների հետ, ովքեր դատապարտվել են ազատազրկման հետ չկապված պատիժների կամ ում նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Այնուհանդերձ, պրոբացիոն ծառայության աշխատակիցների ծանրաբեռնվածության, դատապարտյալների կարիքների բավարարմանն ուղղված ռեսուրսների խիստ սահմանափակության, ինչպես նաև դատապարտյալների կողմից պրոբացիայի պահանջները խախտելու պարագայում նրանց նկատմամբ ներգործություն իրականացնելու՝ պրոբացիոն ծառայության լծակների բացակայության կամ ոչ հստակ կանոնակարգման պարագայում, այդ աշխատանքը դեռևս արդյունավետ չէ:

Անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու առումով առանձին խնդիր է ՀՀ-ում անչափահասների կողմից դրսևորված հանցավոր վարքագծին արձագանքելու այլընտրանքային մեխանիզմների (diversion) սակավությունը կամ դրանց ոչ հստակ կանոնակարգումը: 2006 թ.-ին միջազգային ֆինանսավորմամբ ՀՀ-ում՝ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերի մեծ մասում, ստեղծվեցին

համայնքային վերականգնողական կենտրոններ, որոնց գործունեությունը ենթադրում էր ուստիկանության ուշադրության կենտրոնում հայտնված կամ իրավախախտում կատարած անչափահասների հետ հոգեբանական, հասարակության մեջ վերաինտեգրում ապահովող գործունեության իրականացում, սակայն 2014 թ.-ից դրանց մեծ մասը դադարեցրեց գործունեությունը՝ ֆինանսավորման դադարեցման հետևանքով, թեև պետական մակարդակով ևս հաստատվել էր դրա բարձր արդյունավետությունը¹³³:

Եվրոպական երկրներում անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու այլընտրանքային մեխանիզմների շարքին են դասվում, օրինակ, նախազգուշացումը, նկատողությունը, մեղիացիան և այլն: ՀՀ-ում այն դրսևորվում է գործուն զղջալու, իրադրության փոփոխության, քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու, տուժողի հետ հաշտության հիմքերով, համաներման ուժով անձին քրեական պատասխանատվությունից ազատելով: Այնուհանդերձ, նման կարգավորումը ևս ունի սահմանափակում, քանի որ ներկայացված միջոցներից երեքի կիրառությունը վերաբերում է միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններին: ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 72-ի և 74-ի մեկնաբանությունից հետևում է, որ գործուն զղջալու, ինչպես նաև իրադրության փոփոխման հիմքով քրեական պատասխանատվությունից ազատել հնարավոր է միայն առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձին: Գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատում այլ հանցագործությունների պարագայում թույլատրվում է, եթե նման հնարավորություն, խրախուսական նորմի տեսքով, հատուկ նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում: Տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատում թույլատրվում է միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու դեպքում, ընդ որում, ընթացակարգային առումով նույնիսկ հստակ կանոնակարգված չէ այս գործընթացին անչափահասի անմիջական մասնակցության հնարավորությունը:

¹³³ Տե՛ս Անչափահաս իրավախախտների վերականգնողական կենտրոնները պետական աջակցության կարիք ունեն, 12.03.2014, <http://www.media-center.am/hy/1394628805>:

Հետևաբար, անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի կանխարգելման նպատակով առանձին կարևորություն ունի ՀՀ քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության վերանայումը՝ առավելապես երեխայի շահերը, կարիքները հաշվի առնող կանոնակարգումներ նախատեսելու նպատակով:

Անչափահասների հանցավորությանը արձագանքելու առումով կարևոր նշանակություն ունի նաև իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը և հատկապես վստահության պակասը նրանց նկատմամբ:

Առաջին խնդիրը, որն առկա է իրավապահ մարմիններում, անչափահասների արդարադատության առանձնահատկություններին տիրապետող, երեխաների տարիքային հոգեբանությանը տիրապետող և նրան հետ շփման կարողություններ ունեցող կադրերի պակասն է: Թերևս միակ բացառությունը ՀՀ Ոստիկանության Քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով բաժինն է, որտեղ աշխատակիցները պարբերաբար վերապատրաստումներ են անցնում անչափահասների արդարադատության հիմնախնդիրներով:

Նշված ստորաբաժանումը մինչև մեկ տարի ժամկետով հաշվառման է վերցնում 11-14 տարեկան այն երեխաներին, ովքեր շեղվող կամ հանցավոր վարքագիծ են դրսևորում՝ այդ թվում՝ ալկոհոլային խմիչքներ չարաշահում, մոլեխաղերով, թափառաշրջիկությամբ կամ մուրացկանությամբ զբաղվում, տանից փախչում: Այնուհանդերձ, հաշվառման վերցված երեխաների հետ ոչ միշտ է արդյունավետ կանխարգելիչ գործունեություն իրականացվում, նրան իրական օգնություն, հոգեբանական, մանկավարժական աջակցություն չի ցուցաբերվում, այլ նրա նկատմամբ պարզապես հսկողություն է սահմանվում: Այս առումով, առավել արդյունավետ կլինեին ՀՀ ոստիկանության և երեխաների հետ վերականգնողական աշխատանքներ իրականացնող կառույցների, հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության խորացումը, ինչը ոստիկանությանը թույլ կտար հաշվառման վերցված երեխաներին ուղղորդել նման կառույցներ:

Այնուհանդերձ, անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծին ուստիկանության գործունեությունը չի սահմանափակվում միայն ՀՀ Ոստիկանության Քրեական հետախուզության գլխավոր վարչության անչափահասների գործերով բաժնի գործունեությամբ, այլ այդ ոլորտում իրենց գործառույթներն ունեն նաև համայնքային ոստիկանները, հասարակական կարգի պահպանության, քրեական հետախուզության վարչության աշխատակիցները, որոնք պետք է հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման առումով կրիմինոգեն նշանակություն ունեցող գործոնների հայտնաբերմանն ու չեզոքացմանը: Դա, առաջին հերթին, ենթադրում է այն ընտանիքների հայտնաբերում, նրանց հետ կանխարգելիչ աշխատանքի իրականացում, որտեղ առկա բարոյահոգեբանական մթնոլորտը, ընտանիքի անդամների վարքագծային առանձնահատկությունները անբարենպաստ կանխատեսման հիմք են, ինչպես նաև շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների հայտնաբերում, նրանց հետ դաստիարակչական կանխարգելիչ աշխատանքի իրականացում:

Այնուհանդերձ, անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի կանխարգելման առումով իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունը կապված է նաև այդ մարմինների հանդեպ անչափահասի տրամադրվածությունից և վստահության մակարդակից:

Մեր կողմից 2014 թ.-ին իրականացված ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում երեխաներին առաջարկվեց պատասխանել հարցերի շրջանակի, որոնք վերաբերում էին իրավապահ մարմինների, մասնավորապես ոստիկանության հետ իրենց առնչությանը և նրանց հանդեպ վերաբերմունքին:

Հարցվածների միայն 2,1%-ն է նշել, որ երբևէ առնչվել է ոստիկանությանը, ընդ որում՝ 1,7%-ը վերջին 1 տարվա ընթացքում: Երեխայի շեղվող վարքագծի մասին ոստիկանությունը հիմնականում՝ 42,1% դեպքերում տեղեկացրել է երեխայի ծնողներին, 15,8% դեպքերում կիրառել նախազգուշացում: Մյուսները նշել են, որ ոստիկանությունը ոչինչ էլ չի արել: Հարցվածների միայն 19,4%-ն է նշել, որ ոստիկանության հետ առնչության ժամանակ ոստիկանությունը իրեն բացատրել է, թե ինչու՞մ է դրսևորվել իր սխալը, մյուսները նշել են, որ ոստիկանությունը որևէ պարզաբանում չի տվել:

Մինչդեռ ոստիկանության կանխարգելիչ գործառույթը, առաջին հերթին, ենթադրում է երեխային՝ իր կողմից կատարված արարքի հակահրավակականության, հանրային վտանգավորության պարզաբանում: Հաճախ, բարոյախրատական հոգեբանորեն ճիշտ կառուցված ներգործությունը շատ ավելի ազդեցիկ է, քան ամենախիստ պատժի կիրառումը:

Միաժամանակ, հարցվածների 15,8%-ը նշել է, որ իրենց և ոստիկանության աշխատակիցների պատկերացումները երևույթի ճիշտ կամ սխալ լինելու վերաբերյալ տարբեր են, հարցվածների 84,2%-ը այդ հարցի շուրջ միանշանակ դիրքորոշում չի ունեցել: Մի կողմից, չի բացառվում, որ ոստիկանների կողմից դրսևորված սուբյեկտիվիզմը, օրենքի հայեցողական կիրառման հնարավորությունն է երեխաների մոտ նման տպավորություն ստեղծել, մյուս կողմից՝ երեխաների մի մասի վրա իր անմիջական ազդեցությունն ունի նաև «գողական աշխարհի ռոմանտիզմով» հետաքրքրվելը, դրա լույսի ներքո երևույթները «ճիշտ» կամ «սխալ» դիտարկելը, «գողական աշխարհի օրենքներով» կենսակերպ վարելու, «լավ տղա», «ճիշտ տղա» կարգավիճակ ձեռք բերելու ձգտումը, ինչը ենթադրում է իրավապահ մարմիններին տեղեկատվություն չտալ, նրանց հետ չհամագործակցել: Պատահական չէ, որ հարցված երեխաների միայն 56,5%-ը նշել է, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ է օգնել ոստիկանությանը, 13,6%-ը վճռականորեն դեմ է արտահայտվել նման հնարավորությանը, իսկ 29,9%-ը չեզոք դիրքորոշում է դրսևորել:

Հարցվածների 25,1%-ը նշել է, որ ոստիկանները արդարության պահապան են, մինչդեռ 8,7%-ը նշել է, որ ոստիկանները ընդհանրապես արդարության չեն հետևում: Ոստիկանության հետ առնչություն ունեցած անչափահասների 9,2%-ը նշել է, որ ոստիկանները իրենց հանդեպ հարգալից չեն եղել, 24,1%-ը է նշել, որ հարգալից են եղել, 66,7%-ը միանշանակ դիրքորոշում չի ունեցել:

Արտահայտված պատասխանները վկայում են ոստիկանության նկատմամբ երեխաների վստահության պակասի մասին, ինչը կարող է բացատրվել մի քանի գործոնով. նախ, ոստիկանության հանդեպ վստահությունը ցածր է ոչ միայն

անչափահասների, այլն՝ ՀՀ ամբողջ բնակչության շրջանում¹³⁴, հետևաբար հնարավոր է, որ երեխաները իրենց դիրքորոշումը ձևավորել են չափահասների շրջանում տարածում ստացած դիրքորոշման հիման վրա: Բացի այդ, վստահության ցածր մակարդակի պատճառ կարող է լինել երեխաների անձնական փորձն ու դիտարկումը՝ կապված ոստիկանության սուբյեկտիվիզմի, գործունեության անարդյունավետության, լիազորությունների չարաշահման հետ: Միաժամանակ, երեխաներին բնորոշ է ցանկացած տեսակի իշխանությանը, այդ թվում պետական, իրավապահ մարմիններին հակադրվելը. երեխաները դրանով ձգտում են ցույց տալ իրենց անկախությունը, խիզախությունը, ինքնուրույնությունը, ինչը ևս կարևոր է հաշվի առնել իրավապահ մարմինների նկատմամբ երեխաների բացասական դիրքորոշման պատճառները հասկանալու համար¹³⁵:

Անչափահասների հանցավորությանը արձագանքելու գործընթացում կարևոր խնդիր է նաև իրավապահ մարմինների, և հատկապես՝ ոստիկանության գործունեության արդյունավետությունը. աշխատակիցների հոսունության հետևանքով առաջացած կադրային պակասը, աշխատակիցների գերծանրաբեռնվածությունը, մասնագիտական պատրաստվածության ոլորտում առկա թերացումները, շարքային ոստիկանների ցածր աշխատավարձն ու սոցիալական ապահովվածության ոչ բավարար մակարդակը, իրավապահ մարմինների նյութատեխնիկական թերհագեցվածությունը, համակարգում առկա կոռուպցիան և դրա միջոցով պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունը թույլ չեն տալիս խոսել հանցավորությանը հակազդելու ոլորտում իրավապահ մարմինների գործունեության բարձր արդյունավետության մասին:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ՝

1. Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի կանխարգելման, դրան արդյունավետորեն արձագանքելու համար հրատապ է ՀՀ գործող քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության վերանայումը՝ առավելապես երեխայի շահերը, կարիքները հաշվի առնող, միջազգային

¹³⁴ Armenia Corruption Report, 2016, <http://www.business-anti-corruption.com/country-profiles/armenia>, 20.11.2017, 16.08:

¹³⁵ Տե՛ս *Dirikx A., Gelders D., Parmentier S.* Police-youth relationships: A qualitative analysis of adolescent's attitudes towards police. European Journal of Criminology 2012, Volume 9, number 2, էջ 198:

փաստաթղթերի պահանջներին համահունչ կանոնակարգումներ և ընթացակարգեր նախատեսելու, անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի, քրեաիրավական արձագանքման այլ միջոցների համակարգը իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով և քրեաիրավական ներգործության այլ միջոցներով համալրելու նպատակով:

2. ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել անչափահասների արդարադատության պահանջները արտացոլող ինստիտուցիոնալ համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների տարիքային առանձնահատկություններին տիրապետող, նրանց իրավունքների շրջանակը հստակ պատկերացնող կադրերի, մասնավորապես՝ դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, քրեակատարողական հիմնարկների, պրոբացիոն ծառայության աշխատակիցների ընտրությանը, անհրաժեշտության դեպքում՝ պատրաստմանն ու վերապատրաստմանը:

3. Անչափահասների շրջանում նկատվում է վստահության պակաս իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության նկատմամբ, հետևաբար միջոցառումներ պետք է ձեռնարկվեն երեխաների և ընդհանուր բնակչության շրջանում իրավապահ մարմինների հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:

4.2.Անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ

ՀՀ-ում անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի ներկային վիճակի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրա մակարդակի նվազումը մոտ ապագայում իրատեսական չէ: Այնուհանդերձ, անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողության սահմանումը հույժ անհրաժեշտ խնդիր է, ուստի անհրաժեշտ է մշակել միջոցառումների շրջանակ, որոնք թույլ կտան նվազեցնել անչափահասների հանցավորությունը դետերմինացնող գործոնների բացասական ազդեցությունը և կանխարգելիչ գործառույթ կիրականացնեն:

Պատահական չէ, որ հանցավորության կանխարգելումը դիտվում է որպես դեռևս հանցանք չկատարած, սակայն նման արարք կատարելու բարձր հավանականություն ունեցող անձի վարքագիծը դետերմինացնող գործոնների չեզոքացմանն ուղղված գործունեություն¹³⁶: Հետևաբար, անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի կանխարգելման նպատակով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սոցիալ-տնտեսական այն խնդիրների նվազեցմանը, որոնք ուղղակիորեն կամ միջնորդավորվելով ընտանիքի, դպրոցի, միկրոմիջավայրի կողմից իրենց կործանարար ազդեցությունն են ունենում երեխայի վրա, հանգեցնում նրա կողմից շեղվող կամ հանցավոր վարքագծի դրսևորման:

Անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու առաջնային քայլերը վերաբերում են կանխարգելման ընդհանուր սոցիալական միջոցառումների մշակմանը, որոնք պետք է ներառեն, բայց չսահմանափակվեն ընտանիքի սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելով, անչափահասների շրջանում գործազրկությունը նվազեցնելով, հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտը առողջացնելով, կոռուպցիայի մակարդակը նվազեցնելով, հոգեկան, նյարդաբանական խնդիրներ ունեցող անձանց բուժօգնության ցուցաբերելով:

¹³⁶ Ст'ю **Закалюк А. П.** Прогнозирование и предупреждение индивидуального преступного поведения. М., Юридическая литература, 1996, էջ 21:

1. Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում անչափահասների շրջանում գրանցվել է աղքատության և գործազրկության բարձր մակարդակ, որը գնալով աճում է. մանկական աղքատության մակարդակը 2015 թ.-ին եղել է 33,7՝ ի համեմատ 2008 թ.-ին գրանցված 29,8-ի, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ համապատասխանաբար 2,5 և 1,6: Նման վիճակը առավելապես բացատրվում է 2008 թ.-ից ՀՀ-ում տնտեսության անկման միտումով, որն էլ ավելի ցայտուն դարձավ 2015 թ.-ից՝ պայմանավորված արտաքին պահանջարկի տեմպերի դանդաղմամբ, փոխարժեքի արժեզրկմամբ, արտերկրից, հատկապես ՌԴ-ից ներհոսող դրամական փոխանցումների կրճատմամբ: Միաժամանակ, դա հանգեցրեց բնակչության շրջանում անհավասարության մակարդակի աճի՝ Զինի գործակցով սպառման անհավասարությունը 2015 թ.-ին դարձավ 0,279՝ 2008 թ.-ի 0,242-ի համեմատ¹³⁷:

Աղքատությունն իր անմիջական ազդեցությունն է գործում երեխաների առաջնային կարիքների բավարարման՝ այդ թվում՝ սննդի, հագուստի, կացարանային պայմանների վրա: 2015 թ.-ի տվյալներով՝ անբավարար ջեռուցման խնդիր ունեցող տնային տնտեսություններում է բնակվել աղքատ երեխաների 52% և ծայրահեղ աղքատ երեխաների 76%-ը (երեխաների ընդհանուր թվաքանակում այն կազմել է 42%): Խոնավ տնային տնտեսություններում է բնակվել աղքատ երեխաների 34% և ծայրահեղ աղքատ երեխաների 45%-ը (երեխաների ընդհանուր թվաքանակում այս ցուցանիշը կազմել է 27%)¹³⁸: Միաժամանակ, 2015 թ.-ին շուրջ 800 երեխա հայտնվել են մանկատներում՝ ընտանիքում առկա սոցիալական անապահովության արդյունքում¹³⁹:

Առավել մտահոգիչ են այն տվյալները, որոնք վկայում են, որ երեխաների աղքատությունը կավելանա, եթե նրանց ընտանիքի՝ տարիքային կենսաթոշակ ստացող անդամները չլինեն կամ ընտանիքը զրկվի սոցիալական նպաստից: Ըստ կանխատեսումների՝ տարիքային կենսաթոշակ ստացող անձի բացակայության դեպքում՝ ծայրահեղ աղքատ չհամարվող երեխաների 19%-ը կդառնա ծայրահեղ աղքատ, աղքատ չհամարվող երեխաների 23%-ը՝ աղքատ, սոցիալական նպաստներից

¹³⁷ Տե՛ս Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2015թթ., Երևան 2015, էջ 87-89 http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

¹³⁸ Տե՛ս Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2015թթ., Երևան 2015, էջ 87-89 http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

¹³⁹ Որ երեխան մանկատան փոխարեն հայտնվի այստեղ, 19.11.2017, 12.01; http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20160901_4&flag=am

զրկվելու դեպքում՝ ծայրահեղ աղքատության մակարդակը կեռապատկվի՝ 2,5-ից դառնալով 6,9, իսկ մանկական աղքատության մակարդակը կաճի 7,4%-ով: Մինչդեռ երեխայի նպաստի վերացումը գրեթե չի ազդում երեխաների աղքատության մակարդակի վրա, ինչը պայմանավորված է դրա տրամադրման քիչ տարածվածությամբ¹⁴⁰:

Բնականաբար, այս խնդիրների լուծման կարևորագույն նախադրյալը տնտեսության զարգացումն է, ինչին խոչընդոտում է ՀՀ ներքին շուկայի փոքր լինելը, ՀՀ-ում վարվող հարկային, մաքսային քաղաքականության հետևանքով՝ արտաքին շուկայի համար նախատեսված արտադրանքի բարձր գինը, առկա կլանային համակարգը, տնտեսական ոչ առողջ մրցակցությունը, առանձին տնտեսվարողների կողմից շուկայի մոնոպոլիզացիան, կոռուպցիայի տարածումը: Որպես բարձրացված խնդրի լուծման տարբերակ ներկայումս դիտվում է մանր և միջին ձեռներեցության խթանումը՝ հարկային արտոնություններ սահմանելու, մաքսային բեռը թեթևացնելու միջոցով, սակայն գործնականում պետության կողմից իրականացվող այս բարեփոխումները դեռևս մնում են ծրագրային մակարդակով և տնտեսության վրա դրանց ազդեցությունը չի զգացվում:

Հետևաբար, մանկական աղքատության հաղթահարման առավել իրատեսական լուծում ներկայումս պետք է դիտվի նրանց ընտանիքներին սոցիալական աջակցության ցուցաբերումը, ընդ որում՝ ոչ թե սոսկ սոցիալական նպաստների տրամադրման ձևով, այլ հենց երեխաների խնամքի ու կենսական պահանջմունքների բավարարման համար նախատեսված, մինչև երեխայի 18 տարին լրանալը ամսական կտրվածքով տրվող նպաստների համակարգ ներդնելու եղանակով: Այլապես, ՀՀ-ում «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի և «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման համաձայն, սահմանված է 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման համակարգ՝ 1-ին կամ 2-րդ երեխայի ծնվելու դեպքում՝ 50 000, 3-րդ կամ 4-րդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ

¹⁴⁰ Տե՛ս Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2015թթ., Երևան 2015, էջ 94-99 http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

միլիոն դրամ, 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ 1 500 000 դրամ: Սակայն այս միանվագ տրվող գումարները, որպես կանոն, չեն անդրադառնում երեխաների աղքատության հաղթահարման վրա: Տրվող գումարները, հատկապես 1-ին և 2-րդ երեխայի համար, բավարար չեն նույնիսկ մեկ ամսվա կտրվածքով երեխայի խնամքն ու դաստիարակությունը ապահովելու համար, այն ցածր է ՀՀ-ում 2016 թ.-ին սահմանված սպառողական զամբյուղի արժեքից, որը կազմել է 55075,3 դրամ՝ ամսական կտրվածքով¹⁴¹: Միաժամանակ, նման նպաստների մեխանիզմով կթուլացվի նաև անչափահասների գործազրկության բացասական ազդեցությունը:

Ընտանիքներին աջակցելու նպատակով՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցելու հատուկ ֆոնդերի ստեղծմանը, որի նյութական միջոցները կարող են գոյանալ բարեգործական մուտքերից: Իհարկե, այստեղ պետք է կարևորվի այդ մուտքերի բաշխման վերահսկելիության ապահովումը՝ չարաշահումներից խուսափելու նպատակով:

Կարևոր միջոցառում պետք է լինի անխտիր բոլոր երեխաների համար անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքի նախատեսումը: Առողջապահության նախարարի 2013 թ.-ի սեպտեմբերի 28-ի N 57-Ն հրամանով հաստատվել է պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական ծառայությունների մատուցման չափորոշիչը, որի համաձայն անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունք, ի թիվս այլ կատեգորիաների, ունեն նաև ընտանեկան նպաստի համակարգում 30, 00 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուները, մինչև 7 տարեկան երեխաները, հաշմանդամություն ունեցող կամ դիսպանսեր հսկողության տակ գտնվող 18 տարին չլրացած անձինք, առանց ծնողական խնամքի մնացած կամ բազմազավակ կամ հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքների երեխաները, միաձնող կամ մանկատներում խնամվող երեխաները, 14-15 տարեկան արական սեռի, նախազորակոչային տարիքի անձինք: Ատամնաբուժական ծառայությունների մասով՝ այս կատեգորիաներին ավելանում են նաև մինչև 8 տարեկան և 12 տարեկան երեխաները (9-11 տարեկաններին դա չի վերաբերվում):

¹⁴¹ Տե՛ս Որքա՞ն է կազմում Հայաստանում նվազագույն սպառողական զամբյուղը, 10/05/2016 22:19, <https://b24.am/economy/60082.html>:

Ներկայացված ցանկը բավականին ընդգրկուն է, սակայն նույնիսկ այդ պայմաններում, մեծ է անվճար բժշկական օգնությունից դուրս մնացած երեխաների շրջանակը:

2. Կոռուպցիայի դեմ պայքարը ևս կարևոր է անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանելու գործընթացում, քանի որ դրա տարածումը ոչ միայն հանգեցնում է պետական մարմինների գործունեության խաթարմանը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով, այլև երեխայի մոտ ձևավորում է անպատժելիության զգացում, անմիջականորեն անդրադառնում նրա արժեքային համակարգի ձևավորման, իսկ հետագայում՝ նաև ասոցիալ վարքագծի դրսևորման վրա: Կոռուպցիայի տարածման հետևանքով նվազում է երեխաների վստահությունը պետական մարմինների անաչառության, իրավակարգավորիչ կարողությունների հանդեպ, ինչը հանգեցնում է խնդիրների լուծման այլընտրանքային տարբերակների ի հայտ գալուն, այդ թվում՝ գողական «ճշտի» գաղափարախոսության տարածման և հանգեցնում հասարակության անդամների կրիմինալիզացիայի:

Կոռուպցիայի կանխարգելման գործընթացում ամենակարևոր նախադրյալը պետական կամքի դրսևորումն է և հետևողականությունը՝ կոռուպցիոն վարքագիծ դրսևորած անձանց վարքագծին համարժեք և արդյունավետ արձագանքելու առումով: Ընդ որում, այդ գործընթացում կարևոր է հասարակության անդամների ակտիվության բարձրացումը՝ ոչ թե սոսկ հասարակական կազմակերպությունների, այլ հասարակության անդամների ավելի լայն զանգվածների ներգրավման միջոցով:

Միաժամանակ, կոռուպցիայի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է իրականացնել նվազագույնը հետևյալը՝

- վերանայել ՀՀ օրենսդրությունը՝ դրանում հստակեցնել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների աշխատակիցների ինչպես լիազորությունների շրջանակը՝ նվազագույնի հասցնելով դրանց հայեցողական դրսևորումները, այնպես էլ պարտականությունները, երաշխավորել պատասխանատվություն այդ պարտականությունների չկատարման համար,

- կրճատել պետական ուժնազված կառավարման համակարգը, սակայն ոչ թե իրական աշխատողների, որակյալ մասնագետների, այլ «ծանոթ-բարեկամի» միջոցով աշխատանք ստացած, սակայն համարժեք մասնագիտական պատրաստվածություն չունեցող կադրերից ազատվելու միջոցով,
- բարելավել պետական մարմինների աշխատակիցների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների աշխատակիցների սոցիալական վիճակը՝ վերջիններիս համար հնարավորություն ստեղծելով օրինական աշխատանքով ապահովել իրենց և իրենց ընտանիքի անդամների գոնե կենսական կարիքների բավարարումը,
- երաշխավորել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը,
- պաշտոնատար անձանց, պետական մարմինների, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների աշխատակիցների, ինչպես նաև բնակչության շրջանում իրականացնել կրթական-տեղեկատվական ծրագրեր՝ ուղղված կոռուպցիոն վարքագծի դրսևորումների ներկայացմանը, դրանք շրջանցելու, դրանց դեմ պայքարելու հնարավոր տարբերակներին:

3. Անչափահասների հանցավորության կանխարգելման առումով առանձին կարևորություն ունի նրանց իրավագիտակցության բարձրացումը, ինչը ենթադրում է ինչպես իրավական նորմերի իմացություն, այնպես էլ սեփական վարքագիծը դրանց համապատասխան կառուցելու ցանկություն և կարողություն¹⁴²: Ամենահիմնական խնդիրները, որ առկա են այս ոլորտում, օրենսդրության մեջ տեղ գտած առանձին

¹⁴² Տե՛ս **Габузян А.А.** Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 221:

նորմերի, ինչպես նաև դրանց կիրառողների գործողությունների արդարացիության վերաբերյալ տարակարծությունն է, ինչն էլ հասարակության անդամներից՝ այդ թվում՝ անչափահասներից շատերի մոտ հանգեցրել է վստահության պակասի թե՛ օրենքի, թե՛ իրավապահ մարմինների ու դատարանի նկատմամբ: Ուստի, անհրաժեշտ է իրականացնել հետևյալը՝

- վերանայել ՀՀ օրենսդրությունը՝ դրա նորմերի հստակությունը, արդարացիությունը, կանխատեսելիությունը ապահովելու նպատակով: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն քրեական օրենսդրությանը (պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից, պատժից ազատելու կանոններ և այլն), այլև երեխաների իրավունքները կանոնակարգող այլ իրավական ակտերին,
- օրենսդրության պահանջների խախտման դեպքում ապահովել պատասխանատվության անխուսափելիությունը՝ անկախ նման վարքագիծ դրսևորած սուբյեկտի պաշտոնից, կուսակցական կամ այլ պատկանելությունից նյութական վիճակից կամ այլ կարգավիճակից,
- նվազեցնել իրավապահ մարմիններում և դատական համակարգում տեղ գտնող կոռուպցիոն վարքագիծը՝ միևնույն ժամանակ երաշխավորելով քաղաքական ուժերից նրանց անկախությունը և պաշտպանվածությունը,
- միջոցառումներ ձեռնարկել՝ անչափահասների շրջանում իրավական գիտելիքների տարածումը խթանելու, իրավապահ մարմինների և դատարանի հեղինակությունը, նրանց նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ՝ այդ թվում ԶԼՄ-ների, համակարգչային տեխնոլոգիաների հնարավորությունները օգտագործելով (արդար ու բանիմաց դատավորի, իրավապահ մարմնի աշխատակցի վառ կերպարներով ֆիլմեր, մուլտֆիլմեր, հեռուստա և համակարգչային խաղեր, հեռուստաշոուններ և նման այլ հաղորդումներ պատրաստելով),
- մանկապարտեզներից սկսած՝ կրթական ծրագրերում ներդնել իրավական կրթության, դաստիարակության բաղադրիչ: Թեև մանկապարտեզներում կան ծրագրեր, հատկապես 5-6 տարեկանների համար, որոնք ենթադրում են

երեխաների ծանոթացում առանձին իրավական նորմերին, սակայն դրանք ավելի շուտ ուղղված են երեխաների անվտանգության ապահովմանը՝ վիկտիմոլոգիական կանխարգելմանը, ճանապարհային երթևեկության կանոնների ուսուցանմանը, այլ ոչ թե նրանց իրավագիտակցության ձևավորմանը¹⁴³:

- դպրոցներում՝ 1-ին դասարանից սկսած ներդնել իրավական ուսուցման դասընթաց, իսկ բարձր դասարաններում դասավանդվող «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Պետություն և իրավունք» դասընթացների դասավանդումը իրականացնել իրավաբանական գիտելիքների տիրապետող կադրերի, այլ ոչ թե այլ մասնագիտություն ստացած ուսուցիչների կողմից:

4.Լուրջ քայլեր պետք է ձեռնարկվեն հանցավորության լատենտայնությունը նվազեցնելու ուղղությամբ, ինչին հնարավոր է հասնել հետևյալ քայլերով՝

- հաղորդվող իրավախախտումների գրանցման նկատմամբ հսկողությունն ուժեղացնելով և հաղորդված իրավախախտման՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից չգրանցելու փաստի հայտնաբերման դեպքում՝ նրանց խիստ պատասխանատվության ենթարկելով,
- իրավապահ բոլոր մարմինների, դատարանի համար հասանելի՝ իրավախախտումների գրանցման միասնական համակարգ ներդնելով, ինչը ենթադրում է նույնականացված անձի կողմից հեռախոսով, առցանց եղանակով կամ որևէ այլ տարբերակով հաղորդված իրավախախտումը անմիջապես մուտք անել արդեն իրավապահ բոլոր մարմինների և դատարանի կողմից վերահսկվող համակարգ,
- մտցնել տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման համակարգ՝ հանցավոր վարքագծից տուժելուց ապահովագրվելու պարտադիր համակարգի ներդրման կամ առանձին ֆոնդ ստեղծելու տարբերակով, ինչը կենթադրի տուժողներին փոխհատուցման տրամադրում՝ իրենց հանդեպ կատարված

¹⁴³ Տե՛ս *Մանուկյան Լ., Միքոյան Հ., Սարգսյան Մ., Մուրադյան Ժ., Հովհաննիսյան Ա., Առաքելյան Ռ., Ղազարյան Կ., Դաբադյան Զ., Մարտիրոսյան Գ., Ծառուկյան Ռ.* Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տա ընկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան 2007, 141 էջ:

հանցագործության մասին ոստիկանությանը կամ իրավասու այլ մարմնին ներկայացված հաղորդումը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում.

- երեխաների հանցավոր կամ շեղվող վարքագծին արձագանքելու իրավական նորմերի վերանայում, պատժին՝ հատկապես՝ ազատազրկմանը այլընտրանք հանդիսացող միջոցների ավելի լայն շրջանակի ներդրում:

5. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել պատժի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես՝

- վերանայել անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգը՝ ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող, գործուն պատժատեսակներ և դրանց կիրառման ընթացակարգեր նախատեսելու նպատակով,
- հստակեցնել անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային մեխանիզմների կիրառման ընթացակարգը, մասնավորապես՝ տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելիս, անչափահասների նկատմամբ դաստիարակչական միջոցներ կիրառելիս, միաժամանակ նախատեսելով անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու արտադատական այլ մեխանիզմներ,
- ՀՀ քրեական դատավարության, քրեակատարողական օրենսդրությամբ նախատեսված անչափահասների արդարադատության պահանջները արտացոլող օրենսդրական կանոնակարգումներ, ներդնել դրանց կիրարկումն ապահովող ինստիտուցիոնալ կանոնակարգեր,
- ապահովել անչափահասների կողմից, նրանց նկատմամբ կամ ներկայությամբ կատարված գործերի քննությանը մասնակցող դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, քրեակատարողական հիմնարկների, պրոբացիոն ծառայության, ընդհանրապես՝ իրավապահ մարմինների և դատական համակարգի աշխատակիցների վերապատրաստում՝ երեխաների հետ շփման կարողությունների ավելացման, երեխայի

- իրավունքների շրջանակի հստակ պարզաբանման, անչափահասների արդարադատության առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով:
- բարելավել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող երեխաների կենցաղային՝ բնակվելու, կրթություն կամ հոգեբանական օգնություն ստանալու սենյակային պայմանները,
 - երաշխավորել քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաների անհատական կարիքները արտացոլող որակյալ կրթությունը, խրախուսանքի միջոցներ նախատեսել ուսման մեջ լավագույն արդյունքներ գրանցելու համար,
 - առավելագույն կանոնակարգել և բազմազան դարձնել քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաների ազատ ժամանցի կազմակերպումը, թույլ չտալ նրանց շրջանում «քրեական աշխարհի» գաղափարախոսության տարածումն ու ամրապնդումը, ձևական բնույթ կրող վերականգնողական աշխատանքից անցում կատարել իրականի,
 - ստեղծել հնարավորություններ՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող անչափահասի կողմից՝ աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտություն ձեռք բերելու համար,
 - ավելացնել անչափահասների քրեակատարողական հիմնարկում աշխատող հոգեբանների քանակը, այդ թվում՝ «հրավիրյալ» հոգեբանների ինստիտուտ ներդնելով,
 - դյուրին դարձնել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ընթացակարգը, հստակեցնել Անկախ հանձնաժողովների լիազորությունների շրջանակը,
 - ընդլայնել պրոբացիոն ծառայության գործառույթների շրջանակը՝ նրանց ներգրավելով նաև պատժի կրման գործընթացում գտնվող անչափահաս դատապարտյալի հետ տարվող աշխատանքներին,
 - պատիժը պայմանականորեն չկիրառելիս՝ անչափահաս դատապարտյալի վրա դնել հստակ պարտականություններ (օրինակ՝ մասնակցել մշակութային, կրթական ծրագրերի), իսկ պրոբացիոն ծառայությանը օժտել արդյունավետ լծակներով՝ այդ պարտականությունների չկատարման համար անձին պատասխանատվության ենթարկելու համար,

- բարելավել համագործակցությունը իրավապահ մարմինների, պրոբացիոն ծառայության և անչափահասների վերականգնողական ծրագրեր իրականացնող կառույցների, հասարակական կազմակերպությունների միջև:

6. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր նշանակություն ունի ինչպես այդ ոլորտը կանոնակարգող պետական ծրագրի ընդունումը, այնպես էլ իրավապահ մարմինների և դատարանի գործունեության բարելավումը, ինչը ենթադրում է՝

- հանցավորության, այդ թվում՝ անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողություն սահմանող միասնական պետական ծրագրի ընդունում՝ խնդիրների, նպատակների, ակնկալվող արդյունքների, դրանց հասնելու միջոցառումների, այդ միջոցառումների իրականացման ֆինանսավորման չափի և աղբյուրների, միջոցառումների իրականացման և ակնկալվող արդյունքների ժամկետների, կատարողների հստակ ձևակերպմամբ¹⁴⁴,
- իրավապահ մարմինների տեխնիկական հագեցվածության բարձրացում, ինչը ենթադրաբար պետք է հանգեցնի իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, ավելի մեծ թվով հանցավոր արարքների բացահայտման, հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների հայտնաբերման,
- հասարակություն-իրավապահ մարմիններ համագործակցության վիճակի բարելավում, ինչին հնարավոր է հասնել հասարակության անդամների հետ և հատկապես՝ անչափահասների հետ հաճախակի հանդիպումներ ունենալով, նրանց խնդիրներին տեղեկանալով, դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկելով: Միաժամանակ, պետական մակարդակով՝ հատկապես ՋԼՄ-ներով և համացանցի միջոցով պետք է միջոցառումներ իրականացվեն «գողական աշխարհի» իրական, ոչ թե ռոմանտիկ վիճակը բացահայտելու, փոխարենը՝ իրավապահ մարմինների հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: Ոստիկանության վերաբերյալ նման բովանդակությամբ

¹⁴⁴ Տե՛ս **Габузян А.А.** Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, էջ 227:

սոցիալական հոլովակներ արդեն իսկ կան շրջանառության մեջ, սակայն դրանց թիվը պետք է ավելացվի:

- հաշվառման վերցված անչափահասների, նրանց ընտանիքների հետ արդյունավետ կանխարգելիչ գործունեության իրականացում՝ մասնավորապես պարբերաբար այդ ընտանիքների վիճակի մասին տեղեկանալով, դրանցում առկա խնդիրները լուծելուն հնարավորինս աջակցելով, ժամանակ-առ-ժամանակ, պատահականության սկզբունքով այդ ընտանիքներ այցելելով: Ընդ որում, վերջին միջոցառումը անհրաժեշտ է նախատեսել նաև խնամատար ընտանիքներում դաստիարակվող, ինչպես նաև մանկատներում գտնվող երեխաների առումով:
- երեխաների ազատ ժամանցի վայրերում, այգիներում, պուրակներում, փողոցներում ուստիկանության պարեկային ծառայության ուժեղացում՝ երեխաների շեղվող վարքագծին արագ արձագանքելու կամ դրան նպաստող գործոնները օպերատիվ կերպով չեզոքացնելու նպատակով (<< ուստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ անչափահասները հաճախ հանցանք կատարում են նման վայրերում, մասնավորապես, 2013 թ.-ին՝ անչափահասների յուրաքանչյուր 5-րդ հանցագործությունը տեղի է ունեցել այգիներում կամ փողոցներում):

7. Անչափահասների ազատ ժամանցի ոլորտի կանոնակարգումը ևս կարևոր է նրանց հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու համար, հետևաբար այդ ոլորտում անհրաժեշտ է՝

- ընդլայնել երեխաների համար նախատեսված, նրանց համար հասանելի, մատչելի սոցիոմշակութային հաստատությունների ցանցը՝ մարզադաշտեր, խաղահրապարակներ, սպորտային, մշակութային, ստեղծագործական խմբակներ և այլն,
- պետական բյուջեում նախատեսել միջոցներ՝ անապահով ընտանիքների երեխաների՝ սպորտային, մշակութային, ստեղծագործական խմբակներ անվճար մուտքը ապահովելու համար,

- երեխաների արժեքային համակարգում հոգևոր արժեքների նշանակության կարևորման համար՝ բոլոր երեխաների համար նախատեսել անվճար մուտք թանգարաններ, պատկերասրահներ, ինչպես նաև տարեկան կտրվածքով նախատեսել 4-5-ական անվճար այցելություն դասական երաժշտության (օպերա, բալետ, համերգ), մանկական համերգի կամ թատրոն,
- սահմանափակումներ նախատեսել՝ որոշակի հաստատություններում առանց ծնողի ուղեկցության երեխայի գտնվելու առումով, օրինակ՝ ռեստորաններ, գիշերային ակումբներ, փակ կինոսրահներ, ինչպես նաև նման սահմանափակումներ նախատեսել առանձին հաստատություններում որոշակի ժամերի երեխայի գտնվելու առումով, օրինակ՝ ժամը 22.00-ից հետո թույլ չտալ 16 տարին չլրացած երեխաների մուտքը ինտերնետ ակումբներ, պարասրահներ,
- ինտերնետ ակումբներում արգելափակել երեխայի վրա բացասական ազդեցություն թողնող կայքեր անչափահաս հաճախորդների մուտքը,
- ալկոհոլի վաճառքի բոլոր կետերում ուժեղացնել հսկողությունը երեխաներին ալկոհոլ վաճառելու արգելքի պահպանման նկատմամբ, խստացնել այդ արգելքը խախտելու համար նախատեսվող պատասխանատվությունը,
- ԶԼՄ-ների նկատմամբ նախատեսել ժողովրդավարական գրաքննություն՝ թույլ չտալու համար անչափահասների շրջանում բռնության, անբարոյականության, «գողական աշխարհի ռոմանտիկայի», կենսակերպի տարածում:

8. Ընտանիքում առկա խնդիրները ևս իրենց անմիջական ազդեցությունն են գործում անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երեխաների հետ համատեղ ապրող չափահասներին, հատկապես ծնողներին, մանկավարժական, հոգեբանական տարրական գիտելիքներ տալուն (օրինակ՝ հղիության ընթացքում ապագա ծնողների համար երեխայի խնամքի, դաստիարակության վերաբերյալ անվճար դասընթացների նախատեսում),

9. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր դերակատարություն ունի դպրոցը, ուսումնադաստիարակչական հաստատությունը, հետևաբար այս ոլորտում առկա խնդիրները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է՝

- վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, հնարավորինս դրանք բեռնաթափել ու հետաքրքիր դարձնել երեխայի համար, իրականացնել միջոցառումներ ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղությամբ, ինչն, առաջին հերթին, ենթադրում է դպրոցում կոռուպցիայի, մասնավոր պարապմունքների արատավոր պրակտիկայի վերացում, ինչպես նաև ուսուցիչներին քաղաքական գործընթացներից զերծ պահելը,
 - կրթական հաստատություններում, հատկապես ավագ դպրոցում ներդնել անվտանգության ծառայություն՝ երեխաների շրջանում ծեծկռտությունների, բռնության գործադրման կանխարգելման նպատակով. առանձին դպրոցներում նման ծառայություններ գործում են, սակայն անվտանգության ծառայողի ներկայությունը ճիշտ կլինի ապահովել նաև մյուս դպրոցներում,
 - բոլոր դպրոցներում ապահովել հոգեբանի հաստիք՝ երեխաների մոտ առկա հոգեբանական խնդիրները հնարավորինս վաղ փուլում հայտնաբերելու և դրանց արձագանքելու առումով. ներկայումս ՀՀ դպրոցների մի մասը, հիմնականում մասնավոր դպրոցները և ներառական կրթություն իրականացնողները, ունեն դպրոցներում աշխատող հոգեբաններ, սակայն անհրաժեշտ է ոչ միայն այդ փորձը տարածել նաև մյուս դպրոցներում, այլև ավելացնել հոգեբանների քանակը,
 - դպրոցում ավելացնել երեխայի առօրյան հետաքրքիր դարձնող միջոցառումները, նախատեսել արտադասարանական՝ սպորտային, ստեղծագործական, մշակութային, գիտատեխնիկական ուղղվածության անվճար խմբակներ,
 - վերացնել երեխաների անհարգելի բացակայությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը, նախատեսել հստակ, ազդեցիկ ներգործության միջոցներ՝ դպրոցից անհարգելի բացակայությունների համար:
10. ՀՀ-ում անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր դերակատարություն ունի վիկտիմոլոգիական կանխարգելումը: Թեև մանկապարտեզների և դպրոցների ծրագրերում առանձին դասեր ուղղված են երեխաների անվտանգության ապահովման ոլորտում նրանց գիտելիքներ տալուն, սակայն կատարվող աշխատանքը դեռևս

բավարար չէ: Նախ, դրանց քանակությունը շատ քիչ է, բացի այդ բացակայում են այդ ոլորտում ուսումնասիրությունները, որոնք թույլ կտան հիմնավորված միջոցառումներ մշակել երեխաների վիկտիմոլոգիական կանխարգելման առումով, ավելին՝ ՀՀ ոստիկանությունում թեև 2003 թ.-ից տեղեկատվություն է հավաքվում ոչ միայն հանցավոր վարքագիծ դրսևորած, այլև հանցագործությունից տուժած անձանց մասին, սակայն այն կրում է խիստ ձևական, սահմանափակ բնույթ: Ոստիկանության աշխատակիցների կողմից Ինֆորմացիոն կենտրոն ուղարկվող ձևաթղթերում հանցագործությունից տուժած անձանց վերաբերող տեղեկատվությունը հաճախ պարզապես չի լրացվում կամ թերի է լրացվում: Նման պարագայում խիստ դժվար է կրիմինալոգիական առումով հիմնավորված հետևություններ անելը:

Հետևաբար, անհրաժեշտ է ՀՀ Ոստիկանությունում ներդնել համացանցից անկախ, սակայն իրավապահ մարմիններին, դատական համակարգին հասանելի տեղեկատվական համակարգ, որում պահանջվող, այդ թվում՝ հանցագործությունից տուժած անձին վերաբերող տեղեկատվությունը կմուտքագրվի գործը քննող ոստիկանության յուրաքանչյուր աշխատակցի կողմից, տեղեկատվական համակարգում տվյալների մուտքը կհաստատվի միայն պահանջվող տեղեկատվությունը ամբողջությամբ լրացնելու պարագայում, որից հետո միայն կարելի է որակյալ ուսումնասիրություն իրականացնել և հիմնավորված առաջարկություններ կատարել վիկտիմոլոգիական կանխարգելման ուղղությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում անչափահասների հանցավորության հիմնախնդիրների ուսումնասիրությունը թույլ տվեց եզրակացնել, որ՝

1. Թեև ՀՀ-ում պաշտոնապես գրանցվում է անչափահասների հանցավորության նվազում, սակայն դա ոչ թե կապված է իրավապահ մարմինների արդյունավետ աշխատանքի, անչափահասների արժեքային համակարգի, բարոյական հայացքների բարելավման, այլ անչափահասների հանցավոր վարքագծի լատենտայնության մեծացման և բնակչության զանգվածում անչափահասների մասնաբաժնի նվազման հետ: Հետևաբար՝ անչափահասների հանցավորությունը ոչ թե նվազում է, այլ դառնում առավել լատենտային:

2. Անչափահասների հանցավորությունը ենթարկվում է որակական փոփոխությունների. անչափահասների շրջանում ավելանում է ինքնուրույն հանցավոր վարքագիծը, աճում է իգական սեռի ներկայացուցիչների հանցավոր ակտիվությունը, անչափահասների շրջանում առավել հաճախ է ապօրինի կերպով զենք շրջանառվում:

3. Թեև ՀՀ անչափահասները եվրոպական շատ երկրների համեմատ ավելի քիչ են շեղվող վարքագիծ դրսևորում և վիկտիմիզացիայի ենթարկվում, սակայն իրենց եվրոպացի տարեկիցներից ավելի հաճախ են նախընտրում բռնություն գործադրել:

4. Անչափահասների կողմից գողությունների կատարման դինամիկան նվազման միտում չունի, հետևաբար ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված պաշտոնեական վիճակագրությունը չի արտացոլում անչափահասների կողմից գողությունների կատարման իրական վիճակը և ընդամենը վկայում է դրանց լատենտայնացման մասին:

5. Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում տեղ գտած բացասական փոփոխությունները՝ հատկապես՝ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացումը, հասարակության խիստ բևեռացումը, գրեթե համատարած բնույթ կրող աղքատությունը, գործազրկությունը, արժեքային անոմիան, զուգակցվելով Իրանի հետ ՀՀ սահմանների բացման, թմրանյութերի գործածման համար քրեական պատասխանատվության վերացման հետ՝ հանգեցրին ՀՀ-ում թմրանյութ

գործածողների, այդ թվում թմրանյութ գործածող անչափահասների թվաքանակի աճի:

6. Գլոբալիզացման գործընթացներում ՀՀ-ի ներգրավվածությունը, կանանց էմանսիպացիան, ֆեմինիստական գաղափարախոսության տարածումը հանգեցրել են կանանց մասնակցության ակտիվացմանը ոչ միայն հասարակական-քաղաքական կյանքում, այլև իրավախախտումների կատարման ոլորտում, ինչը դրսևորվում է նաև հանցավոր և շեղվող վարքագծին իգական սեռի երեխաների ներգրավվածության մեծացմամբ:

7. Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 14-15 տարիքային խմբի ներկայացուցիչները 16-17 տարեկան անչափահասների համեմատ գրեթե 5 անգամ ավելի հազվադեպ են քրեական պատասխանատվության ենթարկվում, սակայն դա ոչ թե պայմանավորված է նրանց կողմից քրեական օրենքով արգելված արարքների կատարումից, շեղվող վարքագծի դրսևորումից զերծ մնալով, այլ այս խմբերի համար քրեական պատասխանատվության ենթադրող արարքների տարբեր շրջանակի սահմանումով, ավելի ցածր տարիքային խմբերի երեխաների հանրորեն վտանգավոր արարքների լատենտայնության ավելի բարձր աստիճանով:

8. Հայ ընտանիքներում երեխայի հանդեպ ծնողների, և հատկապես՝ տատիկների և պապիկների անվերապահ նվիրվածությունը, երեխաներին «կուրորեն սիրելը», «երես տալը», մանկավարժական գիտելիքների պակասը, դաստիարակությունն իրականացնելիս չափահասների կողմից միմյանց հակադրվելը ձևավորում է թողտվության մթնոլորտ, նպաստում երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորմանը, ինչի վկայությունը լիարժեք համարվող ընտանիքներում դաստիարակվող երեխաների շեղվող վարքագծի դրսևորմանը ավելի բարձր ներգրավվածությունն է:

9. Ներկա ժամանակաշրջանում հասարակության կարգավորիչ գործառույթի, հասարակական հսկողության թուլացման, կրթական ոլորտում կոռուպցիայի տարածման և դրանով պայմանավորված՝ ուսուցչի մասնագիտության հանդեպ հարգանքի նվազման պարագայում ՀՀ-ում երեխայի ասոցիալ վարքի կանխարգելման առումով նշանակություն ունեցող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման գործընթացում նկատվում է դպրոցի և

հասարակության դերի նվազում:

10. ՀՀ-ում երեխաների շեղվող վարքագծի, հատկապես դրա հանրային բարձր վտանգավորություն չունեցող ձևերի դրսևորման առումով կարևոր դերակատարություն ունի ինքնավերահսկումը՝ անչափահասի ռիսկային վարքագծի դիմելու պատրաստականությունը և հեղոնիստական գաղափարներին հետևելը:

11. ՀՀ հասարակական կյանքում տեղ գտած փոփոխությունների, հատկապես սոցիալ-տնտեսական ճգնաժամային ցնցումների հետևանքով ներկա ժամանակաշրջանում նկատվում է անչափահասների արժեքային համակարգի անոմիա, նյութական պահանջմունքների գերակայություն հոգևորի նկատմամբ, երեխաների շրջանում սպառողական հոգեբանության աճ, ինչն անդրադառնում է նաև հանցավոր վարքագիծ դրսևորած անչափահասների մոտիվացիոն ոլորտի վրա:

12. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ-ում գրանցվել է երեխաների հետ ծնողների հուզական կապի և ընտանեկան հսկողության թուլացում, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունեցել երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա:

13. Թեև այլ երկրների համեմատ ՀՀ-ում ծնողների մոտ բարձր է երեխաների առօրյայի մասին տեղեկացվածությունը, սակայն այն հաճախ կրում է ձևական բնույթ. օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ծնողների մոտ բացակայում է երեխայի կյանքով, ձեռքբերումներով, ձգտումներով իրական հետաքրքրվածությունը, երեխային աջակցելը:

14. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման դետերմինացնող գործոններից է, ինչպես պետության, այնպես էլ ծնողների թույլ հսկողության հետևանքով, երեխաների շրջանում ԶԼՄ-ներով, համացանցով կամ երեխաներին հասանելի այլ եղանակներով բռնության, պոռնոգրաֆիայի, հակաբարոյական այլ երևույթների տարածումը:

15. Անչափահասի շեղվող կամ հանցածին վարքագծի ձևավորման վրա էական ազդեցություն ունի ծնողների՝ երեխային դաստիարակելու իրենց գործառույթին, մանկավարժական, հոգեբանական գիտելիքներին չտիրապետելը, երեխայի իրավունքները խախտելը:

16. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի դրսևորման վրա վճռորոշ ազդեցություն ունի երեխաների՝ դպրոցից բացակայության բարձր մակարդակը, որը թեև 2006 թ.-ի համեմատ նվազել է, սակայն դեռևս շարունակում է մնալ եվրոպայում գրանցված ամենաբարձր ցուցանիշներից մեկը:

17. Հասարակությունում և կրթական ոլորտում տեղ գտած փոփոխությունների արդյունքում դպրոցը ձախողել է երեխայի ձևավորման առումով կարևոր նշանակություն ունեցող այնպիսի գործառույթի իրականացում, ինչպիսին է ապագայի առումով նրանց կողմնորոշելը: ՀՀ անչափահասների շրջանում, ի համեմատ եվրոպական այլ երկրների, մեծ թիվ են կազմում ապագայի առումով կողմնորոշում չունեցող անձինք, մինչդեռ ապագայի առումով անորոշությունը բարձրացնում է երեխայի կողմից ապագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը

18. ՀՀ-ում, երեխաների կողմից շեղվող և բռնի վարքագիծ առավելապես դրսևորվում է այն երեխաների շրջանում, ովքեր ձգտում են շփման. նախընտրում են ազատ ժամանցը անցկացնել ընկերական միջավայրում, հետևաբար՝ հավակնում են այդ խմբի անդամների կողմից հավանության արժանանալու, մինչդեռ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ առավել հաճախ կատարվում են ազատ ժամանակը մենակ տնօրինել ձգտող երեխաների կողմից:

19. ՀՀ-ում անչափահասների շեղվող վարքագծի ձևավորման և դրսևորման առումով կարևոր նշանակություն ունի երեխայի կողմից իր ընկերների խմբի՝ հանրային ուղղվածության կամ հակասոցիալական ուղղվածության հետ ասոցացումը. իր ռեֆերենտային խումբը «ասոցիալ» համարող երեխան ավելի բարձր հավանականություն ունի շեղվող վարքագիծ դրսևորելու:

20. Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ երեխաները, հասարակության ազատականացման և ընտանեկան, սոցիալական հսկողության թուլացման պայմաններում, գրեթե 2 անգամ ավելի հաճախ են ազատ ժամանցն անցկացնում տանից, ընտանեկան հսկողությունից դուրս, այդ թվում՝ երեկոյան ժամերին, ալկոհոլ և թմրանյութ գործածում:

21. ՀՀ-ում սոցիալական հսկողությունը երեխայի շեղվող վարքագծի

ձևավորման, դրսևորման առումով կանխարգելիչ ազդեցություն ունի, եթե երեխան գիտակցում է, որ հսկողություն իրականացնողը գտնվում է ոչ թե պասիվ դիտորդի դերում, այլ ամեն պահի կարող է ակտիվություն դրսևորել՝ միջամտել:

22. Երեխայի հարևանությամբ թմրանյութերի, հանցագործությունների, կոռուպցիոն տարածվածությունը, լքված շինությունների առկայությունը ՀՀ-ում բարձրացնում է ինչպես երեխայի կողմից շեղվող վարքագիծ դրսևորելու, բռնության գործադրմամբ կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ իրականացնելու, այնպես էլ դրանցից տուժելու ռիսկը:

23. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման վրա առանցքային ազդեցություն է գործում նրա միջավայրում թմրանյութ գործածած, բռնություն գործադրած, գողություն կամ ավազակություն կատարած ընկերոջ առկայությունը, ինչը մի քանի անգամ բարձրացնում է երեխայի կողմից շեղվող կամ հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը: Ընդ որում, երեխայի ընկերական միջավայրում նշված վարքագծի տեսակները դրսևորած ընկերների առկայությունը հանգեցնում է երեխայի կողմից նույնական կամ միաբնույթ արարքների կատարման:

24. Անչափահասների հանցավոր կամ շեղվող վարքագծի կանխարգելման, դրան արդյունավետորեն արձագանքելու համար հրատապ է ՀՀ գործող քրեական, քրեադատավարական և քրեակատարողական օրենսդրության վերանայումը՝ առավելապես երեխայի շահերը, կարիքները հաշվի առնող, միջազգային փաստաթղթերի պահանջներին համահունչ կանոնակարգումներ և ընթացակարգեր նախատեսելու, անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի, քրեաիրավական արձագանքման այլ միջոցների համակարգը իրատեսական և անչափահասի ուղղման, նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու հնարավորություն ունեցող պատժատեսակներով և քրեաիրավական ներգործության այլ միջոցներով համալրելու նպատակով:

25. ՀՀ-ում անհրաժեշտ է ներդնել անչափահասների արդարադատության պահանջները արտացոլող ինստիտուցիոնալ համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների տարիքային առանձնահատկություններին տիրապետող, նրանց իրավունքների շրջանակը հստակ պատկերացնող կադրերի, մասնավորապես՝

դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, քրեակատարողական հիմնարկների, պրոբացիոն ծառայության աշխատակիցների ընտրությանը, անհրաժեշտության դեպքում՝ պատրաստմանն ու վերապատրաստմանը:

26. Անչափահասների շրջանում նկատվում է վստահության պակաս իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ոստիկանության նկատմամբ, հետևաբար միջոցառումներ պետք է ձեռնարկվեն երեխաների և ընդհանուր բնակչության շրջանում իրավապահ մարմինների հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:

27. Անչափահասների հանցավորության նկատմամբ վերահսկողության սահմանումը հույժ անհրաժեշտ խնդիր է, ուստի անհրաժեշտ է մշակել միջոցառումների շրջանակ, որոնք թույլ կտան նվազեցնել անչափահասների հանցավորությունը դետերմինացնող գործոնների բացասական ազդեցությունը և կանխարգելիչ գործառույթ կիրականացնեն: Դրանք պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով՝

ա/ աղքատության հաղթահարում՝ աղքատ երեխաների ընտանիքներին սոցիալական աջակցության ցուցաբերումը, ընդ որում՝ հենց երեխաների խնամքի ու կենսական պահանջմունքների բավարարման համար նախատեսված, մինչև երեխայի 18 տարին լրանալը ամսական կտրվածքով տրվող նպաստների համակարգ ներդնելու եղանակով, անխտիր բոլոր երեխաների համար անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքի նախատեսում,

բ/կոռուպցիայի դեմ պայքար՝ վերանայել ՀՀ օրենսդրությունը՝ դրանում հստակեցնել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների՝ աշխատակիցների ինչպես լիազորությունների շրջանակը՝ նվազագույնի հասցնելով դրանց հայեցողական դրսևորումները, այնպես էլ պարտականությունները, երաշխավորել պատասխանատվություն այդ պարտականությունների չկատարման համար, կրճատել պետական ուժնացված կառավարման համակարգը, բարելավել պետական մարմինների աշխատակիցների, պաշտոնատար անձանց, երեխաների

խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների աշխատակիցների սոցիալական վիճակը, երաշխավորել պետական մարմինների, պաշտոնատար անձանց, երեխաների խնամքի, դաստիարակության գործընթացում ներգրավված մասնավոր հատվածի կառույցների՝ մանկատների, դպրոցների, կրթական, ուսումնական հաստատությունների գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, իրականացնել կրթական-տեղեկատվական ծրագրեր,

գ/ իրավագիտակցության բարձրացում՝ վերանայել ՀՀ օրենսդրությունը՝ դրա նորմերի հստակությունը, արդարացիությունը, կանխատեսելիությունը ապահովելու նպատակով, օրենսդրության պահանջների խախտման դեպքում ապահովել պատասխանատվության անխուսափելիություն, նվազեցնել իրավապահ մարմիններում և դատական համակարգում տեղ գտնող կոռուպցիոն վարքագիծը՝ միևնույն ժամանակ երաշխավորելով քաղաքական ուժերից նրանց անկախությունը և պաշտպանվածությունը, միջոցառումներ ձեռնարկել՝ անչափահասների շրջանում իրավական գիտելիքների տարածումը խթանելու, իրավապահ մարմինների և դատարանի հեղինակությունը, նրանց նկատմամբ վստահությունը բարձրացնելու ուղղությամբ, մանկապարտեզներից սկսած՝ կրթական ծրագրերում ներդնել իրավական կրթության, դաստիարակության բաղադրիչ, դպրոցներում՝ 1-ին դասարանից սկսած ներդնել իրավական ուսուցման դասընթաց,

դ/ լատենտայնության նվազեցում՝ հաղորդվող իրավախախտումների գրանցման նկատմամբ հսկողության ուժեղացում՝ հաղորդված իրավախախտման՝ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից չգրանցելու փաստի հայտնաբերման դեպքում՝ նրանց խիստ պատասխանատվության ենթարկելով, իրավապահ բոլոր մարմինների, դատարանի համար հասանելի՝ իրավախախտումների գրանցման միասնական համակարգ ներդնել, մտցնել տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման համակարգ՝ հանցավոր վարքագծից տուժելուց ապահովագրվելու պարտադիր համակարգի ներդրման կամ առանձին ֆոնդ ստեղծելու տարբերակով, ինչը կենթադրի տուժողներին փոխհատուցման տրամադրում՝ իրենց հանդեպ կատարված

հանցագործության մասին ոստիկանությանը կամ իրավասու այլ մարմինն ներկայացված հաղորդումը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում երեխաների հանցավոր կամ շեղվող վարքագծին արձագանքելու իրավական նորմերի վերանայում, պատժին՝ հատկապես՝ ազատազրկմանը այլընտրանք հանդիսացող միջոցների ավելի լայն շրջանակի ներդրում:

ե/ պատժի արդյունավետության բարձրացում՝ վերանայել անչափահասների նկատմամբ կիրառման ենթակա պատժի համակարգը, հստակեցնել անչափահասների հանցավոր վարքագծին արձագանքելու ՀՀ գործող քրեական օրենսդրությամբ նախատեսված այլընտրանքային մեխանիզմների կիրառման ընթացակարգը, երաշխավորել քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաների անհատական կարիքները արտացոլող որակյալ կրթությունը, առավելագույն կանոնակարգել և բազմազան դարձնել քրեակատարողական հիմնարկներում պահվող երեխաների ազատ ժամանցի կազմակերպումը, թույլ չտալ նրանց շրջանում «քրեական աշխարհի» գաղափարախոսության տարածումն ու ամրապնդումը, ձևական բնույթ կրող վերականգնողական աշխատանքից անցում կատարել իրականի, դյուրին դարձնել պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ընթացակարգը, հստակեցնել Անկախ հանձնաժողովների լիազորությունների շրջանակը, ընդլայնել պրոբացիոն ծառայության գործառույթների շրջանակը,

զ/ իրավապահ մարմինների և դատարանի գործունեության բարելավում՝ իրավապահ մարմինների տեխնիկական հագեցվածության բարձրացում, հասարակություն-իրավապահ մարմիններ համագործակցության վիճակի բարելավում, հաշվառման վերցված անչափահասների, նրանց ընտանիքների հետ արդյունավետ կանխարգելիչ գործունեության իրականացում, երեխաների ազատ ժամանցի վայրերում, այգիներում, պուրակներում, փողոցներում ոստիկանության պարեկային ծառայության ուժեղացում:

է/ ազատ ժամանցի ոլորտի կանոնակարգում՝ ընդլայնել երեխաների համար նախատեսված, նրանց համար հասանելի, մատչելի սոցիոմշակութային հաստատությունների ցանցը, պետական բյուջեում նախատեսել միջոցներ՝ անապահով ընտանիքների երեխաների՝ սպորտային, մշակութային, ստեղծագործական խմբակներ

անվճար մուտքը ապահովելու համար, բոլոր երեխաների համար նախատեսել անվճար մուտք թանգարաններ, պատկերասրահներ, ինչպես նաև տարեկան կտրվածքով նախատեսել 4-5-ական անվճար այցելություն դասական երաժշտության (օպերա, բալետ, համերգ), մանկական համերգի կամ թատրոն, սահմանափակումներ նախատեսել՝ որոշակի հաստատություններում առանց ծնողի ուղեկցության երեխայի գտնվելու առումով, ինտերնետ ակումբներում արգելափակել երեխայի վրա բացասական ազդեցություն թողնող կայքեր անչափահաս հաճախորդների մուտքը, ակոհոլի վաճառքի բոլոր կետերում ուժեղացնել հսկողությունը երեխաներին ակոհոլ վաճառելու արգելքի պահպանման նկատմամբ, խստացնել այդ արգելքը խախտելու համար նախատեսվող պատասխանատվությունը, ՀՀՄ-ների նկատմամբ նախատեսել ժողովրդավարական գրաքննություն:

ը/. Ընտանիքում առկա խնդիրները ևս իրենց անմիջական ազդեցությունն են գործում անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երեխաների հետ համատեղ ապրող չափահասներին, հատկապես ծնողներին, մանկավարժական, հոգեբանական տարրական գիտելիքներ տալուն,

9. Անչափահասների հանցավորության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն սահմանելու նպատակով կարևոր դերակատարություն ունի դպրոցը, ուսումնադաստիարակչական հաստատությունը, հետևաբար այս ոլորտում առկա խնդիրները նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է՝ վերանայել դպրոցական ծրագրերն ու դասագրքերը, հնարավորինս դրանք բեռնաթափել ու հետաքրքիր դարձնել երեխայի համար, իրականացնել միջոցառումներ ուսուցչի հեղինակության բարձրացմանն ուղղությամբ, ինչն, առաջին հերթին, ենթադրում է դպրոցում կոռուպցիայի, մասնավոր պարապմունքների արատավոր պրակտիկայի վերացում, ինչպես նաև ուսուցիչներին քաղաքական գործընթացներից զերծ պահելը, վերացնել երեխաների անհարգելի բացակայությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքը, նախատեսել հստակ, ազդեցիկ ներգործության միջոցներ՝ դպրոցից անհարգելի բացակայությունների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ (Տոկիոյի կանոններ), 14.12.1990 [120]
2. Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ (Հավանայի կանոններ), 14.12.1990 [126]
3. Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2015 թթ, http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf ; էջ 18-111 [2; 11; 12; 14; 92; 137; 138; 140]
4. Անչափահաս իրավախախտների վերականգնողական կենտրոնները պետական աջակցության կարիք ունեն, 12.03.2014, <http://www.media-center.am/hy/1394628805> [133]
5. Անչափահասների քրեակատարողական հիմնարկում խնդիրները շատ են, 29.10.2002, <http://hra.am/hy/position/2012/11/29/juvenile> [139; 131]
6. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016, Երևան 2016, էջ 122-141; http://www.armstat.am/file/article/15._trud_2016_8.pdf, 05.11.2017, 19.11 [3]
7. Արման Միերի Խաչատրյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի ՎԲ-223/06 որոշում, Շահեն Նշանի Հախվերդյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՎԴ/0014/01/11 որոշում [27]
8. Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ (Նեյսոն Մանդելայի կանոններ), 30.08.1955 [123]
9. Բոստանջյան. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանում միջին խավը վերացավ <https://armeniasputnik.am/exclusive/20160823/4711323.html> [2]
10. Գաբուլյան Ա., Առաքելյան Ս., Ղուկասյան Ա., Մարգարյան Ա., Սիմոնյան Տ., Թերզյան Ա., Մխիթարյան Ս., Պետրոսյան Մ., Սերոբյան Ա. Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները ՀՀ-ում Երևան, 2010; 104 էջ [74; 80]

11. Գորիսում ծեծված աշակերտի առողջական վիճակը վատացել է, <http://hetq.am/arm/news/31429/>, 22.11.2017, 23.36 [93]
12. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec (2006)2 հանձնարարական անդամ երկրներին՝ Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ [125]
13. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 20.11.1989 [127]
14. Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Բանգկոկյան կանոններ), 06.10.2010 [124]
15. Կոտայքի մարզի դպրոցում սկսված անչափահասների մահակներով կռիվն ավարտվել է մի քանիսի դանակահարությամբ, <http://www.1in.am/1804479.html>, 27.12.2015 [93]
16. Համադասարանցուն ստիպել է համբուրել ոտքերը. «չնչին» միջադեպը՝ 19-ամյա երիտասարդի մահվան պատճառ, <https://www.yerkir.am/news/view/65345.html>, 22.11.2017, 23.42 [93]
17. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2016, http://www.armstat.am/file/article/demog_2016_2.pdf, 05.11.2017, 22.59, էջ 37-52 [15]
18. Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիր, Հավելված N 1, ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշման [9]
19. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Առողջապահություն, 2005, <http://armstat.am/file/doc/527.pdf>; էջ 136-168 [36; 38]
20. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Առողջապահություն, 2016, <http://armstat.am/file/doc/99499408.pdf>, էջ 153-183 [36; 38; 60]
21. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Զբաղվածություն, 2017, էջ 48-83 [51]
22. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2005, Զբաղվածություն, էջ 47-68 [51]
23. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2008, Զբաղվածություն, էջ 49-70 <http://armstat.am/file/doc/99504348.pdf> 15.11.2017. 10.34 [51]

24. Հայաստանի վիճակագրական տարեգիրք. Առողջապահություն 2006, էջ 135-167
<http://armstat.am/file/doc/99450503.pdf> [60]
25. 2012թ. Հաշվետվություն - անչափահաս դատապարտյալների վերաբերյալ,
http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=5 [49]
26. 2013թ. Հաշվետվություն - անչափահաս դատապարտյալների վերաբերյալ;
http://www.court.am/?l=lo&id=50&cat_id=0&page_num=3 [110]
27. 2014թ. Հաշվետվություն - անչափահաս դատապարտյալների վերաբերյալ;
<http://www.court.am/?l=lo&id=50> [49; 111]
28. Հայաստանում ավելացել է միայնակ կանանց թիվը.
<https://www.aysor.am/am/news/2014/05/14/aharon-adibekyan/789666>, 14.05.2014.
13.45 [79]
29. Հայաստանում թմրամոլների թիվը տարեցտարի աճում է,
<https://armenpress.am/arm/news/862815/hayastanum-tmramolneri-tivy-tarectari-atsum-e.html>; 13.11.2017, 00.59 [39]
30. ՀՀ դատախազության կողմից ՀՀ նախագահին ներկայացված ՀՀ
Դատախազության 2011 թ.-ի գործունեության մասին հաղորդում,
<http://www.prosecutor.am/myfiles/files/pdf/report-2011.pdf>, 08.11.2017, 19.24 [6]
31. ՀՀ-ում թմրամոլների քանակը 30 հազար է, որոնցից 12700 ներերակային
թմրանյութեր են օգտագործում, <http://www.iravunk.com/news/879>, 13.11.2017, 1.03
[39]
32. ՀՀ-ում ծնելիության մակարդակը նվազում է, և այդ միտումը շարունակական է.
Ռուբեն Եզանյան <http://barometer.am/news/top-news/20150309/1266/>;
<http://lurer.com/?p=18568&l=am> [4]
33. ՀՀ Կառավարության 2012 թ.-ի դեկտեմբերի 27-ի N 1694 – Ն որոշումը՝
Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության
2013 - 2016 թվականների ռազմավարական ծրագիրը եվ երեխայի իրավունքների
պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի
միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի
հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի n 1745-ն

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին [114]

34. ՀՀ վիճակագրական տարեգիրք. կրթություն և մշակույթ 2017, էջ 114-147
<http://armstat.am/file/doc/99504493.pdf> [103]
35. ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003 թ., ՀՕ-528-Ն [109]
36. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, ընդունվել է 24.12.2004 թ [130]
37. Մանուկյան Լ., Միտոյան Հ. , Սարգսյան Մ., Մուրադյան Ժ., Հովհաննիսյան Ա., Առաքելյան Ռ., Ղազարյան Կ., Դաբադյան Զ., Մարտիրոսյան Գ., Ծառուկյան Ռ. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, Երևան 2007, 141 էջ [143]
38. Մարգարյան Ա. Շահադիտական-բռնի մոտիվացիայով հանցանքներ կատարած անձանց սոցիալ-հոգեբանական բնութագիրը, «Պետություն և իրավունք», թիվ 2 (16), Երևան, 2002, էջ 78-88 [64]
39. Նալչաջյան Ա.Ա. Հոգեբանության հիմունքներ, Երևան 1997, 648 էջ [45]
40. Որ երեխան մանկատան փոխարեն հայտնվի այստեղ, 19.11.2017, 12.01,
http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20160901_4&flag=am [139]
41. Որքա՞ն է կազմում Հայաստանում նվազագույն սպառողական զամբյուղը, 10/05/2016 22:19, <https://b24.am/economy/60082.html> [141]
42. Սերոբյան Ա., Թերզյան Ա., Ասատրյան Ե. ԶԼՄ-ների դերը հասարակության ձևավորման գործում. Երևան 2012, 28 էջ [88]
43. Վարդենիկի դպրոցի ծեծկոտուքի գործով քննիչը մի շարք խախտումներ է թույլ տվել, <https://news.am/arm/news/188690.html>, 22.11.2017, 23.37 [93]
44. Վերաքննիչ դատարանը բեկանել է Սևանի դպրոցում աչքը կորցրած 9-ամյա աշակերտի գործով վճիռը, 22.11.2017, 23.37 [93]
45. Абельцев С.Н. Личность преступника и проблемы криминального насилия. М., 2000, 207 էջ [43]
46. Абрамова Г.С. Возрастная психология. М., 2006, 623 էջ [85]
47. Аванесов Г.А. 10 глав о мотивации и мотивах. Через призму науки криминологии / Г.А Аванесов. М. : Юнити- Дана : Закон и право, 2012, 301 էջ [21]
48. Аденес И. Наказание и предупреждение преступлений. М., 1979, 320 էջ [113]

49. Алиев Х.О. Факторы, способствующие вовлечению несовершеннолетних в совершение антиобщественных действий. В сборнике: Актуальные вопросы правовой мысли человечества сборник статей Международной научно-практической конференции. Екатеринбург, 2016, № 29-35 [50]
50. Анисимова Я.Б. Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Таврический научный обозреватель. 2016. № 11-2 (16), № 60-66 [55]
51. Антонян Ю.М., Бородин С.В. Преступность и психические аномалии. М., 1987, 208 № [56; 57]
52. Антонян Ю.М., Гульдан В.В. Криминальная патопсихология. М., 1991, 248 № [58; 59]
53. Антонян Ю.М. Личность несовершеннолетнего преступника. Вестник Всероссийского института повышения квалификации сотрудников Министерства внутренних дел Российской Федерации. 2013. № 2 (26), № 3-9 [81]
54. Антонян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е. Психология преступника и расследования преступлений. М., 1996, 336 № [84; 91]
55. Антонян Ю. М. Насилие. Человек. Общество. М., 2001, 247 № [84; 91]
56. Аракелян С. Криминологическая характеристика лица, совершившего убийство в Республике Армения. «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», 2015 № 2 (17), № 17-23 [72]
57. Аствацатуров С. Безработные: проблемы и решения.// Меняющееся общество. Ереван, 2001, N 1-2, № 14-17 [82]
58. Ашин А.А. Значение психологических особенностей личности в процессе исправления несовершеннолетних осужденных. Вестник Владимирского юридического института. 2007. № 2, № 40-43 [132]
59. Базунов В. Арест как вид уголовного наказания // Преступление и наказание, 1998, № 4, № 48-53 [117]
60. Брижак З.И., Волочай С.Н. Характеристика преступлений несовершеннолетних и её значение для повышения эффективности расследования. Наука и образование:

хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2011, № 1 (7),
 100-103 [66]

61. Васкэ Е.В. Некоторые философские аспекты преступности несовершеннолетних в современной России. Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. Серия: Право. 2001, № 2, 76-79 [13]
62. Волков Б.С. Психология юности и молодости: Учебник для вузов. М.: Трикта, 2006, 256 73
63. Вологина Ж.Ю. Преступность среди несовершеннолетних / Ж.Ю. Вологина, Н.В. Спивакова, А.А. Камалов // Право: современные тенденции: материалы междунар. науч. конф. № 3. 2012, 64-69 [54]
64. Волошин И.А., Сударикова Т.Е. Влияние СМИ на формирование криминогенных установок у несовершеннолетних в возрасте от 14 до 18 лет. Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского. Юридические науки. 2016. Т. 2. № 4 (68), 51-56 [87]
65. Габузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период. Ереван, 2007, 256 8; 222; 227
66. Гаврилова Т.В., Диденко-Чинтимур Д.С. Социальные аспекты распространения насилия в отношении несовершеннолетних. Всероссийский криминологический журнал. 2012. № 3, 72-78 [94]
67. Галимова А.А. Влияние сети интернет и иных средств массовой информации на преступность несовершеннолетних. В сборнике: Современность в творчестве талантливой молодежи Сборник материалов научно-практической конференции молодых ученых. Редакционная коллегия: Капустюк П.А., Рогова Е.В., Таюрская Т.А., Шаевич А.В., Грозин С.Ю., Загорьян С.Г., Загайнов В.В., Ломухина А.В. 2016, 251 87
68. Голубев Ю.В. Девиантное поведение как социальная проблема. образование и саморазвитие, 2013, №2 (36), 178-183 [84]
69. Голубничая Л.С. Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Амурский научный вестник. 2015. № 1, 50

158-172 [45; 47; 48]

70. Грудинин Н. С., Галынская Д. С. Личность несовершеннолетнего преступника. Вестник Уральского Финансово-Юридического института, № 4(6)/2016, № 5-10 [71]
71. Гурьев М.Е. Детерминирующее влияние социально-психологических факторов на формирование личности несовершеннолетнего преступника. Психология и педагогика: методика и проблемы практического применения. Новосибирск, 2014. № 35-1, № 82-87 [99]
72. Гурьев М.Е. Анализ теорий агрессивного поведения в отечественной и зарубежной психологической литературе. В сборнике: Проблемы теории и практики современной науки Материалы III Международной научно-практической конференции. Научно-образовательное учреждение «Вектор науки» 2015, № 107-114 [105]
73. Демидова-Петрова Е. В. Специфика преступности несовершеннолетних как одного из видов преступности в Российской Федерации. Ученые записки Казанского юридического института МВД России. 2017. Т. 2. № 1 (3), № 13-18 [8]
74. Долгова А.И. Социально-психологические аспекты преступности несовершеннолетних. М., 1981, 159 № [42]
75. Долматов А. О. Обстоятельства, характеризующие условия жизни и воспитания несовершеннолетних, совершивших преступления, подлежащие учету при назначении наказания. Вестник Томского государственного университета. Право. 2014. № 2 (12), № 171-174 [121]
76. Думов С.Б. Условия и причины возникновения насилия как формы проявления девиантности среди несовершеннолетних. Интеграция образования. 2005. № 1-2, № 166-170 [18]
77. Жигинас Н.В., Зверева Н.А., Гребенникова Е.В. Девиантное поведение подростков как искажение нравственного воспитания. Вестник Томского государственного педагогического университета. 2014. № 1 (142), № 39-44 [90]
78. Забрянский Г.И. Социология преступности несовершеннолетних. Минск, 1997, 174

тз [13]

79. Зайко Т.М. Психолого-криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника. В книге: Меры борьбы с преступностью несовершеннолетних и молодежи: правовой и психолого-криминологический аспекты Тамбов, 2017, тз 9-30[34]
80. Зайко Т.М., Петухов Е.Н. К вопросу об изучении личности несовершеннолетнего преступника: социолого-правовой аспект. Историческая и социально-образовательная мысль. 2016. Т. 8. № 6-1, тз 137-141 [42]
81. Закалюк А. П. Прогнозирование и предупреждение индивидуального преступного поведения. М., Юридическая литература, 1996, 262 тз [136]
82. Игнатенко В. И. Групповая преступность несовершеннолетних как объект криминологического исследования//Юрист Юга России и Закавказья. 2016, № 2 (14), тз 33-39 [20]
83. Иголкина К.П.Социологическая характеристика особенностей отбывания уголовного наказания несовершеннолетними подростками. Конфликтология. 2015. Т. 3, тз 194-199 [122]
84. Казакова Д. В. Несовершеннолетние преступницы, лишённые свободы, и предупреждение их преступного поведения: Диссертация на соискание ученой степени кандидат юридических наук. М., 2008, 149 тз [122]
85. Карабанова О.А. Дисгармоничность детско-родительских отношений как фактор риска девиантного поведения личности. Вестник Московского университета МВД России. 2014. № 12, тз 295-299 [85; 86]
86. Квасова О. К современному состоянию проблемы временной перспективы личности. Историческая и социально-образовательная мысль 2012, N 5 (15), тз 137-141 [68]
87. Клейберг Ю. А. Психология девиантного поведения: М.: Просвещение, 2003, 160 тз [24]
88. Ковтуненко Л.В. Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей. Вестник Воронежского института МВД

России. 2012. № 3, № 137-143 [95; 89]

89. Кожевников И. С., Верemenko В. М. Анализ состояния борьбы с преступностью несовершеннолетних. Вестник Калининградского филиала Санкт-Петербургского университета МВД России 2008. № 2-2, № 122-125 [2]
90. Коледа И.В. Факторы формирования девиантного поведения в молодежной среде. Труды БГТУ. №8. Учебно-методическая работа. 2009. № 8, № 159 [132]
91. Комментарий к Уголовно-исполнительному кодексу Российской Федерации. М., 1997, 800 № [117]
92. Кондрашенко, В.П. Девиантное поведение у подростка: социально - психологические и психиатрические аспекты. Минск, 1988, 207 № [26]
93. Корецкий Д. А., Тулегенов В. В. Криминальная субкультура и ее криминологическое значение. СПб., 2006, 256 № [113]
94. Корнакова С.В., Корягина С.А. Современные тенденции насильственных преступлений, совершаемых несовершеннолетними. Всероссийский криминологический журнал. 2016. Т. 10. № 1, № 148-155 [19]
95. Криминология : учебник / под ред. В.Д. Малкова. 2-е изд. М. : Юстицинформ, 2006, 528 № [21]
96. Криминология/ под ред. Шели Дж.Ф. СПб, 2003, 860 № [22]
97. Кудрявцев В. Н. Борьба мотивов в преступном поведении. М., 2007, 128 № [65]
98. Куринова Я. И. Современная преступность несовершеннолетних: криминологическая характеристика и предупреждение. Автореферат диссертации на соискание степени кандидата юридических наук, Ростов-на-Дону, 2011, № [19]
99. Курс советского уголовного права : в 5 т. – Т. 2. Часть Общая. Л., 1970, 671 № [115]
100. Лаушкин, А. С. Криминологическая характеристика личности несовершеннолетнего преступника, отчужденного до совершения преступления от учебы и трудовой занятости. // Преступность в России: причины и перспективы. - М. : ВНИИ МВД России, 2005, 85 № [50]
101. Лелеков В.А., Кошелева Е.В. Влияние семьи на преступность несовершеннолетних

// Социологические исследования. 2006. № 1, № 103-112[52]

102. Лелеков В. А. Урусова Т. В. О предупреждении женской преступности мерами общесоциальной профилактики, Вестник Воронежского института МВД России, N 2, 2014, № 13-14 [22]
103. Лунеев В.В. Мотивация преступного поведения. М., 1991, 382 № [102]
104. Макогон И.В., Косарева Л.В. Проблема личности несовершеннолетнего преступника. Современные тенденции развития науки и технологий. 2016. № 1-7, № 69-71 [42]
105. Мельникова-Шаркова Е.А. Формирование и криминализация личности несовершеннолетнего преступника. Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы. 2016. № 1 (39), № 17-22 [47]
106. Мельникова-Шаркова Е.А. Неформальное окружение как фактор криминализации несовершеннолетнего преступника. Вопросы криминологии, криминалистики и судебной экспертизы. 2015. № 1 (37), № 46-49 [99]
107. Менделевич В. Д. Психология девиантного поведения. СПб.: Речь, 2005, 445 № [25]
108. Механизм преступного поведения / Под редакцией Кудрявцева В.Н., Ионина Л.Г., Казимирчука В.П., Петрухина И.Л., Туманова В.А., Яковлева А.М. М., 1981, 248 № [62]
109. Миннегалиев М.М. Типология и сущность понятия «девиантное поведение» в воспитательно-профилактической работе с несовершеннолетними. Вестник Башкирского университета. 2012. Т. 17. № 3, № 1416-1422 [29]
110. Михайловская И.Б., Вершинина Г.В. Трудные ступени: профилактика антиобщественного поведения. М., 1990, 141 № [42]
111. Михайловская И. Б., Кузьминский Ю. Ф., Мазаев Ю. Н. Преступность: что мы знаем о ней. Милиция: что мы думаем о ней. М., 1994, 180 № [113]
112. Миско Е.А., Тарабрина Н.В. Особенности жизненной перспективы у ветеранов войны в Афганистане и ликвидаторов аварии ЧАЭС // Психологический журнал. 2004. № 3, № 44-52 [69]

113. Муздыбаев К. Переживание времени в период кризисов // Психологический журнал, 2000, Т 2, N 4, № 5-21[69]
114. Немов Р.С. Психология. М., 2001, 640 № [61]
115. Паатова М.Э., Бегидова С.Н., Хакунов Н.Х. Теоретико-методологический анализ социально- педагогических феноменов «девиантное поведение» и «делинквентное поведение» подростков. Вестник Адыгейского государственного университета. Серия 3: Педагогика и психология. 2012.№ 1, № 97-105 [28]
116. Пекарь И.В.Влияние тревожности на противоправное поведение несовершеннолетнего правонарушителя в норме и умственной отсталости. Актуальные вопросы современной науки. 2009. № 10, № 75-80 [75]
117. Петровский А.В., Ярошевский М.Г. Теоретическая психология. М., 2001, 496 № [61]
118. Пиджаков А.Ю., Макарова Т.Г., Леженникова И.М. Детерминация преступности несовершеннолетних. Юридическая мысль. 2006. № 5, № 82-86 [13]
119. Плешаков А.В. Институт семьи в предупреждении пьянства и алкоголизма среди несовершеннолетних: его недостатки и возможности / А.В. Плешаков, А.В. Долгов // Преступность в России и борьба с ней: региональный аспект. М, 2003, № 163-176 [21]
120. Просвирнин В.Г. Преступность несовершеннолетних: современные тенденции и проблемы профилактики Вестник Воронежского государственного университета. Серия: Право. 2007. № 1, № 299-312 [13]
121. Пруцкова Е.А. Профилактика девиантного поведения среди подростков в образовательных учреждениях. Педагогика. Вопросы теории и практики. 2017. № 1 (5), № 39-41 [94]
122. Психология личности: конспект лекций Т. В. Каратьян: издательство «Эксмо», 2008, 160 № [46]
123. Ральникова Л.А. Девиантное поведение несовершеннолетних: причины и проявления. Северо-Кавказский психологический вестник. 2015. № 3 (13), № 34-40 [27]

124. Ратанина О.В. Самоконтроль, импульсивность, агрессивность и эмпатия как факторы делинквентного поведения подростков. В сборнике: Молодёжь третьего тысячелетия Сборник научных статей. 2016, № 683-685 [71]
125. Реан А.А. Семья: Агрессия и виктимность несовершеннолетних, Вестник Московского университета МВД России. 2014. № 12, № 304-308 [82]
126. Реан А.А. Агрессия и виктимность в контексте семейной социализации Психопедагогика в правоохранительных органах. 2016. № 4, № 35-38 [82; 83]
127. Рубинштейн С.Л. Основы общей психологии. СПб 2002, 720 № [61]
128. Савельев А.И. Криминологическая характеристика и предупреждение преступности несовершеннолетних в крупных городах Сибири: автореф. диссертации на соискание ученой степени канд. юрид. наук. Омск, 2006, 19 № [48]
129. Сапронова Н.А. Социально-типологическая характеристика личности несовершеннолетнего преступника. Алтайский вестник государственной и муниципальной службы. 2012. № 9, № 68-71 [48]
130. Самиулина Я.В. Семейное неблагополучие как причина преступности несовершеннолетних//Юридический аналитический журнал. 2005. № 4, № 36-41 [53]
131. Симонян Т. Молодежная женская преступность в РА. «Բանբեր Երևանի համալսարանի», «Իրավագիտություն», 142.3, 2014, № 62-66 [22]
132. Ситник И.Е. Роль референтной группы в социализации подростков. Проблемы современной науки и образования. 2017, № 22 (104), № 107-109 [104]
133. Соколова В.В. Влияние семейного воспитания на формирование девиантного поведения детей. Вестник Челябинского государственного университета. Образование и здравоохранение. 2015. № 1 (3), № 102-105 [85]
134. Стасенко О.В. Преступное поведение: гендерный анализ. Женщина в Российском обществе, 2009, <https://cyberleninka.ru/article/n/prestupnoe-povedenie-gendernyy-analiz>; 13.11.2017, 22.59, № 57-63 [45]
135. Степашин В. М. Арест как вид уголовного наказания. Вестник Омского

университета. Серия: Право. 2011. № 4 (29), № 130-134 [116]

136. Таилова А.Г. Дисфункциональность семьи как фактор совершения преступления несовершеннолетними. Современные тенденции развития науки и технологий. 2015. № 7-6, № 115-117 [80]
137. Тарарухин С.А. Преступное поведение (социальные и психологические черты). М., 1974, 224 № [43; 72]
138. Тимохов Е.В. Основные направления профилактики преступлений, совершаемых несовершеннолетними в воспитательных колониях. Человек: преступление и наказание. 2010. № 3, № 64-65 [128]
139. Упоров И.В. Девиантное поведение несовершеннолетних как предпосылка совершения ими преступных деяний. Общество и право. 2012. № 4 (41), № 312-315 [31]
140. Уткина Е.Ю., Богунова Г.В. Элементы криминологической характеристики несовершеннолетних преступников и профилактические меры предупреждения преступности несовершеннолетних. Ученые заметки ТОГУ. 2014. Т. 5. № 4, № 340-344 [55]
141. Федотова В.О. Криминологическая характеристика личности несовершеннолетнего правонарушителя в аспекте правосознания. Вестник Краснодарского университета МВД России. 2009. № 1, № 99-100 [52]
142. Филиппова В.О. Несовершеннолетняя преступность как объект криминологического исследования. Известия Оренбургского государственного аграрного университета, 2015. № 2 (52), № 258-260 [13]
143. Фокина А. В. Роль личностного эгоцентризма в структуре подростковой девиантности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук, Москва, 2008, 22 № [101]
144. Фурманов И. А. Межпоколенная эстафета агрессии и насилия в семье: эндогенные и экзогенные факторы. «Вестник БГУ» : научно-теоретический журнал Белорусского государственного университета, 2009, №1, № 67-72 [107]
145. Хеккхаузен Х. Мотивация и деятельность. М., 1986, Т. 1, 392 № [63]

146. Цыбенков С.В., Бельгаев М.Л. Общесоциальные факторы, влияющие на подростково-молодежную преступность. Проблемы правоохранительной деятельности. 2007. № 1, № 44-48 [50]
147. Челышева Ю.В. Социально-психологические причины асоциального поведения несовершеннолетних. В сборнике: Социально-психологические аспекты практики социальной работы, под редакцией Овчаренко Л.Ю., Тютченко А.М. М., 2016, № 37-43 [104]
148. Чеснокова Е. А. Актуальные проблемы применения штрафа в отношении несовершеннолетних, осужденных за имущественные преступления. Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России, Выпуск № 2 (11) / 2009, № 178-182 [112]
149. Шаталов Е.А., Малаева Л.О. Преступность среди несовершеннолетних: влияние семьи. Вопросы современной юриспруденции. 2015. № 45-46, № 1-5 [52]
150. Шилова Т.А., Психологические особенности отклоняющегося поведения подростков. Системная психология и социология. 2012. № 5, № 85-90 [100]
151. Шуняева В.А. Социально-демографические признаки личности несовершеннолетнего преступника: особенности современного состояния. Социально-экономические явления и процессы. 2017. Т. 12. № 1, № 134-140 [48]
152. Шнайдер Г. Й. Криминология. М., 1994, 504 № [88]
153. Юзиханова Э. Г. Статистические показатели и тенденции преступности несовершеннолетних в новейшей России. //Юридическая наука и правоохранительная практика. 2014, № 4 (30), № 82-87 [20]
154. Юридическая психология: учебник / под общ. ред. Ю. Ф. Чуфаровского. 3-е изд., испр. и доп. М., 2003, 324 № [89]
155. About 45 percent of Armenia's population is poor, http://arka.am/en/news/society/about_45_percent_of_armenia_s_population_is_poor/ 05.11.2017 [2]
156. Andrew Von Hirsch. Proportionate Sentences for Juveniles. How Different than for Adults? Punishment & Society April 2001 vol. 3 no. 2, № 221-236 [108]

157. Armenia Corruption Report, 2016, <http://www.business-anti-corruption.com/country-profiles/armenia>, 20.11.2017, 16.08 [134]
158. Barnes G., Welte J., Hoffmann J. Relationship of Alcohol Use to Delinquency and Illicit Drug Use in Adolescents: Gender, Age, and Racial/Ethnic Differences. *Journal of drug issues* 2002, 32(1), 153-178 [34]
159. Bartol, C., Bartol A. *Juvenile Delinquency and Antisocial Behavior: A Developmental Perspective*, 2009. 3rd ed: Pearson Prentice Hall, 432 15 [84]
160. Carson D., Sullivan C., Cochran J. General strain theory and the relationship between early victimization and drug use. *Deviant Behavior*, 2008, Volume 30, Issue 1, 54-88 [40]
161. Chmielowiec J., Rajewski A. Health politics and strategies of action against drug addiction in European countries and the States. *Family Medicine and Primary Care Review*, 2012, vol. 14, no. 1, 97-102 [19]
162. Clear T., Rose D., Ryder J. Incarceration and the community: The problem of removing and returning offenders. *Crime & Delinquency*, 2001, 335-351 [113]
163. Coughlin, B.C. The Urban Street Gang after 197 / B.C. Coughlin, S.A. Venkatesh // *Annual Review of Sociology*. 2003. № 29, 41-64 [106]
164. Cox P. History and global criminology: (re)inventing delinquency in Vietnam. *British Journal of Criminology*, 2012, vol. 52, no. 1, 17-31[19]
165. Dirikx A., Gelders D., Parmentier S. Police-youth relationships: A qualitative analysis of adolescent's attitudes towards police. *European Journal of Criminology* 2012, Volume 9, number 2, 191-205 [135]
166. D ü n k e l F. Juvenile Justice Systems in Europe – Reform developments between justice, welfare and ‘new punitiveness’. *Kriminologijos studijos* 2014/1, 31-76 [23]
167. *European Sourcebook on Crime and Criminal Justice Statistics*, Fifth edition, Helsinki 2014, http://www.heuni.fi/material/attachments/heuni/reports/qrMWoCVTF/HEUNI_report_80_European_Sourcebook.pdf 413 15 [7; 10]
168. Europe Council documents collection in the sphere of human rights protection and struggle against criminality. <http://www.consilium.europa.eu/en/documents->

publications [118]

169. Farrington, D. Childhood risk factors and risk-focused prevention. In Maguire, M. et al. (Eds.), *The Oxford Handbook of Criminology*, Oxford University Press. 2007, 602-640 [95]
170. Gatti U., Haymoz S., Schadee H. Deviant Youth Groups in 30 Countries. Results From the Second International Self-Report Delinquency Study . *International Criminal Justice Review*, 2011, Vol 21, Issue 3, 208-224[102]
171. Hadjar A., Baier D., Boehke K., Hagan J. Juvenile Delinquency and gender Revisited. *European Journal of Criminology*, 2007, Volume 4 , Number 1, 33-58 [44]
172. Henry K. Who's Skipping School: Characteristics of Truants in 8th and 10th Grade. *Journal of School Health*. Volume 77, 2007, Issue 1, 29-35 [95]
173. Henry K., Huizinga D. School-related risk and protective factors associated with truancy among urban youth placed at risk *The journal of primary prevention*, 2007, Volume 28, Issue 6, 505-519 [96]
174. Hinduja S., Patchin J. Offline Consequences of Online Victimization. *School Violence and Delinquency*. 2007, Volume 6, Issue 3, 89-112 [40]
175. Junger-Tas J, Marshall I., Enzmann D., Killias M., etc. *Juvenile Delinquency in Europe and Beyond. Results of the Second International Self-Reported Study*, Springer 2010, 427 62 [37]
176. Junger-Tas J, Marshall I., Ribeaud D. *Delinquency in an International Perspective*. Amsterdam, 2003, 185 62 [44]
177. Kambam P. and Thompson Ch. The development of decision-making capacities in children and adolescents: Psychological and neurological perspectives and their implications for juvenile defendants. *Behavioral Sciences & the Law*, Special Issue: The Neuroscience and Psychology of Moral Decision Making and the Law Volume 27, Issue 2, March/April 2009, 173-190 [108]
178. Keltikangas-Jarvinen L., Kangas P. Problem-solving strategies in aggressive and nonaggressive children // *Aggressive Behaviour* 1988, No 4, 255-264 [83]
179. Kobrin S., Hellum F., Peterson J. Offence patterns of status offenders. *Critical Issues*

- in Juvenile Delinquency, 1980, էջ 203-235 [30]
180. Lawrence R. School Performance, Containment Theory, and Delinquent Behavior. Youth & society 1985, Vol 17, Issue 1, էջ 69-95 [96]
 181. Lucia S., Killias M., Junger-Tas J. The School and its Impact on Delinquency. The Many Faces of Youth Crime, 2011, էջ 211-235 [95]
 182. Margaryan A., Gabuzyan A. Juvenile self-reported delinquency in Armenia in 2006. Juvenile Delinquency in Europe and Beyond, Springer, 2010, էջ 369-381 [17]
 183. Muncie J. The 'Punitive Turn' in Juvenile Justice: Cultures of control and rights compliance in Western Europe and the USA. Jouth Justice 2008, Volume 8, Issue 2, էջ 107-121 [23]
 184. Polana Selie. The analysis of Special Psychological profile: Beginning of Profiling in Slovenia, Policing in Central and Eastern Europe: Comparing Firsthand Knowledge with Experience from the West. Ljubljana: Visoka policijsko-varnostna šola, Slovenia 1996, էջ 375-384. [43]
 185. Pritchard C., Williams R. A three-year comparative longitudinal study of a school-based social work family service to reduce truancy, delinquency and school exclusions- Journal of Social Welfare and Family Law. Volume 23, 2001, Issue 1, էջ 23-43 [95]
 186. Robbins R., Bryan A. Relationships Between Future Orientation, Impulsive Sensation Seeking, and Risk Behavior Among Adjudicated Adolescents. Journal of Adolescent Research , 2004, Vol 19, Issue 4, էջ 428-445 [98]
 187. Shelden R., Horwath J., Tracy S. Do status offenders get worse? Some clarifications on the question of escalation. Crime and delinquency 35, 1989, էջ 202-216 [30]
 188. Smith C., Thornberry T. The relationship between childhood maltreatment and adolescent involvement in delinquency. Criminology, 1995, Volume 33, Issue 4, էջ 451-481 [40]
 189. Steinberg L., Scott E. Less Guilty by Reason of Adolescence: Developmental Immaturity, Diminished Responsibility, and the Juvenile Death Penalty. American Psychologist, Vol 58(12), Dec 2003, էջ 1009-1018 [108]

190. Steketee M., Jonkman H., Berten H., Vettenburg N. Alcohol use Among Adolescents in Europe, Utrecht 2013, <http://www.verwey-jonker.nl>, 352 tğ [32; 33]
191. Van den Toorn J., Steketee M., Jonkman H. Paper on Policies toward Alcohol among Juveniles in Europe. NL, 2012 [35]
192. Weis J.G., Sakumoto K., Sederstrom J, Zeiss C. Jurisdiction and the elusive status offender: A comparison of involvement in delinquent behavior and status offences. Washington, 1980, 142 tğ [30]
193. When students repeat grades or are transferred out of school: what does it mean for education systems? PISA in focus 2011/6. <https://www.oecd.org/pisa/pisaproducts/pisainfocus/48363440.pdf>, 18.11.2017. 13:55, [97]
194. Wikstrom P., Svensson R. When does self-control matter? The interaction between morality and self –control in crime causation. *European Journal of Criminology*, 2010, Volume 7, number 7, tğ 395-410 [66]
195. Wikstrom P., Trieber K. The role of self-control in crime causation: Beyond Gottfredson and Hirschi's General theory of Crime. *European Journal of Criminology*, 2007, Volume 4, number 2, tğ 237-264 [66]
196. Zhang L, Welte J., Wieczorek W. Deviant lifestyle and crime victimization. *Journal of Criminal Justice*, 2001. Volume 29, Issue 2, tğ 133-143 [40]
197. Zimring, F., E.Grisso, T., Schwartz R. Penal proportionality for the young offender: Notes on immaturity, capacity, and diminished responsibility. *Youth on trial: A developmental perspective on juvenile justice*. Chicago, IL, US: University of Chicago Press, vi, 2000, tğ 271-290 [108]

Աշակերտների հարցման հարցաշար ISRD-2, ISRD-3

Բարև, Այս հարցաշարը քո և ընկերներիդ մասին է: Մենք ցանկանում ենք փոքր-ինչ ավելին իմանալ քո կյանքի, դպրոցի, ազատ ժամանցի և հնարավոր խնդիրների մասին: Հարցերը վերաբերում են քո անձնական փորձին և տեսակետներին: Դու ազատ ես հարցերին պատասխանելու առումով. կարող ես դրանց պատասխանել կամ չպատասխանել:

Իհարկե, հարցումն անանուն է: Քո անունը չի գրվելու, ծնողներիդ և ուսուցիչներիդ պատասխաններիդ չեն տեսնելու: Նույնիսկ ուսումնասիրություն իրականացնող մեր խմբի անդամները չեն կարող իմանալ, թե կոնկրետ ով ինչպես է պատասխանել հարցերին: Երբ հարցաշարում ներկայացված հարցերին պատասխանելը ավարտես, հարցաշարը ավտոմատ և անանուն կերպով կուղարկվի Երևանի պետական համալսարան:

Եթե հարցաշարում կան հարցեր, որոնք քեզ համար անհասկանալի են, խնդրում ենք պարզաբանման նպատակով դիմել քեզ օգնելու նպատակով դպրոց եկած մեր թիմի ներկայացուցչին (բայց մի թույլ տուր, որ նա տեսնի հարցերիդ տրված պատասխանները): Հարցերին պատասխանելիս երկար մտածելու կարիք չկա: Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Մի քանի հարց քո մասին՝

1.Քո սեռը՝

☐ արական ☐ իգական

2.Քանի՞ տարեկան ես _____ տարեկան (նշիր տարիքդ)

3.Ո՞ր պետությունում ես ծնվել

☐ Հայաստանում ☐ Սիրայում ☐ Վրաստանում

☐ Ռուսաստանում ☐ Իրանում ☐ Օայլ երկրում_____

4.Ու՞մ հետ ես ապրում

☐ մայրիկիս և հայրիկիս

☐ միայն մայրիկիս/միայն հայրիկիս

☐ Օայլ_____

5.Հայրիկդ աշխատու՞մ է

☐ ոչ, նա աշխատանք չունի

☐ այո, նա աշխատում է

☐ այլ_____

6.Մայրիկդ աշխատու՞մ է

☐ ոչ, նա աշխատանք չունի

☐ այո, նա աշխատում է

☐ այլ_____

7.Ինչպե՞ս կգնահատես ընտանիքիդ նյութական ապահովվածությունը ի համեմատ մյուսների

☐ ավելի վատ ☐ նույնը ☐ ավելի լավ

8.Ի՞նչ ես կարծում, քո տարեկիցների համեմատ, դու որքան գումար ես ունենում քո անձնական ծախսերի համար (գրպանի ծախս)

☐ ավելի քիչ ☐ նույնքան ☐ ավելի շատ

9.Ի՞նչ հարաբերություններ ունես ծնողներիդ հետ

ա/ ես լավ հարաբերություններ ունեմ հորս հետ

☐ այո ☐ ոչ ☐ չեմ կողմնորոշվում

բ/ ես լավ հարաբերություններ ունեմ մորս հետ

☐ այո ☐ ոչ ☐ չեմ կողմնորոշվում

գ/ ծնողներս միշտ հոգ են տանում իմ մասին ու աջակցում

☐ այո ☐ ոչ ☐ չեմ կողմնորոշվում

դ/ ես շատ վատ կզգամ, եթե հիասթափեցնեմ ծնողներին

- ☐ այո ☐ ոչ ☐ չեմ կողմնորոշվում

10. Շաբաթական քանի՞ օր ես սովորաբար ընտանիքիդ անդամների հետ միասին ընթրում

- ☐ երբեք
☐ շաբաթը մեկ
☐ շաբաթը 2 անգամ
☐ շաբաթը 3 անգամ
☐ շաբաթը 4 անգամ
☐ շաբաթը 5 անգամ
☐ շաբաթը 6 անգամ
☐ ամեն օր

11. Որքանո՞վ է ստորևը քեզ վերաբերվում

ա/ ծնողներս տեղյակ են, թե տանից դուրս գտնվելիս ես որտեղ եմ գտնվում

- ☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

բ/ ծնողներս տեղյակ են, թե տանից դուրս գտնվելիս ես ինչով եմ զբաղվում

- ☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

գ/ ծնողներս տեղյակ են, թե տանից դուրս գտնվելիս ես ում հետ եմ

- ☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

դ/ ծնողներս ճանաչում են ընկերներիս

- ☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

ե/ ծնողներդ հետաքրքրվո՞ւմ են, թե տանից դուրս գտնվելիս ինչով ես զբաղված եղել, ում հետ կամ որտեղ ես եղել

- ☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

զ/ երեկոյան տանից դուրս գալիս, ծնողներդ քեզ ասու՞մ են, թե ամենաուշը որ ժամին պետք է տանը լինես

- ☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

է/ եթե տանից դուրս գտնվում և սահմանված ժամից ուշանալու ես, ծնողներիդ պե՞տք է այդ մասին զանգես և տեղեկացնես

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

ը/ ծնողներիդ ստուգու՞մ են, տնային առաջադրանքներիդ կատարել ես թե ոչ

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

թ/ ծնողներիդ ստուգու՞մ են, ինչ ֆիլմեր/հաղորդումներ ես նայում կամ գրականություն կարդում

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

ժ/ դու ծնողներիդ տեղեկացնու՞մ ես, թե ում հետ ես ժամանակ անցկացնում

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

ի/ դու ծնողներիդ տեղեկացնու՞մ ես, թե ունեցածդ գումարը ինչ վրա ես ծախսում

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

լ/ դու ծնողներիդ տեղեկացնու՞մ ես, թե դպրոցից հետո սովորաբար որտեղ ես լինում

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

խ/ դու ծնողներիդ տեղեկացնու՞մ ես, թե ազատ ժամանակդ ինչպես ես անցկացնում

☐ միշտ ☐ երբեմն ☐ երբեք

12. Քո կյանքում նման բան տեղի ունեցե՞լ է

ա/ մայրիկիդ կամ հայրիկիդ մահացել են ☐ այո ☐ ոչ

բ/ մայրիկդ կամ հայրիկդ ծանր հիվանդանցել են ☐ այո ☐ ոչ

գ/ մայրիկդ կամ հայրիկդ թմրանյութ են գործածել

կամ անընդհատ հարբել ☐ այո ☐ ոչ

դ/ ծնողներիցդ մեկը մյուսին ծեծել է ☐ այո ☐ ոչ

ե/ ծնողներիդ անընդհատ վիճաբանել են ☐ այո ☐ ոչ

զ/ ծնողներիդ բաժանվել են/ամուսնալուծվել ☐ այո ☐ ոչ

13. Ի՞նչ վերաբերմունք ունես դպրոցի նկատմամբ

ա/ եթե ստիպված լինեիր տեղափոխվել դպրոցից, կկարոտեի՞ր այն ☐ այո ☐ ոչ

բ/ հաճույքով ես դասերին հաճախում ☐ այո ☐ ոչ

գ/ սիրում ես դպրոցը ☐ այո ☐ ոչ

դ/ դասերդ հետաքրքիր են անցնում ☐ այո ☐ ոչ

ե/ քո դպրոցում գողությունը տարածված է ☐ այո ☐ ոչ

զ/ քո դպրոցում կոիվները տարածված են ☐ այո ☐ ոչ

է/ քո դպրոցում շատ իրեր կա՞ն կոտրված ☐ այո ☐ ոչ

ը/ քո դպրոցում թմրանյութերը տարածված են ☐ այո ☐ ոչ

14. Որքանով է քեզ համար կարևոր, թե քո ամենասիրելի ուսուցիչ ինչ կարծիք ունի քո մասին

☐ կարևոր չէ ☐ այնքան էլ կարևոր չէ ☐ կարևոր է ☐ շատ կարևոր է

15. Նախորդ 12 ամսվա ընթացքում, պատահե՞լ է, որ առանց հարգելի պատճառի գոնե 1 օր բացակայես դպրոցից

☐ այո _____ անգամ ☐ ոչ

16. Ի՞նչ առաջադիմություն ունես, ինչպես ես սովորում դպրոցում

☐ շատ լավ, ես դասարանում լավագույնն եմ

☐ լավ

☐ միջին

☐ վատ

☐ շառ վատ, ես դասարանում ամենաթույլ աշակերտն եմ

17. Երբեք մնացե՞լ ես նույն դասարանում

☐ այո _____ անգամ ☐ ոչ

18. Ինչո՞վ ես ցանկանում զբաղվել դպրոցն ավարտելուց հետո

☐ շարունակելու եմ ուսումնա ՔՈՒՀ-ում

☐ արհեստ եմ սովորելու

☐ աշխատանք եմ փնտրելու, որ գումար վաստակեմ

☐ այլ_____

☐ դեռ չգիտեմ

19. Շաբաթական քանի՞ անգամ ես երեկոյան ժամերին, առանց ծնողներիդ ուղեկցության, տանից դուրս գալիս (գնում երեկույթի, ինչ-որ մեկի տուն կամ պարզապես ժամանակ անցկացում փողոցում)

☐ երբեք

☐ շաբաթը մեկ

☐ շաբաթը 2 անգամ

☐ շաբաթը 3 անգամ

☐ շաբաթը 4 անգամ

☐ շաբաթը 5 անգամ

☐ շաբաթը 6 անգամ

☐ ամեն օր

20. Հիմնականում ազատ ժամանակն ու՞մ հետ ես անցկացնում

☐ մենակ

☐ ընտանիքիս հետ

☐ ընկերներիս հետ

21. Դու քեզ երջանի՞կ ես զգում (վերջին 6 ամսվա կտրվածքում)

☐ այո

☐ ոչ

22. Ազատ ժամանակդ, ընկերներիդ հետ անցկացնելիս, հիմնականում ինչպե՞ս ես անցկացնում

☐ գնում եմք փոփ համերգ, պարասրահ, սրճարան

☐ ուրիշների հետ կովի ենք բռնվում

☐ սպորտով ենք զբաղվում

☐ դասերն ենք պատրաստում

☐ աննպատակ թափառում ենք փողոցում

- ☐ հաճույքի համար ապօրինի բաներ ենք անում
- ☐ ալկոհոլ, թմրանյութ ենք գործածում
- ☐ հաճույքի համար մարդկանց ենք հետապնդում, վախեցնում

23. Դու ընկերների այնպիսի խումբ ունե՞ս, ում հետ ես միշտ նախընտրում անցկացնել ազատ ժամանակդ

- ☐ այո ☐ ոչ

24. Քո ընկերների (խմբի) կողմից ընդունելի՞ է ապօրինի արարքներ կատարելը՝

- ☐ այո ☐ ոչ

25. Քո ընկերները (խումբը) ապօրինի արարքներ կատարու՞մ է

- ☐ այո ☐ ոչ

26. Քո կարծիքով, ընկերներիդ խմբին կարելի՞ է «բանդա» համարել՝

- ☐ այո ☐ ոչ

27. Որքանո՞վ է քեզ համար կարևոր, թե քո ընկերները ինչ կարծիք ունեն քո մասին

- ☐ կարևոր չէ ☐ այնքան էլ կարևոր չէ ☐ կարևոր է ☐ շատ կարևոր է

28. Քո ընկերների մեջ կա՞ն այնպիսիք, ովքեր՝

ա/ թմրանյութ են գործածել ☐ այո ☐ ոչ

բ/ խանութից գողություն են կատարել ☐ այո ☐ ոչ

գ/ ուրիշին ծեծել են, դանակով վախեցրել՝

նրա գումարին տիրանալու համար ☐ այո ☐ ոչ

դ/ ինչ-որ մեկի առողջությանը վնաս են պատճառել,

դանակով կամ այլ սուր գործիքով հարվածել ☐ այո ☐ ոչ

29. Ի՞նչպես ես վերաբերվում, երբ տարեկիցներդ՝

ա/ ծնողներին, ուսուցիչներին խաբում են, հակադրվում ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք

բ/ ուրիշի գույքն են ոչնչացնում, վնասում ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք

գ/ համացանցից, առանց թույլտվության, կինո

- կամ երաժշտություն են ներբեռնում ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք
- դ/ խանութից մանր գողություն են անում ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք
- ե/ ինչ-որ մեկին հարվածում են ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք
- զ/ ինչ-որ մեկին ծեծում են կամ դանակով սպառնում՝ ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք
- նրա գույքին տիրանալու համար ☐ վատ ☐ լավ ☐ չեզոք

30. Եթե գողություն կատարած լինեիր և բռնվեիր, դու կամաչեի՞ր եթե այդ մասին իմանար՝

- ☐ ընկերդ ☐ ուսուցիչդ ☐ ծնողներդ ☐ չէի ամաչի

31. Եթե ինչ-որ մեկին ծեծած լինեիր և բռնվեիր, դու կամաչեի՞ր եթե այդ մասին իմանար՝

- ☐ ընկերդ ☐ ուսուցիչդ ☐ ծնողներդ ☐ չէի ամաչի

32. Եթե ինչ-որ վատ բան անելու համար ոստիկանությունը քեզ բռներ, դու կամաչեի՞ր եթե այդ մասին իմանար՝

- ☐ ընկերդ ☐ ուսուցիչդ ☐ ծնողներդ ☐ չէի ամաչի

33. Որքանո՞վ ես համաձայն հետևյալ դատողությունների հետ
ա/ ես գործում եմ պահի ազդեցության տակ՝ չդադարելով մտածել

- ☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

բ/ ինձ ավելի շատ հուզում է, թե ինչ հետ ինչ կկատարվի մոտ, քան հեռու ապագայում

- ☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

գ/ ես անում եմ այն, ինչ այս պահին ինձ հաճույք է պատճառում, նույնիսկ եթե դրա հետևանքով ապագայում ինչ-որ բան կկորցնեմ

- ☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

դ/ ես սիրում եմ փորձել ինձ և պատրաստ եմ ռիսկի դիմել

- ☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

ե/ երբեմն ես ռիսկի եմ դիմում զուտ դրանից հաճույք ստանալու համար

- ☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

զ/ արկածներն ու ադրենալինը ինձ համար շատ ավելի կարևոր են, քան անվտանգությունը

☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

է/ ես առաջին հերթին հոգ եմ տանում իմ մասին, նույնիսկ եթե դրանով ուրիշների համար բարդություններ եմ ստեղծում

☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

ը/ եթե իմ արածներից ուրիշները հուզվում են, դա ոչ թե իմ, այլ իրենց խնդիրն է

☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

թ/ ես ամեն գնով կձգտեմ իմ ուզածին հասնել, եթե նույնիսկ դրանով ուրիշների համար խնդիրներ եմ ստեղծում

☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

ժ/ եթե ինչ-որ մեկն ինձ փորձի հարվածել, ես էլ նրան ի պատասխան կհարվածեմ

☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

ի/ տղամարդը, ինքնահաստատվելու համար, կարող է բռնություն գործադրել

☐ համաձայն եմ ☐ համաձայն չեմ

34. Համաձայն ես հարևաններին և հարևանության վերաբերող հետևյալ դատողությունների հետ

ա/ իմ հարևանները ուշադիր են, հետևողական ☐ այո ☐ ոչ

բ/ իմ հարևանները պատրաստ են օգնության հասնել ☐ այո ☐ ոչ

գ/ իմ հարևանները սիրում են ժամանակն իրար հետ անցկացնել ☐ այո ☐ ոչ

դ/ իմ հարևանները վստահել են ☐ այո ☐ ոչ

ե/ իմ հարևանները միմյանց հետ լավ հարաբերություններ ունեն ☐ այո ☐ ոչ

զ/ իմ հարևանությամբ շատ գրաֆիտի կա ☐ այո ☐ ոչ

է/ իմ հարևանությամբ շատ լքված շինություններ կան ☐ այո ☐ ոչ

ը/ իմ հարևանությամբ թմրանյութը, դրա առևտուրը տարածված է ☐ այո ☐ ոչ

թ/ իմ հարևանությամբ հաճախ են կռիվներ տեղի ունենում ☐ այո ☐ ոչ

35. Քո կյանքում, երբևէ նման բան եղե՞լ է՝

ա/ քեզանից սպառնալիքով գումար են պահանջել ☐ այո ☐ ոչ

բ/ քո առողջությանը վնաս են պատճառել ☐ այո ☐ ոչ

գ/ քեզանից գողություն են արել ☐ այո ☐ ոչ

դ/ քեզ հալածել են, ծաղրել ☐ այո ☐ ոչ

ե/ ծնողդ քեզ ծեծել է, հարվածել ☐ այո ☐ ոչ

զ/ ծնողդ քեզ անտեսել է, վատ վերաբերվել ☐ այո ☐ ոչ

36. Քո կյանքում, վերջին 12 ամսվա ընթացքում նման բան եղե՞լ է՝

ա/ քեզանից սպառնալիքով գումար են պահանջել ☐ այո ☐ ոչ

բ/ քո առողջությանը վնաս են պատճառել ☐ այո ☐ ոչ գ/ քեզանից գողություն են արել ☐ այո ☐ ոչ

դ/ քեզ հալածել են, ծաղրել ☐ այո ☐ ոչ

ե/ ծնողդ քեզ ծեծել է, հարվածել ☐ այո ☐ ոչ զ/ ծնողդ քեզ անտեսել է, վատ վերաբերվել ☐ այո ☐ ոչ

37. Եթե վերոնշյալ արարքներից որևէ մեկը քո հանդեպ կատարվել է, դու այդ մասին ո՞ւմ ես տեղեկացրել՝

☐ ոստիկանությանը ☐ ընկերոջդ ☐ ուսուցչիդ ☐ ծնողներիդ ☐ ոչ ոքի

38. Քո կյանքում, երբևէ նման բան արե՞լ ես

ա/ ներկով նկարել ես պատերին (գրաֆիտի) ☐ այո ☐ ոչ

բ/ դիտավորությամբ գույք ես ոչնչացրել ☐ այո ☐ ոչ

գ/ խանութից մանր գողություն ես արել ☐ այո ☐ ոչ

դ/ հեծանիվ ես գողացել ☐ այո ☐ ոչ

ե/ ավտոմեքենա ես գողացել կամ դրանից ինչ-որ իր ☐ այո ☐ ոչ

զ/ ավտոմեքենա ես փախցրել ☐ այո ☐ ոչ

է/ գողություն ես արել ☐ այո ☐ ոչ

ը/ խմբային կռվի ես մասնակցել ես արել ☐ այո ☐ ոչ

թ/ զենք ես կրել ☐ այո ☐ ոչ

ժ/ ինչ-որ մեկի առողջությանը վնաս ես հասցրել ☐ այո ☐ ոչ

- ի/ ինչ-որ մեկի գույքին տիրացես ես՝ սպառնալիքով ☐ այո ☐ ոչ
- լ/ հակերություն ես արել ☐ այո ☐ ոչ
- խ/ գինի/գարեջուր ես գործածել ☐ այո ☐ ոչ
- ծ/ թունդ ալկոհոլ ես գործածել ☐ այո ☐ ոչ
- կ/ թմրանյութ (հաշիշ) ես գործածել ☐ այո ☐ ոչ
- հ/ թմրանյութ (էքստազի, օպիում) ես գործածել ☐ այո ☐ ոչ
- ծ/ թմրանյութ ես վաճառել ☐ այո ☐ ոչ

39. Վերջին 12 ամսվա ընթացքում նման բան արե՞լ ես

- ա/ ներկով նկարել ես պատերին (գրաֆիտի) ☐ այո ☐ ոչ
- բ/ դիտավորությամբ գույք ես ոչնչացրել ☐ այո ☐ ոչ
- գ/ խանութից մանր գողություն ես արել ☐ այո ☐ ոչ
- դ/ հեծանիվ ես գողացել ☐ այո ☐ ոչ
- ե/ ավտոմեքենա ես գողացել կամ դրանից ինչ-որ իր ☐ այո ☐ ոչ
- զ/ ավտոմեքենա ես փախցրել ☐ այո ☐ ոչ
- է/ գողություն ես արել ☐ այո ☐ ոչ
- ը/ խմբային կռվի ես մասնակցել ես արել ☐ այո ☐ ոչ
- թ/ զենք ես կրել ☐ այո ☐ ոչ
- ժ/ ինչ-որ մեկի առողջությանը վնաս ես հասցրել ☐ այո ☐ ոչ
- ի/ ինչ-որ մեկի գույքին տիրացես ես՝ սպառնալիքով ☐ այո ☐ ոչ
- լ/ հակերություն ես արել ☐ այո ☐ ոչ
- խ/ գինի/գարեջուր ես գործածել ☐ այո ☐ ոչ
- ծ/ թունդ ալկոհոլ ես գործածել ☐ այո ☐ ոչ
- կ/ թմրանյութ (հաշիշ) ես գործածել ☐ այո ☐ ոչ
- հ/ թմրանյութ (էքստազի, օպիում) ես գործածել ☐ այո ☐ ոչ
- ծ/ թմրանյութ ես վաճառել ☐ այո ☐ ոչ

40. Եթե ալկոհոլ ես գործածել, ապա ի՞նչ իրավիճակում

- ☐ ծնողներիս ներկայությամբ՝ երեկույթի ժամանակ
- ☐ ծնողներիս ներկայությամբ՝ առանց հատուկ առիթի

- ☐ ընկերներին հետ՝ երեկոյթին
- ☐ ընկերներին հետ՝ առանց առիթի
- ☐ մենակ

41. Եթե ակոհով ես գործածել, ապա ի՞նչ իրավիճակում

- ☐ ծնողներին ներկայությամբ՝ երեկոյթի ժամանակ
- ☐ ծնողներին ներկայությամբ՝ առանց հատուկ առիթի
- ☐ ընկերներին հետ՝ երեկոյթին
- ☐ ընկերներին հետ՝ առանց առիթի
- ☐ մենակ

42. Երբևէ առնչվել ես ոստիկանության հետ՝ քո կողմից վատ բան կատարելու համար՝

- ☐ այո ☐ ոչ

43. Եթե այո, ապա ի՞նչ տեղի ունեցավ

- ☐ ոչինչ
- ☐ ծնողներին տեղեկացրեցին և նրանք ինձ պատժեցին
- ☐ ծնողներին տեղեկացրեցին, բայց ուրիշ ոչինչ էլ չեղավ
- ☐ ուսուցիչներին, դպրոցին տեղեկացրեցին
- ☐ ոստիկանությունը ինձ նախազգուշացրեց, որ այլևս նման բան չանեմ
- ☐ ոստիկանությունը ինձ բացատրեց, թե ինչու՞մն է իմ սխալը
- ☐ իմ գործն ուղարկեցին դատախազություն
- ☐ այլ _____

44. Եթե առնչվել ես ոստիկանության հետ՝ նրանք քո հանդեպ հարգալից են եղել

- ☐ այո ☐ ոչ ☐ դժվարանում եմ պատասխանել

45. Ի՞նչ ես կարծում, ոստիկանությունը՝

ա/ նույն վերաբերմունքն ունի բոլորի նկատմամբ ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

բ/ անհրաժեշտության դեպքում արագ է տեղ հասնում ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

գ/ երեխաների հանդեպ հարգալից է ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

դ/ արդարության պահապանն է ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

ե/ հաշվի է նստում երեխաների կարծիքի հետ ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

զ/ կաշառք է վերցնում ☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

46. Ի՞նչ ես կարծում, երևույթի ճիշտ կամ սխալ լինելու առումով քո և ոստիկանության աշխատակիցների պատկերացումները նույնն են՝

☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

47. Անհրաժեշտության դեպքում պատրա՞ստ ես օգնել ոստիկանությանը՝

☐ այո ☐ ոչ ☐ չգիտեմ

48. Ի՞նչ ես կարծում, ինչպես վերաբերվեն քեզ ընկերներդ, մայրդ, հայրդ, հարևանները, եթե քո օգտագործած իրը թանկ գնով վաճառես ընկերոջդ (թաքցնելով, որ այն հին մոդել է, օգտագործված և շուկայում հնարավոր է նորը ավելի մատչելի գով ձեռք բերել), իսկ քեզ համար ավելի մատչելի գնով ձեռք բերես նորը՝

☐ կքննադատեն ինձ ☐ կհիանան ինձանով ☐ չգիտեմ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ-Ամերիկայի միացյալ նահանգներ

ԶԼՄ- զանգվածային լրատվության միջոց

ՀՀ - Հայաստանի հանրապետություն

ՃՏՊ – ճանապարհատրանսպորտային պատահար

ՄԱԿ- Միավորված ազգերի կազմակերպություն

ՌԴ - Ռուսաստանի դաշնություն

ՍԴՌ - Սահմանադրական դատարանի որոշում

ISRD - International Self-Reported Delinquency Study

Ns – Not significant